


ԷԶՄԻԱԾԻՆ



ԹՃ
2004



Կ ՏԱՐԻ

ՀԱՄԱԾՆԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ



Ս Ե Պ Պ Ե Վ Բ Ե Բ — Հ Պ Կ Պ Ե Վ Բ Ե Բ
2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	3
Բուլղարիայի Հանրապետության նախագահ Գեորգի Պրվանովը Մայր Աթոռում	4
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի հետ	5
Հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և բարձր մասնակցությամբ Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքի փոքրիկ ունեցավ Մոսկվայի առաջնորդանիսով Ս. Խաչ հայկական եկեղեցու և Առաջնորդարանի հիմնադրվելը	6

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը «Մարենադարանի բարեկամներ» հիմնադրամի հիմնման առիթով	9
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Օրհնության գիրը Կանադայի հայոց թեմի հիմնադրման քսանամյակի առիթով	12
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Հովսեփ Թոքաթին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	14
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արթուր Զիլինգառովին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին	16
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Վլադիմիր Սպիվակովին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	18
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Ժիրայր Նալիբեկին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	20
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Էդուարդո Սեֆերյանին	22
Հայրապետական գնահատություն	24
Հայրապետական փնտրություն	25
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը նոր ուսումնական տարվա սկսման առիթով	26
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա առիթով	27

«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան «Զարթոնք» թերթի խմբագիր Պարույր Աղրաշյանին	28
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան հանձնեց Ալբերտ Սնինյին	29
«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան ամերիկահայ գրող Փրթեր Բալաթյանին	30
Վեհափառ Հայրապետ Սվազության պատիվ շնորհեց Տ. Պողոս քահանա Պարոնյանին	31
Հոգևհանգստյան արարողություններ Ս. Էջմիածնում ու Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Բնականի գոհերի հոգիների հանգստության համար	32
Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Սևանի Վազգենյան Դպրանոցի նոր մասնաշենքի բացման արարողությունը	34
Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարվեց «Մալենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդրանիկ նիստը	35

ՔԱՐՈՋԻՈՍԱԿԱՆ

Տ. Արմաշ վարդապետ Նալբանդյանի քարոզը խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	41
Տ. Սևան եպիսկոպոս Ղարիբյանի քարոզը խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Խաչվերացի Ս. Պատարագին	43
Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի քարոզը խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	46
Տ. Թորգոմ արևդա Տոնիկյանի խոսքը Սուրբ Թարգմանչաց տոնի առիթով՝ ասված Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցում	50
Տ. Մուշեղ արևդա Բաբայանի քարոզը խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	52
Տ. Զոհրաբ արևդա Կոստանյանի քարոզը խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	55

ՊԱՏՄԱ - ԲՈՆԱՍԻՐԱԿԱՆ

Նվիրվում է Մաշտոցյան գրերի գյուտի 1600-ամյակին ՀԱՎՈՐ ԲՅՈՍԵՅԱՆ - Հայոց Այբուբենի խորհրդարանություն ըստ ձևագիր մի ավանդության	57
Դարի հայոց փիլիսոփայի եւ Փիլիկեայ հոռոմոց վարդապետի եւ	

Հոմորեայ արտոնտրատրի եւ Մովսէսի քերթողի խնդիր ի փափագման իմաստասիրականիս	61
---	----

Կիլիկիայի դրվագներ

ՄԻՍՏՔ ՃԵՎԱՅԻՐՃՅԱՆ - Լեւոն Գ թագավորի վիմաքանդակների մասին	84
--	----

ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ - 17-18-րդ դարերի հայկական գաղթօջախների գրչապների մանրանկարչության պատմությունից	91
--	----

ԱՍՏՏՈՒՐ ՓԱՇԱՅԱՆ - 18-րդ դարում Վենետիկի Մխիթարյանների իրադարձակաձ «Էֆիմերտները»	96
--	----

ԱՆԱՅԻՏ ՄՈՒՐԱՐՅԱՆ - Էջեր հայ տպագրության պատմությունից	101
---	-----

ՆՈՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ - Հոգևոր երգի արձագանքներն Ինքրայի «Ներաշխարհում»	105
--	-----

ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱՐԱՆՏՅԱՆ - Արցախի թեմը 1917-1920 թվականներին	111
---	-----

ԴԻԱՆԱ ՀԱՅԿԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ - Ու. Ֆոլքների «Արիստոտել, Արիստոտել» վեպի բառարկների ինքնատիպության պահպանման խնդիրը հայերեն թարգմանության մեջ	125
---	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ - Նվիրված գիտական վաստակի արժեվորմանը	133
--	-----

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ - «Զամբո»-ը աշխարհաբարով	138
---	-----

ՍՈՒՄԱՆՆԱ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ - «Եվրոպայի հայագետներ» մարենաշարը	141
---	-----

Գիտա-եկեղեցական կյանք

Գիտաժողով-հանդիսություն նվիրված Կեչառիսի 1000-ամյակին	145
---	-----

«Հայ մեկնողական գրականության դպրոցները» թեմայով գիտաժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	148
---	-----

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՀԱՅԿ ՈՒՐԱՐԱՅԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ - Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	152
---	-----

Տ. Արշակ եպիսկոպոս հաջադրյան	156
------------------------------------	-----

Ջահանյական ձեռնադրություն և օծում Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում	158
---	-----

S. Նորայր արեղա Սիմոնյան	161
S. Արիստակես քահանա Հովհաննիսյան	162
S. Ներսես քահանա Շահնագադյան	163
S. Վրթանես քահանա Բադալյան	164
S. Հուսիկ քահանա Նորիջանյան	165
S. Գյուր քահանա Ղահրամանյան	166
S. Բարկես քահանա Հայրապետյան	167
S. Մուշե քահանա Վահանյան	169
S. Մաշտոց քահանա Բարայան	170
S. Ղազար քահանա Պետրոսյան	171
S. Սմբատ քահանա Սարգսյան	172
S. Մաթթեոս քահանա Դրավանց	173
S. Մանուել քահանա Մկրտչյան	174
S. Թովմա քահանա Անդրեասյան	175
S. Առաքել քահանա Ղազարյան	177
S. Եզնիկ քահանա Գալստյան	178
S. Սիմեոն քահանա Առաքելյան	179
S. Փավստոս քահանա Սարգսյան	180
S. Անանիա քահանա Բարայան	181
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով մեկնեց Գուգարաց թեմ	182
Գուգարաց թեմում օծվեց Բագրատաշեն գյուղի Սուրբ Աննա մատուռը	182
S. Փառեն Լալիսկոպոս Ավետիքյանի ձեռամբ օծվեց Կարմրավոր Ս. Աստվածածին եկեղեցին	183
ԱՐԱՄ ՍՐԿ. ՔԷԹԷՆՏԵԱՆ - Երկու հոգեշէն միջոցառումներ	184
Լուրեր Գերմանիոյ հայոց թեմեն	185
ԼՂՀ վարչապետը ԱՄՆ-ի հայոց Արեւմտեան թեմին Առաջնորդարանում	188
Արեւմտեան թեմի հոգեւորականներու եռօրեայ հաւաքը եւ դասախոսություններու շարքը	189

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ - Բենեդիկտյան միաբանության վեհաժողովը Հոռնում	193
ԳԱՅԱՆԵ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ - Միջազգային Լեյումենիկ 12-րդ համագումարը Բոգեի վանքում	195
ՀՈՎԱԿԻՄ ՍԲԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ - Եվրոպայի եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի նիստը Բրյուսելում	196
ՎԱՀԱԳՆ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԱԶԻԶՅԱՆ - Եվրոպայի եկեղեցիների	

Կոնֆերանսի Կենտրոնական Կոմիտեի նիստը Պրահայում	197
ԳԱՅՄՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - «Քաղաքակրթությունների երկխոսություն» համագումար Հռոդոսում	198
ԵՆԿ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի հայտարարությունը Թուրքիայի անդամակցության հարցի վերաբերյալ	201
ԳԱՅՄՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - Թբիլիսիում տեղի ունեցավ «Գլոբալիզացիա և քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային համաժողովը ...	203
ԱՐՄԻՆԵ ԲԱՂԻՄՅԱՆ - Շվեդական Եկեղեցու պատվիրակությունը Հայաստանում	205

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինայի ՆԳ նախարարին	206
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Ֆինլանդիայի Հանրապետության նորանշանակ արքակարգ և լիազոր դեսպանին	207
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իտալիայի Հանրապետության հորհրդարանի փոխխոսնակ Լամբերտո Դինիին	207
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում ԱՄՆ նորանշանակ արքակարգ և լիազոր դեսպանին	208
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արքակարգ և լիազոր դեսպանին	208
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպական Հանձնաժողովի նախագահ Ռոմանո Պրոդիին	209
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազ Վիկտոր Շեյմանին	209
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Լեհաստանի Հանրապետության արքակարգ և լիազոր դեսպանին	210
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարին	210
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արևմտաեվրոպական Միության վեհաժողովի փոխնախագահին	211
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Դաշնային ժողովի դաշնության խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնովին	211

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Պաոլո Կոելոյին	212
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՏ ՄԽՎ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի անդամներին	212
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նորվեգիայի արքայքին գործոց նախարարին	213
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արքայքին գործերի նախարարին	213
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Միջխորհրդարանական համագործակցության բրիտանական խմբի անդամներին	214
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ կոմպոզիտորների միության նախագահ Ռոբերտ Ամիրխանյանին	215
Եկեղեցական բեմ, լուրեր	216
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата	218
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	224

ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՆԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետություն պետական պաշտոնական այցով ժամանած Մոհամմադ խաթամին սևպրեմերիի 9-ին այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր բարձրաստիճան հյուրին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Քարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահը, շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունելության համար, անդրադարձավ երկու երկրների հարաբերություններին և դրանց զարգացման հեռանկարներին:

«Այցելությունն այս սրբավայր էլ ավելի իմաստավորեց Հայաստանի Հանրապետություն մեր այցը», - իր խոսքում նշեց Մոհամմադ խաթամին:

«Ինչպես աշխարհասփյուռ մեր բոլոր հայդղիկները, այնպես էլ Իրանում ապրող մեր ժողովրդի զավակները խաչակնքելիս միշտ իրենց հայացքը դարձրել են դեպի Սուրբ Էջմիածինը», - նշեց Նորին Սրբությունը՝ անդրադառնալով իր զավակների կյանքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելությանը և շեշտելով դարերի ընթացքում Իրանի իշխանությունների ռաբեխնամ վերաբերմունքը Մայր Աթոռի հանդեպ: Հայոց Հայրապետը՝ իր ուրախությունը հայտնեց, որ Իրանի հեպ Հայաստանի հարաբերությունները նոր զարգացում և առաջընթաց են ապրում մաղթելով, որ այս այցելությամբ դրանք էլ ավելի ամրապնդվեն և գորանան ի փառս Աստծո և ի բարօրություն մեր երկու բարեկամ ժողովուրդների:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց այն ուշադրության և հոգաբարդության համար, որ Իրանի իշխանությունները հարյուրամյակներ շարունակ դրսևորել են հայ համայնքի հանդեպ՝ հնարավորություն ընձեռելով, որ այն ազատորեն ապրի իր ազգային-մշակութային ու հոգևոր կյանքով:

Հանդիպման ընթացքում կարևորվեց նաև հոգևոր առաջնորդների դերն ու առաքելությունը փարաձառջանի խնդիրների լուծման գործում:

Հանդիպմանը ներկա էին Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Աղամյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վարդապետ խաչարյանը, Տ. Անուշավան վարդապետ Ժամկոչյանը, ՏՏ նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշես Թումանյանը, Իրանի Իսլամական Հանրապետությունում ՏՏ արտակարգ և լիազոր դեսպան Գ. Ղարիբջանյանը, Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ա. Հադիդյանը և այլ պաշտոնապար անձինք:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

ԲՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՆ ԳԵՌՈՐԳԻ ՊՐՎԱՆՈՎԸ ՄԱՅՐ ԱԹՈՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆՈՒՄ

Հոկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուլղարիայի Հանրապետության նախագահ Գեորգի Պրվանովին:

«Մենք ուրախ ենք, որ մեր երկու երկրների միջև ստեղծվել են ջերմ հարաբերություններ: Վստահ ենք, որ միասնաբար պիտի կարողանանք դիմագրավել ներկա կյանքի հրամայականներն ու մարտահրավերները: Մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում նաև Ձեզ կողմից իրականացված վերաբերմունքի համար, որ փաճում էք Բուլղարիայում բնակվող մեր ժողովրդի գավակաց նկատմամբ, ովքեր իրենց կարևոր ներդրումն ունեն Բուլղարիայի պետության մեջ՝ որպես արժանավոր և հավատարիմ քաղաքացիներն այդ պետության», - բաժանորդական մատուցեց Բուլղարիայի Հանրապետության նախագահին հայոց հոգևոր կենտրոն՝ ասաց Հայոց Հայրապետը:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայ Առաքելական Եկեղեցու անցած ուղուն, Եկեղեցի-պետություն հարաբերություններին: Նորին Սրբաթույնը նախագահին նաև խնդրեց իր եղբայրական ողջույնները փոխանցել Բուլղար Ուղղափառ Եկեղեցու պետ Մաքսիմ Պարիպարեին ու բոլոր հավատացյալներին և անդրադարձավ երկու փոքրիկ առաջ Բուլղարիա կապարած իր այցին:

Նախագահ Գեորգի Պրվանովն ուրախությամբ արձանագրեց, որ փարեցության ավելի են սերտանում երկու երկրների հարաբերությունները: Անդրադառնալով Եկեղեցի-պետություն հարաբերություններին՝ Գեորգի Պրվանովը շեշտեց երկու երկրների միջև ընդհանուր կապերի արժեքների փոխանցման անհրաժեշտությունը՝ նշելով, որ բուլղար ժողովուրդը կարողացավ փոխառնել և դիմանալ դժվարություններին իր հավատքի և Եկեղեցու շնորհիվ:

Պարվիրական կազմում էր նաև Բուլղար Ուղղափառ Եկեղեցու Վիդիկոսի Դոմեփիան միտրոպոլիտը: Միտրոպոլիտը, Բուլղար Եկեղեցու գահակալի և Ս. Սինդի անդամների ողջույնը փոխանցելով Հայոց Հայրապետին, նշեց, որ իր համար մեծ ուրախություն է լինել Ս. Էջմիածնում և արժանանալ Հայոց Հայրապետի ընդունելությանը: Դոմեփիան միտրոպոլիտը կարևորեց երկու Եկեղեցիների միջև ստեղծված ջերմ հարաբերությունները՝ հույս հայտնելով, որ դրանք էլ ավելի պիտի զորանան ու ամրապնդվեն՝ ի շահ երկու ժողովուրդների:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պարասխանատու Տ. Եզնիկ նախկին Պետությանը, Մ. Գրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը, երկու երկրների դեսպանները, պաշտոնատար այլ անձինք:

**ՄԱՅՐ ԱԹՈՈՒ Ս. ԷԶՄԻԱՄԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**





ԲՈՒԼՆԱՐԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ ՎԵՐԱՐԱՆՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ 1308 Թ. ԽԱՉԶԱՐԻ ՄՈՏ



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ՀԱՆԴԻՂՈՒՄ ՈՒՆԵՑԱՎ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԿԱՐԻ ՂՈԿԱՍՅԱՆՆԻ ՀԵՏ**

Սեպտեմբերի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիպում ունեցավ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի, ԱԺ նախագահ Օյեզ Եսայանի, վարչապետ Անուշավան Դանիելյանի և ԼՂՀ կառավարության մի շարք անդամների հետ:

Վեհալիառ հայրապետն ուրախություն հայտնեց ԼՂՀ իշխանությունների այցի առիթով և իր բարեմաղթանքն ուղղեց նրանց՝ ցանկանալով Արցախին ու արցախահայությանը խաղաղ ու բարձր կյանք:

ԼՂՀ նախագահը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, նշեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածին կադարած ամեն մի այց նոր ուժ ու եռանդ է հաղորդում իրենց: ԼՂՀ նախագահը նաև երավիրեց Վեհափառ հայրապետին հովվապետական այցով վերցսրին քննելու Արցախ աշխարհում, բանգի նմանադիպ այցելությունները ոգևորում են հաղորդիներին՝ նոր ուժով ու եռանդով լծվելու բարձր կյանքի կերպմանը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն Նպս. Ավերիբյանը:

**ՄԱՅՐ ԱԹՈՐ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

**ՆԱԼԴԻՍԱԳՊԵՏՈՒԹՅԱՄԲ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԵՎ ԲԱՐՁՐ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՄԲ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ
ՎԱՄԱՅՆ ՌՈՒՄԻՈ ԱԼԵՔՍԻ Բ ՊԱՏՐԻԱՐԷԻ
ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱՎ ՄՈՍԿՎԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՍ
Ս. ԽԱՉ ՎԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՆԻՄՆԱՐԿԵՔԸ**

Նոկտեմբերի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկվա՝ Ռուսաստանի հայ համայնքի հետ նշելու Մոսկվայի և համայն Ռուսիո Պապրիարք Նորին Սրբություն Ալեքսի Երկրորդի ծննդյան 75-ամյակը և կատարելու հիմնարկները Մոսկվայի Սուրբ Խաչ Առաջնորդանիսր եկեղեցու և թեմի Առաջնորդարանի։ Անհափառ հայրապետին ուղեկցում էին Արարապյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ եպիսկոպոս Կոնյանը, Մայր Աթոռի դիվանապետ Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը և Ս. Մուշեղ աբեղա Բաբայանը՝ որպես գավազանակիր։ Մոսկվայի օղանավակայանում Վեհափառ հայրապետին դիմավորելու էին եկել Մոսկվայի և համայն Ռուսիո Ալեքսի Բ Պապրիարքը՝ բարձրաստիճան հոգևորականների ուղեկցությամբ, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Ս. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը և թեմական խորհրդի անդամներ։

Նոկտեմբերի 16-ին, առավոտյան, Նորին Սրբությունը, առաջնորդ Սրբազանի, եկեղեցականների և թեմական խորհրդի անդամների ուղեկցությամբ, այցելեց Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցի, ուր կատարվեց գոհաբանական մաղթանք։

Նույն օրը, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի և բարձր մասնակցությամբ Ալեքսի Բ Պապրիարքի, կատարվեց Ս. Խաչ եկեղեցու հիմնարկները։ Օծված 16 քարերը տեղադրվեցին նորակառույց եկեղեցու հիմքերի մեջ։ Արարողությունից հետո ներկաներին իր օրհնության խոսքն ուղղեց Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը։ Հայոց հայրապետ իր շնորհակալությունը հայտնեց Ալեքսի Բ Պապրիարքին և Ռուսաստանի իշխանություններին՝ եկեղեցու շինարարությանը ցուցաբերած մեծ աջակցության, ինչպես նաև Մոսկվայի հայ համայնքի հանդեպ դրսևորած հոգաբար վերաբերմունքի համար։

«Մեր հոգին ուրախ է նաև այն երջանիկ իրողությամբ, որ այսօր, երբ Ռուսաստանի հայ համայնքի հետ փոխում ենք Նորին Սրբության հոբելյանը, նախաձեռնությամբ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի և թեմական խորհրդի, կատարվում է Մոսկվայի Սուրբ Խաչ եկեղեցու հիմնարկների արարողությունը, որին իր մասնակցությունն է բերում Ալեքսի Բ Պապրիարքը։ Չերդ Սրբություն, Մենք խորապես զգացված ենք Ձեր ճշմարիտ եղբայրությունից և մեր ժողովրդի հանդեպ Ձեր հոգածու վերաբերմունքից։ Փառք Տիրոջը, որ արժանացրեց մեզ այս պարգևին՝ հայ և ռուս հավատակից ժողովուրդներ-

המחלקה לבריאות הציבור, משרד הבריאות, תל אביב, ישראל





הרב הראשי ליהדות ארץ ישראל, הרב יצחק אייזיק ווייס, (במרכז) יחד עם הרב יצחק אייזיק ווייס (בשמאל) והרב יצחק אייזיק ווייס (במימין) במהלך טקס.

րի բարեկամության աստվածահաճո այս նոր վկայությանը: Կամոքն Աստծո դարեր ի վեր մեր երկու Եկեղեցիներին վիճակված է կողք կողքի ապրել ու կերպել մեր պատմությունը՝ կիսելով և՛ ուրախությունը, և՛ դժվարությունները: Այսօր մենք գոհություն ենք հայտնում Ամենակարողին, որ անսասան բարեկամության ու համագործակցության ավանդական ոգով օրեցօր զարգանում են մեր պետությունների հարաբերությունները, և գորանում եղբայրական սերը մեր ժողովուրդների ու Եկեղեցիների միջև:

Այսօր հիմնարկվում է մի նոր Տաճար՝ Տուն Աստծո, որը շուտով կբացի օրհնության իր դռները՝ առաջնորդելու մարդկանց դեպի Արարիչը և կոչելու ծառայել բարուն, խաղաղությանն ու ի մարդիկ հաճությանը: Տերունական այս պարզվորանով պիտի դիմակայվի ահաբեկչության ու ծայրահեղականության վտանգը, որի ողբերգական հետևանքների ականատեսներն ենք դառնում, ինչպես որ առ Աստված հավատով ու ապավինությամբ պիտի հաղթահարվեն արդի ժամանակների բոլոր մարտահրավերները»,- նշեց Նորին Սրբությունը:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց նաև եկեղեցու բարերարներին՝ մոսկվայաբնակ բարերար Վիտայի Գրիգորյանցին, բարեգործ-շինարար Մուրադ Մարգսյանին և բոլոր այն անձանց, որոնց համար եկեղեցու կառուցումը հոգու պարտք է և անկեղծ արտահայտությունն իրենց որդիական սիրո՝ հանդեպ Հայ Առաքելական Եկեղեցին և հարազատ ժողովուրդը:

Այնուհետև օրհնության խոսքով հանդես եկավ նաև Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքը: Ռուսաց Պատրիարքն իր ուրախությունը հայտնեց նոր եկեղեցու կառուցման առիթով՝ հույս հայտնելով, որ եկեղեցու կառուցմամբ էլ ավելի պիտի ամրապնդվեն ու գորանան կապերը երկու ժողովուրդների և Եկեղեցիների միջև:

«Վստահ եմ, որ Մոսկվայի հայ համայնքի համար այն կդառնա նշանակալից հոգևոր կենտրոն, որը կօգնի հավատացյալներին ապրելու քրիստոնեության բարոյական ու հոգևոր արժեքներով: Երկար փարիների և դարերի ընթացքում մեր երկու ժողովուրդների միջև ստեղծվել են բարի հարաբերություններ: Բարեկամները ճանաչվում են դժբախտության մեջ, և երբ տեղի ունեցավ մեծ գոհեր և ավերածություններ պատճառած Մալիտայի նրկաշարժը, Ռուսաստանը հայ ժողովրդի հետ էր՝ կիսելով նրա ցավն ու փառապանքը: Ես երախտապարտ եմ Ձեզ, Ձերդ Սրբություն, այն բանի համար, որ երբ Ռուսաստանն ապրում է ահաբեկչական գործողությունների ողբերգական հետևանքները, Դուք միշտ կիսում եք մեր ցավը, մեր փառապանքները, մխիթարում եք մեզ և գոյնալիցում սուրբ աղոթքներով Ս. Էջմիածնի սրբությունների մոտ:

Ես ցանկանում եմ շնորհավորել Հայ Առաքելական Եկեղեցուն ուրախարար այս առիթով, որ տեղի ունեցավ այսօր: Երկար է սպասել հայ համայնքն այս օրվան, և մեծ ջանքեր է գործադրել Ռուսաստանի և Նոր Նախիջևանի առաջնորդ Եգրաս Սրբազանը, որպեսզի մոտենան այս պոռնը:

Հուսով եմ, որ Մոսկվայի Մայր եկեղեցին, որ պիտի կառուցվի այս տեղում, լինելու է այն վայրը, ուր պիտի վեր խոյանա մեր երկու եղբայր ժողովուրդների բարեկամությունը մարմնավորող փաճարը, ուր պիտի ամրապնդվի մեր Եկեղեցիների միջև համագործակցությունը»,- նշեց Ալեքսի Բ Պատրիարքն իր խոսքում:

Հայ Համայնքին իր շնորհավորանքները բերեց եան Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովը: «Երբ մենք խոսում ենք Հայ Առաքելական Եկեղեցու մասին, ապա անկասկած զգում ենք մասնավոր հոգևոր հարազատությունը, որ միավորում է մեր Եկեղեցիներին, հայրուկ հարազատությունը մեր ժողովուրդների, որ սկզբնավորվեց շարք դարեր առաջ, որը, փառք Աստծո, սմրապնդվում է այսօր և պիտի ամրապնդվի, հուսով եմ, նաև ապագայում», - ասաց Մոսկվայի քաղաքապետն իր խոսքում:

Հանդիսությունը մասնակցում էին Կենտրոնական Դաշնային օկրուգում ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի լիազոր ներկայացուցիչ Գ. Պոլտավչենկոն, Մոսկվայի քաղաքապետ Յ. Լուժկովը, Ռուսաստանի Դաշնությունում Հարավարգ և լիազոր դեսպան Ա. Սմբատյանը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմական խորհրդի արեմնապետ Ա. Զիլինգարովը և բազմաթիվ հայ ծավալագույներ:

Արարողությունից ետո պատրիարքական նստավայրում տեղի ունեցավ երկու Հովվապետների հանդիպումը, որի ընթացում Ռուս Ուղղափառ Եկեղեցու գահակալն Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու բարձրագույն պարզեր՝ Ս. Անդրեաս Նախակոչ սոաքյալի շքանշանը՝ ռուս և հայ ժողովուրդների և Եկեղեցիների համագործակցության և բարեկամության ամրապնդման գործում մեծ ներդրման համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՄԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՆ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԻՄՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԱՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՑ
ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՇՆԻ**

**ՔՐԻՍՏՈՍԱՄԷՆՆԻ ՄԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ,
ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՑ ԵՐՈՒՄԱՆԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆՂՆՈՒՊՈԼՍՈՑ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ,
ՔԱՆԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՄԻԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՄԻՐԵՅԵԱՆ ՀԱՄԱՅՆ
ՀԱՄԱՏԱՅԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ**

«Զի ուր զսանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին»:

(Մաթթ. Զ 21)

Հայոց Գրերի 1600-ամնակի պանծալի յօրելեանի առջեւ, երբ մեր հայեացքները ուղղւում են դէպի բազմադարեայ գրաւոր մեր արժէքները, Հայրապետական Մեր այս կոնգրակով գոհունակութեամբ տեղեկացնում ենք, որ արդէն ներք փարի է, ինչ հաստատուել է

«Մալենադարանի Բարեկամներ» բարեգործական հիմնադրամը՝ կոչում ծառայելու Երևանի Մալենադարանում պահույնի տասնհինգ հազարաչորս ձեռագրերի, վաճառքների ու հնավիպ գրականության բարոյի պահպանմանն ու հարստացմանը, ուսումնասիրմանն ու հրատարակմանը, կոչում նաեւ նպաստելու հայագիտությանն ու ձեռագրագիտությանն ասպարեզներում երիտասարդ նոր սերնդի կրթությանը:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց Վարդապետի անունը կրող Մալենադարանը ազգային մեր նուիրական հաստատություններից է, զանազան՝ լեռնախմբներից առանդում բազմադարեւ ժառանգութեան: Արդարեւ, անհնար է ճանաչել հայ ժողովրդին առանց ձեռագիր դարեւ ժառանգութեան: Արդարեւ, անհնար է ճանաչել հայ ժողովրդին առանց ձեռագիր նախադասների, ծաղկած յիշատակարանների եւ վաղ տպագրութիւնների, որոնցում իր ամենապայծառ արտայայտութիւնն է գրել հայութեան հոգին: Գիրքը մեր հաւարի անբաժան մասն է, անբաժան մասն է առ հայրենին մեր նուիրումի ու սիրտը, ճանաչողութեան ու արարումի ոգու, որը Անտարանի լոյսով բացուեց ու փթեց ու պրոլոներ փունց անմահ:

Մեր հայրերը Ոսկեդէնիկ հինգերորդ դարից ի վեր գրեցին ու թարգմանեցին այն ուրախութեամբ ու խանդավառութեամբ, որով դիմաւորեցին Մաշտոցին, երբ վերադառնում էր՝ Աստուծոյ Կամքով բերելով հանճարածնունդ ու հանճարագործ 36 տարեւը հայերէնի: Գրեցին, որ յայտնի լինի «երանելի մարդկանց ազնուութիւնը, ճշմարիտ հաւատքի հաստատութիւնը, աստուածամերձ, աստուածամօտ կեանքի վայելչութիւնը, սքանչելի կեանքի պայծառութիւնը»: Ինչ որ գրեցին, գրեցին աղօթքով, գրեցին հակառակ աւերի ու թալանի, հակառակ խաւարի: Դարեր-դարեր անխոնջ գրեցին, մարեաններ ու յիշատակարաններ ծաղկեցին, ու գիրքը դարձաւ սրբութիւն, լոյս ու ճանապարհ:

Յիրաւի, պարմութեան մէջ եզակի երեւոյթներից է այն իրողութիւնը, որ ազգային պատկանութիւնը կորցրած, օտարի ամենաձանր փրկապատկանները գրնուող հաւածական ժողովուրդը ձեռագրեր էր ստեղծում, գրեք տպագրում: Գրում եւ տպագրում էին դժուարութիւններ յաղթահարելով, գոհողութիւնների գնով, տարագրութեան մէջ, բայց՝ անձանձիր, հաւատարմով հայախօս ու աղօթաշունչ այդ գրքերի լուսաբեր, ազգապահպան ու ազգաշէն առաքելութեանը, հաւատարմով լուսաւորութեան ուժին, մարդկութեան առաջագնաց, խաղաղ գալիքին: Այս հաւատով փորձութիւնների, աւերների ու կոտորածների ժամանակ նախառաջ գրեքը փրկեցին, պահպանեցին գաղթի ճանապարհներին, օտարութեան մէջ, պահպանեցին ինչպէս սուրբ նշխար:

Այսպիսին է Մալենադարանում հաւաքուած մեր գրաւոր ժառանգութիւնը, որն իր պարմական, մշակութային ու իմացական եւ իր հոգեւոր արժէքով միայն մերը չէ, այլեւ համայն մարդկութեանը: Մալենադարանը պիտի պահպանենք իբրեւ հոգու սրբազան տաճար, գիտութեան ու արուեստի լուսեղէն կաճառ՝ միշտ մնալով շարունակողները մեր նախնիների իմաստասէր վարքի: «Զի ուր գանձք ձեր նն, անդ եւ սիրտք ձեր եղիցին»,- ասում է Քրիստոս՝ մեր Փրկիչն ու Տէրը: Մեր գանձերը կշարունակեն ապրել, կշարունակեն իրենց առաքելութիւնը, քանի դեռ մենք նրանց հնաբոյր, բազմախօս էջերում կփնտրենք մեր հոգին ու Երթիւնը, մնալով նաեւ շարունակողները մեր նախնիների նուիրումի ու նախանձախնդրութեան, որով վանքերում՝ գրչութեան կենտրոններում գրեք հաւաքեցին եւ ընդօրինակեցին ու մարենադարաններ կազմեցին:

Սուրբ Սահակ Պարթևի Հայրապետի և Սուրբ Մեսրոպ Մաշտոց մեր մեծ Ուսուցիչների խնամքով՝ ձեռնդ առնելով՝ Կրասնիկնգ հարիւրամեակ Մայր Աթոռի հովանու ներքոյ պահպանուեց ու հարստացուեց Սուրբ Էջմիածնի Մարենաղարանը: Այդ հարուստ ու անգնահատելի հաւաքածոյի ժառանգորդն է այսօր Երեւանի Մարենաղարանը՝ աւելի քան կէս դար գործելով իբրեւ պետական գիտական հաստատութիւն և շարունակելով լինել մեր ժողովրդի եպարքութեան ու հոգածութեան առարկան:

Մարենաղարանը, սիրելիներ, այիտի շարունակի մնալ համագային մեր սիրոյ և ուշադրութեան կենտրոնում, որպէսզի մեր անգնահատելի արժէքները ամբողջութեամբ ու լիարժէքօրէն ուսումնասիրուեն, մարտցունեն ու ճանաչելի դառնան մեզ և միւս ժողովուրդներին, շարունակելով յոյս սփռել՝ իմացութեան, հաւատի, սիրոյ ու նուիրումի: Գանձեր ունենք Մարենաղարանում ամբարտաւ, ուրեմն՝ թող այնպեղ լինեն նաեւ մեր սրտերը:

Ոգեկոչելով Սուրբ Սահակ և Սուրբ Մաշտոց Երանելիներին, մեր մարենագրութեան բոլոր անխուց մշակներին՝ գրիչներին, ծաղկողներին, կազմողներին, սրագողներին, օրհնաբանելով ձեռագրեր փրկագնողներին ու բարերարներին, յորդորում ենք բոլորիդ, հաւատացեալ ու սիրեցեալ Մեր ժողովուրդ, հայ դպրութեան, մշակոյթի, մարենագրութեան և պապմութեան նկատմամբ խորը ակնածանքի և խոնարհումի զգացումով մասնակցել Մարենաղարանի գործունէութեանն ու ծրագրերին ձեր ընծայաբերումներով, ստարեք ու գօրակցելք նրա առաքելութեանը: Հաւատարիմ ու հոգացող սրտերով պահպանենք ու փոխանցենք մեր գանձերը սերունդներին, որպէսզի անցնալի ու ներկայի յարատեւ շաղկապումով յուսաշող ձեռնդ առնի մեր վաղուայ օրը, ու պայծառ փայլի հայոց ապագան, որպէսզի սերունդների շուրջերին շարունակի եպարքօրէն հնչել. «Ձի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թոյով յոյժ դնդ փոքու սահմանեալ, ... սակայն բազում գործք արութեան գլուսին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշարակի»:

Ողջ լսրութի Տէր, գօրացուալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ, ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուալ Գիրք Օրհնութեան ի 3-ն Սեպտեմբերի

Յամի Տեառն 2004 եւ ի թուին Հայոց ՌՆՄԳ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 254

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԿԱՆԱԴԱՅԻ ՆԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԻՄԱՆԱՐԱՄԱՆ ԶՄԱՆԱՄՅԱԿ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՑ ԱՌ ԿԱՆԱԴԱՅԻ ՆԱՅՈՑ ՏԻՐԱԽՆԱՄ ԹԵՄՆ, ՈՐ Ի ԿԱՆԱԴԱ

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Միաձնաէջ Մայր Աթոռից գոհունակ սրբով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբախ շնորհաւորանքներն ենք յղում Ձեզ, սիրելի Սրբազան, եւ Կանադայի հայոց թեմի հոգեւոր դասին, թեմական ու համայնքային վարչութեանց պատուարժան անդամներին եւ բարեպաշտ մեր գաւակներին՝ թեմի եիմնադրման 20-րդ փարեղարձի ամիթով:

Մեծապէս ուրախ է Հայրապետիս հոգին, բանգի միայն դրուաբանքի ջերմ խօսքեր ունենք յղելու Ձեզ եւ Կանադայում բնակութիւն հաստատած Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հարազատ գաւակներին:

Քաղցր յիշողութիւններ են վերաբրանում այս պահին Մեր հոգում Տիրախնամ Ձեր թեմ 2001 թուականին, Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեակի յոբելանական փարում կատարած Նովուպետական Մեր անդրանիկ այցելութիւնից, երբ առիթն ունեցանք լինելու գրեթէ բոլոր համայնքներում՝ Մոնրէալում, Թորոնթոյում, Վանքովրում, Սենթ Քեթրինզում, մայրաքաղաք Օթթավայում, եւ աղօթելու Ձեզ հետ հոգեւոր կեանքի անսպառ ակունք մեր եկեղեցիներում: Գոհունակ սրբով փառաբանեցինք Աստծուն՝ ականաւրես լինելով, որ Ղուբ համախմբուած էք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքոյ, հաւատարիմ ազգային մեր առանդութիւններին, մեսրոպապատ սրբազան լեզուին, «Աստուածակերպ Աթոռ» Սուրբ Էջմիածնին ու հայրենի մեր Երկրին: Ցաւակալէս միխթարութիւն էր Մեզ համար լինել թեմում գործող ազգային դպրոցներում եւ ականաւրես դառնալ երիտասարդ հայտղիների հայեցի կրթութեան ու զաստիարակութեան եւ հայապահպանութեան սրբազան գործում կանադահայոց նախանձախնդրութեանը: Կանադահայ մեր բազմաթիւ գաւակների՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հարազատ ժողովրդին մատուցած ծառայութեանց համար արժանացրել ենք մեր Եկեղեցու բարձր պարգեւների, որպէսզի նոր հռանդով ու խանդավառութեամբ շարունակեն իրենց բարի աւանդը բերել ազգային-եկեղեցական մեր կեանքում:

Հայրապետիս համար անհուն ուրախութիւն է բարի վկայութիւններ լսել թեմակալ նորընտիր առաջնորդ, Մայր Աթոռիս երիտասարդ միաբան Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանեանի արդիւնաւոր ծառայութեան մասին: Լիպոյս ենք, որ շնորհիւ Սրբազան Հոր նախանձախնդիր ջանքերի, առաւել պիտի շէնանայ ու պայծառանայ Կանադահայոց Տիրախնամ թեմը, եւ Մենք Մեր յաջորդ այցելութեան ընթացքին ականաւրես պիտի

լինենք ազգային և նկեղեցական կեանքում արձանագրուած նոր ձևորբերումներին ու յաջողութիւններին:

Հայրական օրհնութիւն Ձեզ, հաւատաւոր հայորդիք Կանադայի: Ամուր մնացէք Ձեր հաւատքի մէջ և շարունակեցէք ապրել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, Տիրախնամ Ձեր թնմի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառութեան, անկախ մեր Հայրենիքի շինութեան և ազգային մեր իղծերի իրականացման նախանձախնդրութեամբ:

Հայրապետիս ի խորոց սրտի հայցն է առ Աստուած, որ Ամենակալ Տէրը միշտ հաստատուն պահի Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և անսասան՝ Տիրախնամ թնմր Դանադայի՝ իր բարեպաշտ ժողովրդով ու նկեղեցիներով:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՅ**

Տուաւ Գիրք Օրհնութեան ի 24-ն Սևպտեմբերի
Յամի Տեսուն 2004 և ի թուին հայոց ՌՆՃԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 484

**ՓԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՆՈՎՍԵՓ ԹՈՔԱԹԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ՕՐՆՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆՆԱՏԱՏԱՆԱՅ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶՄԻՄԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄԻՆԻ
ՄԵՐԱԳՈՅ ՏԻԱՐ ՅՈՎՍԷՓ ԹՕՔԱԹ,
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ**

Համայն մեր ժողովրդի հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բարեպաշտ գաւալիդ:

Յարգարժան պրն Յովսէփ Թօքաթ,

Գոհունակութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ ամերիկահայ համայնքի ազգային եւ եկեղեցական կեանքը աշխոյժ ու զօրեղ տեսնելու Ձեր նախաձեռնողութիւնը արդիւնատուել է բազում բարի իրագործումներով: Տարիներ շարունակ Դուք Ձեր կարողութիւնները, ժամանակը, նիւթական ու բարոյական աջակցութիւնը որդիական սիրով ի պալաւ էք դնում յանուն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շինութեան ու պայծառութեան:

Ձեր նուիրումի պսակն են հանդիսանում Տիրախնամ թեմի Սուրբ Սարգիս եկեղեցուն բերած ծառայութիւնները, որոնք Ձեր անունը անջակտ կերպով կապեցին եկեղեցու պարմութեանը՝ որպէս բարեգործի: Հայորդոյ առ Աստուած հաւաքի եւ ազգասէր ու եկեղեցասէր ոգու յրսետրումն է նիւթական Ձեր մեծագումար նուիրատուութիւնը, որի շնորհիւ ամբողջապէս վերանորոգուած են եկեղեցու խորանը, Սուրբ Սեղանն ու Այրտութեան Աւագանը, իսկ մուրթը զարդարում է Հայրենիքից տարուած խաչքարը: Այսօր բազմաթիւ հաւաքացեալներ, Ձեր հանդէպ սէրն ու յարգանքն իրենց հոգիներում, երախտագիտութեան ազնիւ զգացումով Բարձրեալի հանապազ հովանին են հայցում Ձեզ եւ Ձեր ընտանիքին, իրենց հաւաքի տունը՝ Սուրբ Սարգիս Եկեղեցին, գրնելով խնամքով ու գեղեցկօրէն բարեգարդուած:

Սիրով ընդառաջելով ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրութեանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած մշտապէս հովանի եւ օգնական լինի Ձեզ, որպէսզի Դուք որդիական նոյն սիրով ու հաւատարմութեամբ շարունակէք Ձեր բարի

ծառայությունները ի պայծառությոն Սուրբ Սարգիս եկեղեցու և ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի՝ առաջնորդուելով «Նախանձ Տան քո կերիցէ զիս» (Յովհ. Բ 17) Տիրոջ սուրբ պարգաւով:

Թող Տէրը Սուրբ Գրիգոր Լուսաւորցի բարեխօսութեամբ Ձեզ և Ձեր ընտանիքի անդամներին պարգևի բաջատողջ երկար կեանք, որպէսզի վայելէր Ձեր ազգօգուր սպասաւորութեան և եկեղեցաշէն բարերարութեան ազնիւ պտուղները:

Ճնորհք Տիտոն մերոյ Յիսուսի Բրիսարոսի ընդ ձեզ և լամենեսեսան, ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳՐՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 2-և Սեպտեմբերի

Յամի Տեսուե 2014 և ի թուին Հայոց ՌՆԾԳ

ի ՄայրաՎանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 255

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԱՐԹՈՒՐ ԶԻՒՆԳԱՐՈՎԻՆ
«Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱԳԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՖ ԳՂԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՖ ՆԱՐԱՋԱՏ ԶԱԽԻԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄՆԻ
ՄԵԾԱՐԳՈ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՐ ԶԻՒՆԳԱՐՈՎ,
ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌՂ**

Նամայն հայությունան հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրապետական Մեր օրհնությունն ենք յղում Ձեզ և շնորհատրում ձնեղեան 65-րդ տարեդարձի առիթով:

Այս պահին Մեր հոգում վերադարձանում են յուշերդ Ձեզ հեք ունեցամ մեր ջերմ հանդիպումների ու գոյցների ինչպես Մոսկուայում, այնպես և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որոնց ընթացքում առիթ ենք ունեցել գոհունակությամբ ճանաչելու Ձեր եկեղեցանուէր ու ազգասէր ոգին:

Ցարգարծան պարոն Չիլինգարով, ապրելով և գործելով Մայր Նայրենիքից դուրս՝ Դուք մեր ազգի նուիրեալ զաւակաց յաբուկ նախանձախնդրությամբ մշտապէս հարազատ էք մնացել ազգային մեր արժէքներին ու մեր նախնեաց աւանդներին՝ Ձեր ծնողների հոգածու դաստիարակութեան շնորհիւ Ձեր կրծքի փակ միշտ վառ պահելով հայրենասիրութեան և եկեղեցասիրութեան վեհ զգացումը:

Ձեր անունը քաջածանօթ է աշխարհում՝ իբրեւ նշանաւոր րեւոախոյզ, գիտական ու քաղաքական յայտնի գործիչ: Տարիներ շարունակ պետական պատասխանատու պաշտօններ վարելով Ռուսաստանի Դաշնությունում՝ ծառայել էք արդիւնալից գործունէութիւն՝ ի խնդիր Ռուսաստանի գորացման ու բարգաւաճման, նպաստելով նաեւ Ռուսաստանի և Նայաստանի բարի հարաբերութիւնների ամրապնդմանը և հաւաքակից հայ և ռուս ժողովուրդների բարեկամութեան առաւել սերտացմանը: Բազմամեայ հարուստ փորձառութեամբ Դուք այժմ էլ գովելի սպասաւորութիւն էք բերում Ռուսաստանի Դաշնութեանը՝ երկար փորիներ լինելով Պետական Դումայի փոխխօսնակը: Բարձր և պատասխանատու գործունէութեան հեք մէկտեղ Դուք՝ որպէս հարազատ և արժանաւոր զաւակը հայ ժողովրդի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, սրանձնել էք եւեւ Նոր Նախիջեւանի և Ռուսաստանի հայոց թեմի Թեմական խորհրդի ալեմնապետի պաշտօնը՝ նոանդուն մասնակցութիւն ունենալով Ռուսահայոց թեմի եկեղեցական և ազգային կեանքում: Անմնացորդ նուիրումով ու ազնիւ պատրաստակամութեամբ աջակցելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գորացմանն ու բարգաւաճմանն ուղղուած համագային ջանքերին՝ Դուք արժանացել էք հաւատարմոր մեր ժողովրդի անկեղծ սիրուն ու յարգանքին:

Յարգարժան պարոն Չիլինգարով, Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով սիրով ընդառաջում ենք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի բարեջան առաջնորդ Գևորգյան Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսոյ Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Տիրոջ հանապազ օրհնութիւնը Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ մաղթելով քաջառողջ կեանքի արեւշատ վարիներ, գործոց յարանորոգ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:


Շնորհք Տեսուն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեւեան Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 24-ն Սեպտեմբրի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆՊԳ
ի Սայրավանս Արքայ Էջմիածնի
ընդ համարաւ 260



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՎԱԿԻՄԻՐ ՍՊԻՎԱԿՈՎԻՆ
«Ս. ՄԱՆՎԵ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱՎ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԱԿԻՄԻՐ ՍՊԻՎԱԿՈՎ,
ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹԻՒՆ**

Ուրախ սրբով լրելեցանք, որ Ձեր ծննդեան 100-ամեայ յոբելանի առիթով Սոսկուա-
յում կազմակերպում է մեծարժան հանդիսություն: Համայն հայության հոգևոր Կենտրոն
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օլիմպիսինն ու շնոր-
հատրանքները:

Ձեր կեանքի նշանակալի այս հանգրուանը Դուք դիմադրում էք մեծ վատարակով, ճա-
նաչում ամբողջ աշխարհում ու սիրում երաժշտաևր հասարակայնության կողմից եւ
գլոսհատում բազմաթիւ մրցանակներով ու պարգևներով: Դուք անխոնջ նուիրեալն էք
երաժշտական արունսպի, որը թափանցելով հոգիներից ներս, քնրմացնում ու ազնուացնում
է մարդկային ներաշխարհը:

Գոհունակութիւն է Մեզ համար նշել, որ Դուք Ձեր սքանչելի նուագախմբի համերգային
կատարումներով Ձեր արունսպը ներկայացրել էք նաեւ մեր ժողովրդին՝ բազմաթիւ անգամ-
ներ լինելով հինաւորց մեր երկրում: Մեր ժողովուրդը դիպի Ձեզ նաեւ որպէս հաւատասոր
բարեգործի եւ Հայաստանի մեծ բարեկամի: Մեծ երաժշտի եւ ազնուահոգի բարերարի Ձեր
կերպարը օրինակ է բազմաթիւ հայ շնորհալի երեխաների համար, ովքեր հովանաւորում
են Ձեր հաստատում բարեգործական հիմնադրամի կողմից, որպէսզի իրենց կարողութիւն-
ները զարգացնելով, ծառայեն երաժշտութեանն ու արունսպին: Հայ ժողովուրդը ընդմիշտ
երախտապարտ է Ձեզ ու աղօթող Ձեզ համար՝ միշտ յիշելով 1988-եան աղէտալի երկրա-
շարժի դժուարութիւնների մէջ Ձեր աջակցութիւնը: Բարեգործական Ձեր համերգների հա-
սոյթները, որ սիրով տրամադրեցիք նրկրաշարժից տուած հայորդիներին, նաեւ բարոյա-
կան մեծ աջակցութիւն եղան համայն մեր ժողովրդի համար:

Մեծարգոյ պրն Սպիվակով, Մենք քաղցրութեամբ ենք յիշում Մեր հանդիպումները Ձեզ
եւ Ձեր ազնիւ կողակցի՝ Տիկին Սաթենիկի եեպ, որի ծնողներին ճանաչել ենք երկար տարի-
ներ եւ բազմաթիւ բարի յիշողութիւններ ունենք Մեր հոգում նրա լուսահոգի Հայրիկից՝ Զա-
րեի Սահակեանցից:

Երախտարժան Յոբելեար, Ամենայն հայոց հաւաքի կենտրոն Աուրը Էջմիածնից բերե-
լով Ձեզ Մեր բարձր գնահատանքը, սիրով ընդառաջում ենք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաս-
տանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի ազնիւ

խնդրանքին եւ Ձեր յոբելանի առիթով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Հայաստաննայց Առաքելական Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած հանապազ աջակից ու օգնական լինի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշապութիւն, նրջանկութիւն եւ ամենայն բարիք:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհրդակալը լինի երկնապարգեւ շնորհների եւ Բարձրնալի ամապ ողորմութեան:

Ողջ լնալուք ի Տէր, գորացնալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւելո՛ւ օրինեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆՃԳ,
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 256

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻՒՆ
«Ս. ՄԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» Հ-ՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ-ՍԻՐԵՑԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՑ ԶԱԲԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՒՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՄՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ (ԹՕՍՈՒՆԵԱՆ),
ՈՐ Ի ԲԵՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ**

Գոհունակությամբ տեղեկացանք, որ այս փարի լրանում է Ձեր հասարակական և գրական-մշակութային գործունեության 55-րդ փարեղարձը: Նշանակալի այս առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ բարենաղթանքներն ենք յղում Ձեզ համայն հայության Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Մեծարգոյ պրն Ժիրայր Նայիրի, Ձեր կեանքի յիշարժան այս հանգրտանը Դուք դիմաւորում էք մտատրականի ազգօգուտ գործունեության հարուստ վաստակով, ճանաչուած ու սիրուած հաւաքաւոր մեր ժողովրդի կողմից:

Տասնեակ փարիներ Դուք եղել էք պատրասխանաբար խմբագիրը «Արարատ» օրաթերթի՝ Ձեր ջանքերը ներդնելով, որպէսզի պարբերականը շարունակի մեր ժողովրդի գաւալներին հաղորդ դարձնել սփիւղջահայ համայնքներում, Մայր Հայրենիքում և մեր Սուրբ Եկեղեցու կեանքից ներս տեղի ունեցող կարեւոր իրադարձութիւններին՝ նպաստելով նրանց հոգիներում ազգանուէր ոգու ու նկարագրի ձեւաւորմանն ու պահպանմանը: Նոյն նախանձախնդրութեամբ Դուք այսօր հրապարակում էք «Նայիրի» շաբաթաթերթը՝ շարունակելով գնահատարժան ծառայութեամբ Ձեր աւանդը բերել ազգային մեր կեանքի շինութեանն ու պայծառութեանը:

Արդիւնաշար է նաեւ Ձեր ստեղծագործական գործունեութիւնը, որի վկայութիւնը Ձեր հեղինակած և խմբագրած բազմաթիւ գրքերն են, հրապարակախօսական յոդուածները, յուշագրութիւններն ու ուսումնասիրութիւնները:

Մեզ համար մասնաւոր գոհունակութիւն է հաստատել, որ Ձեր գործունեութեան ողջ ընթացքին Դուք դրսեւորել էք անկեղծ նուիրում ու նախանձախնդրութիւն հանդէպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: «Արարատի» էջերում հրապարակած Ձեր յոդուածներով Դուք քաջալերել էք մեր ժողովրդի գաւալներին հակառակ ամեն դժուարութեան, անխախտ պահել հաւատարմութիւնը Սուրբ Էջմիածնի նկատմամբ և որդիական պատրաստակամութեամբ օգտակարութիւն բերել նրա շինութեանն ու պայծառութեանը: Մենք ժամանակին ականջալուր ու վկայ ենք եղել, թէ որքան բարձր էր գնահատում Ձեր եկեղեցանուէր ծառայութիւնները և Էջմիածնաւեր ոգին երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետը՝ հայրական իր սէրն ու օրհնութիւնը բերելով հաւաքաւոր հայորդոյ:

Սիրելի պրն Ժիրայր Նայիրի, ի գնահատություն ազգային մեր կեանքում Ձեր երկարամեջ արդիւնաշատ գործունէութեան, հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Վստահ ենք, որ շքանշանի պարգեւը առանել պիտի ոգևորի եւ խանդավառի Ձեզ՝ նոր արգասաւորութեամբ ծառայելու մեր ժողովրդին ու Եկեղեցուն:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Իր հայրական օրհնութեան ներքոյ պարգեւի Ձեզ քաջատուջ երկար կեանք, գործոց մշտանորոգ յաջողութիւններ եւ երկնատուր ամենայն բարիք:

Ողջ լիցուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ հոգւոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ տանն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուա Կոնդակս ի 29-ն հոկտեմբերի

Թամի Տեառն 2004 եւ ի թուիս հայոց ՌՆՇԳ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 262

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԷԴՈՒԱՐԴՈ ՄԵՖԵՐՅԱՆԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱԹ ՄԻՐԵՅԵԱՒ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՑ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄԻՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԷԴՈՒԱՐԴՈ ՄԵՖԵՐԵԱՆ, ՈՐ Ի ԲՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, ԱՐԳԵՆՏԻՆԱ

Յարգարժան պրն Սեֆերեան,

Գոեոնակութեամբ պեղեկացանք Ձեր ծննդեան փարեղարձի առիթով Ձեզ նուիրում գրքի պատրաստութեան մասին: Ուրախալի այս առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում հաւաքաւոր հայորդոյդ համագային մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Մեր հոգում փակալին թարմ են Արգենտինայի հայոց թեմ կապարած Հովուապետական այցելութեան ընթացքին Ձեզ եկար Մեր հանդիպման բարի յուշերը, երբ առիթ ունեցանք անձնապէս ճանաչելու Ձեզ եւ ի մոտոյ ծանօթ դառնալու Արգենտինայում եւ Մայր Հայրենիքում կեանքի կոչած Ձեր եկեղեցանուէր ու ազգօգոյս գործերին:

Տասնեակ փարիներ Դուք ազնիւ նուիրաւորութիւններով Ձեր աջակցութիւն էք բերում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան իրականացմանն ու Աստուածակառոյց Մայր Աթոռիս շինութեանն ու պայծառութեանը: Այսօր Վեհաբանի մարմարեայ փախարակին արձանագրում մեր Եկեղեցու պատուարժան բարերարների անուանաշարքում արժանիօրէն գեւորեալով եւ Ձեր անունը՝ ի քիս բոլոր այցելութիւնքի: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին միշտ շէն ու պայծառ քիսնելու Ձեր նախանձախնդրութիւնը եւ Սուրբ Էջմիածնի հանդէպ Ձեր որդիական նուիրումը արժանացրել են Ձեզ մեր Եկեղեցու պատուոյ բարձրագոյն «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանին, որը մեր Եկեղեցու ու հաւաքաւոր ժողովրդի գնահատանքն է Ձեզ, շնորհեալով ձեռամբ երջանակայիշարակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Խորը գոեոնակութիւն է Հայրապետիս համար, որ մեր հանդիպման ընթացքին վերջապիս ազնւօրէն հասարակեցիք Ձեր պատրաստակամութիւնը շարունակելու Հառիճավանքի նորոգութեան ու բարեկարգման հովանաւորութիւնը՝ յաւերժացնելով Ձեր անունը որպէս միջնադարեան այդ շքեղակառոյց համալիրի բարերար: Այլեւս նաեւ Ձեզ համար է «Երանի Եկեղեցի շինողաց» մաղթանքը, որ դարեր շարունակ առ Աստուած է բարձրանում ու պիտի շարունակի բարձրանալ հայորդեաց երախտագէտ հոգիներից:

Յարգարժան պրն Սեֆերեան, շնորհաւորելով Ձեզ Ձեր ծննդեան փարեղարձի առիթով, ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին պարգեւի քաջառօղջութիւն, երջանիկ կեանքի երկար օրեր եւ եկեղեցաշէն գործերի նորանոր յաջողութիւններ:

Մեր մաղթանքն է, նաև, որ Բարձրնալ Տէրը զօրացնի համայն մեր ժողովրդի եկեղեցասիրութեան և հայրենասնոթիքումի ոգին՝ Իր հանապազ հովանու ներքոյ միշտ ամաչնորդելով մեծարժան գործերի:

Ողջ լսրութի Տէր, զօրացնալ շնորհօք Սուրբ Հոգոյն և յաւեր օրհնեալ ի Մէնջամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ**

Տուալ Գիրս Օրհնութեան ի 29-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 496

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2004 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Ն.Ա.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի Սրբապատեմ կոնդակով

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Հովհաննես Դկրյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Սարգիս սարկավազ Իզնարիոսյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Համբարձում սարկավազ Էթիզյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Օրենսդրության գիր է փրվել.

Զինա Մերապյան (Իտալիա)

Գազիկ Շահգեղյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)

Զորջ Լեյլեկյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Երվանդ Ղազանցյան (Արարատյան Հայրապետական թեմ)

ՀԲԸՄ Կանադայի մասնաճյուղին

Սուրբուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի 80-ամյակին՝ ԱՄՆ հայոց

Արևմտյան թեմում կազմակերպված միջոցառման առիթով

Համասկոսի Կյուլպենկյան վարժարանին

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղին

Երևանի Վահան Թեքեյանի անվան դպրոցին

Սուրբ Հարություն եկեղեցու ծխական համայնքին (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Ավագության պատիվ է փրվել.

Պողոտ քահանա Պարոնյան (Բրազիլիայի հայոց թեմ)

Հովսեփ քահանա Հակոբյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱՍՏԱՆԱԿԱՆ ՊԱՐԵՑԻՆ Բ ԱՄՆՆԱՅԻՆ ՆԱՅՐԵՂԻԿՈՍԻ ՆԱՅՐԱՎԵՐԱԿԱՆ ԿՐԹԻՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԵՐՈՒՄԻ Ս. ՄԿՐԻԿՅԱՆԻ ՊՈՏՅԱՆԸ, ՈՐՆ ԱՎԱՐԿԵԼ Ե՛ ԽԱՄԱԽԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՈՒՅԻՄ, ԽՈՒՄԵՆԵՐԻ Ի-ԻՅ ՆՃԱՆԱԿՎԵԼ Ե՛ ՍՆԱՆԻ ՎԱԳԵՆՅԱՆ ԴԱՐԱՆՈՑԻ ԽՈՒՄԻՆ ԿԱՇՈՒՄԻ ԱՎԱՐԿԱԿԱՐԵՐ:

Տ. ՄԿՐՏԻԶ ԱԲԵՂԱ ՊՈՌՅԱՆ (ավագանի անունը՝ Հայկ)

ՆԵՐՎԵԼ Ե՛ 1975 թ. ԷՋՄԻԱԾԻՆ քաղաքում:

1982-1992 թթ. սովորել է Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում:

1993-1998 թթ. սովորել է Սնանի Վազգենյան Նոգնոր Դպրանոցում:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Ս. ԷՋՄԻԱԾԻՆԻ ԳԼՈՐԴՅԱՆ Նոգնոր Ճեմարանում:

1999 թ. ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Խոսքով Անձնացու «Պատարագի մեկնության»

աստիճանագրությունը» թեմայով:

2001 թ. ձեռամբ Ամենայն Նայոց Գարեգին Բ Կաթողիկոսի ձեռնադրվել է կուսակցի քահանա:

2001-2003 թթ. սովորել է Անգլիայի Մրֆիլդի քոլեջում և Լիք Խամալսարանում՝ ստանալով բակալավրի աստիճան:

2003-2004 թթ. ուսումը շարունակել է Քարդիֆի (Անգլիա) Խամալսարանում՝ ստանալով աստիճանագրության մագիստրոսի աստիճան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԿՄՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով օրհնում ենք բոլոր մանկավարժներին, ուսանողներին ու աշակերտներին և շնորհավորում ուսումնական տարվա վերաբացման առիթով:

Գիտելիքի օրվա լուսաբաղձ խորհրդով սկսվում է ուսումնական մի նոր տարի, նոր սկիզբ՝ նոր հույսերով ու ծրագրերով: Սկսվում է եռանդագին աշխատանքի ու եվիրումի, ջանասիրության, գիտելիքների ամբարման ու արժեքների ճանաչման, եղևոր ու մտավոր հասունացման ևս մեկ շրջան:

Միջոցի մանկավարժներ, կրթության ասպարեզի սպասավորներ և ուսանողներ ու աշակերտներ, Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ ձեր միասնական ջանքերով ուսումնական տարին լինի լիակատար իր արդյունքներով, որոնք պիտի լուսավորեն ձեզանից յուրաքանչյուրի և ողջ մեր ժողովրդի ճանապարհը ու ծառայեն անավաճառ և մեր Հայրենիքի առաջընթացին:

Թող Աստված շնորհագարդի բոլորիդ և առաքապես օրհնի ու հանապազ պահպանի իր Ամենախնամ եղևանու ներքո: Ամեն:

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին,

1 սեպտեմբերի 2004 թ.

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ**

Միջոցի ժողովուրդ հայոց ի հայրենիս և ի Սփյուռս,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք ձեզ հայաստանի Անկախության Օրվա առիթով և բերում ամենքիդ հայրապետական Մեր սերն ու օրհնությունը:

Միասնական կամքով մեր ժողովուրդն ընտրեց հայաստանի անկախությունը՝ ազատ ապրելու ու արարելու իր իրավունքն ու դարավոր ձգտումը: Երկրաշարժի ավերների ու վշտերի, շրջափակման ու արցախյան ազատամարտի դժվարությունների մեջ չընկրկեց ու չերկնչեց հայության հոգին՝ հաղթանակներ կերտելով ազգային մեր պետականության կայացման, վերափոխումների ու ձեռքբերումների ճանապարհին:

Այսօր գոհության և փառաբանության աղոթքը Մեր շուրթերին՝ հայցում ենք, որ Բարերարն Աստված գորացնի առ հայրենին մեր սերը, ու այդ սիրով լուսավորված՝ կյանքի կոչվեն հայրենաշեն մեր գործերը, որ ազատ մեր հայրենիքը շարունակի նորոգվել շինությամբ, լցվել հույսերով համայն մեր ժողովրդի, և ազատության մեջ ծնված մեր սերունդները միշտ կարևորեն Անկախության Օրվա խորհուրդը՝ իբրև ամենամեծ ձեռքբերում:

Թող Աստված Իր օրհնության ներքո խաղաղ պահի աշխարհը համայն ու պահպանի ազգս հայոց և հայրենի երկիրը մեր. ամեն:

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին,

21 սեպտեմբերի 2004 թ.

«Ս.ՄԱՏԱՎԿ - ԱՐԽԵՍՐԱՊ» ՀԲԱՆՇԱՐՆ «ԶԱՐԹԱՆՔ» ԹԵՐԹԻ ԽՄԱՐԱԳԻՐ ՊԱՐՈՒՅՐ ԱՐԲԱՇՅԱՆԻՆ

Սեպտեմբերի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ հանդիսություն, որի ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի Սրբապատ Կոնդակով ՌԱԿ լիբանանյան մասնաճյուղի «Զարթոնք» պաշտոնաթերթի խմբագիր Պարույր Աղբաշյանին շնորհվեց հայ Եկեղեցու «Ս. Մառիակ - Ս. Մհարոպ» պատվո բարձր շքանշանը՝ գրական, մանկավարժական և լրագրողական գործունեության 30-ամյա փարեղարձի առիթով:

Հանդիսության սկզբին տիար Պարույր Աղբաշյանի կյանքին և գործունեությանն անդրադարձավ «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր հակոբ Ավետիսյանը՝ շնչփնելով հարկապես Պարույր Աղբաշյանի անսակարկ ծառայությունն ու նվիրումը հանդեպ Ս. Էջմիածինն ու Մայր Աթոռի գահակալները:

«Էջ Միածինն ի հօրե» շարականի երգակցության ներքո հանդիսությունների դասիճ բերվեց հայրապետական Սրբապատ Կոնդակը, որն ընթերցեց Արմավիրի թեմի առաջնորդ Ս. Սիոն եպիսկոպոս Աղամյանը:

Մտերմագործական Չեր բարեջան գործունեության շնորհիվ այսօր ընթերցողի սեղանի վրա են Չեր հեղինակած բազմաթիվ գրքերը, հողվածներն ու երապարակումները, որոնք բերել են Չեզ հայրենասեր մրավորականի և ազգային գործչի բարի համբավ ու ճանաչում: ...Չեր կյանքում Դուք առանձնակի տեղ եք հատկացրել նաև սփյուռքահայ մաքաղ սերնդի հայեցի կրթությանն ու դաստիարակությանը: Ստանձնելով վարչական զանազան հանձնառություններ Սփյուռքի Ազգային կրթօջախներում և դասավանդելով հայագիտական առարկաներ՝ Դուք ոչ միայն գիտելիք եք փոխանցել Չեր սաներին, այլև Չեր հոգու սերը՝ հոգևոր և ազգային մեր արժեքների հանդեպ, որպեսզի երիտասարդ հայորդիները կյանք մտնեն հարուստ գիտելիքներով, ազգային մեր կյանքի շինությանը ծառայություն բերելու պարտապարականությամբ»,- ասվում է հայրապետական կոնդակում:

Այնուհետև իր սրտի խոսքն ասաց Պարույր Աղբաշյանը. «Իսկապես ինձ համար բացառիկ և եզակի օր է, երբ Ամենայն հայոց Կաթողիկոսի ձեռամբ արժանացա այս բարձրագույն պատվին: Վստահ եմ, որ այն նոր լիցք պիտի դառնա, որպեսզի ավելի ամուր կառչեմ մեր արժարներին, ազգին ու հայրենիքին»:

Վերջում ներկաներին հայրապետական օրհնության իր խոսքն ուղղեց Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը. «Հայրապետիս եամար մեծ ուրախություն է այս պահին, քանզի մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում մի անձի, ով տասնյակ տարիների ծառայություն է մատուցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, մեր ազգային կյանքին ու հայրենիքին»,- նշեց Նորին Սրբությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, Գերագույն հոգևոր Խորհրդի անդամներ, ՀՀ-ում Լիբանանի հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ժեքրայիլ Ժեհարան, մշակույթի և գիտության մշակներ և այլ հյուրեր:

ՄԱՅՐ ԱԹՈՐ Ս. ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՍՏՈՂՈՍԱԿԱՆ ԵԿԵՔԵՐՈՍՏՈՍ (left) with the delegation of the Holy See (right) during the visit to the Holy See.



ՎԵՐԺՈՒՄ ԴԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ՄԱՐԿ - Ս. ՄԵՆՈՒԿ» ՇԵՄԱՆԱՌՎԻ Է ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ԱԼԲԵՐՏ ՄԵՎԻՅԻՆ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵՑ
ԱԼԲԵՐՏ ՄԵՎԻՆՉԻՆ**

Հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի, փնդի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն: Նորին Սրբությունը հայ Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրեց Գերմանահայոց թեմի մշակութային հանձնախմբի արեւնապետ Ալբերտ Սեինչին՝ Գերմանիայում հայ մշակույթը ներկայացնելու նախաձեռնողի արշավանքի համար:

Բացման խոսքում Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանն անդրադարձավ Ալբերտ Սեինչի անցած ուղուն, մշակութային գործունեությանը և այն մեծ սիրտն ու նվիրմանը, որ նա ունի հանդեպ մեր հայրենիքն ու Ս. Էջմիածինը: Այնուհետև «Էջ Միածինն ի հօրե» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց հայրապետական Սրբապատ Կոնդակը, որով Նորին Սրբությունն իր գնահատանքն էր հայտնում եկեղեցանվներ բարերարին:

Արժանանալով պատվավոր պարգևին՝ Ալբերտ Սեինչը շնորհակալություն հայտնեց Վեհափառ հայրապետին՝ հավաստիացնելով, որ իր կարելին այնպիսի հայրենիքի և Ս. Էջմիածնի պայծառության ու բարգավաճման համար:

Վերջում ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Ամենայն հայոց հայրապետը՝ բարձր գնահատելով Գերմանահայոց թեմի մշակութային հանձնախմբի արեւնապետ Ալբերտ Սեինչի մշակութային գործունեությունը:

«Հայ մշակույթը, որ սնվել է Ավետարանից, Զրիստոսի լույս պատվիրաններից ու պատգամներից, միաժամանակ դառնում է սնուցիչ հայ հավատարմոր հոգու համար, դառնում է ակունք, աղբյուր հայորդու պապակ հոգու համար՝ վերստին հոգնորով գորացնելու իր անձը, հոգնորով ամրացնելու իր հոգին: Մենք գիտենք, որ մեր ժողովուրդը դարերի հովվությամբ բոլոր փորձությունների և դժվարությունների մեջ կարողացել է ապահովել իր գոյությունը շնորհիվ իր հավաքի ու հոգևոր իր արժեքների, արարելու և ստեղծագործելու իր կամքի ու ներուժի», - նշեց Նորին Սրբությունը:

Հանդիսությանը զեղարվեստական հայտագրով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ընմարանի երգչախումբը:

*ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ԳՐՈՂ ՓԻԹԵՐ ԲԱՍԱՔՅԱՆԻՆ

Մեպոնմբերի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան հանձնեց ամերիկահայ գրող Փիթեր Բասաքյանին:

Վեհափառ հայրապետն իր խոսքում բարձր գնահատեց նրա ստեղծագործական վաստակը՝ մաղթելով թողուն գրիչ ու արդյունավոր օրեր:

«Պատահական չէ, որ Փիթեր Բասաքյանը երկու գրքեր՝ «Ճակատագրի սև շունը» և «Այրվող Տիգրիսը», նվիրել է հայոց ցեղասպանությանը: Կարծես թե իր նախնիների ոգու կանչն է փոխանցվել իրեն և արձագանքել իր հոգում և գրչի փակ արդյունքի վերածվել այդ գրքերի մարմնավորումով: ...Այս պահին երկնքից օրհնություն է իջնում այս հարկի ներքո Ձեր ծառայության և աշխատանքների համար, որոնք մեկ անգամ ևս հարգանք, աղոթք են մատուցում մեր բյուրավոր զոհերի հիշատակին»,- նշեց Նորին Արքությունը:

Հանդիսությունը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ գրողների միության նախագահ Լևոն Անանյանը, ՀԲԸՄ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Աշոտ Ղազարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՐ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



ՎԵՐԱԺԱՊԱՆՈՒՄ ԴԱՅՐԱՊԵՏԻ ՓԻՏԵՐ ԲԱՆԱՅԱԼՈՒՄԻ, ՆՐԱ ՄԻՐ ԵՎ ՏՐԿԱՆՈՒՄ ՈՒ ՆՐԱՄԱՑ ԶԱՆԿԵՐԱԿՈՐ ԿԱՌԱՐԱՐՆԵՐ



ს. ჯანაშია, მ. ჯანაშია, მ. ჯანაშია. ს. ჯანაშია, მ. ჯანაშია, მ. ჯანაშია.

ՎԵՆԱՓԱՌ-ՆԱՅՐԱՊԵՏԸ ԱՎԱԳՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐհԵՑ Տ. ՊՈՂՈՍ ԲԱՏԱՆԱ ՊԱՐՈՆՅԱՆԻՆ

Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդառաջելով Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանի խնդրանքին, հոկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ավագ քահանայության պատվով շնորհեց Բրազիլիայի հայոց թեմի հոգևոր սպասավոր, Օգոսկոյի Ա. Նովիաննես եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Պողոս քահանա Պարոնյանին՝ ի գնահատություն նրկարամյա և արդյունաշատ ծառայության:

Տեր Հոր նախանձախնդիր ծառայության ականաւորեսն է եղել նաև Ամենայն Հայոց Հայրապետը՝ այս փարի Բրազիլիա կարարած հովիւաւերական այցի ընթացքում:

Հայրապետական Սրբաւրատ Կոնդակի ընթերցումից հետո Վեհափառ Հայրապետը համոզմունք հայտնեց, որ 20-ամյա քաջ ու բարի հովիվ իր փորձառությամբ Տեր Հայրը կշարունակի ծառայել ի շահ բրազիլահայոց զաղութի բարօրության:

«Դուք պետք է լինեք ոգին Օգոսկոյի հայոց զաղութի, և Ձեր ոգուց պիտի կայծ առնի հայաշունչ կյանքը: Առաջնորդեցեք հայորդիներին առավել նախանձախնդրությամբ և ծառայասիրության ու հայրենասիրության Ձեր անձնական օրինակով», - կշեց Նորին Սրբութունը:

«Մեր աչքերը միշտ դարձած են դեպի Սուրբ Էջմիածին և մեր հույսը Հայաստանն է և մեր Մայր Եկեղեցին Ձերդ Սրբության գլխավորությամբ», - ասաց Պողոս ավագ քահանան՝ շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին բարձր պատվի համար և վստահեցնելով, որ կանի հնարավոր առավելագույնս հայապահպանության և Հայ Եկեղեցու հեղինակության առավել բարձրացման համար:

Ավագության պատվի շնորհման արարողությանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատրասխանատու Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, Մայր Աթոռի միաբաններ:

ՄԱՅՐ ԱԹՐԱՆ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՈՒ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԲԵՍԼԱՆԻ ԶՈՆԵՐԻ ՀՈԳԻՆԵՐԻ ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կիրակի, սեպտեմբերի 5-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց Ա. Պապարագ: Պապարագին էր Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ վարդապետ Նալբանդյանը:

Հավարդ Ս. Պապարագի, հանդիսավարությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կապարվեց հոգեհանգստյան մասնավոր արարողություն՝ Հյուսիսային Օսեթիայի Բեսլան քաղաքում ահաբեկչության հետևանքով զոհված հարյուրավոր անմեղ մանկանց ու մեծահասակների հոգիների հանգստության համար:

Կապարված ոճրագործության ամփոփ Նորին Սրբությունը հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ցավակցական գրեր է հղեց ՌԴ նախագահ Վ. Պուտինին, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պապրիաթք Ալեքսի Բ-ին և Հյուսիսային Օսեթիայի նախագահ Ա. Չապտուխին:

Սեպտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, հանդիսավարությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ևս փեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ Հյուսիսային Օսեթիայի Բեսլան քաղաքում կապարված ահաբեկչության զոհերի հոգիների հանգստության համար:

Արարողության ավարտին ներկաներին իր Հայրական խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մեկ անգամ ևս դաքապարտելով ահաբեկչության յուրաքանչյուր փորձ, որն ուղղված է արարչագործության պսակ հանդիսացող մարդուն:

«Աշխարհի հայացքը մի քանի տաղանապալի օրեր ուղղված էր դեպի Բեսլան, ուր դարձյալ պատրանդ էին բազմաթիվ երեխաներ՝ իրենց ծնողների և ուսուցիչների հետ: Թեպետ մենք բոլորս անհանգստացած ու վրդովված էինք, սակայն երբեք չէինք կարող պարկեշտացնել իրադարձությունների այդպիսի վախճան: Ահաբեկչությունը ներկայացավ իր զարհուրելի դեմքով: Այն, ինչ փեղի ունեցավ, լուրի արդարացում: Այդ անմարդկային ու սրբապիղծ բռնարարքին չկա ներում: Ի՞նչ նպատակներ կարող են վկայակոչել անպաշտպան երեխաների ու կանանց վրա ձեռք բարձրացնողները, թիկունքից նրանց վրա կրակահերթ բացողները: Այսպիսի չարաղեր գործերը, արդարև, չեն կարող խուսափել մարդկային և աստվածային դատաստանից:

...Այս վշտալի օրերին, երբ տարբեր լազգերի ու կրոնների պարկանող բազմաթիվ մարդիկ և պետական այրեր իրենց ցավակցությունն էին հայտնում զոհվածների ընտանիքներին և Ռուսաստանի ժողովրդին, միաթառակյալ էր լսել պետությունների ջանքերը միավորելու պաշտոստակամության ու կոչերի մասին: Այսօր այս եկեղեցում ներկայությունը Հայաստանի պետական այրերի և Հայաստանում գործող տարբեր պետությունների դեսպանների ու ներկայացուցիչների ևս մեկ վկայություն է, որ բոլորիս միավորում է նույն գիտակցությունը՝ ա-

հաբեկությունը դատաստանելու ու մերժելու և ամեն միջոց գործադրելու, որ պետքի մարդկության կյանքից դուրս մղվեն աստվածությանը նման բռնադատները: Մարդիկ չեն կարող և չեն ուզում ապրել թշնամության ու անվստահության, շարունակվող տագնապների, վախի ու սարսափի մեջ: Բոլոր ժողովուրդների հրազանքը խաղաղությունը, բարոյ ու առաքազնաց կյանքն է իրենց զավակների ապահով, հրջանիկ ներկան ու ապագան: Մենք հավատում ենք, որ աշխարհը պիտի միավորվի ահաբեկչության մեծ վտանգի ու սպառնալիքի առջև, որպեսզի ոչ մի ժողովրդի կյանքում տեղ չգտնեն նման աղետներ ու ողբերգություններ»,- նշեց Նոբին Սրբությունն իր խոսքում:

Վեհափառ Հայրապետը համայն հայության անունից վշտակցություն հայտնեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին, Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսի Բ-ին, ՏՏ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դոբյոկովին, ահաբեկչության զոհերի հարազատներին և Ռուսաստանի ողջ ժողովրդին:

Այնուհետև ահաբեկությունը դատապարտող խոսքերով հանդես եկան ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը և Սոս Սարգսյանը:

Արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները, ՏՏ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, կառավարության անդամներ, ԱԺ պարզամավորներ, ՏՏ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, մշակույթի և գիտության գործիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿՈՆ ՀԱՄԱԿԱՐԳ



הממונה על המשרד לביטחון המדינה, משה דיין, עם חברי הממשלה

ՎԵՆՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐՎԵՅ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴԱՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ

«Մալենադարանի բարեկամներ» բարեգործական ընկերակցություն ստեղծելու գաղափարը շուրջ 40 տարվա պատմություն ունի: 1960-ական թվականներին Մալենադարանի փնթրեն ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը, սիրիահայ գրասեր, հասարակական գործիչ Վարտուժան Մալաթյանը, ամերիկահայ գրող Լևոն-Ջավեն Սյուրմեյանը, եգիպտահայ լրագրող Սարուխանը, հայերի հայագետներ Բելգիայից, Ֆրանսիայից և այլ երկրներից, Մալենադարանի ձեռագիր և տպագիր ֆոնդերի պահպանության և հարստացման ծրագրերին աջակցելու նպատակով, նախաձեռնել էին «Մալենադարանի բարեկամներ» ընկերակցության ստեղծմանը:

Երջանկափոխարկ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը սիրահոժար սրանձնել էր ընկերակցության Պապովո նախագահությունը: Ֆրանսիայում մասնաճյուղ ստեղծելու գործն իր վրա էր վերցրել հայագետ պրոֆ. Ֆ. Ֆեյդին: Մակայն ինչ-ինչ պատճառներով փնարավոր չեղավ այս կարևոր նախաձեռնությունն իրականացնել:

Նորանկախ Հայաստանի տնտեսական հարաբերությունների նոր կացութաձևին անցնելու դժվարությունները վերստին շեշտեցին Մալենադարանի պահպանմանն ու զարգացմանն աջակցելու նպատակով ընկերակցություն ստեղծելու անհրաժեշտությունը:

Վազգեն Ա Վեհափառի և Լևոն Խաչիկյանի շուրջ քառասունամյա վաղեմության այս նախաձեռնությունն իրականացավ 2001 թվականին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պապովո նախագահությամբ և Մալենադարանի փնթրեն ակադեմիկոս Սևն Արեշտյանի նախագահությամբ ստեղծվեց «Մալենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը (ՄԲԲՀ):

Անցած երեք տարվա ընթացքում ՄԲԲՀ-ն արդեն հասցրել է բավականին լուրջ ծրագրեր իրականացնել:

Այսպես, «Մալենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի նվիրատուների աջակցությամբ ձեռք են բերվել շուրջ 17 հայերեն ձեռագիր և 15 հնագիտական գիրք: ՄԲԲՀ-ն իրականացնում է նաև գրքերի գյուրի 1600-ամյակին նվիրված UNICODE համակարգի համար նախատեսված նոր տառատեսակների ու տառաձևերի ստեղծման ծրագիրը: Հիմնադրամի միջոցներով կառուցվել են նաև Մալենադարանի գրադարանի և պարբերական մամուլի պահոցների երկրորդ հարկերը: Միջոցներ են տրամադրվել նաև Մալենադարանի ձեռագրերի նկարագրության աշխատանքների համար և հրատարակությանն և պատրաստվել «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց»-ի Գ, Դ, Ե, Զ, Է պրակները, կազմրվել է Մալենադարանի հնագիտական գրականության համակարգչային շտեմարանը: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, «Գալուստ Կյուլպենկյան» հաստատության և «Մալենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի համատեղ գոր-

ծակցությամբ կրթաթոշակ է հատկացվել Մալբենադարանի երկու երիտասարդ գիտաշխատողների՝ **Բեկդիսյի** և **Իսպախյի** համալսարաններում ուսանելու համար:

Ապրիլի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Մալբենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրենությանը և Մաշտոցի անվան Մալբենադարանի ղեկավարությանը:

Նորին Սրբությունը, լինելով հիմնադրամի պատվավոր նախագահը, հանդիպման ընթացքում ներկաների հետ քննարկեց հիմնադրամի գործունեությանը վերաբերվող հարցեր: Հիմնադրամի եռամյա գործունեությունը ներկայացրեց հիմնադրամի գործադիր տնօրեն Արշակ Բանուցյանը:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց հիմնադրամի՝ Մալբենադարանի համար իրականացվող ծրագրերին:

Հանդիպման ընթացքում որոշվեց «Մալբենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդրանիկ նիստը գումարել հոկտեմբերին:

Համաձայն ընդունված այս որոշման, այն տեղի ունեցավ հոկտեմբերի 20-22-ը: Նոյեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, պատվո նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, իր աշխատանքներն սկսեց «Մալբենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը: Վեհափառ Հայրապետի ղեկավարության և օրհնության խոսքից հետո լսվեց հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Բանուցյանի զեկույցը հիմնադրամի անցած երեք տարիների աշխատանքի մասին: Այս ընտրվեց երեք հոգուց բաղկացած վերստուգիչ հանձնաժողով, հետևյալ կազմով. նախագահ Արմեն Գասպարյան՝ ՄԲԲՀ Հայկաի ներկայացուցիչ, Ավո Հովհաննիսյան՝ ՄԲԲՀ պատվո անդամ, Վարդան Գրիգորյան՝ Մալբենադարանի գիտական խորհրդի նախագահ:

Հոգաբարձուների խորհուրդն այնուհետև իր աշխատանքները շարունակեց Մալբենադարանում: Հոգաբարձության անդամները երկօրյա աշխատանքի ընթացքում հաստատեցին ՄԲԲՀ հաշվետվությունը, «Գրանթ Թրոնթոն Ամիո» հաշվեքննիչ կազմակերպության զեկույցը հիմնադրամի եռամյա գործունեության մասին և ՄԲԲՀ ներքին կանոնակարգը:

Այնուհետև հաստատվեց ՄԲԲՀ հոգաբարձության անդամների կազմը, ինչպես նաև որոշվեց 2005 թ. մայիսի 22-30-ին երևանում անցկացնել ՄԲԲՀ համաժողով:

Նոյեմբերի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ «Մալբենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հավաքի եզրափակիչ հանդիսությունը, որի ընթացքում ընթերցվեց Վեհափառ Հայրապետի Սրբաբարձ Կոնդակը՝ տրված ի գնահատություն «Մալբենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի եռամյա գործունեության:

Հանդիսությունն սկսվեց Տ. Ներսես արքեպս. Պապապալյանի բացման խոսքով: Սրբազան Հայրն անդրադարձավ Մաշտոցի անվան Մալբենադարանի ստեղծման պատմությանը՝ շեշտելով ձեռագրերի գրիչների, ծաղկողների, բարերարների նվիրումն ու մեծ ներդրումը հայ մշակույթի գանձարանի հարստացման գործում: Նա նաև բարձր գնահատեց Մալբենադարանի այսօրվա աշխատակիցների անսակարկ նվիրումն իրենց սուրբ գործին:

ՏԱՄ ԿՏԱԶԽԱՆՈՒՄԵՆԷ ՄԻՓԵԼԻԿԵ ՆԵՐՍԵՍԻԱՆԻ ՄԱՍՆԱԿԱՆՈՒՄԻՆ ԿՏԱՆԻՆ ԵՒ ԿԵՆՏՐԱԼՆԵՐԻՆ ԿԱԶՄԱՐԴԱՆԱԾԱԾԱԾԻՆ



Ինքնուրույն ժողովուրդի օրհանգիստ



ՄԱՍԻՍԻԱՆ ԵՍԵԿԻԱՆ
ՄԱՍԻՍԻԱՆ ԵՍԵԿԻԱՆ



ՎԵՐԱԺԱՆԴ ԳԱՅՐԱՊԵՏՆԵՐ ԵՎ «ՄԱՏԵՆԱՐԱՐԱՐԱՆԻ ԲԱՐԵՎԱՄԱՆԵՐ» ԴԻՄՆԱՐԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ
 ԱՐԵՎԿ ԲԱՆԽՈՒՅՈՒՄԵՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ ԵՆ «ՄԱՏԵՆԱՐԱՐԱՆԻ ԲԱՐԵՎԱՄԱՆԵՐ»
 ԴԻՄՆԱՐԱՐԱՆԻՆ ՆԿԻՐԱԾ ԳԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԵ





ՎԵՐԱԲՈՒՐ ԴԱՅՐԱՊԵՏԸ «ՄԱՏԵՆԱՐԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԱՆԵՐ» ԴԻՄԵՆԱՐԻՍՄԱՆ ԱՆՐԱՍՏԻ
ՊԱՏԿԱԾ ՎԿԱՅԱՅԻՐ Է ՇՆՈՐՀՈՒՄ ՄԱՔՍԻՄ ԴԱԿՈՔՅԱՆՆԸ

«Պեպք չէ պատերազմական դաշտեր փնտրել հերոսություններ կատարելու համար, հերոսություն է նաև այն մարդկանց գոհաբերությունը, ովքեր հայ մշակույթի պանծացման համար իրենց կյանքն են նվիրաբերում բոլորանվեր կերպով, և այդպիսով թեն գնահատանքը քիչ է, բայց նրանք արժանանում են աստվածային օրհնության, հայ ժողովրդի շնորհակալությանն ու երախտագիտությանը»,- նշեց Սրբազան Հայրն իր խոսքում:

Այնուհետև ներկաներին իր սրտի խոսքն ուղղեց «Մարենադարանի բարեկամներ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Մաքսիմ Հակոբյանը: Նա ընդգծեց, որ իր կարելին պիտի անի՝ աջակցելու համար Մարենադարանի գործունեությանը:

Ներկաներին ողջունեց նաև «Մարենադարանի բարեկամներ» հիմնադրամի գործադիր տնօրեն Արշակ Բանուկյանը՝ մարենադարանցիների կողմից շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը՝ մշակական աջակցության և հոգածության համար: Անդրադառնալով հիմնադրամի գործունեությանն ու ապագա ծրագրերին՝ նա շնորհակալություն հայտնեց վերջին երեք տարիների ընթացքում հիմնադրամի միջոցով Մարենադարանում տարրեր ծրագրեր իրականացրած նվիրատուներին՝ շնշարելով հատկապես «Հայ բարեգործական ընդհանուր միության», «Գ. Կյուլպենկյան հաստատության» և Մաքսիմ Հակոբյանի անսակարկ աջակցությունը:

«Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբապառ Կոնդակը, որն ընթերցեց Տ. Մեղովբե վարդապետ Իսախանյանը: Այս կոնդակով Նորին Սրբությունն իր գնահատանքն ու աջակցությունն էր հայտնում «Մարենադարանի բարեկամներ» հիմնադրամին՝ արժեկոթելով մաշտոցյան մարենադարանի դերը մեր ժողովրդի կյանքում (տես էջ 9):

Այնուհետև ներկաներին իր հայրական խոսքն ուղղելով Ամենայն Հայոց Հայրապետը հորդորեց առավել նախանձախնդրությամբ ու նվիրումով լծվել հայրենաշինությանն ու մշակութային գանձերի վերհանման գործին՝ հավատարիմ մնալով Ս. Սահակ Հայրապետի ու Ս. Մեսրոպ Մաշտոցի թողած ավանդներին:

«Մարենադարանը սրբազան օջախ է յուրաքանչյուր հայորդու համար, որովհետև այն գանձարանն է հայ ժողովրդի, ուր ամփոփված են մեր ժողովրդի նվիրական արժեքները: Մի գանձարան, որ ունի հրաշագործող գործություն, որ ճառագում է մեր ձեռագիր մատյաններից դեպի մեր ժողովուրդը: Մենք մեր նվիրական պարտքն ենք համարում ըստ ամենայնի աջակցել և գորակցել Մարենադարանի բոլոր աշխատանքներին, ինչպես ձեռագրերի պահպանության, այնպես էլ ուսումնասիրությունների իրականացման աշխատանքներին, որպեսզի մարգելի դառնան Մարենադարանում պահվող ձեռագրերը մեր ժողովրդի գավակաց: Նաև պեպք է կարողանանք առաքելության կոչել այդ մատյանները մեր ժողովրդի կյանքից ներս»,- նշեց Նորին Սրբությունը:

Հայոց Հայրապետը, ի գնահատություն «Մարենադարանի բարեկամներ» հիմնադրամին Մաքսիմ Հակոբյանի աջակցության, նրան շնորհեց հիմնադրամի Պատվո անդամի վրկայագիր:

Հանդիսությանը գեղարվեստական նայարագրով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի երգչախումբը:

Միջոցառմանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, Մադենադարանի աշխատակիցներ և հյուրեր:

Սկզբնական հանգրվանում ելք «Մադենադարանի բարեկամներ» հիմնադրամին մասնակցության միջոցները:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԲԲԶ ԾՐԱԳՐԵՐԻՆ

ՄԲԲԶ-ի տնօրենները և շնորհում այն անձանց և կազմակերպություններին, որոնք մասնակցել են Մատենադարանի ծրագրերին և կատարել համապատասխան կյանքական ներդրում:

Մեկենաս	
Պատվո անդամ	\$100.000-300.000
Բարերար	\$10.000-100.000
Բարեգործ	\$1.000-10.000
Աջակից	\$100-1.000
Մասնակից	\$10-100

Մեկենաս, Պատվո կամ Բարերար անդամի տնօրեն կրողները դառնում են ՄԲԲԶ-ի Հոգաբարձուների խորհրդի անդամ:

Բարեգործ, Աջակից կամ Մասնակից անդամի տնօրեն կրողները դառնում են ՄԲԲԶ-ի Ակումբի անդամ:

- ՄԲԲԶ-ի նվիրատուները կարող են դառնալ հիմնադրամի հրատարակած մատենաշարերից որևէ մեկի բաժանորդ:
- Մասնակցությունը լուսաբանվում է Մատենադարանի պաշտոնական հանգույցում (www.matenadaran.org) «Մատենադարան» տարբերակում և տեղեկագրում:
- Մասնակիցներն իրավունք ունեն ստանալու ցանկացած տեղեկատվություն հիմնադրամի գործունեության մասին:
- Մասնակցության այլ առաջարկները (կտակներ, պարբերական կամ այլ կարգի նվիրատվություններ) քննարկելի են ՄԲԲԶ տնօրինության հետ:

ՄԲԲԶ-ի ծրագրերին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել Մասնակցության հայտը:

Մասնակցության հայտն անհրաժեշտ է առաքել ՄԲԲԶ տնօրինության հասցեով:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՆՐԱԺԵՇՏ ՏՎՅԱԼՆԵՐ

Ձեր նվիրատվությունը կարող եք փոխանցել՝

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ՝

Հայներարութանկ

«Մատենադարանի բարեկամներ»

h/h 1570002870010100 (AMD)

h/h 1570002870010246 (EUR)

h/h 1570002870010101 (USD)

h/h 1570002870010158 (RUR)

ԵՎՐՈՊԱՑԻՑ՝

CORRESPONDENT BANK:

Commerzbank, Frankfurt/Mein

SWIFT: Cobadeff Acc N: 9498734

BENEFICIARY BANK:

Arminpexbank, Yerevan,

SWIFT: ARMIAM22

BENEFICIARY NAME:

"Friends of Matenadaran" BF

Acc N: 1570002870010246 (EUR)

1570002870010101 (USD)

ԱՄՆ-ԻՑ՝

CORRESPONDENT BANK:

Citibank N.A., New-York,

SWIFT: Citius33, Aba: 0210 0008 9

BENEFICIARY BANK:

Chips UID 317 157 Arminpexbank, Yerevan

SWIFT: ARMIAM22

BENEFICIARY NAME:

"Friends of Matenadaran" Bendevolent Fund

Acc N: 1570002870010101 (USD)

ԱՊՆ-ԻՑ՝

БАНК КОРРЕСПОНДЕНТ:

Сбербанк России, Москва, РФ

БАНК ПОЛУЧАТЕЛЯ:

Арминпексбанк, Ереван, РА

K/C: 30112840500000000371

ПОЛУЧАТЕЛЬ:

"Friends of Matenadaran" Bendevolent Fund

Acc N: 1570002870010158 (RUR)

1570002870010246 (EUR)

1570002870010101 (USD)

ՄԲԲՀ, Մատենադարան, Հայաստան, Երևան 375009, Մաշտոցի պող. 53
 Գեո.՝ (3741)520-420, Ֆաքս՝ (3741)562-769, Էլ. փոստ՝ friends@matenadaran.org

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

ՄԲԲՀ ծրագրերին մասնակցելու ելակառուց, ես

(Անուն, ազգանուն)

Կատարում եմ նվիրատվություն

.....չափով

(գումարը՝ տասներով)

Բարեգործական նվիրատվություն ՄԲԲՀ ծրագրերին
օժանդակելու համար

Անուն.....

Ազգանուն.....

Հասցե.....

Հեռ.

Ֆաքս.....

Էլ. փոստ.....

(ստորագրություն)

.....2005թ.

ՄԲԲՀ ՕՐԱԳՐԵՐ

- ☐ Գիտական պահպանություն
- ☐ Ձեռագրերի վերականգնում
- ☐ Գիտահետազոտական ծրագրեր
- ☐ Ձեռագրերի ձեռքբերում
- ☐ Հրատարակչական ծրագրեր
- ☐ Կրթական ծրագրեր
- ☐ Այցելուների սպասարկման որակի բարելավում
- ☐ «Թվային Մատենադարան» ծրագիր
- ☐ Հայերեն տառատեսակների ծրագիր
- ☐ Հեռահաղորդակցման կապի արդիականացում
- ☐ Կիսակառույց մասնաշենքի շինարարություն
- ☐ Հիմնական դրամագլուխ
- ☐ Այլ ծրագրեր

ՔԱՐՈՉ ԽՈՍՄԱԿԱՆ

Տ. ԱՐՄԱՇ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԲԱՆԴՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 սեպտեմբերի 2004 թ.)

«Մի երկնքի հոգի փոքրիկ»:

(Ղուկ. ԺԲ 32)

«Յանուն Հոր եւ Արդույ եւ Հոգոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացալներ, սիրելի ուխտավորներ Դամասկոսն, այսօր անդրանիկ այս Պատարագիս և գորացած մեր ուխտավորներու աղոթքով, իմ հոգվոյս առաջին պարտքը կհամարեմ իմ որդիական ջերմ սերը և հավաքարմոթյունը հայրենիւ ազգիս Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ իր հայրական գորգտրանքով և իր հայրապետական օրհնությամբ արժանացանք այս պաշտոնին ու ծառայության և իր հոգաբարոյությամբ և իրավերով ահա այսօր ուխտավորներով կգտնվինք Մայր Աթոռի մեջ՝ նորոգելու մեր ուխտը, թրծվելու Մայր Հայրենիքի հողին հետ և սրանալու օրհնությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

«Մի երկնքի հոգի փոքրիկ»:

Ահա փոքրիկ հոգի է Դամասկոսի հայ գաղութը, բայց իր փոքրության մեջ կվառվի և կապրի Էջմիածնի օրհնությամբ, կվառվի, կգոյարսեւ և իր ծառայությունը կբերէ Էջմիածնի ներկայությամբ և այսօր որպէս ուխտավոր եկած ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ տալու մեր գորակցությունը, տալու մեր հավաքարմոթյունը և միաժամանակ այստեղ գորանալով, հոգեպէս ամրանալով, մեր սկզբունքներուն մեջ գտնանդվելով վերադառնալ և այնտեղ մեզի հետ տանել Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունները: Եթե փոքրիկ հոգի ենք, կապրինք Մայր Հայրենիքով, եթե փոքրիկ հոգի ենք, չենք նրկնչի Տիրոջ խոստումին համաձայն, կապրինք և կվառվինք Մայր Աթոռ Ս. Էջմիածնով:

Այսօր, սիրելի հավաքացալներ, մեզի հետ ուխտավորներ բերած ենք Դամասկոսի մեր եկեղեցիներ, ուր ամեն կիրակի տեղի հավաքացալներ իրենց աղոթքը կբարձրացնեն Դամասկոսի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցիներ, որուն խորանին առջև ամեն երիտասարդ զույգ կյանքի խոստումով կմիանա, նույն խորաններ, որուն առջև ամեն հայորդի մանուկ կստանա մկրտության դրոշմը, նույն խորանին առջև են, ուր ամեն հայորդի հրաժեշտ կառնի իր երկրավոր կյանքեն... բերած ենք իբրև արտահայտություն մեր եղբայր կապի, իբրև արտահայտություն մեր գորակցության Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, մոմեր, որ այսօր ահա կվառնենք Մայր Աթոռի աշտանակներուն մեջ՝ մեր աղոթքը միախառնելով ձեր աղոթքին և ձեր աղոթքի գորությունը մեզի հետ տանելով պանդուխտ երկիր՝ Սուրիա Հանրապետության մեջ մեր վայելած շրջանակներուն մեջ և ի Դամասկոս:

Այստեղ երբ կթրծվինք օրհնությամբ և կգորանանք Մայր Աթոռի փառքով, երբ կգոյրնալով Ս. Էջմիածնի Միաձնաւէտ տեսիլքի լույսով, կվերադառնանք մեր տեղերը՝ այս ան-

գամ հստակ, անաղարտ և բյուրեղյա հայելին դառնալու Մայր Հայրենիքի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: Թող ամեն ոք, որ հաղորդվում մեզի հետ, ամեն ոք թող երբ փնտնեն մեզ կառգած միջոցներ, հավատարիմ մեր հեռանկարներուն, արմատապես զորացած մեր ավանդույթներ, թող մեր միջով հայելանանք, և մեր միջով անոնք փնտնեն Մայր Հայրենիք և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Եվ եթե ունինք այս օրինությունը, եթե ունինք այս գորակցությունը, այն ժամանակ է, որ իսկապես կանդաղառնանք և հոգեպես կապրինք Տիրոջ այն խոսքը, Տիրոջ խոսքումը, որ կրես. «Մի երկնցիր հոտ փոքրիկ»:

Սիրելի հավաքացյալներ, այսօր խումբ մը ուխտավորներով ծնկաչոք կադոթենք Էջմիածնի Իջման Սուրբ Խորանին առջև և մեր հոգվո ուխտը կկատարենք՝ սրբանալով օրհնությունը Մայր Աթոռի Ս. Էջմիածնի, լուսավորվելով միածնաէջ փեսիլքով, միախառնվելով հայրենիքի՝ մեր հայրերու դարավոր հողին, գորացած կվերադառնանք՝ մեր մեջ միշտ վառ պահելու սերը, հարգանքը, հավատարմությունը և գորակցությունը առ Հայրենիք և առ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ուրեմն, կերթանք մեր հոտը իբրև փոքրիկ հոտ, բայց հոտ, որ Տիրոջ պարգամով երբեք չի երկնցիր: Եվ ահա այս պարգամին և խոսքումին վրան հիմնըված արժանի եղանք նաև մեր մեջ մարմնավորելու Տիրոջ խոսքումը, որ կրես՝ և անոնք պիտի ըլլան մեկ հոտ և մեկ հովիվ:

«Մի երկնցիր հոտ փոքրիկ»:

Ահա այս է պարգամը մեր Տիրոջ, զոր այսօր կառնենք այս սրբավայրեն և փառք կուտանք Աստծուն, որ արժանի դարձուց այսօրեղ ներկայանալու և աղոթքի կենալու Սուրբ Խորանին առջև: Եվ գուրեպնդված իր հրավերով, գուրեպնդված իր օրհնությամբ կվերադառնանք մեր ծառայության վայրերը և այնպեղ իսկ փառք փառու Տիրոջը, օրհնաբանելու, որովհետև միայն իրեն է, որ կվայելի փառքը, իշխանությունը և պարիվը հավիարանս հավիտենից, ամեն:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ և ընդ սահնանսնսհդ. ամէն»:

Տ. ՍԵՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻՔՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ ԽԱՉՎԵՐԱՅԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 սեպտեմբերի 2004 թ.)

Գոհությամբ Աստուծո, շնորհակալություն Վեհափառ Տիրոջ, որ այս Սուրբ Խորանին վրա իմ ձեռնադրությունն փառվեց փարի հեղու շնորհքը սրբացա վերստին բարձրանալ այս սուրբ քեմը և պատարագել Տիրոջ սուրբ մարմինը: Ինձի համար մեծ ուրախություն է, անշուշտ, գրվելի հոգևոր փառն մեջ: Երուսաղեմ ե Էջմիածին անբաժան Աթոռներ են իրարմե, կապված շար խորունկ պատմական և բրիստոնական ազգային ճշմարիտ սիրով: Ոչ մեկ թյուրիմացություն կամ դժվարություն կամ անփափագելի ձեռքեր չեն կրնար նսնացնել մեր սերը, մեր հավատարմությունը, մեր հարգանքը հանդեպ Ս. Էջմիածնի, անոր գահակալին ե անշուշտ Տայրենիքին հանդեպ: Ես եպարո ևմ այս արտահայտություններու, որովհետև անոնք անկեղծ են ե անկեղծ սրտե կրխին: Տավարարիմ ենք ու հավատարիմ կմնանք կենտրոնը եղող Ս. Էջմիածնին:

Այսօր Տայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին կրոնե փոնը Վերացման սուրբ խաչի, որը պատմական ճշմարտության վրա հիմնված է: 614 թվականին պարսիկները իրենց հզոր բանակներով խուժած են Երուսաղեմ գրավելով զայն ե բանդելով այն, ինչ որ կրնան բանդել, ե սուրբ խաչափայլը, որ կգրվել Սուրբ Տարության փաճարի մեջ՝ Գողգոթա լեռան վրա, որպես անարգանք բրխստոնյա աշխարհին զայն գերի վերցուցած էին իրենց հեղձ՝ փանելով Պարսկաստան, Նույնիսկ այդ օրվա Ջաքարիա Պատրիարքը իրենց հեղձ գերի փանելով որպես անարգանք ամբողջ բրխստոնյա աշխարհին: Այդ շրջանին շար գորավոր ըլլալով Պարսից պետությունը՝ բրխստոնյա թագավորներ չհամարձակեցան վերստին գրավելու սուրբ խաչը ե բերելու իր պատկանած փնդը Գողգոթայի լեռան զազաթին:

Տասնչորս փարի անց Տերակլ կայսր բյուզանդացվոց անդրադարձավ իր այդ անարգական ընթացքին մեջ գրվելուն, պարոված նկատելուն ինքզինքը, հավաքեց հսկա բանակ մը ե հարձակեցավ պարսիկներու վրա, հաղթանակելով անոնց առավ Սուրբ Խաչը ե զայն փարավ-փնդավորեց հոն, ուր որ կպարկաներ՝ Գողգոթայի աուր լեռան վրա: Բայց առ ի գիտություն ձեզի կրնամ հայտնել նաև, թե հեղազային որպեսզի այսպիսի անպարվարեր արարքներուն մեջ չգրվելի մարդիկ ե սուրբ խաչը իրենց վրիժառության, իրենց անարգանքի առարկա չընեն, սուրբ Եկեղեցին որոշեց Տիրոջ խաչափայլը բաժանել կենտրոնական եկեղեցիներուն միջև ե զայն որպես մասունք հիմա ամեն եկեղեցի կպահե այդ Սուրբ Խաչն մասունք մը որպես անշուշտ Տիրոջ սրբություն եղած նշանը:

Սիրելի հավատացյալներ, խաչը, որ ամբողջ աշխարհի մարդկության ամենասարսափելի զենքերեն մեկն էր, որ կգործածվեր հանդեպ ավազակներու, ոճրագործներու, զանոնք ամենաստորին ձևով պարծելու միջոց մըն էր, զանոնք խաչափայլի վրա կախելու կամ զամելու: Մեր Տերը՝ Տիսու Քրիստոս, որպես հասարակ ավազակ մը, թավ լիցի, բովեցավ իր թշնամիներուն կողմե, որովհետև ան ճշմարտությունն է, որ կխոսեր, ան եկած էր լույս

այս խավար աշխարհի մեջ, ան եկած էր փրկելու մարդկությունը մեղքի ճիւղաներեն, բայց մարդիկ նախընտրեցին մնալ մեղքերու մեջ, նախընտրեցին մնալ, ապրիլ այնպես, ինչպես իրենք կ'ապրեին, և ուզեցին լռեցնել ճշմարտությունը, ուզեցին մարել լույսը, բայց անոնք չնաողողացան նույնիսկ իրենց ամենաստորին միջոցին դիմելով, որ Լույսը, որ Տերը, Փրկիչը աշխարհին՝ որպես պարզ ավազակ մը, բարձրացուցին զայն խաչափայտին վրա, այն խաչափայտը, որ մարդիկ սոսկումով կ'դիտեին, այն խաչափայտը, որ մարդիկ կ'ավախնային, մեր Տիրոջ փրկագործութենէն հետո այդ խաչը եղավ հաղթություն, փրկություն և ապավեն ամեն մեկ քրիստոնյայի համար, հավատացյալ, ճշմարիտ քրիստոնյայի: Պողոս առաքյալ կ'ըսէ քավ լիցի, որ ես պարծենամ, այլ միայն խաչովն-Քրիստոսի (Գաղ. Զ 14):

Այո, սիրելի հավատացյալ ժողովուրդ հայոց, պարզ խոսք չէ, որ մենք երբեմն կ'ըսենք, կ'ընենք միայն: Հայ ժողովուրդը, հայ ազգը քրիստոնեությունը ընդունելէն հետո իր կյանքը, իր ճակատագիրը, իր ամբողջ ընթացքը միացուց իր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի՝ զայն առնելով օրինակ, ինքն ալ առավ խաչը ուսին և շատ դժվարին ժամանակներուն մեջ իսկ ան բնավ չեղտաւաղեցավ, ան բնավ չտրորնջեցավ իր ընդդէմ ճանապարհին համար, որովհետեւ հայ ժողովուրդը գիտակցաբար ընտրեց լույսը, պատահականություն չէր հայ ժողովուրդի քրիստոնեություն ընդունելը:

Մենք հայերս կ'ըսենք որպէս շաւիկ չառինք մեր վրա, ինչպէս որ պատմությունը այդ կ'ըսէ: Մենք մեր կյանքին գնովը պաշտպանեցինք զայն: Առաջին օրէն իսկ շրջապատված ըլլալով ոչ քրիստոնյա տնտեսութիւններէն, առաջին փորձերնին եղած էր արդեն մեզ վերջ տրին դարձնել խավարի, այն խավարէն, որն մենք ազատեցանք և որուն համար մենք վճարեցինք շատ ծանր, վճարեցինք մեր ազգին արյունը:

Մենք պէտք է հավատարիմ մնանք այն խաչին, որ մեր նախնիքները իրենց սրտովը, իրենց հոգովը, իրենց մարմնովը, իրենց ամեն ունեցած արժեքներովը պահպանեցին, պաշտպանեցին և անոնք մեզի հանձնեցին, որպէսզի մենք մեզմէն հետո հաջորդ սերունդին նույն հպարտութեամբ, նույն սրբութեամբ, նույն մաքրութեամբ հանձնենք՝ ըսելով, մենք այս ավանդը, այս տուրք կ'ըսենք ամիսնք մեր նախնիքներէն և նույն սրբութեամբ, նույն հավատարմութեամբ կ'հանձնենք ձեզի այս պատվավոր գործը, որպէսզի դուք շարունակեք:

Սիրելիներ, մի՛ մտածեք, որ Տերը մեզ լքած է: Մենք Տերը լքած ենք: Երբ կ'կանգնե՞ք ուր էիք, Աստուծո, երբ կ'երգե՞ք զոր էիք, Աստուծո, Աստուծո հոն էր, Աստուծո հոն է, բայց մենք ուր էինք արդեւ մեր հավատքով: Ինչու չենք ըսեր, թե մենք հեռացած էինք Աստուծոմէ, մենք չէինք ճանչնար զԱստուծո, որովհետեւ աշխարհային ցանկություններ, աշխարհային շահեր, ավելի փայլուն կ'այնք, այսօր մեզ կ'հեռացնէ Մայր Եկեղեցիէն: Ավելի քիչ մը փառքամ ապրելու համար կ'ծախենք այն, ինչ որ ծախու չէ: Նախքան ուրիշը ապականելու, նախքան պայմանները ապականելու՝ անկեղծ ըլլանք իրար հետ, դժ-դիմաց կենանք իրար և մեր խղճին հետ և ըսենք, թե ով է հանցավորը, որ մենք այս վիճակին մեջ ենք և ավելի լավ չենք կարող լինել:

Մենք ենք, սիրելիներ, այն ոչխարը, որ իր մտորը կ'ողողու, այն ոչխարը, որ ուրիշ հովիվներու երեսն կ'երթա, այդ ոչխարը կ'ընա պարարտանալ, կ'ընա պարարտացնել զայն: Կ'պարարտացնեն ավելի ծախու միս ունենալու համար, կ'պարարտացնեն զայն մորթելու համար: Չեր Մայր Եկեղեցիէն մի հեռանաք, սիրելի հավատացյալներ, որնէ մեկ գնով: Եթե

մեր մեջ կան, որոնք կհիշեն մեր ժողովրդի փառապալից օրերը, փասնհինգի ջարդը, որ ամբողջ բրիտանյա անվանված և կարծված պետություններու պաղած աչքերուն առջև գործվեցավ և այսօր մոտ հարյուր փարի է, որ պիտի ըլլա և այսօր փակավին այդ բաղաբավար, բիչ մը ժողովրդային պիտի խոսիմ, փողկապով և կրթված մարդիկ այսօր չեն ընդունիլ, որ իրենք ալ մասնակցություն ունենին այդ կատարվածին:

Ուրեմն որուն պիտի հուսաս, ով սիրելի ժողովուրդ, որուն պիտի ապավինիս, եթե ոչ դուն քեզի, բո Մայր Եկեղեցվույդ, ըո ծնողքիդ, քեզ ծնողին: Ձեր ուժեն գալ ուրիշ ուժի մի հավատար և մի վստահիք: Շահեր են, որ իրար մոտ կուգան, շահեր են, որ երբեմն կժպտին իրարու, բայց ճշմարտությունը այն է, որ մենք միայն իրարու կրնանք օգտակար ըլլալ, մենք միայն զիրար պետք է սիրենք: Երբ մենք զիրար չսիրենք, ինչպես կուգենք, որ օտարը մեզ սիրե:

Մեկ ժողովուրդ, մեկ Եկեղեցի, մեկ Հայրենիք: Ասոնք մեր շրթներեն որպես բառեր չէ, որ պետք է ելեն, այլ մենք պետք է հավատանք այն խոսքերուն, որ մեր բերնեն կելն և մեր սրտեն կրխի: Կարդացեք մեր պատմությունը, սիրելիներ, կարդացեք մեր պատմությունը, որ մեզի ավանդ թողված այս սրբությունները, մեզի ավանդ թողված Հայրենիքը պարզ բառերով չէ, որ մեր ձեռքը եկած է. փշև ճանապարհներ անցած են մեր նախնիքները՝ պահելու համար մեր Հայրենիքը և պահելու համար մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, և այսօր դուր անտարբերորեն մի վարվիք այն սրբություններուն, որոնք համար արյուն թափված է և հոգիներ նահապտակված են:

Աս մարմինը որքանով ալ փաթթած ըլլա, աս մարմինը որքան որ ալ լավ զգեստավորված ըլլա, աս մարմինը որքան որ ալ հարուստ ըլլա, դուր ալ գիտեք, մենք ալ գիտենք, որ վերջավորությունը հող էր և պիտի դառնա հողին: Մարդուն հոգին է անմահ, մարդուն գործն է անմահ, մարդ կհիշվի իր գործովը, իր մաքուր գործովը և իր ապրած աստվածահաճո՞ որպես ընտրյալ հայ, ճշմարիտ հայ, հայրենասեր հայ: Ամեն բան հոս կմնա, սիրելիներ, աշխարհի իր և աշխարհին առնվեցավ և աշխարհի կմնա, բացի հոգիեն, որ Աստված սրբությամբ՝ որպես Սուրբ Հոգի փչեց մեր մեջ: Այդ հոգին է, որ պետք է արժեկորեք, այդ հոգին է, որ պետք է փրկեք: Մահկանացու մարմնին հաճույքներուն համար անմահը մի գտեք:

Այս Սուրբ Խաչի տոնի առթիվ ձեզի ամենքիդ կմաղթեմ, որ իրապես գիտնաք, որ հայ ժողովուրդը խաչապաշտ ժողովուրդ է: Երբեմն կհպարտանանք և կըսենք, թե մենք առաջին ազգն ենք, որ Քրիստոնեությունը ընդունած ենք: Այո, իսկապես հպարտություն է, բայց սնոր փաստը կուգենք մենք, փաստեցեք, որ իսկապես մենք այդ առաջին ժողովուրդն ենք, այդ արժանի ժողովուրդն ենք և Քրիստոսով ապրելու իրավունք ունեցող ժողովուրդ ենք:

Թող սուրբ խաչը պահապան ըլլա մեր ամենքիս վրա, հավատարիմ մնացեք մեր ազգին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվու, անոր ավանդություններուն, սրբություններուն և հայրենի անկախության պահպանությանը գոհվելու պատրաստ հայեր՝ ի փառս Աստուծո և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվու և ի հաստատման Հայաստան անկախ աշխարհի. ամեն:

Տ. ԿՐՇԱԿ ԵՊԻՄԱԿՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(3 հոկտեմբերի 2004 թ.)

«Յանուն Հոր եւ Որդւոյ եւ Հօգույն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ բույրեր և եղբայրներ,

Այսօր կուգեմ նախևառաջ որդիական նրախորագիտությունս և հավատարմությունս բերել Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, քանզի Նորին Սրբության ձեռամբ տրանիզ մեկ շաբաթ առաջ, սեպտեմբեր 26-ին, նվիրական և սրբազնասուրբ այս Խոռանին կոչվեցի եպիսկոպոսական բարձր ծառայության: Ծնորհակալությունն նաեւ հոգևոր եղբայրներին, ովքեր իրենց աղոթքներով, իրենց գորակցությամբ աջակից են ինձ, որպեսզի դույզն հաջողությամբ կարողանամ իրականացնել դժվարին և պատասխանատու այս առաքելությունը: Հայցում եմ հավատացյալներիդ աղոթքները՝ փոխարինելու և պատասխանատու այս պարտականամ փոքր-ինչ արդարացնել այն հույսերը, այն ակնկալությունները, որոնք կապվում են յուրաքանչյուր նորոգ ձեռնադրյալի հետ: Նախախնամական եմ փնտրում, որ այսօր սրբազնասուրբ այս բեմից ընթերցված սուրբգրային հատվածներում շոշափվում էր մի նյութ, որը լավագույն ուղենիշը կարող է լինել ինձ, որ կոչվել եմ նոր բարձրագույն իշխանության՝ եպիսկոպոսական իշխանության՝ արժեքներով այդ իշխանությունը ծառայությամբ:

Ահավասիկ այդ դրվագներից մեկը, որը ամփոփված է Մարկոսի Ավետարանի տասնմեկերորդ գլխում: Երբ Քրիստոս շրջում էր Երուսաղեմում, արդեն իսկ բավական համրավ ձեռք բերած որպես հրաշագործ, սքանչելագործ անձ և նաև իր աշակերտների կողմից սիրված և հռչակված, մոտենում են նրան փարիսեցիները, դավիթները ու սադուկեցիները, ովքեր զիարկվել էին հրեական օրենքների և կանոնների: Մոտենում են և ասում, թե մենք զիարկվում ենք, որ դու հմուտ մեկնից ես, այդ ես սքանչելագործ, և կուգենք իմանալ, թե ի՞նչ իշխանությամբ ես այդ ամենը կատարում: Բնականաբար Տիրոջ սքանչելագործությունների մասին նրանք արդեն իսկ տեղյակ էին, որովհետև մինչ այդ Տիրոջը խնդրել էին, որպեսզի իրենց համար նշան ցույց տա, սքանչելիք կատարեն՝ հավաստելու համար իր աստվածությունը, իր բացառիկությունը:

Այս անգամ արդեն հարցը փոխված էր. հարցը ուղղվում էր Քրիստոսին՝ պարզելու, թե այն ամեն հրաշագործությունները, որ կատարվում են, ի՞նչ իշխանությամբ են կատարվում: Տիրոջը հարցնում են, թե ո՞վ քվեց Քեզ այդ իշխանությունը: Քրիստոս հանդարտ և, ամբողջապես հասկանալով հարցադրումը կատարողների երկին միտքը, կրկին պատասխանում է հարցով՝ իսկ դուք կարո՞ղ եք ինձ ասել՝ Հովհաննես Մկրտիչ, որը եկավ, բարոզեց ինձնից առաջ, արդյոք երկնքից էր առաքված, թե՞ երկրից, այսինքն՝ իր իշխանությունը երկնքից էր գալիս, թե՞ մարդկանցից էր տրված: Ավետարանիցն այստեղ նաև մի հետաքրքիր արտահայտություն է անում: Ասում է, որ հրեա վերնախավի ներկայացուցիչները սկզբից մտածեցին պատասխանել, որ Հովհաննես Մկրտչի հայտնությունը, իշխանությունը

երկրից էր, երկնչեցին: Վախեցան, որովհետև ժողովրդի շրջանում Հովհաննես Մկրտիչը համակրանք, սեր և հարգանք էր վայելում: Բայց նաև միաժամանակ հիշեցին, որ Նթն պատասխանեն՝ երկնքից է, ինքնաբերաբար հարց պետք է առաջանա՝ իսկ Նթն երկնքից էր, ինչո՞ր թույլ տվեցիք Նրան սպանել: Ահա այս իրավիճակի մեջ շփոթված, մտամոլոր նրանք ասացին՝ չգիտենք, թե որտեղից էր Հովհաննես Մկրտչի իշխանությունը: Այնուհետև Քրիստոս ասում է՝ Նթն դուք չեք կարող իմ հարցին պատասխանել, և ես չեմ ցանկանում ձեր հարցին պատասխանել:

Առաջին հայացքից մեզանից յուրաքանչյուրին թվում է, թե Քրիստոս հարցով րեղամենն իրեն տրված հարցը փակեց, և, սակայն, քիչ անդրադառնալուց հետո պարզվում է, որ երկրորդ հարցադրումով, իր հարցով Քրիստոս նաև պատասխանում է իրեն ուղղված հարցին: «Պատասխանի մեջ Տերը մատնանշում է այն անձին՝ Հովհաննես Մկրտչին, ով տնդակացել էր իր զայտալան մասին, ով որ նաև բացահայտել էր իր իշխանության աղբյուրը: Իսկ ո՞րն է այդ իշխանության աղբյուրը. երբ Եսայի մարգարեն հորդոր է կարդում ժողովրդին, ասում է. «Յուսացեալ լիցի մարդն յՄարիչ իւր» (Եսայի ԺԷ 7): Ահա իշխանության աղբյուրը և ակունքը: Իշխանությունը չի տրվում անձին անձի կողմից, իշխանությունը չի ձևվում անձի մեջ, իշխանությունը ձևվում է Աստծու նկատմամբ մարդու հավատարմությունից, մարդու՝ Աստծուն ապավինությունից: Ահա այս է իշխանության աղբյուրը սուրբգրային հայտնության մեջ և քրիստոնյաներիս ընկալումների և ըմբռնումների մեջ:

Իշխանության մասին իր ըմբռնումները ներկայացնում է նաև Պողոս առաքյալը: Ունենալով հսկայական իշխանություն հավատացյալների վրա, լինելով համապատիվ մեկը առաքյալներին և իր հեղինակությամբ ու Տիրոջ տնօրինությամբ բազմաթիվ համայնքներ հաստատված լինելով հին աշխարհում, լինելով քրիստոնեության տարածման մեծագույն ջարագավներից մեկը, իր խոսքը ուղղելով կորնթացիներին՝ իր այդ մեծ իշխանությամբ հանդերձ ասում է. եղբայրներ, ես խնդրում եմ, որպեսզի դուք փոխվեք և մշտապես բարիք գործեք, ոչ թե նրա համար եմ ուզում, որ բարիք գործեք, որպեսզի ես փառավորվեմ և ես երևամ ընտիր, այլ որպեսզի ձեզ համար լավ լինի, ցանկանում եմ, որպեսզի դուք ավելի գոռավոր լինեք, գորավոր լինեք նույնիսկ ի զին իմ փկարանալու (հմմտ. Բ Աորնթ. ԺԳ 7):

Ահա նաև ես մեկ բացահայտում իշխանության, ես մեկ աղբյուր, որտեղից հոսում է իշխանության վճիռ ջուրը: Ուրեմն իշխանությունն առաջին հերթին սերն է, սեր, որ դրսևորվում է ծառայության մեջ, սեր, որ դրսևորվում է բարի արդյունքով: Բարսեղ Կեսարացի Հայրապետ՝ մեծագույն Հայրապետներից մեկը Ընդհանրական Սուրբ Եկեղեցու, երբ անդրադառնում է իշխանությանը և մեկնաբանում է՝ իշխանությունը ինչից կարող է առաջանալ՝ փնտրելով աղբյուրը և ակունքը, ասում է՝ հարստությունն է արդյոք իշխանությունը, ո՞չ, հարստությունը կողոպտվում է, մսխվում է, գնդեցկությունն է արդյոք իշխանությունը, կորկին՝ ո՞չ, գնդեցկությունը խամրում է և մաշվում է: Ֆիզիկական ուժն է իշխանությունը, ոչ, այն տարիքի հետ թուլանում է: Եվ վերստին ու վերստին անդրադառնալով, մատնանշելով իրական աղբյուրն իշխանության՝ ասում է, որ իրական իշխանությունը Տիրոջ կողմից ընծայված բարեհաճությունն է անձի, որ փոխհատուցվում է անձի հանդեպ Տիրոջն ընծայված հավատարմությամբ:

Պողոս ամաքյալը Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթում վերստին նշում է, որ իշխանությունը, որ տրված է իրեն, տրված է ոչ թե քանդելու, ոչ թե ամայացնելու, ոչ թե տակնուվրայություն ստեղծելու, այլ կառուցելու համար: Եվ այն իշխանությունը, որ հաստատվում է այդ սիրտ, այդ ծառայության պատրաստակամության վրա, այդ իշխանությունը մղված է այդ սիրտ, այդ ծառայության գորացող է: Իշխանության մասին ուրիշ մի առիթով Ջրիստապետ գործում է և մշտապես գորացող է: Իշխանության մասին ուրիշ մի առիթով Ջրիստապետ գործում է, երբ ամաքյալների հետ շրջում էր, և մի անգամ ետք է տրվում, թե ո՞վ է ամաքյալների մեջ մեծը: Ավետարանիչն ասում է, որ առաքյալները վիճում էին միմյանց հետ, վիճաբանության մեջ էին, թե ով է իրենցից ամաքվել մեծ: Եվ Ջրիստապետ պատասխանում է՝ ձեզնից ով փոքրն է, նա է ձեզանից ավելի մեծ, ով սպասավոր է, նա է իշխան, չեկա սպասավորություն վերցնելու, եկա սպասավորելու, եկա ծառայելու: Ահա Ջրիստապետ պատգամն ամենքիս:

Եվ այսօր, սիրելի քույրեր և եղբայրներ, ևս մի նախախնամական, ևս մի խորհրդանշական իրադարձություն եմ տեսնում, երբ աշխարհասփյուռ մեր գաղթօջախներից Ամենայն Հայոց Հայրապետի հովանավոր աջի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրական այս կամարների ներքո են հավաքվել Հայ Բարեգործական Ընդհանուր Միության աշխարհասփյուռ գավակները և անդամները: Այս օրերին Հայաստանի Հանրապետությունում մեր Հայրենիքում անցկացվում է Հայ Բարեգործական Ընդհանուր Միության ութսուններեքերորդ ընդհանուր համաժողովը: Պատահական չեմ տեսնում նաև այս գուգադիպությունը, որովհետև Բարեգործական Ընդհանուր Միությունն իր պարմության ողջ ընթացքին ծառայություն է բերել մեր ժողովրդին: Մի դիպուկ արտահայտությամբ՝ Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը կոչվել է Սփյուռքի հայոց կառավարություն, Սփյուռքի հայոց իշխանություն և այդ իշխանությունը, այդ կառավարությունը եղել է ծառայության կառավարություն, նվիրումի կառավարություն:

Ծառայություն, որ բազմաթիվ հայկական գաղթօջախներում ստեղծել է դպրոցներ, ստեղծել է եկեղեցիներ: Որքան հայ երիտասարդներ և երիտասարդուհիներ ուսում և կրթություն են ստացել Հայ Բարեգործական Ընդհանուր Միության հոգածությամբ: Այն եղել է և շարունակում է մնալ կարևորագույն սնուղ գարկերակներից մեկը ազգային մեր կյանքում ինչպես Հայաստանում, այնպես և Սփյուռքում:

Այսօր նաև տրախությունն ունեմ հայրենի, որ այն իշխանությունը, որը տրվում է մեզանից յուրաքանչյուրին քրիստոնյա անունը կրելու, և այն իշխանությունը, որը տրվում է մեզ ձեռնադրությամբ քահանա կոչվելու, այդ իշխանությունը կրելու են գալիս նաև նոր եկեղեցականներ, նոր հոգևորականներ, և Տիրոջ կամքով, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ հաջորդ կիրակի, հոկտեմբեր 10-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում վերստին այդ իշխանությունն է տրվելու քսան նորընծա եկեղեցականների, շուրջ քսան եկեղեցականների, ովքեր գալու են համալրելու, մեկտեղելու իրենց ջանքերը, համախմբվելու, որպեսզի առավել առաջընթաց ապրի առաքելությունը նվիրական այն հաստատության, որը դարերի հովույթի մեջ փաստել է, որ միակն է և անփոխարինելին, բացառիկն է այս ժողովրդի կյանքում, և այդ հաստատությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին է, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ իր կենտրոնով և աստվածադյալ իր Հայրապետով: Եվ այս իշխանությունը, ծառայության իշխանությունը վստահ ենք, որ պիտի կարողանա նոր արդյունք

մներ, արդյունաշարություն ապահովել մեր ժողովրդի կյանքում: Այս իշխանությունն է՝ ծառայական իշխանությունը, որ պիտի ծաղկում, զարթոնք և բարգավաճում բերի մեր Հայրենիքին, մեր գաղթօջախներում ազգային մեր կյանքին:

Թող Տերը հովանավոր Իր Աջով, ամենախնամ Իր ողորմությամբ մշտապես ծաղկեցնի մեր հոգում, զարթեցնի մեր հոգում միմյանց ծառայելու, միմյանց սիրելու, միմյանց մտահոգություններով և ուրախություններով բաժնեկից լինելու ապրումը և պարզելը:

Շնորհք, սեր և աստվածային սրբաբարձր գործությունն ընդ ձեզ և ընդ ամենեւորսնսյ. ամեն:

**Տ. ԹՈՐԳՈՍ ԱՔԵՂԱ ՏՈՆԻԿՅԱՆԻ ԽՈՍ-ՔԸ
ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ՝
ԱՍՎԱԾ ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑՈՒՄ**
(9 հոկտեմբերի 2004 թ.)

«Որ զգիտութիւն քո զերկնային եւ զիողևոր զիմաստութիւն առաքապէս ծառայեցի յեկեղեցիս Տայաստանեայց ի Ձեռն Սրբոց Թարգմանչացի. աղաչանք սոցա ողորմեսս ինձ Աստուած»:

(Շարական)

Ազգային և եկեղեցական տոն է այսօր՝ ի եիշատակ հայոց նշանագրերի գյուրի և Սուրբ Գրքի թարգմանության:

1600 տարիներ է անցել, երբ եռամիասնության պայծառաբեկությամբ՝ Վոսմապուհի, Սուրբ Սահակ Պարթևի և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի, ազգային և եկեղեցական մեր կյանքն ու հոգին, կենսակերպն ու էությունը նոր ուժ առան՝ անմադչելի բարձունք զրավելով ժամանակաշրջանի անդնդախորշ դեպքերին ու սպառնացող անիմանալի դժնդակ վախճանին ի պարասխան: Ծնվեց նոր հայր, կարծես ջրհեղեղից հեքո ձիթենու կանաչ ճյուղի պես 36 ամառն նշանագրերն ավելացին կյանք ու փրկություն՝ հավերժի ճամփորդ դարձնելով մի ողջ ազգի՝ գրերի գյուրի հրաշագործ ուժականությամբ:

Արարիչ-Քրիստոս խոստովանությամբ, հավատքով և դավանությամբ Աստված կրկին հայտնվեց հային՝ ի դեմս Մեսրոպ Մաշտոցի, որը տեսիլքով արձանագրեց Այբ-ից Զն իմաստության, լուսավորության, գիտության և պարկանելիության բանալի պարզամենքը:

Սուրբ Գիրքը դարձավ Աստվածաշունչ, բանգի միայն Բրիստոսապարզն նշանագրերով առաջինը վերաբաժնեց և հայահնչյուն թարգմանվեց Աստծո խոսքը:

Աստված խոսեց մեզ հետ հայերեն, Աստված ընտրեց հայ ժողովրդին Իր Միածին Որդու իջմամբ, Իր հայաբառ և հայառնչյուն Սուրբ Գրային ընթերցումներով, իսկ շարակա-նագիրը ծայնեց. «Այսօր հրեշտակաց դասքն ի յերկինս ուրախանան ի վերայ ճգնութեան Սրբոց»:

Հայ գիրը ծնեց իմաստուն թարգմանիչ վարդապետների՝ մաքրագործ և ձյունափայլ անոթ՝ ընտրյալ հոգին Մեսրոպյա, Զերթոդահորն մեր՝ Մովսեսին, որը պարտադրեց ծնունդը հայ ժողովրդի, փառապանծ անցյալը՝ լի փորձություններով պարտությունների ու հաղթանակների, խոսեց ներկայից ու ապագայից, Դավիթ Անհաղթ փիլիսոփային, արիստո-տելյան ու պլատոնական իմաստասիրության հայեցակետերում նոր խոսք հնչեց, հայ փիլի-սոփայության նոր ուղղվածություն:

«Մարյան ողբերգության»-ը «ի խորոց սրտի խօսք» դարձավ Աստծո և մարդու, երբ համարձակ խոստովանությամբ «Քո վճիռն ազատութիւն է. Քո մատենան շնորհ է...» խոս-

վի բռնվեցինք մեր Արարչի հեղ ինքնությամբ, խոնարհությամբ և աներեր՝ Գրիգոր Նարեկացի վանականի շուրթերով:

Իսկ անմարմին խոսքը՝ գրավոր իմաստով Սուրբ Հոգու կողմից շնորհված որդվոցն Թորոմոս, նոր բովանդակություն և «Հաւատով խոստովանիմ» դարձավ, երբ Ներսես Կլայեցիին ազատազրկեց Սիրո աբիիական լույսը: Որի շնչով փառք դարձավ ձայն, խոսքը՝ երգ, իսկ առաջադրանքը՝ գուրդա:

Լուսաշող սր էր, հավաքացած եմ, երբ ազգովին մեր հայրերը ուխտավորի պես քայլում էին Սուրբ Մեսրոպ Մաշտոցին ընդառաջ, և այդ քայլն ունի 1600 փարվա պատմություն: Այն հավերժական է, որի քառադիմերով են անցել Չարենցն ու Սևակը, Ղևոնդ Ալիշանը, Զուհակն ու Սայաթ-Նովան, Կոմիտասը, Վիլյամ Մարոյանը, Սուրբ Տաթևացին, Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Մագիստրոսն ու Հովհաննես Սարկավազը..., իսկ բյուրավոր արտախտավորների անունները Դուք ի մտի ունեք:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց փաճարն իր բնակիչ Սուրբով այսօր ուխտի է հրավիրում ժամանակին: Այլ է ուխտի խորհուրդը Օշական բարձրացող հայորդուն: Սուրբ շիրմաքարին ղրղրոշմվող համբույրը ջերմվում է արժանապատվությամբ, պարկանեցիությամբ, ազգային և անկեղևական անբակտերի կապակցությամբ, հավատքով, հույսով ու սիրով՝ հանդեպ գալիք ժողովրդականակների, ձեռքբերումների ու մարտահրավերներին դիմակայելու պարտաստականությամբ:

Այդ մարտահրավերներն այսօր բազմաբնույթ են և նույնիսկ ճանաչում ունենալու կարող: Բայց չէ՞ որ մենք Մաշտոցի գավակներն ենք, մեսրոպցիներ, որ վաղուց ընտրել ենք գիտության բնաբանը՝ «Ճանաչել գիմարութիսն եւ գիրար, իմանալ զբանս հաւճարոյ», գիտենք ուսանել, գիտենք պայքարել, գիտենք մաքառել և ձնել արժեք, արդյունք: Թող այս ողին թագավորի մեզ, ոչ ամբարտավան, այլ համեստ ու հեզ, բայց և հաղթական:

Թող նոր բարձունքներ գրավեն ու նոր գրոց հիշատակի գործեր արձանագրվեն հայ իրականության մեջ, հայ կյանքում, որոնք մի՛շտ դարձել են համամարդկային, համաշխարհային, համաբրդիստոնական:

Այս է իմ հայ ուխտավորի աղոթքն առ Աստված, որի ապրումով եկա Օշական:

Քրիստոսի սերն ու խաղաղությունը Սուրբ Հոգու շնորհաբաշխ օրհնությամբ ընդ Ձեզ և ընդ ամենասուսուսն ամեն:

Տ. ՄՈՒՇԵՂ ԱԲԵՂԱ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(24 հոկտեմբերի 2004 թ.)

*«Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն
Տեսնն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:*

*«Զավ լիցի, որ ես մի այլ բանով պարծենաւմ
բան մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի խաչով»:*

(Գաղ. Զ 14)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»

Այսպիսի խոսքեր է ուղղում, սիրելի եավարացյալներ, հեթանոսաց առաքյալը զաղա-
պացիներին և իր մասին անձնական այսպիսի հավատարիացում է փախն նրանց, որ ինքն
այս աշխարհի վրա ուրիշ ոչ մի բանով չի պարծենում և մեղք էլ կլիներ, որ պարծենար, այլ
միայն Յիսուս Քրիստոսի խաչով: Եվ նման ոգով է, որ առաքյալը բազում փարիսեների իր
քարոզության ընթացքին սերմանեց հավարք, հարգանք և երկյուղածություն այս սուրբ
նշանի՝ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Սուրբ Խաչի հանդեպ:

Այդ նույն հավարքը սերմանված առաքյալի կողմից դարեր շարունակ և այսօր էլ
առաջնորդում է սեզ այդ նշանի վրա խաչված և մեզ փրկություն պարգևած Աստծու Միա-
ծին Որդուն հավաքացողներին: Այդ հավարն է, որ հետավոր Բյուզանդիայի մայրաքաղա-
քից կայսեր մորն առաջնորդեց այնպեղ, որպեսզի փնտրի և գտնի մոռացության մեջ եղող և
արդեն իսկ կորսված Տիրոջ խաչը: Եվ այսօր այդ հրաշալի իրողությունն է, որ մենք փոնա-
խմբում ենք մեր բոլոր եկեղեցիներում ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

326 թ., երբ ի գլուխ ունենալով իրենց Երուսաղեմի Կյուրեղ Պատրիարքին և Կոնստան-
դին կայսեր մորը՝ Նեղիսն թագուհուն, ձեզ պես հավարացյալների մի մեծ խումբ, մի մեծ
բազմություն սպասում էր, թե երբ և ինչպես պիտի նրանք հայտնաբերեն, գտնեն այն խաչը,
որ իրենց համար այնքան թանկ էր և իրենց համար կարևոր: Եվ չուշացավ այդ պահը և
գտնված երեք խաչերը այն հարցի առաջ կանգնեցրին նրանց, թե արդյոք ո՞րն է դրանցից
Տիրոջ կենսաբուր և կենսաբեր խաչը:

Մինչ այդ էլ բազում հրաշքներ էին կատարվել Տիրոջ խաչափայտով, որի փառքը նսե-
մացնելու համար երեսներն այն Գողգոթայի վրա աղբյուսների մեջ էին նետել: Այս անգամ
ևս հրաշք տեղի ունեցավ. անկյալ մի մանուկ կենդանացավ Տիրոջ խաչի վրա, և հենքե Երու-
սաղեմի Կյուրեղ Պատրիարքն այդ խաչը կանգնեցրեց, և բոլոր այնպեղ գտնվողները նը-
կրդապագիս նրան և փառաբանական աղոթքներ վերառաքեցին Աստծուն: Ինչպես տես-
նում ենք, սիրելի հավարացյալներ, անմիջապես խաչի գտնվելուց հետո երկրպագություն
ենք կատարում նրան և աղոթքներ եղում Աստծուն, որ Իր Միածին Որդուն չի խնայել, այլ

ուղարկել է աշխարհ, որպեսզի անարգանքի այս գնեք սրբագործի, որպեսզի այն անեք, որ դրված էր այն մարդու վրա, որ պետք է խաչվեր այդ փայտին, ինչպես ասվում է Երկրորդում Օրինաց գրքում, անեք օրհնության փոխի և փարածի բոլոր իրեն հավատացողներին վրա:

Քավ լիցի, որ ես մեկ ուրիշ բանով պարծենամ, քան Հիսուս Քրիստոսի խաչով: Եվ այսօր էլ մենք, սիրելի հավատացյալներ՝ որպես քրիստոնյաներ, պարտավոր ենք և հետևող ենք այն քրիստոնյաների, ովքեր որ Ս. Խաչի գլուխի օրը երկրպագեցին և դրանով իսկ հաստատեցին մի սրբազան ավանդույթ և օրինակ ու ցույց տվեցին, որ երկրպագությունը քրիստոնեական կյանքի բաղկացուցիչ մասերից մեկն է: Դեռևս անհավատներ իրենց բժշկությունից հետո երկրպագում էին Հիսուս Քրիստոսին, հիվանդներ բժշկումից ու առողջացումից հետո երկրպագում էին ու փառք փայխ Մստծուն, առաքյալները երկրպագում էին Քրիստոսին, Գլուխ Խաչի օրը հավատացյալները երկրպագեցին Քրիստոսին և մեզ ավանդեցին այդ, որ Տիրոջ փառքին կարող ենք հաղորդակից լինել ոչ միայն սուրբ խորհուրդներով, ոչ միայն Պատարագի հաղորդությամբ, այլև երկրպագությամբ սուրբ նշանների, որոնք սրբագործվել են Հիսուս Քրիստոսի աղյամբ, նրա խաչին, նրա սուրբ բեռներին և նրա անվանը հավատացող սրբերի մասունքներին:

Այդ իսկ պատճառով է, որ մենք երկյուղածությամբ և հավատով ենք մտրեցնում Սուրբ Խաչին, երկրպագում նրան և համբուրում: Սակայն այսօր, երբ մենք ժամանակով շարժվում ենք Հիսուս Քրիստոսի աղյամբ օրերից, ժամանակով, երբ հեռու ենք այն օրվանից, երբ անարգանքի սյունը սրբագործվեց և օրհնաբաշխ մի գնեք դարձավ բոլոր-բոլորիս համար, մեր մեջ կան այնպիսիք, ցավոք սրտի, ովքեր որ այդ անարգանքի նշան եղած և սրբագործված հաղթության գեներից խորշում են և էլ ավելի անարգում, քան մոլորության մեջ գտնվող շարժապետները Հին Ուխտի ընթացքին: Եվ այդպիսիների մասին էլ Պողոս առաքյալն ասում է, որ շարեր, որոնց մասին շար անգամ ասել եմ ձեզ և այժմ էլ լսել եմ ասում, ընթանում էին հակառակ Քրիստոսի խաչին, նրանց վախճանը կորուստն է, նրանց Մարված իրենց որովայնն է և փառքը իրենց ամոթը, նրանք միայն երկրպագող բաներն են խորհում:

Առաքյալի խոսքերը վերաբերվում են նաև նրանց, ովքեր այսօր էլ անարգում են մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խաչը: Բազում աղանդավորներ և բազում կրոնական հարանվանություններ, որոնք որպես գալյեր ոչխարների մորթով ծածկված գալիս են ձեզ, սիրելի հավատացյալներ, մոլորեցնում իրենց խոսքերով, որոնցից Մարված զգուշացնում է մեզ միշտ հեռու մնալ, գալիս են խարելու և խաբում են, գալիս են մոլորեցնելու ու մոլորեցնում են, և մեր սրտերը, որ պետք է լինեն այնպիսի, որ գանձերն են թաքնված, գողանում են և պահում այսպիսի, քանի որ նրանք երկրային են խորհում և մեզ սփիպում են իրենց պես սպորտային և երկրային խորհել, խաբում են մեզ և պոկում երկինք փանդ այն ճանապարհից, որի առջևից մեր խաչն է անցնում, և մոլորեցնելով իջեցնում երկիր և սպանում մեզ, թող թե ֆիզիկապես շար թիչ են սպանում՝ դրդելով ումանց ինքնասպանության, դրդելով ումանց շուրջափույթ մահվան և այս կյանքից հեռացման: Սակայն, որ ավելի վրանգավոր է, նրանք իրենց մոլորյալ հետևողներին հոգով են սպանում, սպանում են և անընդունակ դարձնում հեղափոխ հաղորդակից լինելու Տիրոջ սրբություններին, երկրպագելու Տիրոջ կենսաբար խա-

չին և եկեղեցի այցելելու և մասնակցելու հոգևոր և ծիսական արարողություններին և հոգով վերանորոգվելու ի փառս Աստուծո:

ԽՈՐԱԳԻՐ. Ե Դաթայ հայոց փիլիսոփայի և Փիլիկա հոռմնեցոց վարդապետի, եւ Հոմորիայ արուեստարտի և Մովսիսի Ջերթոդի խնդիր փափագման մասանց սիրոյ յաղագս վարժողական յօսմանց մանաւանդ որք ջերմնեանդ սիրաբորբոք գթով զհետ ելեալ իմաստնական բանից գործվամիտս լցմամբ գերայեմեալք յանդնդաբոս ի վարակաշարժ յորձանս կուրակացն խորխորախիտ անդնդայինս աստուածային երագաշարժ ղեկան անդնդայոյզ շրջագայութեամբ ճգնողախնդիր յուզմամբ ի խաղս ովկիանէ։ Կիեզերապատ անչափ խորութեան նաւարի ի խնդիր ցանկալի ականց բաղձալի մարգարտի, որ է հանգոյն այս անչափ բազմապարզն շնորհացս, գոր աստուածագանքն Կալաւորեցին ի մեզ զարփիւն զգեղ զարդս ի շահաւիտ խանթիցն յանհապ քաղաքացն՝ աստուածային մարտնիցն, գորս ի Կալաւորեցին եւ յառաքելագիծ մարտնիցն ամփոփեալ իբրեւ գիամապայծառ ծաղիկս ի զանազան հովտաց կամաւորապէս զեղեցիկ պարտական ուրուս գոյնագեղ ականցն եւ հիճնդկայ հին մեծանիստ աշխարհէն եւ վաճառականացն յոգնահետ եւ բազմաւրէ ճանապարհէն ցանկան հանել գոր ի թագաւորաց եւ յարախորանսն թագուհեացն թագազարդէն սակս վայելչաբնս զարդուն արքայաշուք պարտոյն։ Ե Գիրքս այս է Մանուշակի՝ արարեալ Դաթա հայոց վարդապետի եւ Մանուշակի փիլիսոփայի եւ Մովսիսի Ջերթոդի ընդ Հոմորիայ եւ ընդ Փիլիկա հոռմնեցոց վարդապետի ի խնդիր փափագման մասանց սիրոյ՝ յաղագս վարժողական յօսմանց, մանաւանդ, որք ջերմնեանդ սիրաբորբոք գթով զհետ եղեալ իմաստնական բանից կործվամիտս լցմամբ զփախորի խորախիտ անդնդայինս աստուածային արագաշարժ ղեկան անդնդայոյզ շրջագայութեամբ ճգնողախնդիր ուզմամբ ի խաղս ովկիանէ։ Կիեզերապատ անչափ խորութեան նաւաւարի ի խնդիր ցանկալի ականց բաղձալի մարգարտի, որ է հանգոյն սմա անչափ բազմապարզն շնորհացս, գոր աստուածագանքն Կալաւորեցին ի մեզ զարփիւն զգեղ զարդն, ի շահաւիտ խանթիցն, անհապ քաղաքացն յաստուածային մարտնիցն, գոր ի Կալաւորեցին եւ առաքելագիծ մարտնիցն, անփոփելաբն եւ գիամապայծառ ծաղիկս ի զանազան հովտաց կամաւորապէս զեղեցիկ եւ պարտական եւ յոյս գունագեղ ականց ի հցսղ կահին ի մեծանիստ քաղաքէն ի վաճառականացն յոգնահետ եւ բազմաւորեա ճանապարհէ ցանկացան հանել, գոր ի թագաւորաց եւ արախորանսն թագուհեացն թագազարդէն սակս վայելագեղ զարդուն արքայաշուք պարտոյն։

ԲՆԱԳԻՐ. 1. B այրս C յայրս։ 2. C *հիթ* ի։ 3. C ճարտարասան։ 4. C Հոռմ։ 5. AB *հիթ* երկրի։ 6. BC զերկնից բարձրութիւն։ 7. BC զչափ մեծութեան երկնի եւ երկրի։ 8. B *հիթ* գորքանութիւն։ 9. C մակալ։ C համարականք *իհի*, մասամբք։ 10. C զագանաց եւ անասնոց։ 11. C շինութիւն *իհի*, լինելութիւն։ 12. C *հիթ* իմաստականն բանից աստի։ 13. C *հիթ* զշրջանս ժամանակաց։ 14. C զդարագոյն։ 15. C արուսակին։ 16. C *հիթ* կամ... մարդոյն։ 17. C որալն։ 18. C *հիթ* եղբարցն։ 19. C *հիթ* եղբու։ 20. B զեղ C զերք։ 21. B նմաւորք։ C եփաւորք *իհի*, անփաւորք։ 22. A հարստանայր *իհի*, հարսնանայր։ 23. A կերակրք։ C զիրս զրէր *իհի*, կիրս կրր։ 24-25. C եւ զհամբառնալն եւ զգալն միսանգամ սոքա ցուցանեն մեզ *իհի*, Այլ եւ... իշ-

խանութին: 26-27.C *հո* Ջայս:... տեսանես: 28-29.A *հո* Այս... գիրս: B թագաւորս *փի*.
 գիրս: 30-31.BC *հո* Այսքան... բանիս: 32.C եղեն: 33.BC պարտուակին *փի*. խաւարին...
 պարտուակա: 34.B լուսաւոր *փի*. լուսաւորն... լուսով: 35.C է *փի*. այս: 36.BC կարգաւո-
 ղի *փի*. յարկացուցի: 37.BC *հո* ի մէջ... ներքնոց: 38.BC գնդաձու երկրի: 39.C բերելոյ:
 40-41.C զբարձրութիւն յայտ զլեռանց եւ զբլրոց. որ անեղահասարար գոյացմունս *փի*.
 զթանձրութիւն... յԱրարչագործէն: 42.B միական: C միակեան *փի*. միական: 43.B զքրակս:
 C գրակս: 44.AC *հո* է: 45.BC *հո* ծառով: 46.C Այգի մի եւս *փի*. այս գիմիս: 47.BC *հո*
 բանականութիւն: 48.BC իսկ Դայն: 49.C աւուր: 50.C B անթայք *փի*. անդադարք: 51.B
 երանոյլք: C երանշոյլք: 52.B ժանդարեսակք: 53.C *հո* երեսնալ: 54.B նորա: 55.C *հո* է:
 56.C պայծառ արեգակ: 57.A *հո* Դայ է: 58.C նախն եւ *փի*. նախնի եւ: 59.A արհեստի:
 60.AB ծանուցանաւ (B ծանուցանող) մեզ: 61.C շնչակայից: 62.C *հո* իսկ: 63.C ջրագնաց:
 64.C աւղաթեւահերձիկ: 65.C *հո* զսոսա: 66.BC գրեմոյս: 67. B *հո* Ջայն: C զան աւր: 68.B
 զկալարամսն: 69.C վեցեկին աւրն: 70.C զարդարեաց *փի*. զարգացոյց: 71.C զանագն:
 72.C էնավակ: 73.A *հո* Էա է: 74.BC *հո* եւ արարչութեանց աւուրցն: 75. C եւ *փի*. Էն է:
 76.C գորովագութն *փի*. գործարկութեան: 77.C Եւ զէ դարն Էիւս *փի*. Ի յէս զէ դարն:
 78.BC *հո* եւ հմտանան յիմաստսն: 79.AB յերն: 80.B գորդին: C գորդին *փի*. գորդա: 81-
 83.BC վասն ընդէր, ընդ ում, ընդ ով, ընդ որ, ընդ իս, ընդ նոյն, ընդ քեզ: Զի Աստուած ժամա-
 նակ (B ամենայն ժամանակք) է էիք պարագի եւ ի ԸՎ փառանան ընդ բնալին գոյանան
 ընդ հանիւր եղելոյ ընդ ամենայն վարս ընդ ասպարէզս: Վասն զի սայ է սաւանան որչա-
 փութեան է (7) դարուցն կշտորդելով յառաջին միակնէն մինչեւ ի կալարումն ոմնական (B
 ոմնակ) ընդ եկին, այլ զղէմսն քնովքէիցն յարտաբերէ զգիրս զայս, որք ընդ թեւաքն թեւա-
 փարած թեւաքաղեալ թեւապարեն զաստուածային աթոռովն պարս պարփակեն, սրածն
 աւղան բակառեալ աղ սիրաշարք ընթացիւքն ասր եւ անդր անցագեն եւ հեռանալ ոչ կա-
 րեն մերձ կարեն եկ ոչ իշխեն հայել հանեղին փառսն *փի*. վասն զի... փառսն: 82.B պարեկ
փի. պարփակեալ: 84.BC թախն: 84-85.B *հո* թոյն պարտուակին: 86.C Այս: 87.A է: 88.B
 գրեմացս այսոցիկ. թոյց հոլովմունքս եղանակացս *փի*. գրեմոյս... համառաւութարար: 89.C
հո այսքան համառաւութարար: 90.BC միաշարակն *փի*. միաշարք... անանգիւնական: 91.C
 աղիւրաց: 92.B *հո* է: 93.A *հո* բենն: 94.A գոյից: 95.B դիականս: 96.A բանիս: 97.B բենից
 իմաստ *փի*. իմաստ բանիս: 98.BC գաղղնից *փի*. զեղափարեալ... ի նմանէ: 99. Նույնը:
 100.C *հո* ի: 101.A *հո* որ են այսոցիկ. վերնակ է ը, փ, հ, լ, փ, միջնակ է ը, փ, հ, լ, փ, ըս-
 փորակ է բ, գ, 2, գ, փ: Եւ այս նրիցս: 102.C կոյականացն: 103.B աշխարհի երաբար: 104.B
 են, որ են այսոցիկ: 105.B Ահա *փի*. Այս: 106.A զայն *փի*. անհա տեղի... չէիս: 107.B զար-
 դեալք: 108.B ամսոց *փի*. ամսոց: 109.B ամսեո: C չիք եւ զ (երբեքն) անմահ: 110.BC Եւ
 թլպալութիւն ի նորա (B նորս) ցուցանէ որպէս թանձ զգացումն, *փի*. այս... աղ: 111-
 112.BC Դարձցուք ի նոյն խորհուրդս եւ բոլոն հարցից (B հարից) զերրորդ պատճեն *փի*.
 Դարձեալ պատճենէ: 113-114.B Արուական *փի*. Գիրքի է... արուական է: 115.B բազմա-
 մեր: 116.B չիք յինքեան: 117.B զպարփիւսն *փի*. զյարկութիւն: 118.B զՎար *փի*. Սուն...
 անհասութիւն: 119.B յարկ Որդոյն: 120.B նայել վկայք եւ պարգամք. նորին մարգարէքն
փի. Եւ դարձեալ... մարգարէիցն: 121.B բնութեանս: 122.A կարմիրավար: 123.B արեանն:
 124.B զամս: 125.AC թափեցի: 126.B զեղանի: 127.B *հո* զձեռնաղորդին: 128.B *հո* եւ ի
 դոժիս: 129.B *հո* եւ զուարճացեալ ցնծան: 130.BC *հո* Դարի Փիլիսոփայի: 131.BC Անե-

անելի *փիւ*. Անեղանելին Աստուած: 132.BC *շիք* ընդ բնաւ: 133.C բանին: 134.C ծագեցար: 135.AB *շիք* ի բարձանց: 136.BC *շիք* անճառելոյ: 137.BC *շիք* պողալից: 138.C անջրպետութեան *փիւ*. անջրպետութեամբ էակացեալ: 139.BC *շիք* առկորոհեալ: 140.C *շիք* սարսուռաց: 141.C *շիք* յուսացելոցս: 142.C անգրտակ: 143.A *շիք* անգրտակ եղանակաց: 144.B աննիւթագրեալ: C աննիւթարցելի: 145.BC Ապա ներել (B ներ) *փիւ*. ապառիկ եղել: 146.C արդիւն: 147.C յաղթէն: 148.C սերպի: 149.C Ասպարապեմ: 150.C Աստուածազանկ: 151.C Անբնին: 152.C Անար: 153.C *շիք* Անշփոթ: 154.C Անշաշալի: 155.C Անժամ: 156.B Ամենակէր: 157.BC *շիք* ամենահայեաց: 158.B ուրախանան: 159.BC այս է այսպիսի սա-
նաւիմաստ բանս բերթողական վարժմանց պէտքս ի պէտք *փիւ*. Այս... Այբիս: 160.C *շիք* բա-
լի: 161.C գննմունս: 162.C բարեաց: 163.AB Բեղանաւոր: 164.A բազմագով: B բազմաջով: 165.B *շիք* եղեր: 166.C *շիք* գտայք: 167.C Բուսոց: 168.C շնչեր *փիւ*. հնչեալ: 169.B փողա-
լոց: 170.C Բացաղ: 171.C դրախտին: 172.C Բացմունք: 173.C բով *փիւ*. բոյ նայեա: 174.C
Վր բնութիւն: 175.C *շիք* ամենայնի: 176.C *շիք* իմաստիւք: 177.C *շիք* գունակք: 178.C *շիք*
Մար: 179.C է: 180.B *շիք* իմաստից: 181.C Բենի *փիւ*. իմաստից Բենիս: 182.C Գրաւ *փիւ*.
լրտեալք է: 183.B յերկին: 184.C գերտունակ: 185.B Գայոյս: 186.C լոյս *փիւ*. բոյս: 187-188.B
ցնդագունի եւ գիտուն առնէ զիմաստուն *փիւ*. երեսուն... զիմաստուն: 189.BC *շիք* անեղ
առն: 190.(B Դոնեհայ): C Դրենի: 191.C բացեր: 192.C սուսերինատուր *փիւ*. սուսեր արի-
սատուր: 193.B Դու պոսկպոս ծանեաց: 194.C ծաղկալի: 195.BC Դու անեղք ի լոյս դասակ-
ցելոց սրբոցն: Դիւթիւթիւն: Դիւթք խափանեցաւ: Այս է Դայիս միտք *փիւ*. Դասանեալք...
Դայիս: 196. Նույնը: 197.B եին զարմանալի հրամանաւորութենէ եղանակէ: C հրամանա-
ւորութեան *փիւ*. համաւորութիւնք... յեղեղէ եւ: 198.BC քաղար է (B չիք է) *փիւ*. քաղաքին
հանդիսարան: 199.C Երկնից: 200.B առան: 201.B *շիք* Երկնաման լոյս: 202.BC Բերկեր
երջանկացն դասն *փիւ*. երջանկացն... բերկրի: 203.C *շիք* երամ: 204.C երկաբանեալ:
205.BC *շիք* լոմամբ: 206.C երագութից: 207.C Երբակ: 208.AC Եղանակաւ: 209.C փառաբա-
նիչս *փիւ*. փառաբանիչք Տեառն: 210.BC *շիք* Այս է... Եիս: 211.C *շիք* եւ: 212.C յարս *փիւ*.
յերգս... Թորգոմայ: 213.C զարագար *փիւ*. զարութիւն հզար: 214.C փարթամ *փիւ*. փայլ-
մամբ: 215.B սիրան C իրան *փիւ*. սիրովն: 216.BC Զամենական: 217.BC մերժեալ: 218.C
զճանճն: 219.C զարդափայլ: 220.B զուրախութիւն: 221.B արանջանսն: 222.BC *շիք* Այս-
չափ... Զայիս: 223.C Էն Էին: 224.B զխորհուրդք: 225.C *շիք* ի կարգ բանի: 226.C մարտ-
ք: 227.C Երբվար *փիւ*. Էրբմն... փաղավար: 228. Նույնը: 229.BC Էրէքսրբեան ծայնին արե-
նութեան: Էրկնային ծորումն *փիւ*. Էրգաբեր աշխարհիկս: 230.C Էրգս գերաշխարհիկս: Էր-
գեմք եւ մեք եղանակաւ Էութիւն *փիւ*. Էրգեմք... եղանակաւ: 231.BC *շիք* այս... Էիս: 232.C ըն-
դարձակեցի *փիւ*. Ընթիւս... ընդարձակեցի: 233.C *շիք* իմաստ փառիս: 234.C *շիք* գոյից:
235.A *շիք* սրբոց: 236.C ծայնին: 237.AB զարացն *փիւ*. զուարթոնց: 238.A սուրբս: 239.B
շիք Այս... [Ը]նթիս: 240.B իմաստ *փիւ*. իմաստական թագիս: 241.B *շիք* թագից: 242.B
թայգարմից: 243.C թոպ եղէ *փիւ*. Թոպեալ է: 244.B թքեալ: C Դրեն: 245. թաթափայլ:
246.BC թաւաբեր: 247.C Թմբել *փիւ*. թմբեալ ի: 248.BC թաւալեալ յաղթս (B յաղխրս):
249.C թարախ չարեացս: 250.C թողեալ: 251.BC *շիք* թափեալք ի յանցաւորէս: 252.B ի շա-
րակարգեալ: 253.B գրիս Թ: 254.C պատճէն Փիլիկա: 255.C գէութիւն *փիւ*. գէ (7)երորդ:
256.C փառից: 257.C *շիք* իմաստից: 258.C լոմանէս *փիւ*. լոման եհաս: 259.BC ժամանեցա-
լոյք: 260.C ժամանել ի լոյսն: 261.C ժառանգել: 262.C գկեանս: 263.BC *շիք* անպարտելիք:

264. BC ժամադրանք մարտի: 265. C սահման: 266-267. BC այս է իմաստը Ժէիս բանս եւ այլ
 բազմազան խորհրդով բանառք: Իսկ Ժէիս առ *փիս*. Այս է... Ժէս: 268. B Մովսիսի: 269. C
փիս մարտնագիր եղեալ: 270. C *փի* ի նմա: 271. C պարզամացն: 272. C նկարս նորոյն *փի*.
 273. A եւ զսանսն որ զմարմնոյն *փի*. զմարմին: 274. C այսպէս իմաստ: 275. C
փի բազմապատկառ... բանա: 276-277. C Ժիր է սալ ի բեր զամենայն բանս ի վարժող մարտ
 278. C *փի* զքնարն արեւնսդիս: 279. BC *փի* նորա յեռնալ:
 280. BC յորդորել *փի*. յորդորմունս բարիս: 281. C ծաղկացն: 282. BC *փի* Այս է... խառն:
 283. C լուացիր *փի*. լցիր: 284. BC լուսաւորէ *փի*. լուսաւորեալ իմաստիք սորա: 285. B քար-
 286. C լուսեռանակ: 287. B պարարտապարտ: C պարարտաւոր:
 288. C ամենակալից: 289. BC Լուսոյ շող ծագեաց: 290. C երկնային: 291. C ի յոյս *փի*. լուսա-
 292. C *փի* շնորհիվ: 293. C *փի* անբաւ Բարեբար: 294. C Լցաւ: 295. B լուսաւորին *փի*.
 296. C բակորդ *փի*. բաժանորդ: 297. C լանճագեղ: 298. C Լիապար: 299. C *փի*
 300. C *փի* ամենակալ: 301. C *փի* այսաւոր: 302. C *փի* ունելով: 303. C զմիտս *փի*.
 304. C շարժմամբ: 305. C յեղեղմունս: 306. C վերաբալ: 307. C պատմութեան:
 308. C Խէն: 309. B բանալիս: 310. C խորհուրդ: 311. BC *փի* Խանճարոյ եւ: 312. B զիպորթին:
 313. C խորհրդացոյց *փի*. խորհրդանոց: 314. A *փի* Խանութ շահաւեր: 315. B *փի* Խոր-
 316. B խորհրդով վանեալ: 317. C առնել *փի*. անմահին: 318. B Խանթաղակալ: C
 319. BC մահու: 320. C Խուժաղորդ իմաստ *փի*. Խուժաղորդ ցնդիցն: 321. BC
 322. B Խանայլարէ: 323. BC եւ էր *փի*. էր: 324. BC *փի* Այս են... Խէիս: 325. B
 326. BC *փի* Խանճարոյ եւ զիպութեան: 327. BC պարզեալ: 328. B շնորհս:
 329. C *փի* մեզ: 330. BC *փի* զանել բանէն: 331. C *փի* դրախտին: 332. BC Ծայրաբան: 333. C
 334. C Ծիրանագոյն: 335. C Ծովաեղծ: 336. A դեակ *փի*. եղեգն: 337. C *փի* զոյս:
 338. B ծաղկած: C ծաղկան *փի*. ծաղկածագ: 339. B յաղլել: 340. A խոնարհին: 341. C *փի*
 342. C միտս *փի*. է եւ բանաւոր... կարգեալ: 343. B Կենն: 344. C բան: 345. C կամբ:
 346. BC կցորդ: 347. BC առաքնութեան: 348. AB ի մահն *փի*. ի Խաչ անմահն: 349. B կոտակա-
 350. B կառավարամեծ *փի*. կառավար ամբիւ: 351. C Կերպարի նպատակ
 352. B սանդուղի: 353. Կառուցման: 354. B կենդանածին: 355. BC
 356. AC քրատալերին *փի*. իրաւապէս: 357. B Կարկեանակոր *փի*. Կարկե-
 358. C կորստեմ, Զրիստոս զիւր *փի*. Կորստեմբ (B կորստեմբ) ան-
 359. B կացոցեալ C Կացոցել: 360. B կենդանաւոր արմար: C Կենդանի արմար
 361. B զոս կոփորից *փի*. գործ: 362. BC *փի* կենդանաւոր...
 363. C Կոփորից: 364. C առնել: 365. C *փի* Այս է... Կենիս: 366. C յոյժ յարու-
 367. C Կանաչաւոր: 368. BC Կամարձակ *փի*. Կամբարձ: 369. B ի քե-
 370. A Կասակափառ գեղեցկութիւն
 371. B *փի* անմահիցն: 372. BC Կամարաւորապաճն (B Կամարա-
 373. Կամարաւոր արդիոյն ձեռի: 374. Կամարաւորակ *փի*. Կամարաւորակ
 375. C Կամարաւորակ: 376. B Կամարաւորակ: 377. C սեռիցն *փի*. ճա-
 378. B Կամարաւորակ *փի*. Կամարաւորակ: 379. C Կամարաւորակ: 380. B Կամարաւորակ: 381. BC զա-
 382. C Կամարաւորակ: 383. C Կամարաւորակ *փի*. Կամարաւորակ ոգ-
 384. B արքայի: C Կամարաւորակ *փի*. վարդ: 385. A Կամարաւորակ: C Կամարաւորակ *փի*.
 386. B Կամարաւորակ: C Կամարաւորակ *փի*. Կամարաւորակ: 387. BC Կամարաւորակ: 388. B Սոր-

աստիճան: 389.B *հիս* դաստիճան: 390.B անձին *հիս*. անաղն: 391.B հրա-
այեցեալ *հիս*. հայեցեալ: 392.B հնարեալ: C Ննարալ *հիս*. Ննարիւն իւրով: 393.C
հիս ի: 394.B հեցումն *հիս*. հերքումն: 395.AC *հիս* Նողամաշ... խնամաւն: 396.C խնամ *հիս*.
անդիր: 397.C հրաւիր: 398.A հանեցեալ յերկր: 399.BC *հիս* չար: 400.BC յոյժ *հիս*. իմաս-
տիւք լնու: 401.C Չան: 402.BC Չանձրաձնալ ձեւացոյ և առնեն խորհուրդ *հիս*. ձայն...
առնիս: 403.C կոչման: 404.B խանդաղարակաւ: 405.C Չեւան: 406.B թոչնոց *հիս*. վեր-
նոց: 407.B երամայ թոչնոց երբեմն *հիս*. երամից վերնոց երգեն: 408. BC Չայն վահինչեն
հիս. ձայնի վերահնչեն: 409.A Չայն: 410-411.BC Չայնի փութակաց *հիս*. ձայն... գումար-
րականաց: 412.C երկրաբոյ: Չայն արկեալ... սեռից: 413.C Չաղիկ պարծից *հիս*. Չաղեալ
պարծեցան: 414.C *հիս* ձայն երբեղական: 415.A Չայն երաժշտական: Չայն զովասանա-
յան: 416.B ուղուական 417.BC *հիս* Որ րնթանայ... զիտութեան: 418.C զարն: 419. C *հիս*
լիանճար: 420.B անդար: C անվար *հիս*. անաղար: 421.BC զեկ (այսպէս և այլուր):
422.BC Ղուգաւան: 423.B զինքական: C զին բանական *հիս*. Ղումբական: 424.B Ղուղ-
աւ: 425.C Ղուղան: 426.BC արտաբերեն *հիս*. խորհուրդ արտայայտեն: 427.C *հիս* Այս
ան: 428.B *հիս* Այս: 429.BC *հիս* գոր ի... կարգեցան: 430.AC պարծեն: 431.C ճէն: 432.BC
հիս իմաստասիրական Նմորիայ: 433.BC ճերարան: 434.B ամբիժ C անբիժ: 435.C ճա-
ճանց: 436.BC *հիս* Յոգնակի... ճէն: 437.C Մինն: 438.A Մեծակոյ: 439.B վարից: 440.B
յաղդի: 441.BC յաղդի: 442.C Մաքիլ: 443.B Մեծ: 444.B Մուսիսն: 445.B *հիս* միթ' զար-
տուրիս: 446.B Մեծասկայ: C Նոգ *հիս*. հասակ: 447.B Մեծի: 448.B Մեծամեծ: 449.B գեր-
ճանի: 450.A Մոյն: 451.B յանասուն: 452.B Մարդկան: 453.A Մտեալ ենք: B եղեալ *հիս*.
Մութահեք եղե: 454.B Մեծ: 455.B *հիս* աստուածարեալ: 456.BC վարիցն: 457.BC սկա-
լից: 458.C Միսէր: 459.C և մեր: 460.B բազմադոցն *հիս*. բազմաց դոյզն: 461.C *հիս*
իմաստ բանիս: 462.C մարգարեախանդ: 463.BC մարտիրոսապատկ: 464.C *հիս* Մեծա-
փառ... Մեծապարգե: 465.BC *հիս* Մի: 466.C ի սպառ. մեծափառ... Մեծահարաշ: 467.B մեռ-
եալս *հիս*. մեղս: 468.BC *հիս* գալուստ: 469.B մեղուցելոյս C մեղուցելոց: 470.BC *հիս* Այս
...Մեհիս: 471.B ձիովն: C ձին: 472.B յարուստ արտոյնի: 473.AB Յարիեաց: 474.C Յոգ-
նաւ: 475.B Յառաջարեւոյնի բարեացն: C բարեացն: 476.B իմ *հիս*. եղեմ: 477.C զար-
դարեցին: 478.C կեանսն: 479.BC *հիս* Յանճառ ուրախութիւնսն: 480.AB մանկութիւն *հիս*.
հասակ մանկութեան: 481.BC *հիս* յանհասն: 482.A ուրախութիւն *հիս*. խնդութիւն: 483.BC
հիս Յանկեան ի չարէն: 484.B Յարեւազի: 485.BC *հիս* յառաջին փառսն: 486.B դաստիճան
հիս. գնդիցն: 487.B յարարուելով C յարաստուելով *հիս*. Յարարուելով: 488.AC Յանալա-
խաց: 489.A յոյսն: 490.C յարիւնիկ ի հոլովսն *հիս*. Յարիւնին ի հոլսն: 491.BC *հիս* յան-
մահ փառսն: 492.A Յաւերաբար փառսն *հիս*. յաւերաբար ի փառսն: 493.B Յաւերաբեր
աղբիւրն: 494.C Յերամ: 495.B Յոգունակական: 496.A Յաղթանակ: 497.C տեսեանսն:
498.BC Յահեղակոց: 499.A Յահագին արեւանն *հիս*. յորժամ... յարեանսն: 500.C Յախո-
յանն ի մարդն (մարտն): 501.C մարտ: 502.B Յանդիմակաց: C ընդդիմակաց: 503.B ՅԱստ-
ուած աստուածոց: C Յաստուարայայ *հիս*. Յաստուածաստու: 504.BC *հիս* Յահագին...
Յարաձգական: 505.C զրոց: 506.AC *հիս* նորոգութեան... արուստ: 507.B հնութեանց:
508.AB Նորածին *հիս*. նորարոյս: 509.C նորավարդիցն *հիս*. Նորավառ վարդիցն: 510.AC
հիս նորածին հասակ: 511.C խորան, խորհրդանոց *հիս*. խորհրդանոց... խորան: 512.C *հիս*
Նորարիւկ... խորհրդանոց: 513.A յուրախութեան: C ուրախութիւն: 514.BC զհրաշ: 515.C

Նահապետկացն: 516.C *հիթ* նորոգեալք եղեն: 517.C *հիթ* նորահրաշ... զմեզ: 518.B նորոգե-
ցին զփեղեզերս ի լոյս *փիւ*. նորոգեալք եղեն... ի լոյս: 519.C արքայ *փիւ*. արքայութեան:
520.B եղեց: C եղեց: 521-522.BC *հիթ* նաւակոնեցան... սկիզբն: 523-524.B Նոր հաւստիս *փիւ*.
նաւակոնեցան... հաւստապեղ: C նմանել *փիւ*. Նորոգալ: 525.C Գրեւոյս միպք *փիւ*. միպք
գրեւոյս: 526.A ամենայն իմաստք հանճարոյ նշանաւորք *փիւ*. շնորհք շահաւորք: 527.C
Շարակերպ: 528.C *հիթ* Շահաւեր... ընթացք: 529.C Շահաւեր ճառ *փիւ*. Շահավաճառ:
530.B Շահապակախառն *փիւ*. Շահապակ ախոյան: 531.A Շահապակախառն երիւս
բալքն: 532.BC *հիթ* հանդիսի: 533.B արեւսար: 534.C Շառաջմամբ: 535.BC Շառաշէջ ար-
քանք: 536.C Շուշան: 537.C զպարացեալ *փիւ*. զարացեալ: 538.BC Շնորհել: 539.C ոսկի
փնք: 540.C Շարաղերեալ *փիւ*. Շարագարդեալ: 541.C Շարավարեալ *փիւ*. Շաղավար-
եալ: 542.B Շքեղանորք: C Շքեղանուն *փիւ*. Շքեղաշուք: 543.A *հիթ* Շնորհաբարն: 544.C
պարտուով *փիւ*. փառաւք: 545.C Շնորհադուր *փիւ*. Շնորհասոյգ: 546.C ծագմանն: 547.C
Շարժուն: 548.C Շնորհել: 549.C իմաստականքն: 550-551.BC *հիթ* Ոյիւս... ասպրածային:
552.C *հիթ* գերապայծառք... գերադրականդ: 553-555.B *հիթ* Ով... զարմանազանդ: 554.C
մեծագունդ: 556.C գեղեցկաարմար *փիւ*. գեղեցկահարմարդ: 557.C ծովահեղձիկ: 558.C
զարտութեան *փիւ*. լոյս: 559.A գահոյգ B գայիոյկ: 560.C լուսով *փիւ*. լոյս: Ով: 561.B անբո-
ցական: 562.B փեսարան: 563.B վշտակաբաշխ: 564.B անուշակ: 565.B *հիթ* Ով: 566-567.C
Ուռ ռդկոյգաբոյս: Ուռ կենդանի արմար: Ուռ յոգնապարտդ, Որք աննդարունկ: Որք հոգի-
ախնամ: Ուռ կենարար արմար: Ուռ ռդկոյգաբոյք *փիւ*. Ուռ կենդանարմար: 568.C *հիթ* Որ
ի հանդէսն: 569. Ի մարեանս *փիւ*. յարեանս: 570.BC *հիթ* Որ ի վեցթեւանս: 571.A *հիթ* Որ
ի գարտութենէ: 572.B *հիթ* ի: 573.C Որ: 574.C քնել *փիւ*. ճգնեալք: 575.C ժամանէք: 576.C
ահագին: 577.C վերջումն: 578.C կոչումն: 579.AB զգործոց *փիւ*. ըսար գործոց: 580.B մեղաց
ոչ: 581.BC *հիթ* Որ ըսար հարտցման: 582.B *հիթ* որ... քերթողականս: 583.BC Չորեքանունչ
աղ: 584.B Չգնող ի: 585.BC ի յանձն: 586.C հասանել *փիւ*. հաւանիլ: 587.C բռնութիւն:
588.BC *հիթ* ի մարք պարեւրագմին: 589.C Չայի: 590.BC *հիթ* յամենայն... խաւսից: 591.C
ծաղիկ *փիւ*. փեսակ: 592.AB սմա: 593.C պարշաճու: 594.B էր ցաս: C երգով *փիւ*. երեւե-
ցան: 595.C Պարտալից: 596.BC պարսպեալ: 597-598.C վիմին: Պարտական փառէս...
լուարդ: Պարտական փառէս: 599.BC *հիթ* այս է... խաւսք: 600.B Զեն: 601.B ջահափայլեալ:
602.C Զոգադրեալ: 603.C գարտ: 604.A *հիթ* Զախել: 605.C Զրահեղձ: 606. Զրաքաժին *փիւ*.
Զրաքաժ եղեալ: 607.C կենդանի ի: 608.AC *հիթ* ջուրն: 609.BC *հիթ* Զանամ... շնորհեալ:
610.A հոմորեական: 611.BC *հիթ* քերթողական իմաստից: 612.B վեհիմաստալիցս C վեհի-
մասք: 613.B Կանք գրեւոյս թելք, որ բանից արուեստիցս *փիւ*. այս հասանել: C *հիթ* Այս:
614.C բանք: 615.C սուրք բանիցս արուեստից *փիւ*. արուեստականաց: 616.C *հիթ* որք... հա-
սանել: 617.B հմտութեանց: C հմտութեան *փիւ*. հմտութեանցն հասեալ: 618.C Ռաբի (այս-
պես եւ այլոր): 619.B լուսերանք: C լուսերամք: 620.BC Լուսաշաւել: 621.BC *հիթ* եղեալ:
622.B ուարտ: C Ռաւտարտուր պարգեւ: 623.C Ռահաւական: 624.B Ռահական բանակս
սուրք սրբազան *փիւ*. Ռամկական... դասս *հիթ* կարգեալ ի դասս: 625.BC *հիթ* այս է...
իմաստք: 626.B *հիթ* Սուրք եւ սրբազան: 627.BC Սրբավայր: 628.B Սիրող: C Սիրով: 629.C
Սիրագոյթ: 630.C անանջարելի *փիւ*. անճառելի: 631.C Սէրն *փիւ*. Սէրմն: 632.C Սրբու-
թիւն: AC *հիթ* ի: 633.B Սրբացանկ: C Սիրացանկ: 634.C հողեղէն: Սէր արարչական: Սէր
հարաւաբեր: Սնուցանաղ տնկոցն *փիւ*. Սիգ... տնկոց: 635.C Սոյր անպարելի: 636.BC

քառասարենի: 637.C Սանդուխտը: 638.C Սրովբեականց ծայն: 639.C դողան: 640.C սիրո: 641.C *շիք* Սուրբ: 642.B ծայնի: C սրբասեան: 643.C ծայնակցեր: 644.C ընկղմեայք: Սասանին փարերք: 645.B Սէմ ամբով: 646.C մեղաւք: Սասանին փարերք (կրկ.) 647.C ի յահէ: 648.BC *շիք* Սրբես... մեր: 649.B հոփորական: C հեռեփորական: 650.B արհեստք: 651.AC հանգամայն: 652.BC նիւթս: 653-654.BC *շիք* Վերն... Աստուած: 655.B Վերնագոյն *փիւ*. Վերնագոյն: 656.BC *շիք* Վերնիս իմաստք: 657.B Վայելուրք: 658.C *շիք* բո: 659.B անքիւրարութի: 660.C Դանիւլի: 661.AB անգեան: 662.C աւգնական: 663.BC անդէն: 664.C կնարիցն: 665.C գոյն: Այս աղագաւ եւ սոքա ունական փանէ ի ճարտասան իմաստիցն ի Հոռոմ բաղաբէ բերեալ ընծայեցին մեզ զգիրս գայս, որ ունի զգոյացութիւն երկնի եւ երկրի, զոր ի նոսա գրանի գլանակա եւ գոլորակա, որ լուսաւորէ գմիսս իմաստնոց, զոր եւ յառաջագոյն յիշեալ: Եւ այժմ երկրորդեցաք գրառս. Վարդ վերաբոսեալ...: 666.C Վարդեն: 667.B վայելուց (այսպէս եւ այլոյր): 668.BC Վերնագոյն: 669.C հերքեցին: 670.C Վարանգ: 671.C Վերակարկեցար: 672.BC *շիք* եւ գերգ: 673.C մրաւք *փիւ*. մեղաւք: 674.A Վարեալս, B վայրանեալս *փիւ*. Վարանեալ: 675.BC *շիք* ի քէն: 676.B Վերակարգաւ առ *փիւ*. Վերակարդամք առ քեզ: 677.BC հաճոյականք: Վայրանք աղկից: 678.C Վկայարան: 679.BC *շիք* իմաստակ... հոփորականաց: B [Ա]յս աղագաւ եւ սոքա ի յունական փանէ, ի ճարտասան իմաստիցն, ի Հոռոմ բաղաբէ բերեալ ընծայեցուցին մեզ զգիրս գայս, որ ունի զգոյացութիւն երկնի եւ երկրի, զոր ի նոսա գրանին գլանակա եւ գաւրակա, որ լուսաւորէ գմիսս իմաստնոց, զոր եւ յառաջագոյն յիշեալ եւ այժմ երկրորդեցաք գրառս: Տոյնիւն փարածանէ...: 680.B փինայի *փիւ*. իմաստակ՝ շարայարեալ: 681.AC Տրոնի: 682.B եղանակաց *փիւ*. եղականաց?: 683.A փրապէս: C Տիրապէս *փիւ*. Տրապէզ: 684.B փողոսկրէից: 685.B *շիք* փաճար... իմաստաշէն: 686.B փերունոյն: 687.B մեծագոյ: 688.BC *շիք* կենաց: 689.B Տունն: 690-691.BC *շիք* Այս... զանուն: 692.A րաբուն: B րաբի: 693.B րաբունական զաւառ *փիւ*. րաբունական զաւագան... սովառ: 694.B *շիք* Այս է... սովառ: 696. Ծանկ աւրինին *փիւ*. ցանկեալ: 697.A Զնծայ: 698-699.BC իսկ Փիւին գիտոս նշանակէ (C *շիք* նշանակէ) *փիւ*. Այս է... քերթողականաց: 700.B *շիք* ընդ Տեսուն: 701.C փափաքմամք (այսպէս եւ այլոյր): 702.C կենաց: 703.C փոխագոյ: 704.B Փանաքին: C փափագին *փիւ*. Փանաքի: 705.B հոգոցն: 706.C փութացնել: 707.BC Փրկողն: 708.A Փայլ կենդանարմար: B Փայտեղ արմար: 709.B երկիր: 710.AC *շիք* Փաղեցն անուշակաց: 711.C Փաղէկն անուշնակաց: Փրկագէն լուսոյ *փիւ*. փրկական... լուսոյ: 712.C գալով: 713.C աւգնութիւն: 714.A *շիք* Փոխարկել ի յոյս: 715.C *շիք* Արարցին: 716.B Փարապէ: 717.C Փարապէ գցաւ *փիւ*. Փարապեա գցասում: 718-719.BC *շիք* փոխարկաբար... Տէրն: 720.C *շիք* Այս... Փիւրիս: 721.BC *շիք* արհեստս... գրչութեան: 722.B արհեստք: 723.B աղաւ: 724.C անքեր: 725.C Զրովպէաբակ: 726.C ավրեալք: 727.C Զարարանաց: 728.B ցաղագեալ: 729.B Զուրբական: 730.BC Զրիստոսագցեստ: 731.C փառաւք: 732-733.BC *շիք* Այս... արհեստից:

թյունից: 1958 թ. երբ այն տեսանք, ոչ մի հետք չէր մնացել աչ կողմի «առյուծից»:

Լևոն IV-ի թագը՝ Կիլիկյան Հայկական թագավորության ընդունված թագն է: Թագավորը պատկերված է մորուքով և երկայն մազերով: Գահավորակն ամպհովանի չունի:

Պահպանված ծախակողմյան «առյուծը» պատկերված է մարդկային գլխով և առյուծի մարմնով: Նա կանգնած է ետևի երկու ոտքերի վրա: Մարդու մասն խաչաձևված են առջևի երկու թաթերը: Գլխի վերևի մասում պատկերված են առյուծի երկու ականջները: Վզին կա կենդանու բաշը ներկայացնող տերևաձև մի ցցվածք: Առյուծի պոչի վերջնամասը քանդակված է լայն բացված հերալդիկական շուշան ծաղկի հետևողությամբ: Այդպիսից է եղել XIV դարում հայոց Թագավորաշեն բերդի զինանշանը:



Նկար 1

Թագավորաշենի կառուցման թվականը ճշտելուց կարող է նպաստել բերդի բարավորի վիմաքանդակի կոպտգիցիան և Լևոն IV թագավորի այն մանրանկարը, որը 1331 թվականին (Քավանաբար՝ Սիսում) գծել է Սարգիս Պիծակ քահանան «Ամտիոքի օրենսգրքում» (գտնվում է Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության մատենադարանում, ձեռ. հմբ. 107) (ՃԿ. 2): Մանրանկարում Սարգիս Պիծակը պատկերել է Լևոն IV թագավորին դատական ճիստի ժամանակ: Թագավորը՝ թագը գլխին, ծալապատիկ նստած է գահավորակին ու նախագահում է ընթացող դատը: Մեղադրյալը ծնկաչոք, գեղեցիկ մի կին է: Նրա ետևում կանգնած է մի սպիտակահեր ծերունի, որի գլխավերևում գրված է «Ուղեղ»: Հավանաբար դատախազն է: Կինը հագել է երկգույն հագուստ, որը հատուկ է բանտարկյալներին: Մանրանկարի աչ հատվածում և թագավորից ցածր գտնվում են ծալապատիկ նստած երկու տղամարդիկ: Մեկը սպիտակահեր ծերունի է և մյուսը՝ մութաքայի վրա նըստած երիտասարդ և գեղեցիկ մի իշխանավոր: Թագավորից բացի, բոլորը գլխաբաց են: Մանրանկարը ներկայացնում է «Բարձր Դարպասի» մի ճիստ: Երկրորդ ծերունին երիտասարդ իշխանավորի՝ հայցողի փաստաբանն է:

Մանրանկարում Լևոն IV թագավորի կերպարի և գահավորակի կոմպոզիցիայի միջև կան մի շարք ընդհանրություններ: Թագավորաշեն բերդի անուրը 1335 թվականի դեպքերի կապակցությամբ հիշվել է մեկ անգամ: Մանրանկարը և Թագավորաշենի վիմաքանդակը ժամանակակից են և նույն ձեռքի գործը: Վիմաքանդակի զծագրի ձևավորումն անկասկած պատրաստել է Սարգիս Պիծակը, և բերդը կառուցվել է մանրանկարի ծաղկման նույն՝ 1331 թվականին: Այս հանգամանքն անտարկելի մի ապացույց է Թագավորաշենը կառուցողի և «Լևոն թագավորի դատաստանի» մանրանկարի գլխավոր պլոմբի՝ Լևոն IV-ի նույնության մասին: Սարգիս Պիծակի տաղանդը փայլել է Օշին, Լևոն VI, Կոստանդին II, Կոստանդին III և Կոստանդին IV թագավորների շրջանում: Նա գործի բերումով ապրել է Սիս մայրաքաղաքում ու մրա շրջակա Կոպիտառա, Դրազարկ, Փոս ու Սկևա վանքերում: Նա տեսել է այդ թագավորներին ու կատարել նրանց պատվերները: 1331 թ. կառու-

ցում է Թագավորաշենը: Այդ թվականին էլ Սարգիս Պիծակը նկարում է Թագավորաշենի դռան կոմպոզիցիան և Ամսիոքի Օրինագիրքը:

Կիլիկիայի հայ թագավորների գահերը մնան էին Եվրոպական երկրների թագավորների գահերին: Իսկ ինչպես երևում է, Լևոն IV-ի մանրամակարի և Թագավորաշենի վիմաքանդակի գահերը «Թախտ» են և մտնում է ոտքերը ծալած դիրքով: Այժմ հարց է առաջանում, թե Լևոն IV-ի թագավորությունը մախ ո՞ր պետության կողմից էր ճանաչվել ու հաստատվել:

Քաղաքական ի՞նչ ազդակների բերումով Կիլիկիայի հայ քրիստոնյա թագավորը ստիպված էր ծալապատիկ քազմել «Թախտի» և ոչ թե գահի վրա:

1307 թվականին Անավարզայում Բիլարդու Նուին մոնղոլ զորավարի կազմակերպած դավադրությունից հետո, որի հետևանքով սպանվել էին արքունի ընտանիքից քառասուն անդամներ և իշխանավորներ, Իլխանական Մոնղոլ պետության հետ թուլացել էին դիվանագիտական կապերը: Մոնղոլ սուլթաններն աշխատում էին այն վերականգնել մախնի մնացած: Նրանք արևմուտքում կարիք ունեին հայոց քա-

րեկամությանը, քանի որ Իլխանական պետությունն էլ էր սկսել անկում ապրել: Մյուս կողմից, Եգիպտոսի սուլթաններն աշխատում էին Կիլիկիայի հայկական պետությունը մեկուսացնել Մոնղոլ և Եվրոպայի Լատին պետություններից զինակցությունից ու դիվանագիտական հարաբերություններից: Մրցակցություն էր գնում մանկաթասակ Լևոն IV-ի շուրջ, թե ո՞վ պիտի կարողանար իր կողմը գրավել նրան: Փաստորեն, Կիլիկիայի հայկական պետությունը 1320-1327 թթ. միջև թագավորի անունից կառավարում էին Լևոն IV-ի հորը՝ Օշին թագավորին թունավորող, խնամակալ Օշին պայլը և թագավորի մերձավոր յոթ խոշոր իշխանները: Մրցակից պետություններից ամեն մեկն աշխատում էր մանուկ թագավորին քաշել իր քաղաքական ոլորտը:

Սարգիս Պիծակի ծաղկած մանրամակարից և Թագավորաշենի վիմաքանդակից պարզվում է, որ Լևոն IV-ի թագավորությունը մախ ընդունվել է Մոնղոլ սուլթանի կողմից ու Ախս ուղարկվել Թավրիզյան «Թախտ», որոշ և թագավորական մնացյալ հանդերձանքը:

1327 թվականից մինչև Լևոն IV-ի սպանությունը (28. VIII. 1341 թ.), անցած ժամանակամիջոցում, Եգիպտոսի սուլթանական պետության Կիլիկիա կատարած հարձակումներից և հատկապես 1337 թ. պայմանագրից երևում է, որ Եգիպտոսի իշխանությունը չէր կարողացել իր դիվանագիտական ոլորտը ներգրավել երիտասարդ թագավորին, այդ պատճառով էլ շարունակել էր ճնշման տակ պահել Կիլիկիայի հայկական պետությունը:



Նկար 2

Սարգիս Պիծակի մանրամկարի ու Թագավորաշենի վիմաքանդակի կոմպոզիցիաների բովանդակություններից պարզվում է, որ.

1. Կիլիկիայի հայկական պետությունը 1307 թ. Անավարզայի դավադրությունից հետո ևս դիվանագիտական կապերը չի խզել Իլխանական Մոնղոլ պետության հետ:

2. Արդի Յըլան-կալեն XIV դարի Կիլիկիայի հայկական պետության Թագավորաշեն բերդն էր, որը կառուցել էր Լևոն IV թագավորը:

3. Շատ հավանական է, որ Թագավորաշենի դռան բարավորի վիմաքանդակ կոմպոզիցիայի գծանկարը կազմած լինի մանրամկարիչ Սարգիս Պիծակ քահանան:

4. Լևոն IV թագավորի սեփականությունը եղող Թագավորաշեն բերդի զինամշանը և դրոշը պատկերվել է բերդի դռան վիմաքանդակում: Այս դրոշն ունեցել է ժամանակի հերալդիկական ոճը:


5. Կիլիկիայի հայ թագավորների գայիսունը եղել է ֆլուտիսը (կամ Մաղիկը), ինչպիսին եղել է Հռոմեական կայսրության Գերման արքաներինը:

Ներկայացվող զինամշանի և դրոշի համար որպես նախատիպ է ծառայել Յըլան-կալենի դռան վերևի Լևոն IV-ի և «Կիլիկիայի հայկական գույզ առյուծների» բարձրաքանդակը: Թագավորաշեն բերդի Նշանը ներկայացնում ենք Յըլան-կալենի դռան 1955 թ. կատարած մեր լուսանկարից:

Կիլիկիայի հայկական պետության շրջանից պահպանված Լևոն IV-ի երկրորդ վիմաքանդակ կերպարը գտնվում է Քարային Կիլիկիայում, արդի Անամուր շրջանի Մամուրիե կալեն կոչվող ծովափնյա բերդում (ՃԿ. 3): Վերջինս գտնվում է Անամուր Քրվանդանից արևելք, 12,5 կմ հեռու: Այդ բերդը XII-XIII դարերում կոչվում էր Կամարտիաս (նումարտիաշ, խումարտաշ, նամարտիաշ, կոմարտիաս, Camardius, Camardo և այլն): Այն եղել է Կոմարտիաս կամ Կամարտիաս իշխանական տան հայրենի տիրույթը: Կամարտիասների իշխանական տան հարստությունը Քարային Կիլիկիայի Անամուր և Լամաս բերդերի միջև ուներ ծովամերձ ընդարձակ տիրույթներ: Լևոն I Մեծագործի թագադրության հանդիսավոր արարողության մասնակիցների ցուցակում Սմբատ սպարապետը մշել էր նաև «Իշխանն Նորբերդոյ և Կոմարտիասոյ սեռաստիսոսն Հեռի» և նրա որդի «Իշխանն Սեդեկիոյ և Պունառոյ Կոստանցն»:

Սեբաստոս Հեռի Կամարտիաս իշխանն ամուսնացած էր Հայոց Հովհաննես VI Կաթողիկոսի քրոջ հետ:

Միջնադարյան անվանի Կամարտիաս բերդի տեղադրությունը համարվում է չճշտված, սակայն Սմբատ սպարապետի վերոհիշյալ ցուցակից պարզվում է, որ Կամարտիաս բերդը եղել էր Անամուրի շրջակայքում: Դրա դիրքը որոշելու համար կարևոր տեղեկությու-



Նկ. Մամուրիե կոչվող Կամարտիաս բերդ:

Ա. Կամարտիաս բերդ:

Բ. և Գ. 1450 և 1484 թթ. արվեստագիտական նկարներ:

Դ. Մամուրիե կոչվող:

Ե. Դրոշմը:

Նկար 3

1450 և 1484 թվականների լրացուցիչ երկու վերակառուցումներից Ռեստո Կամարտիաս բերդը տաացել էր այժմյան տեսքը և Ռամարյա չի ենթարկվել որևէ ավերածության կամ փոփոխության:

Եթե Կիլիկիայի հայկական պետության XII-XIII դարերի Կամարտիաս բերդը պատկերացնեց իր արդի Մամուրիյն կալե բերդի ընդհանուր տեսքով, ապա դա սխալ կլինի: Երկու վերակառուցումներից հետո, բերդի ամբողջությունը բաժանվել է երեք անկանոն մասերի: Դրանցից մեկն է Մամուրիյն կալե բերդի հարավ-արևմտյան անկյունի միջնաբերդը, որն ամբողջությամբ վերցրած՝ հին Կամարտիաս բերդն է: Դա կառուցված է ոչ բարձր ժայռի վրա՝ մյուս երկու բաժանումներին իշխող դիրքով: Միջնաբերդի (Հին Կամարտիասի) միակ դուռը բացվում է երկրորդ բաժանմունքի մեջ: Այդ դուռն բարավորի վրա է գտնվում Կամարտիաս բերդի XIV դարի զինանշանը (Ճկ. 4): Վերջինս ձևավորված է ծալապատիկ նստած Կիլիկիայի հայ թագավորի պատկերով: Նրա թագը նման չէ եվրոպական կամ քրիստոնյա այլ պետությունների ընդունված թագերին: Վիմաքանդակում պահպանված թագը ձևավորվել է երկու տարբեր ձևի թագերի համադրումից: Նկատելի է, որ թագը սովորականից շատ բարձր է: Դրա վերևի մասն ունի չորս ելուստներ, որոնք որոշ չափով հիշեցնում են Հայոց կամ Եվրոպական միապետների թագերի վերջավորությունները: Թագի ներքևի մասը, որը դրվում է գլխին, ներկայացնում է զլանաձև հյուսված կողով: Թագն ունի մահմեդականություն ընդունած մոնղոլական ավագանու «պատվավոր բարձի գլխանոցի» (ֆոթոզ, սոխտա) և հայկական թագի համադրում: Բանդակում պարզ երևում են հյուսվածքի ծակտիկները: Մահմեդական տիրակալների փաթեթավոր թեթև գլխանոցները (թագ) ընդհանրապես պատրաստվում էին եղեգի շյուղերից հյուսված կողովաձև հենքի (կարկաս) վրա փաթեթված թանկարժեք կերպասներից:



Նկար 4

Թագավորը ծալապատիկ նստած է բարձի վրա: Սաչաձևել է թևերը: Աջ ձեռքում պահել է խաչը, իսկ ձախ ձեռքով՝ կարճ ցողունով «Ծաղիկը», այսինքն՝ գայիսոնը: Թագավորի առջև քանդակված է եվրոպական հերալդիկայի հիմունքներով կազմված անձնական զինանշանը, ֆրանսիական տիպի վահանակով և բուսական օրնամենտներից կազմված նշանազանցով (HAMET):

Մալապատիկ նստած թագավորը քանդակված է քառանկյունի սպիտակ քարի վրա, ուստի քանդակում արտացոլված չեն Կամարտիաս բերդի Լևոն IV թագավորի շրջանին վերաբերող զինանշանի գույները: Քարի աջ, ձախ և վերևի եզրերին կա ազատ մի տարածություն, ուր պետք էր տեղադրվեին զինանշանի շուրջ եղող արձանագրությունը պարունակող քարերը: Սակայն, ինչպես երեվում է, արձանագրությունը պարունակող քարերը չեն դրվել: Անավարտ է մնացել Կամարտիաս բերդի դուռն Հայոց թագավորի արձանագրությունը: Դուռն վերևի մասում նախկինում եղել է ալյ զինանշան և արձանագրություն: Դրանից պահպանվել է շրջանակի մեջ գտնվող (որպես հավերժության խորհրդանշան)

երիցուկի մի ծաղիկ: Այժմ դա կարելի է տեսնել արձանագրության քարերի համար թողնու-
ված վերևի հորիզոնական ազատ տարածության անկյունում: Արձանագրությունն անա-
վարտ կարող էր մնալ միայն բերդի զրավման պատճառով: Թագավորի ծալապատիկ
նստելու դիրքից ու արձանագրության կիսատ մնալուց դատելով՝ կարելի է ասել, որ
նախքան 1341 թ. Կոնստանդնուպոլիսի Կոնստանդինոս IV-ը (1320-1341 թթ.):

Եւ ըստ հաճախական է. որ Կամարտիաս բերդի վերջից անկումը եղել է 1332 թվականից. երբ Լևոն IV-ի անձնակազմ տիրույթի դուռն վրա զինանշանն և արձանագրություն էր տեղադրվում:

դրվում:

Բարեբախտաբար ահա ասպետ պահպանվել են կիլիկիացի հայոց մի թագավորի երեք պատկերները, երկուսը բերդերի դռների բարավորներից քանդակված, որպես սեփական պատկերները, երկուսն էլ զինվորական տեսքով՝ Սարգիս Պիծակի 1331 թվականին «Ամստիոքի օրինա- գրքում» նկարած մանրամասնությամբ, ուր Լևոն IV-ը մախազահում է մի դատական նիստի։ Ուշագրավ է, որ Լևոն IV-ի երեք պատկերներն էլ ստեղծվել են 1331-1332 թվականներին, այսինքն արքունիքին մոտ կանգնած նկարիչ Սարգիս Պիծակի կողմից։ Լևոն IV-ի պատկերի կոմպոզիցիան, ըստ երևույթին, կատարվել է մանրամասնության կողմից, որն առա- վել է զորացնում թագավորաշեն և կամարտիսս բերդերի նշանները կազմող՝ Սարգիս Պիծակի լիցեյու մասին առկա կարծիքը։

ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու

17-18-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՈՋԱՆՆԵՐԻ ԳՐԶԱՏՆԵՐԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ գրչության կենտրոնների պատմությունը թեև գիտական համակողմանի քննության է ենթարկվել, սակայն գրչության որոշ օջախներ, որոնց թվին են պատկանում Կոստանդնուպոլսից արևմուտք գտնվող Ադրիանուպոլիսը, Մակեդոնիան¹, Թրակիան², Թեքիրդաղը և այլ բնակավայրեր, դուրս են մնացել ուշադրությունից:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվել է ձեռագրերի մի հարուստ հավաքածու, որոնք ընդօրինակվել են հիշյալ գրչատներում:

Ադրիանուպոլիս քաղաքը կառուցել է Հռոմի Ադրիանոս կայսրը և կայսրի անվամբ էլ կոչվել Ադրիանուպոլիս: Մեզ հասած հայ գրչության հուշարձաններից է Ադրիանուպոլսում գրված 1007 թվականի Ավետարանը³, որտեղ պատկերված է ձեռագրի պատվիրատու հայ իշխանավոր Հովհաննես պրոտոսպարարի (պատվիրատուի) դիմապատկերը: Նա եղել է Բյուզանդիայի կայսր Վասիլի (976-1025 թթ.) առաջին սուսերակիրն ու Թեոդորոկանոս դուքսի սպասավորը: Ձեռագրի նկարիչն անհայտ է, հարդարված է բարձր արվեստով, իսկ պատվիրատուի տարազը համապատասխանում է իր պաշտոնին⁴: Ձեռագիրն ունի նաև ավետարանիչների պատկերներ, իսկ խորանները, իրենց համապատասխան գունավորմամբ և ռճավորմամբ, աղերսվում են հայկական զարդամոտիվներից:

Ադրիանուպոլսում հայ կյանքն առավել աշխուժացավ 16-րդ դարում: Կառուցվեցին հայկական եկեղեցիներ, իսկ դրանց կից, ամշուշտ, ստեղծվեցին գրչատներ, որոնք մեծ ճանաչում գտան հատկապես 17-18-րդ դարերում:

Այստեղ հարկ է հիշել հատկապես Ադրիանուպոլսի շնորհալի գրիչ և նկարիչ Մինաս Լտըրենցուն: Նրա ընդօրինակած ձեռագրերում հիշատակվում է իր՝ գրիչ և ծաղկող լինելու մասին. «Յիշեցեք... Ջայս Լտըրենցի տեղ Մինաս քաջ քարտուղարին նույնպես և ոսկեա ծաղկեաք երփն-երփն եւ գոյնս զանազան-զանազան, զո տացե իւրն առանել իմաստութիւն և հմտութիւն»⁵:

Մատենադարանում ունենք նրա գրչագրած ու նկարագրողած 17-18-րդ դարերից

¹ Նկարի ունենք Մակեդոնիայի Խոնոսկան մուրը, Անյանիկ կենտրոնով:

² Մարզ Հունաստանի Կյուսիս-արևելքում, Էգեյան ծովի ափին:

³ Վենետիկ, Ձև. 887, 1 ք 8ա, նաև՝ Հայկական մանրանկարչության Միջինարևելյան Մատենադարանի ձևագրաց, Վենետիկ, Ա. Ղազար, 1966 թ., նկ. 30:

⁴ Տե՛ս նաև Մ. Գևորգյան, Հայկական մանրանկարչություն-դիմանկար պրոմ, Երևան, 1982, նկ. 1:

⁵ Մատենադարան, Ձև. 2229, 1 ք 344:

պատկանող ութ ձեռագիր⁶, որոնք ժողովածուներ են, նաև՝ «Մաշտոց ձեռնադրութեան», «Տաղարան», «Ուրբաթագիրք»։ Այս ժողովածուներում տեղ են գտել Առաքել Սյունեցու, Գրիգոր Տաթևացու, Մաթտիոս Ղրիմեցու և ուրիշների ստեղծագործությունները։ Ժողովածուներում պատկերված են նաև հիշյալ հեղինակների դիմապատկերները, որոնցից վածուներում պատկերված են նաև հիշյալ հեղինակների դիմապատկերները, որոնցից վածուներում պատկերված են նաև հիշյալ հեղինակների դիմապատկերները, որոնցից վածուներում պատկերված են նաև հիշյալ հեղինակների դիմապատկերները, որոնցից վածուներում պատկերված են նաև հիշյալ հեղինակների դիմապատկերները։

Կան նաև Աղդիանուպոլսում ընդօրինակված 18-րդ դարի ձեռագրեր, որոնց ծաղկողներն անհայտ են և հիշվում են միայն գրիչների անունները։ Այդ ձեռագրերը նույնպես մեծ մասամբ ժողովածուներ են՝ բովանդակությամբ համապատասխան դիմապատկերներով ու գեղարվեստական ձևավորմամբ։

Հետաքրքիր է գրիչ Սարգսի 1733-1735 թվականներին ընդօրինակած ժողովածու⁷, ուր գտնվում է և «Կերպ թանաք շինելոյ» գործը, որը հնարավորություն է տալիս մտածելու Աղդիանուպոլսում գոյություն ունեցող գրչատների և նրանց գրչության արվեստի մասին։

Եվրոպական Թուրքիայի հայ գրչության կենտրոններից է եղել Մակեդոնիայի մայրաքաղաքի Սալոնիկի գրչատունը։ Այստեղ 1644 թվականին գրիչ Ասատուրն ընդօրինակել է Ներսես Շնորհալու «Բանք չափաւը»⁸։ Ձեռագրում գետեղված է Շնորհալու դիմապատկերը։

Գրիչ Ասատուրի հիշատակարանում իր մասին կան հետևյալ տեղեկությունները.

«Բազմաշխատ յոյժ քանացի
ի գտանել յօրինակի։
Ձեռամբ տրճաս փծում գրչի,
Աստուածատուր անարժանի
Աւարտեցօ բանս ի կարգի,
Մայրաքաղաքն Մարեթոնի
Ընդ Ռովանեաւ Ա. Աստուածածնի։
Գծագրեցի զսա կամովի,
ի վայելումն Առաքելի...»

.....
Եւ զուսուցիչն իմ ռքարի
Սարգիս անուն կրօնաւորի
Բազում բանօք աշխատելի
Յոյժ աշխատեցաւ մա վասն իմի
Մինչեւ հասոյց արուեստ զրրիչ»։

17-18-րդ դարերում հայ գաղթականությամբ տեսնում ենք նաև Ռոտոսթո (այժմ Թե-

⁶ Ա. Գևորգյան, Հայ մանրանկարիչներ-Մաթենագիրություն, IX-XIX դարեր, Կահիրե, 1998, էջ 344։

⁷ Ձեռ. 1387։

⁸ Ձեռ. 1542, էջ 292-296ր։

քիրդաղ) և Գելիպոլու բնակավայրերում, որոնք գտնվում են Մարմարա ծովի Գյուլչեադա կղզու մոտ գտնվող թերակղզում: Այստեղ հայերը բնակություն են հաստատել դեռևս 14-րդ դարից:

Թեքիրդաղի հայ գրչատներից մեզ հասած մատյանները վերաբերվում են 17-րդ դարին: Դրանք ժողովածուներ են՝ ընդօրինակված 1608-1699 թվականներ: Այս գրչատներում ևս նախապատվությունը տրված է հայ մատենագրությանը՝ Մովսես Խորենացի, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Տաթևացի, Հակոբ Ղրիմեցի, Հովհաննես Արճիշեցի և այլք: Հիշատակվում է գրիչ Խաչատուրի ընդօրինակած «Կանոնագիրքը», որն այժմ գտնվում է Հոռմի թանգարանում⁹, նաև գրիչ Արիստակես Թեքիրդաղցու «Պատմություն Յովակիմայ և Ամնայի»:

Թեքիրդաղում հայ մշակույթի և կրթության զարգացմանը մեծապես նպաստել է տեղի հայոց թեմակալ առաջնորդ Աբրրահամ վարդապետ Կրետացի, որը շուրջ 25 տարի (1709-1734 թթ.) եղել է Թեքիրդաղում և այդ պատճառով կոչվել նաև Թեքիրդաղցի: Այստեղ 1708 թվականին հիմնադրվել է նաև հայկական տպարան:

Թեքիրդաղում ընդօրինակված Մատենադարանի մեզ հայտնի նրա ձեռագրերից



Նկար 1

մանրամկարչական ձևավորում ունեն երկուսը: Դրանցից մեկը գրիչ Սարգիս Կեսարացու ընդօրինակած 1608 թվականի ժողովածուն է¹⁰, որտեղ հիշատակվում է Սարգիս գրչի նաև գծող լինելու մասին: «... Եւ զեղկելի գծող սորին Սարգիս գծողս զայս Կիսարացի մի մոռանա»¹¹: «... Եւ ինձ մեղաւք մեռեալ Սարգիս գրիչս...»¹²: «Կատարեցաւ Սուրբ զիրքս, որ ասի Ոսկի փորիկ քաղաքս Ըռայտոս, ի դուռն ընդ հովանեաւ Սուրբ Հրեշտակապետին: Ձեռամբ մաստ և մերգնեալ ոգոյ, սուտանուն սակաւ գրիչս...»¹³:

Սարգիսը կեսարացի էր, բայց ձեռագիրը գրել է Ռոտոսթոյում՝ հյուրընկալվելով այնտեղ բնակվող կեսարացի Ամիր Ազիզի կողմից. «Դարձեալ Աստուած ողորմի Կեսարացի Ամիր Ազիզին հոգոյն և իւր մեջեցելոց հոգոց, որ խիստ պաղու ձմեռ էր, որ մասայ տունն, ի

⁹ Հրսեյա Անադյան, Հայ գյուղականությունն սլավոնություն, Երևան, 2002 թ., էջ 663:

¹⁰ Մատ. Ձև. 8512:

¹¹ Նունյն Կրեդում, էջ 881ա:

¹² Նունյն Կրեդում, էջ 101ա:

¹³ Նունյն Կրեդում, էջ 202ա:

կրակին դեմն, գրեցի»¹⁴:

Հիշատակարաններում պարզ հիշատակվում է, որ Սարգիսը եղել է թե՛ գրիչ և թե՛ գծող (նկարիչ):

Սույն «Ռսկեփորիկ» մատյանի մամրանկարները սակավ են: Զեռագիրն ունի կլիսախորան, քուսական լուսանցազարդեր և թուչնային ու հանգուցային զարդատառեր, որոնք կատարված են վարպետորեն և գումային ճաշակավոր համադրմամբ:

Առավել հետաքրքրական են Գալիբուլու կոչվող քաղաքի հայկական գրատան մասին մեզ հասած տվյալները, որը գործել է դեռևս 1722 թվականից: Ռաբրունապետն է եղել Աբրահամ կրետացին: Ուշադրության արժանի է 1723 թվականին գրիչ խաչկոյի ընդօրինակած ժողովածուն¹⁵:

Այն ընդօրինակվել է Աբրահամ վարդապետ կրետացու պատվերով: Այդ մասին գրչի հիշատակարանում ասված է. «Ըստացող աստուածային մատենիս զպատուելի և զքաջ ռաբրունապետն ըզկրետացի Աբրահամ վարդապետն և զամենայն մերձակայս մորին. ընդ մին և զիս՝ եղկելի, անշնորք խաչկո գրիչս Գալիպուլցի յիշեցէ ի Քրիստոս, զի և դուք ըմթերցողքդ յիշեալ յիշիք ի մեմնէ, ամէն»¹⁶:

Զեռագրի ավետարանական թեմաներով միակ նկարը «Կոտորածն մականցն» է¹⁷: Չափազանց հետաքրքրական, յուրահատուկ հորինվածքով ու մեծ վարպետությամբ կատարված մի պատկեր, ուր Հերովդեսը մտնել է գահին, արքայական շքեղ համդերձներով: Նա ձեռքը մեկնել է առջևում կանգնած անձին՝ հրամայական ձևով, որ կատարեն իր ցանկությունը: Զախ կողմում կանգնած են զինվորներն իրենց զենքերով, ներքևում երեխայի մայրն է ծնկի եկած, իսկ առջևում՝ թաղուրված մանուկը: Աջում՝ մեկ այլ մայր, որ զինվորի թիկունքն է բռնել, որը պատրաստվում է թրով հարվածել ձեռքում պահած մանկանը (նկ. 1):

Օքել է ներկայացված հորինվածքի խորքը՝ իր խորանատիպ զարդարում սյուներով: Օգտագործված է ոսկի, գումային հաճելի համադրմամբ: Խորանի վերին զարդամոտիվը հիշեցնում է պարսկական ձաղկազարդ:

Զեռագրի լուսանցներում զետեղված են տասներկու մարգարեների պատկերները՝



Նկար 2

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Մատ. Ձև. 1447: 1722-1723 թթ, Գալիպուլու:

¹⁶ Նույն տեղում, Լք 333ր:

¹⁷ Նույն տեղում, Լք 2ր:

ճրագն մասին եղած մեկնություններով: Ձեռագրի 129ա էջում պատկերված է Սողոմոնը՝ որպես թագավոր: Այդ է վկայում ճրագ ձեռքում պահված ոսկե գունդը՝ իշխանության, տիրակալության խորհրդանշիչը: Նա նստած է գահավորակին (ճկ. 2):

Թե՛ տերունական ճկարը և թե՛ տասնեղևու մարգարեների պատկերներն ունեն յուրահատուկ, հայկական ոչ բնորոշ ռեալորում: Նրանց շարժում կեցվածքները, հագուստի ձևավորումներն ու դիմապատկերները կրում են եվրոպական արվեստի ազդեցությունը և կատարված են մեծ վարպետությամբ: Հակառակ դրա՝ ձեռագրի թե՛ գլխազարդերը, թե՛ լուսանցազարդերն ու զարդագրերը հարազատորեն պահպանել են հայկական զարդամոտիվները:

Գրիչ Խաչկոյի ընդօրինակությամբ է ստեղծվել նաև Գեղիբոլու 1731 թվականի «Կանոնագիրք Հայոց» մատյանը¹⁸: Ձեռագիրը հարդարված է գլխազարդերով, լուսանցազարդերով ու զարդագրերով: Սակայն դրանք մեծ մասամբ զծապատկերներ են և ունեն սակավ գունավորում՝ կարմիր, կապույտ և սև:

Խաչկո գրիչը սույն մատյանում ունի մի քանի Ռիչատակագրություններ, որոնցում իրեն ներկայացնում է որպես գծող. «գծող գրոյս զանաբնեստ Խաչկո անշնորքս յիշեցէք»¹⁹: Հնարավոր է, որ Խաչկո գրիչը նաև նկարազարդողն էր: Ընդօրինակվող ձեռագրի Ռեդինակը Աբրահամ Կրետացին է. «... Հեղինակաւ է նահանգիս մերոյ տեսած Աբրահամ ճոռոմաբան վարդապետին Կրետացոյ, ի ՌԺԶ (1731) թուին...»²⁰:

Գրիչ Խաչկո Գալիբոլին է ընդօրինակել նաև 1733 թ. գրված ժողովածուն, այս անգամ՝ Ղազար վարդապետի պատվերով: 1734-1737 թթ. Աբրահամ Կրետացին արդեն Ամենայն Հայոց Կաթողիկոս էր:

Ի հարկե, Խաչկոն Գալիբոլու գրատան միակ գրիչը չէր: 1732 թվականին գրիչ Շնորհ երեցը ընդօրինակել է մի ժողովածու²¹, դարձյալ Աբրահամ Կրետացու պատվերով: Ձեռագիրը նկարազարդում չունի, բայց շնորհալի գրիչը թողել է չափածո Ռիչատակարան՝ մվիրված Աբրահամ Կրետացուն:

«Սիրով ըզգիրքս եղ մօտրել
Հեղինակն և թըրակիան
Բաբունեաց պետն Աբրահամ
Ազամբ և տոմիլըն Կիտեան»²²:

Այսպիսով, վերոհիշյալ գրչատներում ստեղծված մատյանների մանրանկարչության ուսումնասիրությունն օգնում է հարստացնելու հայ միջնադարյան մանրանկարչական արվեստի մասին ունեցած մեր գիտելիքները:

¹⁸ Ձև. 626:

¹⁹ Նույն տեղում, լ.թ 111ր:

²⁰ Ձև. 2969:

²¹ Ձև. 1675:

²² Ձև. 1675, լ.թ 274:

ԱՍՏԱՏՈՒՐ ՓԱՇՏԱՅՆՆ

18-րդ-ԴԱՐՈՒՄ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹ-ԱՐՅԱՆՆԵՐԻ
ՀՐԱՏԱՐԱԿԱԾ «ԷՖԻՄԵՐՏԵՆՆԵՐԸ»

1717 թվականին, հաստատվելով Վենետիկի Սուրբ Ղազար կղզում, Մխիթարյան միաբանները՝ մինչև սեփական տպարան ունենալը (1789), իրենց գրքերը տպագրել են Վենետիկում, Քիմնականում իտալացի Անտոնիո Բորտոլիի տպարանում¹:

1748-ին հիշյալ տպարանում հրատարակվել է «Նախ պարունակի աստ շրջանն մըշտնեմատր ։տարեկան գեկուցմանց եւ ապա՝ համաձայնութիւն հնգետեսակ ամսոց, այսինքն՝ հոռմայեցոց, Ագարիայի, հայոց, հրէից եւ տաճկաց։ Յօրինեցեալ ի Մատթէոս եւ ի Ղուկաս դպրաց Վանանդեցոց։ Երկրորդ ... համառոտութիւն տօմարիմ՝ հոռմայեցոց... Երրորդ վասն նախասահմանութեան սրբոյն Թօմայի (Էֆիմէրտէ)»² գիրքը, որը հետագաերորդ վասն նախասահմանութեան սրբոյն Թօմայի (Էֆիմէրտէ) անունով, իսկ ժողովրդի խոսակցական լեզվում՝ «Եփրեմ Վերդի» ձևով:

Երկար տարիներ, հատկապես խորհրդային կարգերի ժամանակ, Հայաստանում այդ գրքի մասին խոսվում էր խորհրդավոր մի երանգով, ավելի ճիշտ՝ երկյուղածությամբ և վախով, քանի որ այն պաշտամունքային գրքի համարվ ուներ: Հասկանալի պատճառներով խորհրդային Հայաստանում այն չի հրատարակվել:

1987-ին հիշյալ գրքի մասին արժեքավոր հոդվածով հանդես է եկել Հ. Միրզոյանը³: 1992-ին, Երևանում հրատարակվել է «Էֆիմէրտէ»-ն⁴:

Ասվեց, որ «Էֆիմէրտէ»-ն առաջինը հրատարակել են Վենետիկի Մխիթարյանները 1748-ին: Գրքի հրատարակիչն է հայ տպագրության երախտավորներից Սարգիս Սարաֆյանը (Սարգիս արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսեցի, Աղեքսանդրյան, Կեսարյան)⁵:

¹ Գ. Լեոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1976, էջ 127:

² Վերնագրում հիշատակված «... այսինքն՝ հոռմայեցոց, Ագարիայի, հայոց, հրէից, եւ տաճկաց» արտահայտությունում ակնարկված է XVI դարի հայ տոմարապետ Ագարիա Ջուղայեցին: Կազմել է, նոր օրացույց, որը հայերի է. Ագարիայի կամ Ջուղայեցիների տոմար անունով: 1685 թվականին Վենետիկում, Միքելանջելո Բարոնի տպարանում լույս է տեսել «Գիրք տոմարաց Հայոց, Ագարիայի և Հոռմայեցոց, ընդ որս և տարգարտմար, լուսնայոց և արեգակնապոյց» 320 էջանոց գիրքը: Ագարիա Ջուղայեցու մասին տե՛ս Գ. Անտայան, Հայկական մատենագիտություն, հ. Ա., Երևան, 1959, էջ 272-276; Բ. Քաղապյան, Հայոց տոմարի պատմությունը, Երևան, 1976, էջ 53:

³ Հ. Միրզոյան, «Էֆիմիդրալ», ինչ գիրք է սա, «Գաբուս», 1987, No. 1, էջ 88-90:

⁴ Գիրքը 82000 տպաքանակով իրադարձակել է «Ապոլոն» իրադարձությունը՝ եիմք ընդունելով 1796 թվականին Վենետիկում դարձյալ Անդրեոլի Բորտոլիի տպարանում լույս տեսած 496 էջանոց «Գրգուկ, որ կոչի Էֆիմիդրալ» իրադարձությունը: Նման տպաքանակով գրքի տպագրությունը, այն էլ ոչ գեղարվեստական, հայ իրականության մեջ հազվադեպ կրնույթ է:

⁵ Չնվել է Աղբիւսանալոյսում 1699-ին: Սկզբնական կրթությունն ստացել է Կ. Պոլսում: Աշակերտելով Կ. Պոլսի Հովհաննես Կոլոբ Պարիրիարքին (1719-ից): 1726-ին ձեռնադրվել է քահանա, մեկ տարի անց՝ վարդապետ: 1734-ին Էջմիածնում օծվել է եպիսկոպոս: Պոլսում և շրջակայքում եղել է երանավոր քարոզիչ, թեմակալ առաջնորդ Կեսարիայի (1731-1738) և Գաղապիայի (1738-1741), Երուսաղեմի եպիսկոպ: 1740-ականների սկզբներին

Վեցնտիկյան 1748-ի հրատարակության մեջ ընդգրկված են հետևյալ աշխատությունները.

ա) Ղուկաս Վանանդեցի, Համաձայնությամբ հեղինակական ամսոց՝ հոռոմայեցուց, Ազարիայի, հայոց, հրեից եւ տաճկացի⁶:

բ) Մխիթար Սեբաստացի, Համառոտություն տոմարին հոռոմայեցուց:

գ) Թովմա Աքվիմացի, Վասն ճախախնամութեան⁷:

Հետագայում հաջորդ հրատարակություններից հանվել է Թովմա Աքվիմացու աշխատությունը և ներմուծվել են Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների աշխատությունները⁸:

Ի՞նչ նպատակով է կատարված այս փոփոխությունը: Կարծում ենք միայն մեկ՝ «Էֆիմերտե»-ները «իցքավորել» գիտական լիցքերով: Հիշյալ ժամանակատվածում Մատթեոս ու Ղուկաս Վանանդեցիների բնագիտական աշխատությունները ամենամեծ հեղինակությունն են վայելել: Այս իմաստով միանգամայն համամիտ ենք Հ. Միրզոյանի արտահայտած ներդրությունը մտքին. «Ինքզին հասկանալի է, որ Վանանդեցիների մշակած աշխատության (ակնարկում է Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների «Բնաբանություն իմաստասիրական...» մեծարժեք աշխատությունը - Ա.Փ.) միջոցով «Էֆիմերտեի» մեջ թափանցել են գիտական արժեքավոր մտքեր ու գաղափարներ և դրանով իսկ նպաստել հայ ընթերցողների գիտական գիտելիքների հարստացմանն ու խորացմանը»⁹:

Մինչև 19-րդ դարի սկիզբը «Էֆիմերտե»-ն Վեցնտիկյան բացի մշակած 1748 թ. հրատարակությունից, լույս է տեսել երեք անգամ՝ 1752-ին¹⁰, 1772-ին¹¹ և 1796-ին¹²: 1797-ին հրատարակվել է Աստրախանում, 1798-ին՝ Կալկաթայում, 1831-ին՝ Մոսկվայում, և այլուր: «Էֆիմերտե» բառը հունարեն է և թարգմանաբար մշակվում է օրագիր, առօրյա դեպք, առօրյա տեղեկագիր:

Էֆիմերտեն լայն իմաստով հին աշխարհի՝ պետական, քաղաքական, ռազմական գոր-

րությունը և, կաթոլիկություն: 1745-ի մայիսից որպես կաթոլիկ բարոցիզ գործել է Հռոմում, Վենետիկում, Լիվոռնոյում, Ջովոնիայում: 1747-ին Վենետիկում հիմնադրել է հայկական տպարան և մինչև 1752-ը այստեղ տպագրել 15 անուն գիրք: Իսլամադա մեծահարուստ Հովհաննես յեկուլի Սևրդույանի (Մրբեկ Ճիվանսի դի Սևրդու (1727-1811)) եվրոպությունը 1752 թվականին Վենետիկի Անտոնիո Բորգոլիի տպարանում տպագրել է Մովսես Խորենացու Պատմություն Հայոցը՝ «Ազգարանության Տոմարի Բարեբան» վերնագրով: Մահացել է 1773 թվականին:

⁶ 106 էջանոց եռյայ աշխատությունը տպագրվել է 1698 թվականին Ամստերդամում, Թովմա Վանանդեցու տպարանում:

⁷ Վերջին երկու՝ բ և գ գործերն ունեն ատանձին անվանաթերթեր և էջակալություն: Այդ անվանաթերթերում հրատարակության տարեթիվը չի նշվում: Մխիթար Սեբաստացու «Տոմար կարճագույն»-ի անվանաթերթում «Յամի տեսնել 1733» թվականը «Տոմարի» գրության տարեթիվն է: Տե՛ս Հայ եկեղեցի գրքի մտերևագիրություն (1512-1800), Երևան, 1963, էջ 122:

⁸ Մատթեոս Վանանդեցի և Ղուկաս Վանանդեցի: Բնաբանության իմաստասիրական կամ տարբարանություն, Ամստերդամ, 1702, 120 էջ: Նույն հեղինակների Դուռն իմաստասիրական: Բ անվանաթերթ, Ոսկեայ դուռն տպարան, Ամստերդամ, 1699, 70 էջ:

⁹ Հ. Միրզոյան, Մոռացված գրքի վերադարձը (վերջաբան «Գրգուկ, որ կոչի Էֆիմերտե» գրքի), Երևան, 1992, էջ 332:

¹⁰ Էֆիմերտե և տարբարանություն: Բ անվանաթերթ, Գրգուկ, որ կոչի Էֆիմերտե, Վենետիկ, 1752, 456 էջ:

¹¹ Գիրք, որ կոչի Էֆիմերտե, Վենետիկ, 1772, 456 էջ:

¹² Գրգուկ ոչ կոչի Էֆիմերտե, Վենետիկ, 1796, 456 էջ:

քաղաքական տեսություններին, ուր փիլիսոփայությունը ազատ և վերամբարձ մտածողությունը ստրկանում են պապի հանդգնամիտ ամենականչությամբ»¹⁵:

Եվ քանի որ «Էֆիմէրտէ»-ների գոնե առաջին հրատարակությունները Մխիթարյանների ձեռքով է իրականացել, հասկանալի է և Մ. Նալբանդյանի վերը նշված գնահատականը: «Էֆիմէրտէ»-ի մասին բացասական կարծիք է հայտնել նաև Լեոն՝ նշելով, որ հիշյալ գրքի հրատարակիչը «մինչև այսօր էլ խաբույմ է հայ միամիտ ժողովուրդը»¹⁶:

Մատթեոս և Ղուկաս Վանահոգեցիների բնագիտական ժառանգության հանդեպ, սակայն, Լեոն խիստ դրական վերաբերմունք է ունեցել և մեծապես արժեւորել է դրանք: «1690-ին տպագրվում է Մատթեոսի և Ղուկասի «Ղուռն իմաստասիրութեան կամ Ոսկեայ դուռն դպրատան» անուցով դասագիրքը՝ աշակերտների համար: Այդտեղ, բացի այբուբենից, կան քերականական գիտելիքներ, պատմվածքներ կենդանիների կյանքից, զանազան օգտակար տեղեկություններ, նույնիսկ էժանագին բժշկական դեղերի ցուցակ, ինչպես և անխուսափելի երազացույց, զաղտմիքների գուշակող և այլն: Վաճառականության պահանջների արդյունք է 1699-ին հրատարակված «Գանձ չափոյ, կշռոց, թուոց և դրամից բոլոր աշխարհի» գիրքը: Ինչպես վերնագիրն է ցույց տալիս, այս գիրքը, որի հեղինակն էր Ղուկասը, բացատրում էր, թե աշխարհի զանազան կողմերում ինչ տեսակ չափեր, կշիռներ, դրամներ են գործածվում: Բայց ավելի նշանավոր էր Ղուկասի մի այլ աշխատությունը՝ «Բնաբանութիւն» անուցով, որ տպագրվեց 1702 թվականին: Դա հայերեն լեզվով առաջին բնական պատմությունն էր, որ բացատրում էր, թե ինչից են գոյանում ամպը, անձրևը, եղյամբը, ձյունը, կայծակը, գետնաշարժը և այլ այդպիսի բնական երևույթները»¹⁷:

«Էֆիմէրտէ»-ի հանդեպ խիստ բացասական է նաև Հ. Աճառյանի արտահայտած կարծիքը. «Տօմարական մի գրուածք է, որի մէջ կան աստեղագիտական ծանօթութիւններ, սուտ գուշակութիւններ, երազների մեկնութիւն ևն, և մինչև այսօր էլ գործածական է տղետ տէրտէրների և պառանքների ձեռքում: Առաջին կազմողն է Սարգիս արքեպ. Սարաֆեան Պօլսեցի: Գրուած է նաև Էփիրմէտէս, Էփիրմէրտէս (Տաշեան, Ցուցակ, էջ 473): Հումարեն՝ «առօրեայ տեղեկագիր», որից նաև ֆրանս. Ephemeride: Հումարեն կազմված է Էփի՝ վրա և մերտն՝ օր»¹⁸:

Գ. Լևոնյանի կարծիքով՝ «Էֆիմէրտէ»-ների մասն գրքերը որևէ արժեք չեն կարող ներկայացնել. «Սակայն, եթե Բարտողիի հրատարակություններն իրենց քանակով և գեղարվեստական ձևավորմամբ կարող են պարծենալ, նրանք իրենց նյութերի բովանդակությամբ առանձնապես նշելի տեղ չեն կարող գրավել մեր պատմա-բանասիրական, գիտական (ընդգծումը մերն է - Ա. Փ.) և գեղարվեստական գրականության մեջ»¹⁹:

Ավելացնենք, որ «Զիմիա» տեղմինն առաջին անգամ հայատառ տպագիր գրականության մեջ հանդիպում ենք 18-րդ դարում լույս տեսած Վենետիկյան Էֆիմէրտեներում՝ Մատթեոս ու Ղուկաս Վանահոգեցիների՝ վերը նշված աշխատությունում: «Տամուկ շունչն ի քիմիայից (ընդգծումը մերն է - Ա. Փ.), ասի փայլածու, ծառայ փախստական, ջուր, կապ,

¹⁵ Մ. Նալբանդյան, Երկերի լիակարգւոր ժողովածու, հր. 2, Երևան, 1980, էջ 272:

¹⁶ Լեո, Երկերի ժողովածու տասր հատորով, հր. 3, Երևան, էջ 509:

¹⁷ Լեո, Երկերի ժողովածու տասր հատորով, հր. 5, Երևան, 1986, էջ 301:

¹⁸ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հր. 2, Երևան, 1973, էջ 119-120:

¹⁹ Գ. Լևոնյան, նշվ. աղյւս., էջ 128:

ջրային շունչ և սնդիկ բնութեամբ²⁰:

1752, 1772 և 1796 թվականների վեներոկյան «Էֆիմերտե»-ներում հանդիպեցինք երեք բառերի, որոնք ցարդ բացատրված չեն: Դրանք են քաջեփը, քաջամակարող և քաջակուսանը, «Ոսկին է փայլում, քաջեփ, ծանր, քաջամակարող, քաջակուսան, մետաղ»²¹:

Բնագիտական հայատառ աշխատություններում առաջին անգամ ենք հանդիպում այս տերմիններին: Փորձենք մեկնել մշված բառերը: «Քաջեփ»-ը երկու արմատից է՝ «քաջ» և «եփ»: «Քաջ» բառին տված Աճառյանի բացատրություններից մեկը «շատ»-ն է²²: «Եփ»-ը ունի մահ «եռալ» իմաստ²³: Այսպիսով «Ոսկին քաջեփ մետաղ է» արտահայտությունը պետք է կարդալ «Ոսկին շատ բարձր եռման ջերմաստիճան ունեցող մետաղ է»:

Դատախոս և Ղուկաս վանաճոցիների մշված գրքի տպագրության պահին (1702) մարդկությանը հայտնի էին 9 մետաղներ՝ ոսկին, արծաթը, պղինձը, երկաթը, անագը, սընդիկը, կապարը, արսենը և ծարիրը: Նշված մետաղներից «Էֆիմերտե»-ում բացակայում են արսենը և ծարիրը:

Այժմ տեսնենք, թե ինչ ջերմաստիճաններում են եռում հիշյալ յոթ մետաղները: Ոսկին եռում է 2947 աստիճանում (Ցելսիուսի սանդղակով), արծաթը՝ 2212, պղինձը՝ 2600, երկաթը՝ 3200, անագը՝ 2362, սնդիկը՝ 356, կապարը՝ 1725:

Ինչպես տեսնում ենք, մշված յոթ մետաղներից ամենաբարձր եռման ջերմաստիճան ունի երկաթը, հետո՝ ոսկին: Ուրեմն միանգամայն ճիշտ է ոսկին «քաջաեփ» անվանելը:

Այժմ փորձենք վերծանել «Քաջամակարող» բառը: Կարծում ենք, որ «Քաջամակարող»-ը ենթատեքստում հոծ, խիտ, ստվար իմաստն ունի և ահա՝ թե ինչու: Ոսկին շատ մեծ խտություն ունի: Հեղուկ ոսկին մոտավորապես քսան անգամ ծանր է ջրից: Նման խտությանը շատ քիչ մետաղներ կան:

«Քաջակուսան»-ը մեկնության կարիք չունի, քանի որ ոսկին մետաղների մեծ մասի մեծ ղյուրին կոչվի է:

Մեր ուսումնասիրություններից մեկում հպանցիկ անդրադարձել ենք վեներոկյան «Էֆիմերտե»-ներին. «18-րդ դարում Միսիթարյանների լույս ընծայած բնագիտական աշխատությունները սակավաթիվ են: Դրանք վեներոկյան լույս տեսած «Էֆիմերտե»-ներն են և վեներոկի Միսիթարյան միաբանության անդամ Ղուկաս Ինճիճյանի աշխարհաբարոյով լույս տեսած «Տեղեկություն համառոտ հին և նոր աշխարհագրութեան» աշխատությունը»²⁴:

Ամերկաբայորեն կարելի է հավաստել, որ 18-րդ դարում հրատարակված վեներոկյան «Էֆիմերտե»-ները Միսիթարյան միաբանության բնագիտական ժառանգության անբաժանելի մասն են:

²⁰ Գրգուկ, որ կոչի էֆիմարով, վենետիկ, 1796, էջ 331:

²¹ Նույն տեղում, էջ 182:

²² Տ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հղ. 4, Երևան, 1979, էջ 554:

²³ Էդ. Աղայան, Արդի հայերենի բաղադրական բառարան, հղ. 1, Երևան, 1976, էջ 359:

²⁴ Ա. Փաշայան, 18-19-րդ դարում վենետիկի Միսիթարյան միաբանության հրատարակած բնագիտական աշխատությունները, «Էքմիանին», 1998, № 12, էջ 66:

ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԷԶԵՐ ՆԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

(Ուրվագիծ Երուսաղեմահայ տպագրության)

Երանի ով ունի հիշատակի Սիոն

Երուսաղեմի հայկական տպագրությունն կապվում է Սուրբ Երկրում հայերի 17-դարյա անընդմեջ ներկայությանը և գործունեությանը:

Երուսաղեմի հայ միաբանները, գրապատության գյուտից առաջ, Սուրբ Երկրի հայկական վանքերում ընդօրինակել են հազարավոր ձեռագրեր¹:

Երուսաղեմի հայկական տպարանը հիմնվում է Պողոս վարդապետ Ադրիանապոլսեցու ջանքերով և Միաբանական ժողովի որոշմամբ 1832 թ. «ի պարծանս ազգիս հայոց»²: Իսկ գրապատությունը սկսվում է մեկ տարի անց: Նախաձեռնողը եղել է Ջաքարիա Պապրիարք Տեր-Պետրոսյանը:

Նա ծնվել է Հին Հաղբ կամ Բուլանուխի (Տարոն) գավառի Կոփ ավանում: 1820 թ. Ջաքարիան նվիրակ է եղել Դիարբեքլիում և Սասունում, հետո՝ Զմյուռնիայում, որտեղից 1826 թ. Կ. Պոլսի փոխանորդ է ընտրվում: 1829 թ. Ջաքարիան դիմումնագիր է ներկայացնում սուլթանին և նրանից ստանում հրովարտակ, որով հայերին իրավունք է շնորհվում հույների և լատինների նման պատարագել Սուրբ Գերեզմանի վրա՝ հավասար իրավունքներով³: Տնօրինական սրբավայրերի հայոց եկեղեցական իրավունքի պաշտպանության այս եռանդուն գործունեության համար նա 1830 թ. աքսորվում է Կիպրոս, որտեղից կարողանում է 1831 թ. Երուսաղեմ անցնել և աքսորից ազատվել արդեն պապրիարք դարձած Պողոս Ադրիանապոլսեցու միջնորդությամբ: Այստեղից ուղևորվում է Էջմիածին՝ եպիսկոպոս ձեռնադրվելու:

Կիպրոսում եղած ժամանակ նա գրում է Տրիեստ (Իտալիա)՝ իր բարեկամ Զմյուռնիացի երևելի վաճառական Պետրոս աղա Յուսուֆյանին և խնդրում, որ նա տպագրական մի մասնով նվիրի Երուսաղեմի Սուրբ Աթոռին: Յուսուֆյանը Երուսաղեմ է ուղարկում տպագրական մի սարք ու կապարե տառեր ու այլևայլ նյութեր⁴: Այս ամենով հանդերձ, այդ շրջանում հնարավոր չի լինում սկսել գրապատությունը՝ տպագրական մի շարք գործիքների բացակայության պատճառով:

Ջաքարիան Երուսաղեմում պապրիարքական փոխանորդ նշանակվելուց հետո, 1832 թ., գնում է Եգիպտոս, որտեղ իր բարեկամ ակնցի մահիբեսի Ալիքսան Էդիազարյանի օգնությամբ

¹ Գալուստյան Շ., Հայագրի ստորեր, Երևան, 1997, 3-րդ հրատարակություն, էջ 368:

² Մխիթարյան Խ., Համառոտ Պատմություն Երուսաղեմի, Երուսաղեմ, 1867, էջ 131:

³ Սավալանյան Տ., Պատմություն Երուսաղեմի, Երուսաղեմ, 1931, էջ 1019:

⁴ Նշանյան Մ., Տպարան առաքելական Աթոռից Սրբոց Յակովբեանց Երուսաղեմի, Երուսաղեմ, 1933, էջ 3:

յամբ ձեռք է բերում վիճագրական մի մամուլ և այսպես նախապարաստությունները հնարգանքներ կարգավորելով հաջողվում է տպարանը բացել⁵:

1833 թ. հունվարին տպարանը լույս է ընծայում հայերեն առաջին գրքույկը, որը կոչվում է «Տպարակ աղօթամատույց վասն ջերմեռանդ աղօթասիրաց որք կամ անձամբ կամ մութը ներկայանան ի Սուրբ Տեօփնական տեղիս Քրիստոսի Աստուծոյ մերոյ»: Հաջորդ տարի, 1834 թ., լույս է տեսնում երկրորդ գրքույկը՝ Վարդան Վարդապետի «Տեսութիւն Անթառամ ծաղիկ մեծագուսցեին»-ը, քերականության մի ձեռնարկ և տարբեր Կոնդակներ⁶:

Տպարանի գործունեությանը խոչընդոտում էր նյութական միջոցների պակասը: Այդ հարցը կարգավորելու և դրանից հետո վանական վարժարան հիմնելու նպատակով Զաքարիան 1835 թ. Պողոս Պարթիարը Ադրիանապոլսեցու նախագահությամբ խորհրդականների ժողով է գումարում: Ժողովը լսելով տպարանի և վարժարանի անհրաժեշտության վերաբերյալ Զաքարիայի տված բացատրությունները՝ որոշում է գործը հաստատուն հիմքի վրա դնելու նպատակով մի կայուն դրամագլուխ հատկացնել արդեն գոյություն ունեցող տպարանին և նոր բացվելիք վարժարանին, որի բացումը որոշ ժամանակով դանդաղում էր՝ կարող ուսուցիչների բացակայության պատճառով⁷:

Ս. Աթոռի «բնիկ» միաբան Պողոս Ադրիանապոլսեցին մի քանի այլ անձանց և կրակարարների հետ միասին նրանց և իր նվիրաբերած գումարներով կայուն մի դրամագլուխ է հիմնում տպարանի և վարժարանի հաստատման նպատակով՝ «ի պարծանս Սրբոյ Աթոռոյս եւ յօգուտ ազգիս»: Այնուհետև ժողովը արձանագրում է. «Իսկ եթէ ոք ի յապագա պատրիարքաց եւ կառավարչաց եւ ի խորհրդականաց եւ այլ ոք իցէ խափանել ջանասցէ գումամարանն եւ գրագրատունն, այնպիսին ինքն պարտաւոր լիցի առջի անեղ արեւինն Քրիստոսի»: Կնքված և ստորագրված է 1835 թ. 5 հունիսի, Ս. Երուսաղեմ⁸:

1836 թ. այս տպարանից լույս է տեսնում մեկ գիրք՝ 5-րդ դարի պարմիչ Եղիշեի «Մեկնութիւն Տեղունական Հայր Մեր աղօթից եւ ճառք Խաչելութեան, Թաղման եւ Յարութեան եւ Խրատ Միանձանց»-ը: Ս. Աթոռի տպարանից «վալելույ» տնտեսական հրատարակված այս գործի առաջաբանում ասվում է, որ այն տպագրվում է ըստ Սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրերի:

Զաքարիան լույս է ընծայում միջնադարյան հայ մատենագիրների գործերից Ներսես Լամբրոնացու «խորհրդածութիւն Սուրբ Պատարագի» (1842 թ., առաջին տպ.) և Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցու «Հայոց պարմութիւնը» (1843 թ., առաջին տպ.): Երկու գրքերի առաջաբաններում բացատրվում է հրատարակիչ Զաքարիա Պարթիարքի նպատակը՝ նոր սերնդին դաստիարակելու նախնայաց պարմության ոգով⁹ և անխաթար պահելու Հայոց եկեղեցական կարգերը և արարողությունները¹⁰:

⁵ «Սիոն», 1979, էջ 150:

⁶ Հայության արքեպիսկոպոս, Համառոտ պատմության կամ ողբերգի տրուգիայի տրուգիայ, Երուսաղեմ, տպ. Ս. Հակոբյանց, 1888, էջ 135:

⁷ Մավալանյան Տ., Պարմութիւն Երուսաղիմի, Երուսաղեմ, տպ. Ս. Հակոբյանց, 1931, էջ 988:

⁸ Դաւանյան Մ., Տպարան առաքելական Աթոռոյն Սրբոց Թակովրեանց Երուսաղիմի, Երուսաղեմ, 1933, էջ 4-5:

⁹ Պարմագրութիւն Թովհաննոս Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմ, տպ. Ս. Թակովրեանց, 1843, էջ 1:

¹⁰ Ներսես Լամբրոնացի, խորհրդածութիւն Սրբազան Պատարագի, Երուսաղեմ, տպ. Ս. Թակովրեանց, 1842, էջ 1:

Զաքարիային հաջորդում է Կիրակոս Երուսաղեմացին (1847), որը լինելով իր նախորդի գործակիցը և գաղափարակիցը՝ շարունակում է ծավալել տպագրական գործը: Կիրակոս Պապրիարքը Զմյուռնիայից Երուսաղեմ է հրավիրում Մեսրոպյան վարժարանի նախկին աշակերտ, Լուրմաշ քաղաքի ազգային վարժարանի ուսուցիչ Տիգրան Սավալանյանին: Նա իր ժամանակի լավագույն մրավորականներից և ուսուցիչներից մեկն էր: 1848 թ. Սավալանյանը ստանձնում է տպարանի տնօրենությունը և տպագրվելիք գրքերի սրբագրության գործը, իսկ 1850 թ. նա ստանձնում է Պապրիարքարանի բարոյության պարտականությունը¹¹: Ս. Աթոռի տպարանից Սավալանյանի հսկողությամբ և ղեկավարությամբ առաջին անգամ հրատարակվում են Լաբուրնայի, Մաթթեոս Ուռուսայեցու, Միխայիլ Աստուրի Պապմությունները, Եփրեմ Աստուրի «Գիրք Աղօթից»-ը (1848), Պետրոս Աղամալյանց Բերդումյանցի «Մեկնութիւն Թղթոյն Պօղոսի առ Եփեսացիս» (1850), որը տպագրվել է բնագրի հիման վրա և, ըստ հրատարակչի՝ հազվագյուտ է իր տեսակի մեջ¹²:

Որպես ուսուցիչ Սավալանյանը մեծ նշանակություն էր տալիս պատանիների բարոյական դաստիարակությանը: Նրա հսկողությամբ լույս են տեսել բազմաթիվ գրքեր այդ նըպատակով, ինչպես, օրինակ, Պողոս Լուրմաշեցու «Հայկի Վիրաց, յորում ցուցանին յոռութիւնք եօթանց մահացու մեղաց» (1852), «բազմարդիւն եւ մեծիմաստ» հեղինակ Գրիգոր Փեշմալմյանի «Տրամաբանութիւն կամ արուեստ բանական» գործը ձեռագիր օրինակի հիման վրա (1854), որը տպագրվում է՝ «քաջ գիտելով գլխաւորութիւն կրթութեան կամաց եւ իմաստութիւն մրաց»:

Տպարանի աշխատանքի համար հատկապես արգասաբեր են լինում Եսայի Պապրիարքի պաշտոնավարության տարիները (1864-1885): Տարեկան հրատարակվում են 10-16 գիրք: Գրքերի ցանկը բազմաթիվանդակ էր՝ կրոն, պատմություն, բանասիրություն, իմաստասիրություն:

Եսայի Պապրիարքը 1867 թ. Ա. Աթոռ է հրավիրում Գարեգին (Մելքիսեդեկ) Մուրադյանին, որը նպաստում է տպագրական գործի էլ ավելի զարգացմանը¹³:

Երուսաղեմի բազմադարյան Աթոռի համար մի նոր շրջան է սկսվում Եղիշե Պապրիարք Դուրյանի պաշտոնավարությամբ (1921-1930)¹⁴: Դուրյան Պապրիարքը 1925 թ. վերահրատարակում է «Սիոն» ամսագիրը, որը դադարել էր լույս տեսնել 1877 թվականից: Դուրյանի գալստյամբ վանքի պատմության մեջ հոգեմարավոր լայն շարժում է ծավալվում, որից անմասն չի մնում նաև տպարանը. հրատարակվում են հայ միջնադարյան մատենագրության անտիպ գործերից, Հայ Եկեղեցու դավանաբանական և պատմական հիշատակարաններից, դպրոցական դասագրքեր:

Հետագայում տպարանի զբաղեցրած տարածքը և հնարավորություններն ավելի են մեծացել նվիրատվությունների շնորհիվ: Տպարանը հիմնադրման օրից ունեցել է իր բարերարները, որոնց թողած կտակներով տպագրվել և հրատարակվել են բազմաթիվ գրքեր:

¹¹ Սավալանյան Տ., Կենսագրական յուշեր, Գաեիրե, 1900, էջ 43:

¹² Աղամալյան Պետրոս, Մեկնութիւն թղթոյն Պօղոսի առ Եփեսացիս, Երուսաղեմ, տպ. Ա. Յակովլեանց, էջ 2:

¹³ Մուրադյան Ա., Բարձր հոգևորականներից մեկը (ն. Արովյանի անվան ՀՊՄՀ գիր. աշխ. մոդովանդ, հիդ. 2), Երևան, 2002, էջ 220:

¹⁴ «Սիոն», 1930, էջ 101:

Նրանց թվում են այնթափցի Հովիտի սաղմավագ Աշնյանը (Ներսես Լամբրոնացու «Խոր-
հըղածություն Սուրբ Պապարագի», 1842), սեբաստացի մահրեսի Տերպապյանը (Տա-
հըղածություն Սուրբ Պապարագի», 1852), ալեքսանդրացի Աբրահամ փաշա Բարթողը
ընդ իմաստասիրությանց Մելքիորա, 1852), ալեքսանդրացի Աբրահամ փաշա Բարթողը
և Պողոս Բեյ Աշյանը (Աստվածատուր եպիսկոպոսի Երուսաղեմի ժամանակագրական
Պատմությունը, 1890), Պողոս Նուբար Փաշան (Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում»-
ի Գ հատորը, 1927) և ուրիշներ: Այդ գործընթացը շարունակվում է նաև այսօր:

Երուսաղեմի հայոց միաբանությունը 1933 թ. Ոսումնական խորհրդի որոշմամբ շուքով
նշեց Սրբոց Հակոբյանց տպարանի հարյուրամյա հոբելյանը: Այս առթիվ մատուցված գո-
հարանական Ս. Պապարագի ժամանակ Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակ-
յանն օրհնությամբ է հիշում տպարանի հիմնադիրներին, տպարանի զարգացմանը և բար-
գավանմանը նպաստած բարերարներին և նշում, որ տպարանի նպատակն է եղել ազգի
կրթական և ազգային դաստիարակությանն օժանդակելը և Հայ Եկեղեցու պաշտամուն-
քային գրականության հրատարակումը և ուխտավորների հոգևոր միախառնության գործը:
Թորգոմ Պատրիարքը ետպուկ նշում է, որ այս տպարանում հրատարակված գրքերի մեջ
երբեք չի եղել այնպիսին, որը «հեռվից կամ մոտիկից շոշափած լիներ անմաքուր գրակա-
նության իմաստներ»¹⁵:

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տպարանի հրատարակած առաջին գրքերը կրթական
ու ծիսաարարողական էին: Ժամանակի ընթացքում, սակայն, տպագրվող գրականությունը
դառնում է բազմաբովանդակ: Գնալով հաճախ են տպագրվում պատմական, բանասիրա-
կան, իմաստասիրական, մեկնողական գրքեր ինչպես հայ հեղինակների, այնպես էլ թարգ-
մանական¹⁶:

1833 թվականից մինչ այժմ տպագրված գրքերն ըստ բնույթի կարելի է բաժանել հինգ
հիմնական խմբի՝ կրոնա-ծիսական-ժամապաշտական, պատմական, բանասիրական, գի-
տական, իմաստասիրական:

Այսպիսով, 1832 թ. Զաքարիա Կոփեցին՝ տպարանի բուն հիմնադիրը, Պողոս Ադրիա-
նապոլսեցին՝ որպես հովանավոր, և Կիրակոս Երուսաղեմացին՝ իբրև Զաքարիայի գաղա-
փարակից և գործակից, երեքը միասին հիմնադրեցին Երուսաղեմի հայոց Պատրիարքութ-
յան տպարանը, որն անխափան գործում է ավելի քան 170 տարի:

¹⁵ «Սիրո», 1933, նոյ., էջ 428:

¹⁶ Օգտվել ենք Հայաստանի Ազգային գրադարանի ֆոնդերում գտնվող Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց
տպարանի հրատարակած տարբեր տարիների գրացուցակներից:

ՆԱՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՆ ԻՆՏՐԱՅԻ «ՆԵՐԱՇԽԱՐՀՈՒՄ»

20-րդ դարասկզբի արևմտահայ մորազույց բանաստեղծության զեղարվեստական զարգացման որակական առաջնահատկություններից մեկն է աստվածաբանական խորատեսությունը, որ բնութագրական է Միսաք Մեծարեցցի, Սիմեոն Երևանցի, Դանիել Վարդուժանի, Արշակ Զոպանյանի, Վահան Թեքեյանի, Իմտրայի (Տիրան Զրաքյան) ստեղծագործությունների մեծամասնության համար՝ խորհրդապաշտական պատկերների բովանդակային առաջնությունը: Աշխարհիկ բանաստեղծությունում ապրում է քրիստոնեական-աստվածաբանական իմաստավորման միանգամայն առաջնահատուկ շրջափուլ: Հասարակական մտքի պատմության մեջ այդ հանգամանքը բացատրելի է դառնում տվյալ ժամանակաշրջանի ազգային հրատապ խնդիրների շեշտվածությամբ: Քրիստոնեականը դրսևորվում է՝ կապված թե՛ կրոնական գիտելիքների պատկերավոր արտահայտությամբ և թե՛ համապատասխան խորհրդանշանների առկայությամբ հետ:

Հոգևոր շեշտադրումներն Իմտրայի «Ներաշխարհ» (1906 թ.) քնարական արձակ պոեմում արտացոլվում են միջնադարյան հոգևոր երգի տարատեսակների հետ սերտ աղերսով, քրիստոնեական պաշտամունքային քնարերգության հետ միասնականությամբ: Քնարական արձակ պոեմը բովանդակային տարողունակ հոգևոր շերտեր ունի, որոնք բխում են հեղինակի քրիստոնեական դիմորոշումից և մեծ արժեք ունեն հայ գրականության մեջ հոգևոր երգերի զարգացումը խորհրդապաշտական ուղղության մեջ դիտարկելու, հոգևոր երգերի մորազույց կենսագրությունը բացահայտելու առումով: Նորաստեղծ հոգևոր այս երգն ինքնաբերական, ավանդույթի հետ բերում է բանաստեղծ մորաբարի անհատականության կնիքը: Կրոնական պատկերացումների հետ «Ներաշխարհ» ստեղծագործության մեջ մարմնավորվում են հոգևոր երգի ժամրաձևավորիչ հատկանիշներ: Քրիստոնեական քնարերգության զեղարվեստական ավանդույթներից դիմելով՝ բանաստեղծն արթնացնում է առհասարակ ազգային ինքնագիտակցությունն ու շեշտում հայ տեսակի, տրվածքի ուրույնությունը: «Ներաշխարհ»՝ շրջանակներում հոգևոր երգը ներկայացնում է փոքրիկ, ինքնուրույն հատվածներով, որոնք «կցորդներ» չեն, այլ գործում են ազգային նկարագրի, հայ ժողովրդի պատմության, նրա անցյալի հոգևոր և մշակութային կյանքի փիլիսոփայական հագեցվածությամբ:

Իմտրայի պոեմում ուշադրություն են գրավում բովանդակային և թեմատիկ այն մեծությունները, որոնք վերընշվում են միջնադարյան Հարցերի, Մեծացուցեցների, Օրհնությունների, Տէր յերկնիցների ոգու փառաբանական մոտիվները. «Հոյս-Ջուարթի՛ն մէջ, որո՛ւ մեղմ մենքդէն ետքը՝ երբ կարգը կուզար մեր խմբերգի՛ն՝ մեր ճերմակ շապիկներուն, մեր խաչանիշ ուսնոցներուն կարմիրին մէջ աւելի կամ մուգ իւրաքանչիւրնիս ալ ազնուացած, արժանատրուած, մեր հրճուալի ու միշտ անյաջող կերպով «միաբերան» սկզբնաւորութեան աղաղակով գոր դպրապետին օրինակն արձակել կուտար մեզի՛» ու-

պատկերներն ու կառուցվածքը, որոնք կենսունակություն են հաղորդում հայոց միջնադարյան հոգևոր գրականության փորձին, վերակերտում հոգևոր երգը՝ եվրոպական ուղղության գեղարվեստական ձևի և բովանդակության հատկանիշներով: Այս համագամանքն ըստ էության պատճառաբանվում է հավատացյալ հեղինակի ապրած կյանքով, որը բանասերները դիտարկում են միայն 1915 թ. ողբերգական իրադարձությունների համատեքստում³: Վկայում են, թե Մեծ եղեռնը ինտրայի հոգևոր հեղաբեկման սկիզբն է դառնում, երբ բանաստեղծը հանճարեղ Կոմիտասի մամն գիտակցության երկարատև մթազնում է ունենում:

Ժամանակակիցների կողմից բազմիցս վկայվել է, որ ինտրան եղեռնի տարիներին սպիտակ դրոշը ձեռքին, Աստվածաշունչ մատյանը կրծքին սեղմած, ուղևորվում էր թուրքական գյուղեր՝ ջարդերը հմարավորինս մեղմելու և խաղաղություն քարոզելու նպատակով: Ինտրային զինվորագրել էին թուրքական բանակ, քայքայ քանի որ զենք կրելուց հրաժարվել էր՝ բողոքելով մարդ սպանելու դեմ, թարգման-քարտուղարի պաշտոն էին տվել: Եվ բանաստեղծը դառնում է քրիստոնեական հովիվ, քարոզիչ՝: Արդեն ճանաչված ստեղծագործող լինելով՝ հրաժարվում է ամենօրյա ստեղծագործական աշխատանքից, այդուհի է իր ձեռագրերը, այդ թվում՝ բանաստեղծական արժեքավոր նոր երկը: Նրա ավագ գրչընկերը՝ բանաստեղծ Վահան Թեքեյանը, այս մասին գրում է. «...Սիրային արձակ քերթվածներուն շարք մը, գոր օրը օրին գրած էր ու շատ մը էջերը կարդացած ինձի և ուրիշ բարեկամի մը միասին՝ Սկյուտար, 1912-ին հավանորեն, և որուն համար օր մըն ալ ըսավ թե այրեց. իր սիրած մեկ աշակերտուհիի սերեն կներշնչվեին այդ իրապես շատ գեղեցիկ էջերը: Այդելը պատահած էր երկար ընդհատումն մը ետք, կենթադրեմ կրոնա-քարոչական տագնապի մը հետևանքը...»⁴:

Ելնելով «Ներաշխարհ» ստեղծագործության խորհրդապաշտական պատկերի քրիստոնեական «իմաստասիրության ու ոգու»⁵ հատկանիշներից (տե՛ս «Ներաշխարհ» իր հեղինակեն դիտված»), մենք հակված ենք կարծելու, որ նախքան հեղինակի քրիստոնեական քարոզիչ դառնալն էլ նկատելի բարձր էր նրա հոգևոր գիտակցությունը:

Հոգևոր երգերը, որոնցով հարուստ է Հայոց Եկեղեցին, հիմնականում գրել են հոգևորականները, թեև, ինչպես գրում է Աբելյանը, «հոգևոր երգ հորինելը և երգելը ազատ է եղել բոլոր նրանց համար, ովքեր այդպիսի շնորհք են ունեցել»⁶:

«Ներաշխարհի» քրիստոնեական բովանդակություն ունեցող հատվածները մեզ համար պարզում են տարականոց հոգևոր երգեր, քանզի գրված են բավականաչափ ազատ, արձակ, առանց կանոնների: «Ներաշխարհում» հոգևոր երգի Օրհմություն, Մանկունք, Ողորմեա, Համբարձին տեսակները կազմում են սաղմոսների և շարականների ժանրերի միջև ընկած, այսպես կոչված, միջանկյալ ժանրային տեսակ, որում գրսևորվել են Տ. Չրաքյանի կրոնական ըմբռնումները, կատարյալ կյանքի երազանքն ու ձգտումը՝ հավա-

³ Տիրամ Չրաքյան, Երկեր, Երևան, 1981, էջ 5-26 (առաջաբանը՝ Առ. Թովյանի):

⁴ Ինտրան շարաթապաթ քարոզիչ էր:

⁵ Նույնը, էջ 7:

⁶ Նույնը, էջ 323:

⁷ Գ. Հակոբյան, Ծշվ. աշխ., էջ 7:

տացյալ և աստվածավախ մարդու երևակայությամբ և ըմբռնմամբ: Գեղագիտական եղակետ ընդունելով Հիսուսի հռչակավոր *Հերան քարոզը*, բանաստեղծը փառաբանության երգ է հնչեցնում՝ «Երանի՛, երանի՛» սքանչելի բանատողով:

ա) «Երանի՛ անոր որ սաստկապէս թրթռագին է, անդուլ թրթռուն է արփով, ահա ա-
նհկա է տեսանողը, հանճարը, դիցազնը, սուրբը, մարտիրոսը» (էջ 167):

*Երանի՛ անոր որ
սաստկապէս թրթռագին է,
անդուլ թրթռուն է արփով,
ահա անհկա է
տեսանողը,
հանճարը,
դիցազնը,
սուրբը,
մարտիրոսը:*

բ) «Երանի՛ անոց որ կարող են զեղման, անեսականութեան, եւ կրնան թոյլ տալ Ար-
փիմ՝ յորդակոհակ թափանցելու զիրենք, որոց մէջ հիւլէկոյտերն անօսր են, որոց հիւլէկ-
ութիւնները լայնածիր են եւ ամբողջովին թրթռացումը մեն է...» (էջ 167):

Ասենք նաև, որ խորհրդապաշտական գրականության մեջ աստվածաբանական քնն-
նության ուշագրավ ձեռքբերումներ ունի 20-րդ դարասկզբի ռուսական բանաստեղծությո-
ւնը: Նշանավոր բանաստեղծներ Վլադերի Բրյուսովը, Ալեքսանդր Բլոկը, գրաքննադատ
և տեսաբան Վյաչեսլավ Իվանովը ժամանակին ռուսական մամուլում, մասնավորաբար
«Аполлон» հանդեսում քանակիճային քննարկում կազմակերպեցին խորհրդապաշտությո-
ւան և աստվածգիտության մերձավոր հարաբերակցության հանգույցների շուրջ:

Վյաչեսլավ Իվանովն այսպես է ձևակերպում խորհրդապաշտ բանաստեղծի կոչումը՝
«թեուրգ»՝ աստվածագետ: «Սիմվոլիզմի կտակարանը» դասախոսության մեջ գրականա-
գետն այն միտքն է հայտնում, որ խորհրդապաշտական ուղղության որդեգիր բանաստեղ-
ծի կյանքը, ստեղծագործությունը իրենցից ներկայացնում են «աստվածագիտական սպա-
սավորություն և ծառայություն», երբ բանաստեղծը հանդես է գալիս որպես «գերզգայա-
կան աշխարհի տեսանող»⁷:

Անդրեյ Բելին ռուսական խորհրդապաշտությունը հասկանում է աստվածաբանության
հետ միևնույն ուղեծրում: «Արվեստը թաքմված կրոնական ստեղծագործություն է, երբ
խորհրդապաշտությունը բանաստեղծական դարոց չէ, այլ աստվածային նոր կյանք և
մարդկության փրկությունը: Ահա ինչու խորհրդապաշտ բանաստեղծները աստվածաբան-
ներ և մարգարեներ են»⁸:

Ասվածը հանգեցնում է այն եզրակացությանը, թե խորհրդապաշտությունը պետք է
հասկանալ որպես աստվածգիտության ժամանակակից նոր ուղղություն: Համեմայն դեպս,

⁷ Борис Соловьев, Поэма и его подвиг, творческий путь Александра Блока, Москва, 1973, с. 347.

⁸ Борис Соловьев, Озв. աշխ., էջ 350.

այդ եմ պահանջում ռուսական պոեզիայի խորհրդապաշտ հեղինակները, և այդ բանաձևը համապատասխանում է հայ իրականության միակ անխառն խորհրդապաշտ բանաստեղծի՝ Ինտրայի հոգևոր կյանքի բնութագրին՝ ներառման և ստեղծագործական առումներով: Ահա թե ինչու քրիստոնեական ավանդույթի սահմաններում Ինտրայն գիտակցված անցում է կատարում իդեալական, մտքերի լեզվի վերածված հոգևոր աշխարհ: Հեղինակի ապրած հոգևոր երևույթները հոգևոր գիտակցության հատուկ ձև են, որ մատնանշում են բարդ ապրումակցում: Ըստ մրա՝ մարդը, աշխարհն ու տիեզերքը զուգահեռ գործող զոյ են, որոնք համապատասխանում են աստվածային մտահղացմանը: Ինչպես մարդուն ուղղություն է տալիս իր ամշտնափելի հոգին, այնպես էլ «Ներաշխարհը» դեկավարվում է անտեսանելի գոյի՝ Աստծո արարչությամբ. «Վախճալով որ մանկութեանս կիրակիին անուշութեանը, սուրբ, խնկաբոյր, ծաղկաւէտ, լուսողող ու սուրբ անուշութեանը հետ չարաչար կը վարուիմ, գրեթէ վախճալով որ -Հա՛յր Աստուծոյ- դէմ, Աստուծոյ դէ՛մ բամ մ'որած կ'ըլլամ, գրեթէ չեմ համարձակիր խոստովանելու թէ որչա՛փ այժմու կիրակին ձանձրոյթով, զգուանքով լեցուն է. մինչդեռ կիրականուտքին զանգակը միշտ հնօրեայ վաղորդայնի՛ն նրանութիւնը կը պատմէ տակաւին» (էջ 169-170):

Գրողը քրիստոնեական խորհրդապաշտությամբ հայտնաբերում է փիլիսոփայական բացատրություն ունեցող հոգևոր մի շարք իրողություններ. «Մարմինները հիւլէկոյտեր են որք ուրիշ բան չեն այլ եթերի հոծոյթներ, եթերի եղափոխական, ձեռափոխական վիճակներ: Նիւթ ըստածը խտացած, սահմանադրուած Արփն է...» (էջ 167):

Խորհրդապաշտությունը գոյության գերբնական էության ընդունումն է: Նրա ակունքները գտնվում են աշխարհի և Աստծո խորհրդավորության հիմնավորման մեջ: Մարդու աստվածավախությունը չի կարող վերանալ, այն միայն կարող է թաքնվել. «Վասնզի իմացականութեան կատարելութիւնը՝ իմացականութեան ծագումն ու վախճանը՝ դէմյանդիմանութիւնն է. տեսանողութիւնը, Հաւատը հանճարը, Սէր հանճարն է. եւ այս բառերը միեւնոյն միութիւն ու միեւնոյն զօրութեան այլազան ըմբռնումներն են միայն...» (էջ 165):

Մանկուց հոգևոր երգի թեման Ինտրայն փոխառել է շարականներից, վերջիններս էլ ՄԺԲ Սաղմոսի «Օրհնեցէք մանկուց զՏէր, և օրհնեցէք զանուն Տեսառն» սկսվածքից⁹, եկեղեցական գրականության մեջ «մանկուց» բառը գործածվում է ոչ թե այժմյան իմաստով, այլ ժամավորի, քրիստոնյայի և հավատացյալի, ինչպես՝ «մանկուց եկեղեցոյ», «մանկուց հաւատոյ», «մանկուց Սիօնի» և այլն¹⁰:

Արձակին հատուկ ներքին լարվածությամբ, սեփական հոգու հոգևոր ըմբռնման միջոցով բանաստեղծը մոտենում է Աստծո, տիեզերքի գաղտնիքների բացահայտմանը: Մարդու ներաշխարհը չի կարելի հանգեցնել մրա ապրումների և սպասելիքների բացահայտմանը, անհատական իրավիճակների սրմանը, որովհետև վերջիններս հոգու հակադիր ուժերի բախումներից են ծնվում: Այն բնութագրվում է հուսախաբությամբ, հուզումներով, լարվածությամբ, քանի որ Ինտրայն «Ներաշխարհում» առաջնորդվում է բարձրագույն

⁹ Գ. Հակոբյան, Ծշվ. աշխ., էջ 35:

¹⁰ Գ. Հակոբյան, Ծշվ. աշխ., էջ 75:

[illegible]

Իմտրամ պատասխանում է Ռոզկոթ իրականության համար կարևորվող այնպիսի «տանջալի» հարցերի, ինչպիսիք են՝ ինչպիսի՞ն լինել, ինչի՞ հավատալ, ինչի՞ ձգտել, ինչպե՞ս հաղթահարել հավերժական մեղավորությունը: Աստված ողորմած է ու չի ցանկանում մեղավորի կործանումը: Ամսահման է Աստծո սերն ու գթությունը, որով մարդու համար ապաշխարության ճանապարհ է պատրաստել, և Քրիստոսի առաջին կտչն ու քարոզն էլ այդ են պատգամում. «Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. Գ. 7):

ՆՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱՐԲԱՆԱՄՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԸ 1917-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Արցախաճառության հերոսական անցյալի արժանախիշատակ դրվագներից է 1917-1920 թվականներին տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ ցուցաբերված անընկուն կամքն ու խիզախությունը: Այդ տարիներին Արցախի թեմը, գտնվելով երկրամասում տեղի ունեցող գործողությունների կենտրոնում, մեծ ջանքեր էր գործադրում հմարավոր միջոցներով նպաստել երկրամասի հետ առնչվող այս կամ այն կնճոռու հարցերը դրականորեն լուծելուն:

Առանձնապես մեծ գործունեություն էր ծավալել թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը: Նա ծննդով մեղրեցի էր: Ծնվել է 1860 թվականին: Սովորել է Սուրբ Էջմիածնի ճեմարանում, ավարտել է դասարանական բաժինը: Քառասնամյակն աստիճան է ստացել 1885 թվականին: Կոռ ժամից հետո մտել է վանք: 1913 թ. նշանակվել է Տաթևի վանքի փոխանորդ: 1917 թ. ապրիլի 16-ին ձեռնադրվել է եպիսկոպոս և նշանակվել Արցախի թեմի կառավարիչ¹:

Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ Ռուսաստանում տեղի ունեցած փետրվարյան հեղափոխությունից հետո ազգային շարժումը վերելք էր ապրում նաև Արցախ-Ղարաբաղում ու նոր թափ առնում հասարակական-քաղաքական կյանքը: Կամա թե ակամա, երկրամասի հոգևոր կյանքը պետք է առնչվեր այդ ամենին և, անշուշտ, թողներ իր ազդեցությունը: Եվ ահա Վահան եպիսկոպոսը, որը, եղիշե իշխանյանի բնորոշմամբ, «շատ համեստ մարդ էր», «հարգված ժողովրդի կողմից» և «հեզ ու համեստ պաշտոնյա եկեղեցում»², ակտիվորեն մասնակցում էր բազում հարցերի լուծմանը, և չկար որևէ բնագավառ, որտեղ նրա օգնության կարիքը չզգացվեր:

Այդ տարիներին Արցախի թեմի հրատապ խնդիրներից էր ուսումնական գործի կազմակերպումը: Առաջին աշխարհամարտի նախօրյակին, 1909-1910 ուսումնական տարում, Արցախի թեմի 226 գյուղերում կային 68 երկդասյան ձխական դպրոցներ, որոնցից 8-ը Շուշի քաղաքում և ավաններում, իսկ 60-ը՝ գյուղերում: Կային նաև 27 պետական տարրական դպրոցներ: Այդ դպրոցներում սովորողների թիվը հասնում էր 4506-ի, որոնցից 1470-ը աղջիկներ էին: Դպրոցներում աշխատող ուսուցիչների թիվը հասնում էր 108-ի³:

Առաջին աշխարհամարտը մեծ հարված հասցրեց Արցախի ոչ միայն տնտեսությանը, այլև դպրոցին: Նյութական միջոցների բացակայության պատճառով փակվեցին տասնյակ դպրոցներ: Դպրոցական գործին մեծ վնաս հասցրեցին նաև ազգամիջյան ընդհա-

¹ Նայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմության արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 57, ց. 2, գ. 2267, թ. 25:

² Եղիշե իշխանյան, Լեոնայիս Ղարաբաղ, 1917-1920, Երևան, 1999, էջ 140 և 307 (այսուհետև՝ Ե. իշխանյան):

³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, I մաս, գ. 932, թ. 18:

«ժամանակատրապէս այս ցիւթական օժանդակութիւնը ընձեռելու Ղարաբաղին, որի ժողովուրդը հոգով միացած է մեր երկրին և մեր կառավարութեան»⁶:

Արցախի թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոսի 1918 թ. դեկտեմբերի 4-ին Գևորգ Ե Կաթողիկոսին գրած նամակին իմանում ենք, որ բնակչության ծանր պայմանների պատճառով, մանավանդ թուրքերի կատարած ավերիչ արշավանքից հետո, հնարավոր չէր բացել որևէ դպրոց: Միայն Շուշիում ճոր բացվել էր Մարիամ-Ղուկասյան դպրոցը և դեկտեմբերի 1-ին Թեմական դպրոցը, այն էլ «կիսով չափ հավաքված աշակերտներով»: Թեմի առաջնորդը հույս չուներ, թե դրանք կարող էին շարունակել իրենց գոյությունը⁷:

Արցախ-Ղարաբաղում քաղաքական վիճակը սկսել էր ավելի բարդանալ, երբ 1918 թ. գարնանը թուրքական զորքերը ներխուժել էին Հայաստան: Հենց նրանց հրահրմամբ թուրք-ազերիները հարձակումներ էին գործում Արցախի հայկական գյուղերի վրա, սրախողխող անում մարդկանց, թալանում ունեցվածքը, տանում անասունները, փակում Բաքու և Գորիս տանող ճանապարհները, հրաժարվում հայերին սննդամթերքներ վաճառել և այսպես շարունակ:

Այդ ժամանակ շատ լուրջ խնդիր էր անասունների ամառային արոտավայրերի հարցը: Այնն ամառ աղբիւրների անասնապահներն իրենց հոտերով բարձրանում էին Ղարաբաղի լեռները: Նրանք ճանապարհին մեծ վնասներ էին հասցնում արցախցիների արոտավայրերին ու այգիներին: «Քոչը սար բաց թողնելու հարցը վճռելու համար 1918 թ. ապրիլի 26-ին Դաշբուլաղ գյուղում հրավիրվում է Ասկերանի շրջանի գյուղացիների համագումար: Համագումար է ներկայանում նաև Արցախի թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոսը⁸: Նա միաձայն ընտրվում է համագումարի պատվավոր նախագահ: Արբազան Հայրը «խրախուսանքի խօսք ուղղեց ժողովականներին, որ աշալուրջ լինեն դրուած ծանրակշիռ խնդիրը լուծելիս, և ջանան այնպիսի որոշում կայացնել, որ չխախտի խաղաղութիւնը և չվնասի մեր ժողովուրդը»: Նա կոչ արեց՝ պատգամավորներն իրենց գյուղերը վերադառնալով, «ամէն կերպ ջանան ժողովրդի մէջ համերաշխութեանը զարկ տալ ու խուսափեն անիշխանական քայլերից և թիկունք հանդիսանան ազգային իշխանութիւններին, մեր ժողովրդի կեանքի փրկութեան համար»⁹:

1918 թ. սեպտեմբերի 15-ին թուրքերը գրավեցին Բաքուն: Վահան Եպիսկոպոսը դառնությամբ ընդունեց այդ լուրը: Հայ վիճակագիր Բախշի Իշխանյանի հաշվումներով Բաքվում գոհվել են մոտ 30 հազար հայեր, իսկ նյութական կորուստը կազմել է 945.724.017 ռուբլի¹⁰: «Քաղաքը թալանելու և հայերին ջարդելու համար թուրքերին երեք օր ժամանակ էր տրվել¹¹: Այդ ամենից ոգևորված, թուրք դահիճներն իրենց ուժերը հետո շրջեցին դեպի Արցախ-Ղարաբաղ: Վրաստանում գտնվող Հայաստանի Հանրապետության հավատարմատարը գերմանացի գեներալ Ֆրանկենսի հետ գրույցի ժամանակ նրան զգուշացրել է,

⁶ Նույն տեղում, թ. 9:

⁷ Նույն տեղում, գ. 193, թ. 9:

⁸ Ե. Խլիստեյան, էջ 140-141:

⁹ Նույն տեղում, էջ 141:

¹⁰ Բ. Խլիստեյան, Բաքվի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 187:

¹¹ «Աշխարհաբար», 20, 25, 26.09.1920:

Քայլ գյուղացիության փառապանծ հերոսապատումը թուրքական նվաճողների դեմ»¹⁶։ Թուրքերը գրավելով Օուշին, փորձում էին «լուծել Ղարաբաղի հարցը հակառակ սահմանափոխության ծրագրի և մեզ դեռ կատարուած փաստի առաջ», այդ օրերին գրել է «Ժողովուրդը» և շարունակել. «Մի՞նչդեռ Զանգեզուրի և Օուշու գաւառի հայկական մասում կար մօտ 250.000 հայ ազգաբնակչութիւն և միայն 15 հազար մահմեդականութիւն, և այդ շրջանները պատմականօրէն և տնտեսապէս կապուած են Հայաստանի Հանրապետութեան հետ... Հայ ժողովուրդը չի կարող ոչ մի դէպքում զիջել այս գաւառները...»¹⁷։

Թուրքերը ներխուժելով Օուշի, ձերբակալեցին և բանտ նետեցին ավելի քան 50 անվանի մարդկանց, որոնց բանտում ենթարկում էին կտտանքների։ Զահիդ բեյը մույնիսկ փորձում էր ստանալ վահան եպիսկոպոսի աջակցությունը, սակայն ստանում է մերժում։ Եվ չնայած Օուշին անձնատուր եղաւ, սակայն Արցախ-Ղարաբաղի գավառները մնացին անառիկ։ Թուրք-ազերիների չորս հազարանոց մի բանակ Ռկտեմբերի 5-ին ներխուժեց Զրաբերդ, սակայն Մարտակերտի մոտ այն ջախջախւեց։ Արցախցիներից վերծինդիր լինելու համար, թուրքական մեկ ուրիշ զորամաս, ավելի քան 400 Ռոզի, Ռկտեմբերի 18-ին ներխուժեցին վարանդա, որոնք լիովին ջախջախւեցին Մամնա գյուղի մոտ¹⁸։ Այդ հերոսական պայքարում ժողովրդի հետ էր Արցախի թեմը։ Նույնիսկ շատ Ռոզնորականներ զենքը ձեռքին խիզախաբար կոպում էին թշնամու դեմ։

Առաջին աշխարհամարտում թուրքները պարտություն կրեցին և հետագան մաս Արցախից։ Այստեղ լուծարվել էր Ազգային խորհուրդը, երկրամասը գտնվում էր տնտեսական և քաղաքական ծանր վիճակում։ Վահան եպիսկոպոսը Գևորգ Ե Կաթողիկոսին 1918 թ. դեկտեմբերի 4-ին գրած վերոհիշյալ նամակում հաղորդում է, որ տաճկա-ադրբեջանական արշավանքի ժամանակ Արցախում և Նուխու փոխանորդության Գեոգչայի գավառում ավերվել է 35-ի չափ հայ գյուղեր, ավերվել է Ամարասի վանքը և լիովին թալանվել, մույնիսկ տարել են տանիքի թիթեղը, վանքի այգիները և վարելահողերը գավթել են մոտիկ գտնվող թուրքական գյուղերի բնակիչները։ Նաև հաղորդում է, թե երեկ Օուշի է հասել անգլիական զինվորական շտաբը, որն իբրև «մպատակ ունի խաղաղութիւն վերականգնել երկրում և ճանապարհները բանալ, թողնելով երկրի ներքին կառավարութիւնը տակաւին Ադրբեջանի հանրապետութեան»¹⁹։

Արցախ-Ղարաբաղում տիրում էր անիշխանություն։ Հայաստանի կառավարությունը մի կողմ էր քաշվել և ոչ մի միջամտություն չէր ցուցաբերում։ Դրանից, անշուշտ, օգտվում է մուսավաթական Ադրբեջանը։ Բաքվում գտնվող անգլիական բանակի հրամանատար զեմերալ Վ. Թոմսոնը, կապի մեջ լինելով Ադրբեջանի իշխանությունների հետ, խոստանում է Արցախ-Զանգեզուրը ենթարկեցնել Ադրբեջանին։ Եվ ահա Թոմսոնի ներկայացուցիչ մայոր Գիբոնը, դեկտեմբերի սկզբին գալով Արցախ, մախ ներկայանում է վահան

¹⁶ Է. Ղ. Մարգարյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ., Երևան, 1964, էջ 463։

¹⁷ «Ժողովուրդ», 23.10.1918։

¹⁸ Այդ մասին մտերմասան Կոնս Տրանտ Արրախանյան, Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա, 1917-1923, Երևան, 2003, էջ 73-78։

¹⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 9-10։

յակամ ֆակուլտետը և 1907 թվականին ավարտելուց հետո վերադարձել հայրենիք ու զբաղվել ուսուցչությամբ:

1918 թ. դեկտեմբերյան այդ օրերին Արցախի զորահրամանատարների գերկայացուցիչները մի քանի անգամ հանդիպում են քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանի հետ և փորձում նրան համոզել մտնել ժամանակավոր Ազգային խորհրդի կազմի մեջ, մանավանդ, որ դա վաճառելիք էր համարվում քաղաքագլուխը հրաժարվում է մտնել մի ազգային մարմնի մեջ, որի անդամ կարող էր լինել Հայրապետ Մուսայելյանը:

Քաղաքական ուժերի և զորահրամանատարների գերկայացուցիչները կրկին հավաքվելով, որոշում են դիմել վաճառելիքի, որ մի քանի վրա վերցնի ժամանակավոր Ազգային խորհրդի կազմելու պատասխանատվությունը: Սրբազանը գիտեի քաղաքագլուխի վճռի մասին: Նա խոր ցավ էր ապրում, երբ պատմական մի այդպիսի ժամանակաշրջանում հանդես էին եկել ծաղկեցողության մարդիկ, որոնք չէին կարողանում լինել համբերատար և իրար հանդուրժող: Չնայած դրան, Սրբազանը սիրով համաձայնվում է իր ձեռքը վերցնել ժամանակավոր Ազգային խորհրդի ստեղծելու խնդիրը: Եվ ահա 1918 թ. դեկտեմբերի 15-ին, երեկոյան, վաճառելիքի հրավերով Արցախի զորահրամանատարների գերկայացուցիչները, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը, քաղաքական բոլոր ուժերի գերկայացուցիչները և միջկուսակցական խորհրդատուների գերկայացուցիչ Հայրապետ Մուսայելյանը հավաքվում են թեմի առաջնորդարանում: Վաճառելիքի քաղաքական կարճ հայտնում է հավաքի նպատակը և առաջարկում ընտրել ժամանակավոր Ազգային խորհուրդ, որը պետք է նախապատրաստեր և կարճ ժամանակամիջոցում հրավիրեր Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը, որտեղ կընտրվեր նոր Ազգային խորհուրդ, որը կներկայացներ Արցախը:

Սրբազանի խոսքի ավարտից հետո անմիջապես ելույթ է ունենում քաղաքագլուխը և հայտարարում, թե ինքը չի խուսափի իր վրա դրվող պարտականությունից, սակայն չի կարող աշխատել մի մարմնում, որի անդամ կլինի նաև Հայրապետ Մուսայելյանը: Վաճառելիքի քաղաքական կարճը կրկին ելույթ ունենալով, շեշտում է, որ ինքը, որպես թեմի հոգևոր առաջնորդ, «իր սեպուռ պարտականությունն է՝ հակառակությունները վերացնել հասարակության մեջ» և հենց այդ նպատակով էլ թուրքին հրավիրել է իր մոտ և իր անկեղծ ցանկությունն է, որ «մոռացության տակ մեր միջև եղած թիրիմացությունները, ձեռք-ձեռքի տանք և համբերության միջոցով միմյանց չորրորդ համագումարը, որից յետոյ իրաքանչիւրը ազատ կը լինենք»²³:

Երկարատև վիճարկությունից հետո Հայրապետ Մուսայելյանը չի մտնում ստեղծված ժամանակավոր Ազգային խորհրդի մեջ, որպեսզի քաղաքագլուխն անպայման մնա: Իսկ դա անհրաժեշտ էր, մանավանդ, որ ժամանակավոր Ազգային խորհրդին հարկավոր էր քաղաքագլուխի ֆինանսական աջակցությունը: Սրբազանի առաջարկությամբ խորհրդի հաջորդ նիստը տեղի է ունենում դեկտեմբերի 16-ին, քաղաքագլուխ բնակարանում, որտեղ

²³ Նույն տեղում, Լ 9 307-308:

լուծվում են հետևյալ հարցերը. ա) Գիվանի ընտրություն, բ) Ժամանակավոր Ազգային խորհրդի գործի անցնելու մասին ծանուցում տալ ժողովրդին և գ) Հարաբերության մեջ մտնել Բաքվի, Գանձակի, Գորիսի և, վերջինս միջոցով, Երևանի հետ: Ժամանակավոր Ազգային խորհրդի դիվանի նախագահ է ընտրվում Եղիշե Իշխանյանը:

Արցախ-Ղարաբաղում ստեղծված այդ մարմինն անվանվում էր Ղարաբաղի հայոց ժամանակավոր Ազգային խորհուրդ: Այն գոյություն ունեցավ մինչև 1919 թ. փետրվարի 10-ը, մինչև չորրորդ համագումարի բացման օրը: Ազգային խորհուրդը համագործակցում էր Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոս Տեր-Գրիգորյանի հետ: Վերջինս պահանջով թեմի ողջ հոգևորականությունը նպաստում էր Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի նախապատրաստական աշխատանքներին: Թե՛ արցախահայության և թե՛ նրա թեմի համար առանձնապես ծանր էր, երբ 1918 թ. դեկտեմբերի 8-ին Օուշի եկած զենքավա թոմսոնի մեկ ուրիշ ներկայացուցիչ՝ կապիտան Սեդրայտը, դեկտեմբերի 23-ին ժամանակավոր Ազգային խորհրդին է ներկայացնում զենքավա թոմսոնից ստացված հրամանը, ըստ որի արցախցիները ժամանակավորապես պետք է ճանաչեն Ադրբեջանի գերությունը, մինչև Ղարաբաղի հարցի վերջնական լուծումը: Ժամանակավոր Ազգային խորհուրդը մերժում է թոմսոնի պահանջը՝ պատասխանելով, որ այդ հարցով պիտի սպասել Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի պատասխանին: Ժամանակավոր Ազգային խորհրդի այդ դիրքորոշումը պաշտպանում է Վահան Եպիսկոպոսը: Անգլիական հրամանատարությունը լիովին պաշտպանում էր մուսավաթական Ադրբեջանի նկրտումները Արցախ-Ղարաբաղի նկատմամբ:

Ադրբեջանի կառավարության որոշմամբ 1919 թ. հունվարի 15-ին ստեղծվեց Ղարաբաղ-Ջանգեզուրի մահաճապետություն և զենքավա Վ. Թոմսոնի համաձայնությամբ ժամանակավոր մահաճապետ մշանակվեց ազգությամբ քուրդ, մասնագիտությամբ բժիշկ, հայոց դահիճ խոսրովբեկ Սուլթանովը: Ղարաբաղում ծվարած անգլիական միսիանատամներով պաշտպանում էր Սուլթանովին, տոմ տալիս նրա ավագակային գործողություններին, միևնույն ժամանակ շողոքորթում մահ Ղարաբաղի Ազգային խորհրդին²⁴: Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը Սուլթանովին Ղարաբաղի մահաճապետ մշանակելով, Հայաստանի կառավարությանը կանգնեցնում է կատարված փաստի առաջ՝ հուսալով տեղ դառնալ Ղարաբաղին:

1919 թ. փետրվարի սկզբին Ադրբեջանի ուսմական նախարար Մեհմեդարովի ուղեկցությամբ Օուշի է ժամանում Ղարաբաղ-Ջանգեզուրի ժամանակավոր մահաճապետ խոսրովբեկ Սուլթանովը: Նա Ղարաբաղ էր եկել՝ իր հետ բերելով մեծ գումար: Նա փորձում էր կաշառել քուրդ ծառայողներին, նրանց տալ աշխատավարձ, միայն այն պայմանով, որ ստորագրություն տան, թե իրենք 1918 թվականի հունիսի 1-ից ծառայում են Ադրբեջանի կառավարությանը և այսուհետ ևս «կշարունակեն ծառայել ամբողջ եռանդով ու պատվով»²⁵: Այդ պահանջագիրը բլանկի վրա ուղարկվել էր քուրդ ուսումնական հաստատություններին և հիմնարկ-ձեռնարկություններին: Ղարաբաղի թեմը, Օուշիի հայ

²⁴ ՏՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 32, նաև՝ «Մշակ», 19.03.1919:

²⁵ ՏՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 32, նաև՝ «Մշակ», 19.03.1919:

մտավորականությունը և երկրամասի ամբողջ հայությունը զայրությամբ են ընդունում Սովետացի աշխատանքը և մերժում:

1919 թ. փետրվարի 10-20-ը Օուշիի թեմական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը: Համագումարը միաձայն որոշում է չճանաչել Ադրբեջանի իշխանությունը, քանի որ Ղարաբաղը, լինելով պատմական Սյունիքի մի մասը, հանդիսանում է Հայաստանի տարածքներից մեկը, որը պետք է կցվի Հայաստանին, որպես նրա անբաժան մասը²⁶: Համագումարն ընտրում է Ղարաբաղի հայոց Ազգային խորհուրդ, որն իր վրա է վերցնում երկրամասը կառավարելու բոլոր ֆունկցիաները: Այն և՛ Ազգային խորհուրդ էր, և՛ օրենսդիր ու գործադիր մարմին: Ղարաբաղի թեմն իր աջակցությունն է հայտնում չորրորդ համագումարին: Սակայն գեներալ Թոմսոնը ճախարհելու միտում չուներ, հեռագրով պահանջում է ճանաչել Ադրբեջանի իշխանությունը Ղարաբաղում: Ստանալով համագումարի մերժումը, Թոմսոնը պահանջում է Արցախից Բաքու ուղարկել պատվիրակություն²⁷՝ իր հետ հանդիպելու համար:

Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի կողմից ընտրված Ազգային խորհուրդը գտնում է, որ Բաքու պետք է մեկնեն Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոսը և Ազգային խորհրդի անդամ Հրանտ Բահաթյանը: Նրանք անմիջապես մեկնում են Բաքու, որոնց հետ հանդիպումից դժգոհ էր անգլիական հրամանատարությունը: Վերջինս մարտի 19-ին պահանջում է Բաքու ուղարկել նոր պատվիրակություն: Այս անգամ մեկնում են Ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանը, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը և էլի երկու հոգի՝ Գրիգոր Մինասեբկյանը և Անուշավան Տեր-Միքայելյանը: Երկու պատվիրակություններին ընդունում է արդեն Թոմսոնին փոխարինած գնդապետ Շատելվորտը, մարտի 26-ին: Վերջինս նրանցից պահանջում է Ղարաբաղը ենթարկեցնել Ադրբեջանին: Սակայն Արցախի պատվիրակները, հենվելով Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի որոշման վրա, մերժում են անգլիական հրամանատարության պահանջը և դա համարում են անհնարին²⁷: Շատելվորտը գերազանցելով Թոմսոնին, բոլոր ջանքերը գործադրում էր Արցախ-Ղարաբաղը ենթարկեցնել Ադրբեջանին և ստիպել կատարել խոսքովբեկ Սովետացի բոլոր պահանջները:

1919 թ. ապրիլի 4-ին Բաքվից վերադառնում են Վահան Եպիսկոպոսը, Հրանտ Բահաթյանը, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը և պատվիրակությունների մյուս անդամները: Շատելվորտը Արցախի Ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանին արգելել էր վերադառնալ Ղարաբաղ: Ազգային խորհրդի միստն ապրիլի 5-ին լսելով Վահան Եպիսկոպոսի և Հրանտ Բահաթյանի գեկուցումները Շատելվորտի և Բաքվի հայոց Ազգային խորհրդի ու հասարակական կազմակերպությունների հետ ունեցած հանդիպումների վերաբերյալ, հավանություն է տալիս պատվիրակության գործունեությանը: Թե՛ Վահան Եպիսկոպոսը և թե՛ պատվիրակությունների մյուս անդամները Շատելվորտի հետ ունեցած հանդիպման ժամանակ շեշտել էին, որ Զանգեզուր-Ղարաբաղ

²⁶ Ե. Խյսակյան, իջ 342:

²⁷ ՀՀ ՊԿԿ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 107-108:

անքաժամ են և հանդիսանում է Հայաստանի մեկ մահաճը: Սակայն Շատելվորտը չի ընդունում Ղարաբաղի պատվիրակությունների մերկայացրած պատճառաբանությունները և պահանջում էր անպայման կատարել Թոմսոնի արած կարգադրությունը և ճանաչել Ադրբեջանի իշխանությունը:

Արցախի պատվիրակությունն անգլիական հրամանատարությանը հայտարարել էր, որ Ղարաբաղի հայոց Ազգային խորհուրդը չորրորդ համագումարի կողմից ընտրված գործադիր մարմին է և չի կարող ինքնուրույն որոշում կայացնել, և որ չորրորդ համագումարի ընդունած որոշումը փոխելու համար ունենալիք է իրավիքել մոր համագումար: Ղա-մարի ընդունած որոշումը փոխելու համար ունենալիք է իրավիքել մոր համագումար: Ղա-րաբաղի թեմի առաջնորդի այդ պատասխանը լսելով, Շատելվորտն անմիջապես առա-ջարկել է հրավիրել մոր համագումար, որին մերկա կլինի ինքը, որպեսզի անմիջապես խո-սի ժողովրդի մերկայացուցիչների հետ:

Ղարաբաղի հայության հիմնգերորդ համագումարը տեղի ունեցավ 1919 թ. ապրիլի 23-29-ը, Շուշիի թեմական դպրոցի դահլիճում: Արդեն գեներալ Շատելվորտը Բաքվից եկել էր համագումարում ելույթ ունենալու համար: Նրա խնդրանքով համագումարի աշխա-տանքներին մասնակցում էր մահ Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոսը: Վերջինս առաջին նիստում միաձայն ընտրվում է համագումարի պատվավոր նախագահ: Գեներալ Շատելվորտն իր ելույթում հրապարակում է անգլիական հրամանատարության որոշումը, ըստ որի Ղարաբաղը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը և ենթարկվի նրան, մինչև Ադրբեջանի և Հայաստանի սահմանները կճշտվեն հետագայում:

Հիշենք, որ Հրանտ Բահաթրյանը Վահան Եպիսկոպոսի հետ Բաքու էին գնացել գեներալ Թոմսոնի հետ հանդիպելու համար: Հ. Բահաթրյանը Բաքվից մի քանի օրով գնացել էր Թիֆլիս, որտեղ հանդիպել էր Հայաստանի վարչապետ Հովհաննես Քաջազմունու և ադրաբեյցանց գործերի նախարար Ալեքսանդր Նատիսյանի հետ: Ջրույցի ժամանակ Քա-ջազմունին բացատրել է, որ Հայաստանը գտնվում է քաղաքական և տնտեսական ծանր պայմաններում, հայ ժողովուրդը բոլորովին ուժասպառ է եղել, քանի որ կարող ունենալ անհրաժեշտ քաղ կատարել և պաշտպանել արցախցիներին: Նա արցախցիներին խոր-հուրդ է տվել բանակցության մեջ մտնել Ադրբեջանի իշխանության մերկայացուցիչ Աու-թուրդի հետ, համաձայնության եզր գտնել, «քանի որ Ղարաբաղի և մեր այլ հողերի՝ Հա-յաստանին կցելու հարցը պիտի որոշվի հրապարակաբար և վեհաժողովին»²⁸, իսկ Ալեքսանդր Նատիսյանը տվել էր միանգամայն հակառակ խորհուրդ: Նա արցախցի-ների բռնած դիրքը համարել է ուղիղ և ճիշտ, պատշաճ ու համապատասխան իր պատմա-կան անցյալին: Նա խորհուրդ է տվել Ղարաբաղը պահել անասան, շարունակել ընդդի-մությունը, չենթարկվել անգլիական հրամանատարության պահանջին և Ադրբեջանի իշ-խանությանը:

Վահան Եպիսկոպոսը, տեղյակ լինելով Հ. Քաջազմունու և Հ. Բահաթրյանի վերոհիշ-յալ գրույցին, Ղարաբաղի հայության հիմնգերորդ համագումարում ունեցած իր ելույթում ասում է. «Իրեղիներ, ինչպես գիտեք, Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու և նրան են-թարկելու խնդիրը շատ սուր կերպարանք է ստացել: Ջորավարի առաջարկից պիտի

²⁸ Ե. Իշխանյան, Լ, 382:

հասկանալ, որ Ադրբեջանի իշխանությունը ժամանակաւոր կերպով պիտի ճանաչել, իսկ Ղարաբաղի հարցը պիտի լուծի հետագային, միջազգային վեհաժողովում: Այժմ միայն ժամանակաւոր կերպով Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու մասին է խօսքը»²⁹:

Թեմի առաջնորդն իր ելույթում գիտակցաբար շեշտը դնում էր «ժամանակավոր ճանաչելու» առաջարկության վրա՝ համոզված լինելով, որ համագումարի պատգամավորներն իրեն ճիշտ կհասկանան: Սակայն Ջրաբերդից եկած պատգամավորներից մեկը, խոսքը ուղղելով եպիսկոպոսին, ասում է. «Սրբազան Հայր, գեներալը որ ասում է, թե այսօր մենք ժամանակաւոր ընդունեցնք Ադրբեջանի իշխանությունը, վաղը կը դառնայ մշտական, դրա համար էլ մենք ժամանակաւոր էլ չենք կարող ընդունել Ադրբեջանի իշխանությունը»³⁰: Մյուս բոլոր ելույթ ունեցողները ևս մերժում են Շատելվորտի պահանջը և պաշտպանում չորրորդ համագումարի ընդունած որոշումը: Ղարաբաղի հայության հիմնգերտղ համագումարը, պատասխանելով գեներալ Շատելվորտի պահանջին, նշում է, որ քանի «Ադրբեջանի կառավարությունը հայերին ճնշելու համար դարձել է պետական սիստեմ», ուստի «Համագումարն անընդունելի է համարում Ադրբեջանի հետ առնչություն ունեցող որևէ վարչական ծրագիր...»³¹:

Կատաղած Շատելվորտն ու Սուլթանովը համագումարից հեռանում են՝ անշուշտ վրեժ լուծելու վճռականությամբ: Եվ դա չուշացավ: Նույն թվականի մայիսի վերջին և հունիսի սկզբին Սուլթանովի դրդմամբ հայ-ադրբեջանական ընդհարումներ են սկսվում Օուշիում և հարևան բնակավայրերում: Հայոց Ազգային խորհրդի որոշմամբ թեմի առաջնորդ՝ Վահան եպիսկոպոսը, Հրանտ Բահաթյանը և Նդիշե իշխանյանը հունիսի 4-ի առավոտյան ներկայանում են Օուշիում գտնվող անգլիական հրամանատարության ներկայացուցիչ մայոր Մոնկ Մեսսոնին, նրան բողոքում Սուլթանովի սադրիչ գործողությունների դեմ և պահանջում դադարեցնել հայ-ադրբեջանական ընդհարումները: Մոնկ Մեսսոնը փոխանակ որևէ վճռական քայլ կատարելու, միայն արդարանում է, որ այդ ամենի մասին հեռագրել է Բաքու, Շատելվորտին: Հետո հայտնում է, որ Սուլթանովը պահանջում է քաղաքից հեռանալ հայոց Ազգային խորհրդի անդամները: Սրբազանը քաղաքում գտնվող Ազգային խորհրդի անդամներին խնդրում է կատարել Սուլթանովի պահանջը, քանի որ դա կարող է դյուրացնել վիճակը³²:

Շատելվորտը պաշտպանում է Սուլթանովի պահանջը: Քաղաքում գտնվող Ազգային խորհրդի անդամներ Նդիշե իշխանյանը, Հադրություն Թումյանը և Ասատուր Ավետիսյանը անգլիական միսիայի ավտոմեքենայով հունիսի 5-ին տեղափոխվում են Եվլախ, այնտեղից էլ՝ Թիֆլիս: Այդքանը հերիք չհամարելով, անգլիական հրամանատարությունը նույնիսկ հայտարարում է, թե արցախահայերը պետք է Ղարաբաղը թողնեն Ադրբեջանին և տեղափոխվեն Ալաշկերտ, Վան, Բասեն³³: 1919 թ. հունիսյան այդ օրերին սարսափելի սպանդ կազմակերպվեց Ղայթալիշեն, Կրկժան, Փափուր, Զամիլու, Խանաձախ, Դաշու-

²⁹ Նույն տեղում, էջ 395:

³⁰ Նույն տեղում:

³¹ ՀՀ ԴԿԴԿ, ֆ. 199, գ. 1, գ. 38, թ. 27:

³² Արամայիս, Ղարաբաղի տուգնայր..., Երևան, 1993, էջ 59:

³³ «Հայրենիք», 1923, Վ. 9, էջ 100:

շեկհների վարած ոչ ճիշտ քաղաքականության հետևանքով: Այդ ժամանակ ավելի էր ծանրացել երկրամասի քաղաքական վիճակը: Ադրբեջանը պահանջում էր, որպեսզի Ղարաբաղը վերջնականապես ենթարկվի իրեն: Դրան պետք է պատասխան տար Ղարաբաղի հայության ութերորդ համագումարը, որը պետք է տեղի ունենար 1920 թ. փետրվարի վերջին: Այն քննության առնելով Արցախ-Ղարաբաղի ներքաղաքական դրությունը, գտնում է, որ «7-րդ համագումարից հետո Ադրբեջանի կառավարությունը պարբերաբար խախտել է ժամանակավոր համաձայնության ամենագլխավոր կետերը» և շարունակում է հայաստանության իր քաղաքականությունը: Ելնելով դրանից, համագումարը «վճռականապես բողոքում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ՝ խանգենդում, Ասկերանում և Շուշի-Եվլախ ճանապարհի վրա տեղի ունեցած կոտորածների առթիվ և քաղաքակիրթ աշխարհին կոչ է անում վերջ տալ Ադրբեջանի այսօրինակ քաղաքականությանը»:

Համագումարը գգուշացնում է, որ «մեծ դեպքերի կրկնությունը Լեռնային Ղարաբաղի հայությանը կստիպի իր կյանքի ու պատվի պաշտպանության համար դիմել համապատասխան միջոցների...»³⁷: Համագումարը հրաժարվում է օգոստոսյան համաձայնությունից, որովհետև այն կնքվելուց հետո Ադրբեջանի կառավարությունը չէր կարողացել ոչ մի կարգ ու կանոն պահպանել Ղարաբաղում: Համագումարը մերժեց Ղարաբաղն Ադրբեջանին ենթարկելու մուսավաթականների պահանջը:

Մուսավաթական Ադրբեջանը տեմդագին մախապատրաստվում էր Արցախ-Ղարաբաղ ներխուժելու համար: Եվ դա չուշացավ: 1920 թվականի մարտի 22-ի լույս 23-ի գիշերը, մուսուլմանական ամառոթին (նովրուզ), ընդհանուր հարձակում սկսեցին Ղարաբաղի դեմ: Շուշի ներխուժեցին խոսրովբեկ Սուլթանովի եղբայր Սուլթանբեկ Սուլթանովի ջորական հրոսակները: Ումանց վկայությամբ այդ օրերին Ղարաբաղ էին ներխուժել ոչ պակաս 80 հազար թուրք-ազերի դահիճներ³⁸: Ամենաողբերգական իրադարձությունները տեղի ունեցան Շուշի քաղաքում: Այնտեղ հայոց քաղաքամասը լիովին ոչնչանալուց բացի, Բախչի իշխանյանի հաշվումներով զոհվեցին 8988 հայ³⁹:

Արցախի թեմը, մանավանդ Վահան եպիսկոպոսը, այդ օրերին մեծ աշխատանք էր տանում օգոստոսյան համաձայնագիրը պահպանելու, հայ-ադրբեջանական կոտորածները կանխելու և հայերի կյանքն ապահովելու համար: Հայերի կողմից Վահան եպիսկոպոսին առաջարկվեց հեռանալ քաղաքից, սակայն նա հրաժարվեց՝ պնդելով, որ ինքը կմնա իր ժողովրդի հետ: Վանդալները ներխուժելով Առաջնորդարան, գլխատեցին Ղարաբաղի թեմի առաջնորդին, գլուխը ցից հանեցին և շրջեցրին քաղաքի թուրքական թաղամասում: Նույն թվականի մայիսի 15-ին այդ վանդալիզմի մասին Ամենայն Հայոց կաթողիկոսին կարապետ քահանա Վարդապետյանցի ուղարկած մամակից իմանում ենք, որ քաղաքի 12-13 հազար հայերից «6 հազար հոգին փախան գիւղերը, 4 հազար հոգին, մեծ մասը տղամարդ, սրի քաշեցան, զնդակահարեցան ու հրկիզեցան և մօտ 3 հազար հոգի մնացին քաղաքում, զերի՝ թուրքերի ձեռքին, որոնց մի մասը՝ 400 հոգի երիտասարդ ոյժեր տնջրում և բանտում սրածեցան, 700 հոգի կին և երեխայ, ծեր ու պառաւ, արձակեցան և

³⁷ Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 41, ք. 12:

³⁸ Նույն տեղում, ֆ. 314, ց. 1, գ. 34, ք. 224:

³⁹ «Հատաթ», 1.04.1920:

հասին գիտելը. իսկ մնացածը, սիրում կամաց ու աղքկերանց հետ, գտնում են թուրքերի տներում. մահանգապետ Սուլթանովի մօտ և բանտում»:

Թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսի մասին հաղորդում է, որ մա սպանեց Առաջնորդարանում, չցանկանալով դուրս գալ... Կոնստանդնուպոլիսի կողմից սպանված են ամրամ խորեն ա. քահ. իսկանդարեանը, կարգապահ Ամանիա Տեր-Ռանիլեանը և դիմանապահ Յովհաննէս Ղարաբեկեանը: Քահանաներից սպանված է Յարութիւմ ա. քահ. Վարդապետեանը, իսկ Գարեգին ա. քահ. Յովհաննիսեան ազատել է բանտից կիսամեո դրութեան մէջ և միանգամայն մերկ. սպանված են թեմ. դպրոցի տեսուչ Աղ. Մատուրեանը, ուսուցիչ Գաբրիել Ղուկիքեյսայեանը, հոգաբարձու Անդրեաս բէկ Տեր-Յարութիւնեանը. Ղուկասեան ուսումնարանի տեսուչ բժ. Նիկողայոս Եարամիշեանը և այլն:⁴⁰

Ահա թե ինչպիսի ճակատագիր ունեցավ Արցախի թեմը՝ ենթարկվելով թուրք-ազերիների հոշոտմանը:

⁴⁰ ՀՀ ԴԿԴԱ, ֆ. 57, ց. 5, գ. 216, ք. 16-17:

ԴԻՄԼԱ ՏԱՅԿԻ ՏԱՄԱՐՁՈՒՄՅԱԼ

Բանասիրական գիտությունների թնկածու

ՈՒ. ՖՈԼԶՆԵՐԻ «ԱՔԻՍՈՂՈՄ, ԱՔԻՍՈՂՈՄ» ՎԵՊԻ ԲԱՌԱՐՎԵՍՏԻ ԻՆՔՆԱՏԻՊՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՏԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ոչ միայն XX դարի ամերիկյան, այլև համաշխարհային գրականության մեջ իր հաստատուն տեղն ապահոված գրողի՝ Ուիլյամ Ֆոլքների ստեղծագործությունների հանդեպ հայ իրականության մեջ նկատված հետաքրքրությունն ընդգծվում է վերջին տարիներին նրա երկերի մի շարք հայերեն թարգմանությունների նրան գալով, որոնց շարքում է նաև «Աքիսողոմ, Աքիսողոմ» վեպը:

Մեր աշխատանքն առնչվում է «Աքիսողոմ, Աքիսողոմ» հայերեն թարգմանության մեջ հեղինակի բառարվեստի նրբությունների փոխանցման և վերարտադրության խնդիրների, քանի որ վեպն աչքի է ընկնում հատկապես իր յուրատեսակ լեզվական արվեստով՝ տարաբնույթ դժվարություններ հարուցելով դրանց հայերեն թարգմանության համար:

Վեպը հայերեն է թարգմանել և առանձին գրքով հրատարակել Սամվել Մկրտչյանը 2003 թվականին¹:

Ու. Ֆոլքների ստեղծագործությունները հայտնի են ամերիկյան Հարավի իրականությունը պատկերելու հզոր լիցքերով: «Աքիսողոմ, Աքիսողոմ» վեպն² այդ կենսապատկերի իրական և ոգեղեն արտացոլքն է: Ֆոլքներն այն աներևոյթի վարպետ տեսանկյուն էր, որը չէր կարող չօգտագործել անգլերենի հարուստ բառապաշարը և լեզվական բարձր արվեստով չներկայացնել բարդ ու հակասական իրականությունը: Մարդկային հոգու թռիչքի և անկման ամենախորքերը թափանցելով՝ Ֆոլքներն ի ցույց հանեց մարդու թե՛ առաքինությունները, թե՛ մոլորությունները, որոնց ճիրաններում տառապելով՝ մարդն ապրում է իրեն տրված երկար ու կարճ միջոցը և հեռանում, հեռանալով անգամ ներկա մնում ապրողների մեջ, նրանց խոսք ու գրույցի, վարք ու քարքի և շարունակական ողբերգության ու զվարճանքի մեջ: Իրականության վեհությունն ու մանությունը ցուցանելու համար գրողն ընտրել է այնպիսի բառապաշար, որի կիրառությունը լավագույնս բացահայտում է իրական աշխարհի իրական էությունը:

Ֆոլքների գիտության մեջ նկատված փաստ է Ֆոլքների բառարվեստի բազմերանգությունը, որտեղ պարզ և հասարակ խոսակցական շերտի բառամթերքը բազում թելերով հանգուցվում է վերամբարձ, մտքի (ուստի և լեզվի) վերացական ոլորտներ թափանցող

¹ Տե՛ս Զուբենտ Ու., Աքիսողոմ, Աքիսողոմ, թարգմ.՝ Սամվել Մկրտչյան, Ե., Վան Արյան, 2003, 395 էջ (այսուհետև՝ այս գրքից թարգմանական մեջբերումների էջերը կից բնագրին):

² Տե՛ս Faulkner W., Absalom, Absalom!, A novel, Russia, Progress Publishers, Moscow, 1982, 416p. (Այսուհետև՝ բնագրային բոլոր մեջբերումների էջերը կից բնագրին, ընդգծումներն իմն են - Ռ.Տ.):

բառաշերտին:

Ֆոլքների բառարվեստի առանձնահատկություններից են նորաբանությունների (neologism), հնաբանությունների (այսպես կոչված «հնացած» բառերի կամ արտահայտությունների (archaism)) նորոպի կիրառումը, ուղղակիորեն «նոր» բառերի ստեղծումը, բազմաթիվ իրակությունների գործածությունը, որոնց թարգմանությունը ցանկացած թարգմանչից պահանջում է թե՛ ստեղծագործական հզոր աշխատանք, գիտելիքի մեծ պաշար և լայն ստահորիզոն, թե՛ տքմաջան աշխատասիրություն, երբեմն՝ սիգիփոսյան համառություն:

«Աքիսողո՛ւմ, Աքիսողո՛ւմ» վեպի թարգմանության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այստեղ կան թե՛ բազմաթիվ ձեռքբերումներ (հատկապես կապված բառային աշխատանքի հետ, որով և կանգուն է մնում ամենահզոր թափով խշշացող ֆոլքներյան անտառը), թե՛ «տապալված» ծառեր (ն. «Դաշտենցի բնորոշումն է»), որոնք միայն երբեմն դժվարացելի են դարձնում գրող – ընթերցող ճանապարհը (քննությունը մեկ այլ հոդվածում):

Եթե ճիշտ է, որ գեղարվեստական թարգմանությունը բազում գիտական օրինաչափությունների հավաստի իմացություն է կիրառում է, ապա երիցս ճիշտ է նաև, որ այն մեղահայեցական (melancholic) ձեռքբերումների հանրագումար է, որի արժեքորումը թարգմանչի աշխատանքի զնախատման կարևորագույն չափորոշիչն է: Այդ իմաստով «Աքիսողո՛ւմ, Աքիսողո՛ւմ» վեպի թարգմանությունն աչքի է զարնում ոչ միայն բառի (բառակապակցության) տարբերակային ճշգրիտ համարժեքների ընտրությամբ և տեղին կիրառությամբ (օրինակները՝ ստորև), այլև համատեքստային համարժեք փոխարինիչների բազում օրինակներով, որոնք և թարգմանչի ստեղծագործական աշխատանքի արդյունքն են:

Ու. Ֆոլքների բառապաշարի հարստությունն ու բազմաշերտությունն իրավամբ կարող է համեմատվել Շեքսպիրի ճոխ և քարծրարվեստ բառապաշարի հետ, որի հայ թարգմանիչը՝ Հ. Մասեհյանը, ըստ արժանվույն զնախատել և հայերեն է հնչեցրել այն: Տեղին է հիշել Մասեհյանի թարգմանությունների լեզվական արվեստի մասին վարագ Առաքելյանի հոդվածը, ուր թարգմանության անաչառ զնախատության օրինակելի փաստը վարակիչ է, քանզի ոչ միայն հիացմունքի և երկրպագության հասնող զնախատանքի խոսքեր են հնչում մեծ թարգմանչի հասցեին, այլև գիտակ մարդու պրպտում աշխատանքի արդյունքում վեր են հանվում մի շարք անորոշություններ, լեզվաոճական թերություններ, ճապաղություններ, խրթին կրկնաբանություններ, մի խոսքով՝ «տապալված ծառեր», որոնց ուսումնասիրությունը շատ ուսանելի է յուրաքանչյուր թարգմանչի համար: Ուսանելի են նաև հոդվածագրի տեսական բնույթի ձևակերպումները. «Բառը, լեզվական որևէ արտահայտություն կամ հասարակ մի ձև միմիայն իմաստի, բովանդակության կամ քերականական հարաբերության կող ու արտահայտող միջոցներ չեն: Դրանք պարտոված են այնպիսի բարդ երևույթներով ու առնչություններով, որոնք չափազանց պահանջկոտ ու քմահաճ լինելով հանդերձ՝ ոչ մի ուժի և պարտադրանքի չեն ենթարկվում: Դրանք ունեն գաղտնիքներ, որ բացահայտվում են, իրականացվում են այն դեպքում, երբ գործադրողի մեջ իրափրվում է ներքին ստեղծագործական անհամաձայնի կրակ, երբ մա ունի բառը ճանաչելու հազվադեպ շնորհք ու ճաշակ, կարճ ասած, երբ մա խոսքի վարպետ է»³:

³ Առաքելյան Վ., Հովի. Մասեհյանի չեքսպիրյան թարգմանությունների լեզվական արվեստը, «Շեքսպիրական», հ. 1, ՀՍՄՀ ԳԱ, Ե., 1966, 137-161, 1թ 147:

Հենց այդ «նեղքին կրակով» են ստեղծվում այն բոլոր նորարարությունները, որոնք առնչվում են նաև բառաստեղծմանը, նշած բառերի նորոգի կիրառությանը, բոլորովին թարմ ու համարձակ խոսքի մասային փոխակերպումներին, մի բան, որ բազմաթիվ օրինակներով կարելի է տեսանելի դարձնել «Աքիսողո՛ւմ, Աքիսողո՛ւմի» թարգմանության մեջ: Մեր ուսումնասիրության արդյունքում հավաքած և ի մի բերած բազմաթիվ օրինակների քննությունը նպատակ ունի ոչ միայն ի ցույց հանել բնագրի բառամթերքի ինքնատիպությունը, այլև հայերեն թարգմանության մեջ այդ ամենի ստեղծագործ և գրագետ վերարտադրությունը: Հիշատակության արժանի են նորանոր բառերի ստեղծումը հատկապես «ան» նախածանցի օգնությամբ՝ տարածված գրքի այն հատվածներում, որոնք իրականության վերացարկված արձագանքն են հիշեցնում:

«Itself circumambient and enclosed by its effluvium of hell, its aura of unregeneration, it mused... the dead sister Ellen: this Niobe without tears who had conceived to the demon in a kind of nightmare, who even while alive had moved but without life and grieved but without weeping, who now had an air of tranquil and unwitting desolation...» (p. 36-37).

հմմտ.

«Իրենով ամենակալ և դժոխքի ժանտահոտ գոլորշիներով ու անվերածնման պուռով շրջափակված՝ ուրվականը խորհում էր... մեռած քույր էլենը, այս Նիոբեն առանց արցունքների, որը մղձավանջի մեջ հղիացել էր դևից, նույնիսկ կենդանության օրոք շարժվել էր առանց կյանքի, վշտացել առանց ողբի, իսկ հիմա անվրդով ու անիմաց հուսահատության տեսք ստացել...» (էջ 13-14):

Հետաքրքիր է, որ 17, 20 և 9 տող ընդգրկող երեք նախադասություններում հանդիպող այս նորաստեղծ բառը՝ unregeneration-անվերածնում, զուգադրված է «impervious-անթափանցելի», «irrevocably-անդադարադադար», «harmless-անվնաս», «not even very attentive-փոքր-ինչ անուշադիր», «tranquil-անվրդով», «unwitting-անիմաց», «lifeless-անկյանք», «not even aware-անտեսող», «passive-անգործունյա», «incredulous-անհավատալի», «unbearable-անտանելի», «indomitable-անսաստելի» բառարանային արժեքների՝ մեծ մասամբ մակդիրային թարմ գործածությամբ, նույնիսկ հազվադեպ գործածվող «unforgiving-անմերելիություն» գոյականի եզրափակիչ կիրառությամբ.

«...embattled for forty-three years in the old insult, the old unforgiving outraged and betrayed by the final and complete affront which was Surpen's death» (p.37).

հմմտ.

«...քառասուններեք տարի շարունակ զրահավորված հին վրեժի և անմերելիության մեջ, որն ահագնացավ վերջնական ու եզրափակիչ վիրավորանքով՝ Սաթենի մահով» (էջ 14):

Ողջ հատվածի քննությունը գալիս է հաստատելու, որ «ան» միտական նախածանցով կազմված բառերի հաճախադեպ երևումը միևնույն հատվածում համապատասխանում է ո՛չ միայն զուտ բառակազմական, այլև հատվածի ներքին տրամադրության՝ ավարտական պարտադրած օրինաչափությանը:

«...so long as the blood coursed - the blood, the immortal brief recent intransient blood which could hold honor above slothy unregret and love above fat and easy shame.» (p.277).

հմմտ.

«...քանի դեռ արյունը հոսում էր նրանց երակներում – արյունը, ամմա՛ն մահկանացու ջահել և ամանցավոր արյունը, որը պատիվը բարձր էր դասում անփութաջան անափստանքից, իսկ սեռը՝ ճարպոտ և դյուրին ամոթից» (էջ 300):

Այս հատվածի ըննությունն ապացուցում է, որ Ֆոլքեմլը ոչ միայն մերկապարանոց բարոյախոս չէր, այլև բարոյական ամենաբարձր չափանիշների՝ սիրո և պատվի քանադեղի կրողների՝ երիտասարդ ամերիկացիների՝ Շրիվի ու Քվենթրիի հաստատում գոյութաբանության վավերացնողն էր: Թարգմանչի ստեղծած «անափստանք» գոյականը լավագույնս համառոտում է կրկին «ամ» մախաճանցով ստեղծված մակդիրների (պատկերաստեղծ) եռակի գործածությանը, որն այս անգամ առավել ուժգին ոճական երանգ է հաղորդում հատվածին՝ Ֆոլքեմլի գրչին հատուկ այնպիսի ոճական ղեկավարությամբ, ինչպիսին է «օքսիմորոնը»՝ «ամմա՛ն մահկանացու», «ամանցավոր արյուն», «անփութաջան անափստանք» կապակցություններում: Երիտասարդ արյունը ժխտում է «մահը»: Մերժում արյան անցավորությունն ու «ճարպոտ» ամոթը, և իհարկե տեղին է «ափսոսանքի» ամեն ամտեսում՝ «անափստանք»: Մի այլ հատվածում թարգմանիչը ստեղծել է «անօրգանիզմ» գոյականը, որն օգտագործված է Ֆոլքեմլի փիլիսոփայական մտահայեցումն իր կերպարներից մեկի՝ Չարլզ Բոնի բնութագրման մեջ արտացոլելիս.

«...probably by that time he had learned that there were three things and no more: breathing, pleasure, darkness; and without money there could be no pleasure, and without pleasure it would not even be breathing but mere protoplasmic inhale and collapse of blind unorganism in a darkness where light never began.» (p.281).

հմմտ.

«...այդ ժամանակ նա երևի արդեն սովորել էր, որ երեք բան գոյություն ունի և ուրիշ ոչինչ՝ շնչառություն, հաճույք, մթություն. իսկ առանց փողի չկա հաճույք, առանց հաճույքի չի լինի նույնիսկ շնչառություն, այլ միայն մախանյութային մերժելով և կույր անօրգանիզմի խորտակում՝ մթության մեջ, որտեղ լույսը երբեք չի ծագել» (էջ 304-305):

«Նախանյութային մերժելով և կույր անօրգանիզմի խորտակում՝ մթության մեջ» երկարաձգված փոխաբերությունը, որ զգայական և ոգեղեն (լույսի) աշխարհին հակադիր մթամած խարխալման, «մախանյութային անօրգանիզմի» անդունդը գլորվելու՝ խոսում պատկերի ստեղծման հիմնալի ոճական միջոց է, առավել պատկերավոր է դառնում հայերենի այս նորաստեղծ բառի՝ «անօրգանիզմի» գործածությամբ:

Ուշագրավ է Թոմաս Սաթինգի երկրորդ կնոջ՝ Էլենի, իրենց դստեր՝ Ջուլիի, և Սաթինգի՝ իր առաջին կնոջից՝ Յուլիայի Բոնին ունեցած միակ որդու՝ Չարլզ Բոնի նշանադրության (նույնիսկ հույսի) հանդեպ հուզական վերաբերմունքի նկարագրությունը, որտեղ թարգմանիչն օգտագործել է հազվադեպ գործածվող «մախաաշնան» բառը, որպես անգլերեն «Indian summer» բառակապակցության տարբերակային համարժեք թարգմանություն (որն իբրև բառարանային բացատրություն, հանդես է գալիս «տաք, չոր օրեր վաղ աշնանը, տաք աշուն» շարքում), որն էլ լավագույնս արտահայտում է Էլենի զգացմունքի վաղանցիկության և մոտակա վտանգին անտեղյակության, երջանկության անհմարինության բավականին խոսում իրադրության լարվածությունը.

«...which Bon seems to have spent either in riding and hunting with Henry or as acting as an elegant and indulgent esoteric hothouse bloom, possessing merely the name of a city for origin history and past, about which Ellen preened and fluttered out her unwitting butterfly's Indian summer...» (p. 107).

հմմտ.

«...որոնք Բոնն անցկացրեց... կամ հանդես գալով որպես նրբագեղ, աղարկոտ և անհայտ ջերմոցային ծաղիկ՝ սոսկ մի քաղաքի անուն ունենալով իր ծագման ու անցյալի համար, որոնք շուրջը էլենը փետուրներն էր հարդարում ու ճախրում անգգույշ թիթեռնիկի նախաշնան մեջ...» (էջ 97):

Այս հատվածում հետաքրքիր է նաև «ստwilling» բառի թարգմանությունը «անգգույշ», որպես բառարանային տարբերակային համարժեք, ի տարբերություն նախորդ հատվածներից մեկում նույն բառի համատեքստային փոխարինիչի ստեղծմանը, որը խոսում է թարգմանչի ստեղծագործ մտքի և երևակայության մասին (ստwilling desolation) (p. 37) - անցիմաց հուսահատություն (էջ 13):

Թարգմանության մեջ մեր ուշադրությունը գրավեց այն փաստը, որ բազմաթիվ բառեր օգտագործված են որպես բոլորովին նոր խոսքիմասային միավորներ, մի բան, որ բառարաններում ամրագրված չլինելով՝ նորաստեղծ են, եթե նույնիսկ նրանք արմատներն այլ խոսքի մասում կամ բառակապակցության մեջ առկա բառարանային արժեքներ են: Օրինակ՝ «անձնատուր» բառը, որը գործածվում է «անձնատուր լինել» բայական բառակապակցության մեջ (շատ հազվադեպ՝ «անձնատուրվել» բայական խոսքիմասային կիրառությամբ), այս թարգմանության մեջ մի շարք նոր խոսքիմասային կիրառություններ ունի (համեմայնդեպս, գործածության հաճախադեպության իմաստով). «անձնատուրվելիք» (ածականաբար գործածված գոյական), «անձնատուրություն» (գոյական):

« - Once there was (they cannot have told you this either) a summer of wistaria. It was a pervading everywhere of wistaria (I was fourteen then) as though of all springs yet to capitulate condensed into one spring, one summer...» (p. 147).

հմմտ.

«Մի անգամ, ուրեմն (սա էլ չեն կարող քեզ ասած լինել), գլիցինիայի ամառ եղավ: Օդն ամենուր գլիցինիայով էր լցված - այդ ժամանակ տասնչորս տարեկան էի, ասես անձնատուրվելիք բոլոր զարուհները խտացել էին մեկ զարման ու մեկ ամռան մեջ...» (էջ 146):

Անգլերեն լեզվի «to capitulate» բայն ունի հետևյալ բառարանային համարժեքները. «անձնատուր լինել, անձնատուրվել, կապիտուլյացիայի ենթարկվել», որոնցից վերջինս անգլերեն բառի արմատի պատճենմամբ (ռուսերեն ամբողջական բառի՝ «капитуляция» պատճենմամբ) ու հայերեն լեզվում գոյականի հոլովական վերջավորության՝ «-ի»-ի կիրառությամբ և «ենթարկվել» բայով կազմված բառակապակցություն է, որն իրավացիորեն անտեսվել է թարգմանության մեջ և նախապատվությունը տրվել է հայերեն համարժեքին՝ «անձնատուրվել» բային, որի օգնությամբ թարգմանիչը ստեղծել է «անձնատուրվելիք» գոյականը՝ «իք» գոյականակերտ վերջածանցով, այն գործածելով ածականաբար՝ «անձնատուրվելիք զարուհներ» բառակապակցության մեջ: Անշուշտ, կարելի էր նաև գտնել հայերեն այնպիսի համարժեք թարգմանություն, որտեղ պահպանվեր բնագրում գործածված

քառի խոսքի մասնացին պատկանելությունը, իմչպես, ասենք՝ «...ասես բոլոր գարունները, որ դեռ պիտի աճեցնատուր լինեն (աճեցնատվեն)» կամ «...որ դեռ պիտի տրվեն ի-րեն...», որտեղ անգլերեն անորոշ դերբայով (infinitive) արտահայտված «to capitulate» բնագիրը, որ նախադասության մեջ համդես է գալիս որոշչի դերում, կարող էր թարգմանվել բայով, որ թարգմանությունը նաև թարգմանչի առանձնահատուկ ձեռագրի ուղիղը։ Սակայն, քանի որ թարգմանությամբ մաս թարգմանչի առանձնահատուկ ձեռագրի ուղիղը։ Սակայն, քանի որ թարգմանությամբ մաս թարգմանչի առանձնահատուկ ձեռագրի ուղիղը։ Սակայն, քանի որ թարգմանությամբ մաս թարգմանչի առանձնահատուկ ձեռագրի ուղիղը։

...Yes, running out of that first year (that year before the War) during which Ellen talked to me of trousseau (and it my trousseau), of all the dreamy panoply of surrender which was my surrender, who had so little to surrender that it was all I had because there is that might-have-been which is the single rock we cling to above the maelstrom of unbearable reality - ... (p. 152).

តំបន់ប្រជាជន.

«Այդ, վազքն սկսվել էր հենց առաջին տարվանից (Պատերազմին նախորդած տարվանից), որի ընթացքում էլեհեն ինձ հետ խոսում էր օժիտի մասին (որն իմ օժիտն էր), անճատություն բոլոր երազային զենք ու զրահների մասին (որն իմ անճատությունն էր)։ Ելնեմ քիչ քան ունեի անճատություն լինելու, հանճնելու, որ դա էր միակ ունեցածս, որովհետև զոյություն ունի մի հնարավոր անցյալ՝ եզակի մի վեմ, որից կառչում ենք անտանելի իրականության հորձանուտի վրա» (էջ 153)։

Ուշագրավ է այն փաստը, որ բնագրի այս հատվածում երեք անգամ հանդիպող «surrender», «my surrender», «to surrender» բառը (գոյական և ածական խոսքի մասնային կիրառությամբ), որի բառարանային համարժեքներն են. «հանձնում, անձնատրություն, հրաժարում», «հանձնել, անձնատուր լինել, զիջել, մահանջել, հրաժարվել», թարգմանված է դարձյալ տարբերակային համարժեքի ընտրությամբ՝ «անձնատրություն», «անձնատուր լինել» բառով, բառակապակցությամբ, որի կողքին կարծես ինչ-որ բան հավելելու, ճշգրտելու մպատակով գործածվել է «հանձնել» բայը, որը, մեր կարծիքով, տվյալ դեպքում արդարացված չէ, քանի որ «անձնատուր լինելը» լիովին փոխանցում է բնագրի «to surrender» բայի համատեքստային արժեքը:

•And so he went into the house: and maybe somebody looking at him would have seen on his face an expression a good deal like the one - that proffering with humility yet with pride too, of complete surrender - which he had used to see on Henry's face... (p. 298).

តួអង្គបំណុល

«Ուրեմն, նա տուճ մտալ, և Երա դեմքին բացարձակ անձնատուրության խոնարհութիւն չկար, բայց նաև ի պարտաւորում, - այն, ինչ Եսայիի մոտ տեսնում էր Հեցրիի դեմքին...» (Էջ 325):

Ուշադրության արժանի է այն փաստը, որ բնագրում հանդիպող «of complete surrender» ետադաս բառակապակցությունը թարգմանության մեջ ոչ միայն դարձել է նախադաս, այլև կցվել է «humility» - «խոնարհություն» գոյականին՝ իբրև որոշիչ, հակադրվելով «pride» - «հպարտություն» գոյականին, որը, մեր կարծիքով, համարժեքորեն է ներկայացնում բնագրի «with humility yet with pride too» հակադրությունը՝ հիմնված «խոնարհություն»-«հպարտություն» մարդկային հատկանիշների տրամաբանական հակադրամիասնության վրա:

«Nearer and nearer, until suspense and puzzlement and haste and all seemed blended into one sublimation of passive surrender in which he thought only *All right*» (p.308) («*All right*» ընդգծումը՝ հեղինակի -Ու. Ֆոլքների):


Բնմտ.

«Ուրեմն, ավելի ու ավելի էր մոտենում այդ պահին, մինչև որ անորոշությունը, շփոթմունքն ու անապարանքը միախառնվում էին անգործունյա անձնատրտության և վեհացման մեջ, որտեղ նա միայն մտածում էր *Բարի*» (էջ 336):

Այս հատվածում հանդիպող «passive surrender» բառակապակցությունը ներկայացնում է իբրև «sublimation» գոյականի լրացում, որի բառացի թարգմանությունը կլիներ. «անգործունյա անձնատրտության վեհացում», քանի որ «to sublimare» բառի բառարանային համարժեքներից մեկը քիմիական տերմին է. «սուբլիմել, սուբլիմացիայի ենթարկել», իսկ մյուսն ունի հետևյալ տարբերակային համարժեքները՝ «բարձրացնել, ազնվացնել, իդեալականացնել», ուստի, ելնելով համատեքստից, կարելի է թարգմանել համատեքստային փոխարինիչով, որն էլ արել է թարգմանիչը, սակայն նա ընտրել է «անձնատրտության և վեհացման» գոյականային թվարկման տարբերակը, որը լավագույնս արտահայտում է մարդկային հոգու այն քառու, որում հայտնվել էր Չարլզ Բոնը՝ սիրելով-չսիրելով, ինքն իրեն արգելելով և այլոց կամքին հպատակվելով՝ չամուսնանալ արյունակից քրոջ հետ:

Ֆոլքների բառարկեստի առանձնահատկություններից մեկը՝ վերամբարձ ու վեհ հնչողությամբ բառերի բազմակի կիրառությունները, թարգմանչին մղել են հայերեն լեզվի զանաարանից դուրս բերել բազմաթիվ բառային միավորներ, որոնց իրենց վրա են կրում թե՛ գրաբարյան վսեմաշուք հնչողության ազդեցությունը, թե՛ բանաստեղծական պատկերավորության, բառի փոխաբերական իմաստների և ամենաբարձր հուզականության կնիքը:

«...որոնց փրկել նա չէր գորում» (էջ 18), «...մինչև վերջ և ցմրոր» (էջ 20), «...որոնք տիվ ու գիշեր հագնում էր...» (էջ 36), «...ընտանյոք դուրս եկած չկար...» (էջ 63), «...որոնց կենդանի արյան ու սերմի մեջ ինքներս սպասել ենք քնեացած, անթափանց մոծում այս ժամանակի...» (էջ 101), «...մեր ձայները հուշիկ...» (էջ 140), «...ես տակավին երեխա էի...» (էջ 140), «...անցում մի մարմնջով... ոչ մի սեր առ լույսն...» (էջ 147), «...Էլենի շաղակրատ ու սին հիմարությունից...» (էջ 149), «...այո, այդ անքթիթ անվարան ձեռքից վերցրեց մոմն ու մտածեց...» (էջ 156), «...մեր կյանքի խոնք ու պարբերական առօրյայից...» (էջ 162), «...այն էլ... կատաղի կոծած, արքշիռ՝ կայարանամերձ փողոցի մեզրական խանութներում...» (էջ 217), «...ընչավետ անդորրի հազարավոր օրեր...» (էջ 277), «...վրեժի անագորոյն կամք...» (էջ 302), «... չնաշխարհիկ, գրգամոլի դեմքին...» (էջ 321), «...թե ինչպես ետ դարձավ անվակոսներով՝ մթնում գայթեղով...» (էջ 360) և այլն



ԱՋԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՎԵՍՏԱԿԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆԸ

BNAGIRK' YISATAKAC. DOCUMENTA MEMORIAE: Dall'Italia e dall'Armenia. Studi in onore di Gabriella Uluhogian / a cura di Valentina Calzolari, Anna Sirinian, Boghos Levon Zekian, Bologna, Dipartimento di Paleografia e Medievistica, Alma Mater Studiorum - Università di Bologna, 2004, 405 p.

Բնագիրը հիշատակաց. Խալիլայից և Հայաստանից: Հետազոտություններ Գաբրիելյա Ուլուհոջյանի պատվին խմբագրությամբ Վալենտինա Կալցոլարիի, Աննա Օիրինյանի, Լևոն Ջեքիյանի, Հնագրության և միջնադարագիտության բաժանմունք, Բոլոնիայի համալսարան, 2004, 405 էջ:

Հայագիտության սպասավորներից քչերը կարող են հպարտանալ, որ իրենց գործունեության ամենաբեղուն շրջանում, տարբեր երկրների գիտական կենտրոններում աշխատող աշակերտների և գործընկերների համատեղ ջանքերով, հրապարակվել է իրենց գիտական գործունեության որևէ տարելիցին նվիրված հոդվածների ժողովածու: Նման հարգանքի է արժանացել հարազատ կրթօջախի կողմից Բոլոնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Գաբրիելյա Ուլուհոջյանը: Այս պատվին նա արժանացել է իր մանկավարժական բեղուն գործունեության, հայագիտության բնագավառում հրատարակած հետազոտությունների և պարզապես՝ մարդկային բարձր հատկանիշների շնորհիվ:

Հատորը խմբագրել են Գ. Ուլուհոջյանի աշակերտներ, ժենի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ. Կալցոլարին, Բոլոնիայի համալսարանի դոկտ. Ա. Օիրինյանը և հոբելյարի վաղեմի գործընկերը՝ Վենետիկի Կա Ֆոսկարի և Հոմեր Բաբանյանի պատվին Արևելագիտության ինստիտուտի պրոֆ. հայր Լ. Ջեքիյանը:

Ժողովածուն սկսվում է Բոլոնիայի համալսարանի Հնագրության և միջնադարագիտության մասնաճյուղի տնօրեն, պրոֆ. Մ. Մոնտանարիի շնորհակալական ուղերձով

ված բնագիրը գուգադրել միջնադարյան հայերեն թարգմանության հետ: Այս աշխատանքը Գ. Ուլուհոջյանին մոտեցնում է Հունարան դպրոցի թարգմանություններին առնչվող խնդիրներին: Հետազոտության ընթացքում գիտական լայն հետաքրքրություններ ունեցող երիտասարդ հայագետը համագործակցում է սլավոնագետ Ջուզեպե Ֆերմեյայի հետ, որը մույն ծրագրի շրջանակներում կազմում էր Գեորգ Պիսիդացու երկի հին սլավոներեն բնագիրը: 1959 թ. Գ. Ուլուհոջյանը հրապարակում է Գեորգ Պիսիդացու «Վեցօրէից»-ի հայերեն միջնադարյան թարգմանությանը վերաբերող իր առաջին գիտական հոդվածը:

Գ. Ուլուհոջյանի գիտական կյանքում մեծ դեր է խաղացել 1967 թ. օգոստոսի 28-ից սեպտեմբերի 2-ը Բուխարեստում կայացած Լեզվաբանների միջազգային ժ. կոնգրեսը, ուր նա կապեր է հաստատում Նորհրդային Հայաստանի լեզվաբանության դպրոցի ներկայացուցիչների հետ, ապա՝ գիտական գործուղումներով լինում Նորհրդային Հայաստան՝ մասնագիտանալով նաև արևելահայերենի մեջ: Պաշտպանելով դոկտորական ավարտաճառ, 1973 թ. Բոլոնիայի համալսարանի պատմության բաժանմունքի տնօրեն, պրոֆ. Լուիջի Հելլմանի ղեկավարությամբ հիշյալ կրթօջախում հիմնադրում է Հայ գրականության և լեզվի ուսումնասիրության դասընթաց, որի վրա էլ 1982 թ. ստեղծվում է համաճյուղը, երբ Գ. Ուլուհոջյանը ստանում է պրոֆեսորի կոչում:

Այնուհետև հոբելյարը ձեռնամուխ է լինում Բարսեղ Կեսարացու երկերի հայերեն թարգմանությունների հետազոտությանը՝ հիմք ունենալով ՄՄ-5595 (1276 թ.) մատյանը: Այդ աշխատանքի արդյունքը դարձավ Բարսեղ Կեսարացու «Գիրք հարցողաց»-ի հրատարակությունը (CSCO, v.536-437, Scr.arm. t. 19-20, Lovanii, 1993): Հոբելյարի հետաքրքրությունների ոլորտում է եղել վիմագրությունը, և նա սիրով թարգմանել ու հրատարակել է Ամիի (REArm, 23) և Հին Ջուղայի Ս. Ստեփաննոս եկեղեցու արձանագրությունները (Milano, 1981): Հայագիտությունը նրախտապարտ է Գ. Ուլուհոջյանին Դեռողաթ Փափագյանի (1996, 1999) և մի շարք այլ գործիչների արևիվների հայտնաբերման (1978, 1991, 1996, 2000, 2001), ԺԼ-ի դարերի հայ-իտալական փոխհարաբերությունների պատմության (1985, 2003, 2004), իտալիայում հանգրվանած հայկական ձեռագրերի հետազոտության (Bologna, 2003) համար: Գ. Ուլուհոջյանի աշխատանքների մեջ աչքի է ընկնում Եղիա Ջյոմորճյանի հայկական եկեղեցիների և սրբավայրերի քարտեզը (Un'anfoca mappa dell'Armenia. Monasteri e santuari dal I al XVII secolo, Ravenna, 2000), Փափսոս Բուզանդի Հայոց պատմության իտալերեն թարգմանությունը (Milano, 1997):

1994 թ. ՀՀ ԳԱԱ-ն Գ. Ուլուհոջյանին շնորհեց պատվավոր դոկտորի կոչում: Հոբելյարի հետազոտությունները տարածվում են լեզվաբանության, բանասիրության, հնագրության, մանրանկարչության, վիմագրության, գրականության, արվեստի, քաղաքական և եկեղեցական պատմության, աշխարհագրության, բանահյուսության ասպարեզներում: Հետաքրքրությունների այս շրջանակով մեծավաստակ գիտնականը վարակել է նաև Բոլոնիայի հայագիտության ամբիոնի իր ուսանողներին: Այսօր էլ Գ. Ուլուհոջյանը գործում մասնակցություն է ցուցաբերում հայագիտական կազմակերպությունների աշխատանքներին և իտալական համալսարանների միջնադարագիտության ու դասական բանասիրության շրջանակներում գործող գիտական ծրագրերին՝ դրանց մեջ ներգրավելով իր աշակերտներին և տարբեր երկրների գործընկերներին:

Գրախոսվող գրքի Ձեռագրագիտություն-բանասիրություն բաժնում հոդվածներ են հրապարակել պրոֆ. Վ. Կալցոլարի՝ "Ս. Պողոսի Վկայաբանության հայկական տարբերակի համեմատությունը հունարեն բնագրի հետ. նոր փաստեր հայկական տասնմեկ անտիկ վկայությունների հիման վրա" (*Il rapporto della versione armena del Martirio di Paolo con l'originale greco: nuovi contributi sulla base di undici testimonii armeni inediti*, 23-43), պրոֆ. Պ. Մուրադյանը՝ "Աստուածաշնչի հայկական խմբագրության բնագրական քննության աղբյուրները (Աթոսի 978 թ. գրչագիրը)" (էջ 45-66), դոկտ. Ա. Ծիրինյանը՝ "Դրազարկից Հռոմ. Կիլիկիայի պատմության մի էջ ըստ կապիտոլի արխիվի Ս. Պետրոսի B 77 մատյանի հիշատակարանի" (*Da Drazark a Roma: una pagina di storia ciliciana nel colofone del manoscritto Arch. Cap. S. Pietro B 77*, էջ 67-95), պ.գ.թ. Գ. Տեր-Վարդանյանը՝ "Հայերեն ձեռագրերի կորստած հաւաքածուների ցուցակների հրատարակման խնդիրը: Նախնական հաղորդում. Լիմ անապատի 1282 թուականի վերագտնումած Նոր Կտակարանի առիթով", էջ 96-115):

Պատմություն-պատմագրություն-հայրաբանություն բաժնում հոդվածներ են հրապարակել ՀՀ ԳԱԱ ակադ. Ս. Արևշատյանը՝ "Մովսես Խորենացին ազգային ինքնորոշման և պետականության մասին" (*Movses Khorenats'i on national self-determination and statehood*, էջ 119-126), դոկտ. Մ. Բալսը՝ "Պոմպեոյը Կովկասում. պատմագրական ավանդույթների համեմատություն" (*Pompeo nel Caucaso: Tradizioni storiografiche a confronto*) (էջ 127-137), դոկտ. Մ. Բեռնարդեյի՝ "Մովսես Խորենացին և Ալեքսանդրի Վեպը. բնագրային զուգարքման օրինակ" (*Movses Xorenac'i e il Romanzo di Alessandro: un esempio di intertestualità*, էջ 140-164), պ.գ.թ. Պ. Ա. Չոբանյանը՝ "Ազգային առաջընթացի ուղիների որոնումները հայ գործիչների կողմից XVIII դարի երկրորդ կեսին" (էջ 165-179), դոկտ. Ա. Ֆերարի՝ "Մենք՝ Մեն՝ Հայաստանյացս իշխաններս և մելիքներս. ԺԸ դարի Այսրկովկասի հայ ազնվականության հետազոտության նախաբան" (*Menk' Mec Hayastaneac's isxank'ners ew melik'ners*). Introduzione allo studio della nobiltà Armena in Transcaucasia nel XVIII secolo, էջ 181-205), դոկտ. Մ. Մորանի՝ "Հույն պատմիչներից հատվածներ Եվսեբիոսի Ժամանակագրության հայերեն տարբերակում" (*Fragmenti di storici Greci nella versione Armena del Chronicon di Eusebio*, էջ 208-228), հայր Ռ. Պանեն՝ "Եղիշեի Վասն Զղջման ճառի շուրջ դիտողություններ" (*Note in margine a un'omelia di Elise sulla Penitenzia*, էջ 228-240), պ.գ.դ. Մ. (Է.) Ծիրինյանը՝ "Փոխարկությունները քրիստոնեական պատմագրության մեջ" (էջ 241-253), պրոֆ. Զ. Տրախան՝ "Մի հայ դայեակ նախաքրիստոնեական վրաստանում" (*Un Dayeak Armeno nell' Iberia precristiana*, էջ 255-262):

Լեզվաբանության բաժնում հրապարակված են դոկտ. Ռ. Բ. Ֆինացիի "Հայ-անգլիական լեզվաբանական հետաքրքրաշարժ առնչություններ" (*Curiosities Anglo-Armene*, էջ 265-283), դոկտ. Ս. Մանչիհի Լոմբարդիի "Հունարեն շարադրանքի ավանդույթը ըստ Փիլոն Ալեքսանդրացու *Legum Allegoriae* երկի հայկական տարբերակի" (*La tradizione dei composti Greci nella versione Armena del Legum Allegoriae di Filone Alessandrino*, էջ 285-295), բ.գ.թ. Գ. Մուրադյանի "Նախահունարեն թարգմանություններ" (*Pre-hellenizing translations*, էջ 298-315), դոկտ. Ա. Օրենգոյի "Թովմաս Կամպանելայի Քերականության հայերեն թարգմանություն մի նոր խմբագրություն" (*Una nuova redazione della traduzione*

Armena die *Gramatica* di Tommaso Campanella, էջ 317-336), դոկտ. Ա. Սկալայի "Հայերենը և գնչուների բարբառները. զանազան մշումներ և նոր առաջարկություններ" (*Armeno e dialetti zingari: note sparse e nuove proposte*, էջ 337-347), դոկտ. Ռ. Սգարբիի "Դիոնիսիական *Արվեստի* հայկական տարբերակին վերաբերող լեզվաբանական խնդիրներ" (*Problemi lessicali legati alla terminologia della versione Armena dell' Ars Dionisiana*, էջ 349-357) ուսումնասիրությունները:

Ժողովածուի վերջին բաժինն ամփամօշ է Արվեստ-ճարտարապետություն-Ռմավայրեր: Այստեղ հղվածներ են հրատարակել պրոֆ. Ա. Ալպագո 'Նովելոն' "Ս. Սարգսի և Բաքոսի գյուղական սրբավայրը իրանական Ադրբեջանի Ուրմիա բնակավայրի մոտ" (I "Santuari" rurale dei SS. Sergio e Bacco presso Urmiah nell' Azerbaigian Iraniano, էջ 361-371), պրոֆ. Կ. Բոնարդին "Հայկական Սուրբ Հոգի եկեղեցին Բոլոնիայում" (Santo Spirito degli Armeni a Bologna, էջ 373-390), պրոֆ. Մ. Ա. Լալա Կոմենեն "Պատմական Հայաստանի ճարտարապետական կառույցների տիպաբանության ակնարկներ" (Cenni sulle tipologie delle strutture materiali nell' Armenia storica, XI-XV secolo, էջ 391-402):

Ժողովածուն արժեքավոր նվեր է Բոլոնիայի համալսարանի կողմից Հայագիտության ամբիոնի ստեղծման և հոբելյարի գիտամանկավարժական գործունեության 30-րդ տարեդարձի կապակցությամբ: Ծանկանանք Գաբրիելյա Ուլուհոջյանին առողջություն և նոր հաջողություններ հայագիտության ասպարեզում:

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

«ԶԱՄԲՈ»-Ը ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՎ

Նոգողությամբ Մեսրոպ արքեպիսկոպոս Աջնյանի և մեկնաստությամբ Տիգրան և Դիանա Հանքյանների (Դանադա, Մոսրեալ), վերջապես լույս աշխարհ եկավ Սիմոն Կաթողիկոս Երևանցու «Զամբո» կամ «Հիշատակարան Էջմիածնի Սուրբ Աթոռի ու նրա շրջակա մյուս վանքերի մասին» աշխատության աշխարհաբար թարգմանությունը՝ նվիրված ՆԱՍՏՏ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պապրիարքին և Կաթողիկոսին Ամենայն Հայոց՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կառուցման 1700-ամյակի առթիվ։ Թարգմանիչ Վազգեն Համբարձումյանը Սիմոն Կաթողիկոս Երևանցու բարձրարժեք աշխատությունը, վերածած արևելահայ գրական եայերենի, ներկայացրել է ընթերցողի ուշադրությանը¹։

Աշխատությունը բաղկացած է ներածական մասից (էջ Ա-Ի), քսանհինգ գլուխներ պարունակող բուն նյութից (էջ 1-408), երկու խմբի բաժանվող ծանոթագրություններից (էջ 410-543), առարկայական ցանկերից (էջ 546-584), տերմինների ու տերմինային անվանումների ցանկից (էջ 585-604) և քարտեզներից։

Թարգմանությամբ կցած ընդարձակ ներածականում թարգմանիչը հանգամանորեն ներկայացնում է Սիմոն Կաթողիկոս Երևանցու կյանքն ու նրա «Զամբո» աշխատությունը։ Սիմոն Երևանցին (1710-1780 թթ.), 1763 թ. օծվելով Ամենայն Հայոց Կաթողիկոս, փայլուն ձևով է կատարել ոչ միայն իր կաթողիկոսի պարականությունները, այլ նաև գրել է մի շարք երկեր, ինչպես, օրինակ՝ «Ջրասարան հոգևոր» (1772 թ.), «Պարտավճար» (1779 թ.), «Տաղարան փոքրիկ» (1793 թ.), 1774 թ. կարգավորել է Հայոց Տոնացույցը և այլն։ Արդյունաշատ Հայրապետի ստեղծագործությունների գլուխգործոցը և հայագիտության արժեքավոր հուշարձաններից մեկը նրա «Զամբո» աշխատությունն է, որը լույս է տեսել հեղինակի մահից շուրջ հարյուր տարի անց (1873 թ., Վաղարշապատ)։ Դրանում հեղինակը մանրամասնորեն ներկայացրել է Հայոց Եկեղեցու պատմությունը, իրեն նախորդող կաթողիկոսների գահակալության տարիները, Հայոց Մայր Աթոռի թեմերն ու վիճակները, պարսկական և թուրքական իշխանությունների վերաբերմունքը Ս. Էջմիածնի հանդեպ, Երևանի խանության քսանմեկ վանքերի պատմությունը և այլն։

Անվանի կաթողիկոսն ու պատմիչը, օգտվելով Ագաթանգեղոսի, Կիրակոս Գանձակեցու, Ստ. Օրբելյանի, Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Քանաքեցու, Աբրահամ Կրեկապետի ավանդած տեղեկություններից, ինչպես նաև՝ դիվանագիտական փաստաթղթերից ու օտար իշխողների վավերագրերից, ստեղծել է արժեքավոր մի աշխատանք, որն այսօր էլ խիստ արդիական է ու կարևոր։

¹ Սիմոն Կաթողիկոս Երևանցի. Զամբո. գրադարձ թարգմանությունը, ստացարանը և ծանոթագրությունները Վ. Գ. Համբարձումյանի. պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները Գ. Մ. Բաղալյանի, «Մուղնի» հրատ., Երևան, 2003, 640 էջ։

Աշխատության առաջին երեք գլուխներում հեղինակն անդրադարձել է Էջմիածնի Սուրբ Աթոռի մինչև 1441 թ. ընդգրկող ժամանակաշրջանի պատմությանը, մի ժամանակաշրջան, երբ Հայոց Կաթողիկոսությունը թողել էր իր Լուսավորչահաստատար աթոռանիստ Վաղարշապատը և տեղափոխվում էր տեղից տեղ: Իսկ 1441 թ. ազգային-եկեղեցական ժողովում ընդունված որոշման համաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը վերահաստատվում է Էջմիածնում: Այնուհետև նա շարադրում է Էջմիածնի Սուրբ Աթոռի պատմությունը՝ այն հասցնելով մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոս Մովսես Գ. Այունեցին կամ Տաթևանցին (1629-1632 թթ.): Դրանից հետո նա հանգամանորեն ներկայացնում է շուրջ հարյուր հիսուն տարիների Ամենայն հայոց կաթողիկոսների գահակալության պատմությունը, որը հասցնում է մինչև իր օրերը:

Մեծ հայրենասերն ամեն կերպ ձգտել է հասնել Հայոց Եկեղեցու միասնությանն ու համախմբվածությանը՝ ընդգծելով, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եղել է ու պետք է մնա համայն հայության հոգևոր կենտրոնը: Այսպիսով, ինչպես նշվում է ներածականում, գրքի 1-12-րդ գլուխները նվիրված են Էջմիածնի Սուրբ Աթոռի բաղաբանական պատմությանը, իսկ 13-20-րդ գլուխները վերաբերում են Հայոց Եկեղեցու տնտեսական կացության նկարագրությանը: 21-24-րդ գլուխներում տրված է Հայոց Եկեղեցու իրավական կյանքի պատմությունը, իսկ վերջին՝ 25-րդ գլուխն ամբողջ աշխատության ամփոփումն է:

Շնորհիվ գրաբարի և ժամանակակից հայերենի հմուտ իմացության՝ գրքի թարգմանիչը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը, կարողացել է հաղթահարել Սիմեոն Կաթողիկոս Երևանցու նրկի լեզվական բոլոր դժվարությունները և կատարել հաջող թարգմանություն: Նա ամենայն պատասխանատվությամբ է թարգմանել ամեն մի նախադասություն, անհրաժեշտության դեպքում փակագծերում ավելացրել է երբ բառեր կամ բառակապակցություններ, որոնց օգնությամբ նախադասության միտքը դարձել է պարզ ու հստակ: Բերենք մի օրինակ. «Աշխարհը և (ամեն մի) աշխարհային, համաձայն սրբազան գրքերի սահմանման, մշտապես շարժման մեջ են և ենթարկված են զանազան փոփոխությունների, և այդ (ամենը տեղի է ունենում) այնքան խստորեն, որ (դրանք) չունեն ոչինչ հաստատուն» (էջ 2):

Աշխատությունն արժեքավորվում է նաև լեզվական առումով, մասնավորապես պետական, եկեղեցական, տնտեսական, իրավական բնագավառների բառերով, ինչպես նաև դրանց վերաբերյալ տերմինային միավորներով, որոնց համարժեքներն ու ճիշտ ձևերը կարողացել է գտնել ու դնել գրքի թարգմանիչը: Այսպես, օրինակ՝ *դատարայ-կալվածագիր*, *վախույ-նամայ-սևփակակնագիր* և այլն: Այս առումով Սիմեոն Կաթողիկոս Երևանցու լեզուն առանձնապես կարևոր է հայերենի գիտական տերմինաբանության և հայոց լեզվի պատմական բառագիտության զարգացման ու հարստացման տեսանկյուններից: Աշխատությունը հարուստ է բազմաթիվ նորաբանություններով, որոնք հիմնականում պատկանում են եկեղեցական տերմինաբանության ոլորտին: Այդ նորաբանությունները կազմված են հայերենի բառակազմական կանոնների համաձայն: Հանդիպում ենք նաև այնպիսի բառերի ու բառաձևերի, որոնք կազմված են լատինաբան հայերենի օրինակով: Հեղինակն օգտագործել է նաև բազմաթիվ օտար տեղանուններ:

Ի մոտո ծանոթանալով Սիմեոն Կաթողիկոս Երևանցու «Զամբռ» աշխատությանը՝ կարող ենք ասել, որ այն լեզվական առումով ունի բազմաթիվ դժվարություններ, որոնք պայ-

մանաժողոված են նրանով, որ այն գրված է ոչ թե միայն այդ ժամանակի գրաբարով, այլև նրանում տեղ են գրել ժամանակի խոսակցական, գրական աշխարհաբարին հարուկ ձևեր ու ոճեր, ինչպես նաև օտար լեզուներից կախարված փոխառություններ:

Թարգմանիչը բառաբացատրություններին վերաբերող ծանոթագրությունների ցանկում գնալով է 270 բառ, որոնցից շուրջ 230-ը չկան Նոր Հայկազյան բառարանում, իսկ մյուսներն էլ փոխառություններ են պարսկերենից, արաբերենից, թուրքերենից: Ծանոթանալով այդ բառերին նկատելի է, որ դրանց մեծ մասը բարդ բառեր են, իսկ մնացածը՝ ածանցավոր և բարդ ածանցավոր բառեր: Բարդ բառերի օրինակներ՝ *աղանդամիտ, քաղցածուր, քամբակահաւ, թիւրամիտ, լուսնաթիւ, կոնդակաւն, հայրապետականիտ, ձախորդաբեր, սնագլուխ, սինագլուխ, վայրսնիտ, վանաշէն, վրանգուշտ, փոռապէրն, փորձատիթ, քաղտաշ, քրիստոսակերտ* և այլն: Կան նաև բավական թվով ածանցավոր բառեր, ինչպես՝ *անարգելօրէն, անկաթոյիկոս, կրքեմնապէս, լսապէս, հնձանատր, յանախօրէն, ներհակահատ, ցանկապէս, քաղցրեղէն(ք), օգրադուրութիւն* և այլն:

Քիչ չեն նաև բարդ ածանցավոր բառերը, այսպես, օրինակ՝ *անընդդիմաճառութիւն, դրամաձախութիւն (դրամի ծախս), կնքադրութիւն, հայկազնէութիւն (հայկազուն կամ հայ լինելը), հոգեբաժնական, վերանորոգութիւն, վճռահատութիւն* և այլն:

Ավելի քիչ են տարբեր տեսակի բառակապակցությունները, ինչպես, օրինակ՝ *անշէն տնապնդ, աղո առնել* (դիմել, հայց ներկայացնել), *աղո գրել* (գրավոր դիմել), *գոլոս հանել* (ոտքերը կտրել), *ի քննութիւն մտանել, կանոն ճշմարտութեան, ճարակտուր լինել, յայն կուսացի* (այնպեղացի), *նուրբք և աւրաքին գիտք* (աստվածաբանական գրքերից դուրս), *սնդմանելի տնդի(ք), վկայական գիտ* (վկայագիր), *տուսն և վեց* և այլն:

Թարգմանիչը նշում է, որ Սիմեոն Կաթողիկոս Երևանցին գործածել է նաև լատինաբանության հարուկ ձևեր: Եվ դա բնական է, որովհետև այդ ժամանակաշրջանում լատինաբանությունը դեռևս իսպառ չէր հաղթահարվել: Այսպես, լատինաբանության օրինակով են կազմված հետևյալ բառերը՝ *գլուսնեցեալ* (փխ. գրեալ), *լինիցէր* (փխ. լինելոց էր), *սոյնոյ* (փխ. սորին), *նեղ պարսպի* (փխ. ի պարսպի), *տրիտ* (փխ. տայր), *նոյնով* (փխ. նովմը), *տրեցեալ* (փխ. տրեալ), *լնանիւ* (փխ. լնուն), *տրիւն* (փխ. տրամ) և այլն:

Նկատի ունենալով, որ Սիմեոն Կաթողիկոս Երևանցին գործածել է բազմաթիվ տերմիններ, որոնց մի զգալի մասը կազմել է հենց ինքը՝ հեղինակը, թարգմանիչը դրանք առանձնացրել է և ներկայացրել առանձին ցանկով:

Ինչ խոսք, թարգմանությունը չի կարող թերություններ չունենալ, բայց որ այն հիմնականում հաջողվել է, դա կասկածից վեր է: Մեր դիտողությունները հիմնականում վերաբերում են ծանոթագրություններին: Նախ՝ ավելի նպատակահարմար կլիներ, եթե երկու հարյուրից ավելի այն բառերը, որոնք չեն արձանագրված Նոր հայկազյան բառարանում, թարգմանիչը ներկայացներ ոչ թե ծանոթագրությունների խառն տեսքով, այլ այբբենական կարգի վերածած բառացանկի ձևով:

Եզրափակելով մեր համառոտ խոսքը՝ աներածե՛ք ենք համարում նշել, որ Սիմեոն Կաթողիկոս Երևանցու «Ջամբռ» աշխատության աշխարհաբար թարգմանության կարիքը վաղուց էր հասունացել, և ուրախալի է, որ այն ի վերջո կայացավ:

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

«ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐԸ

Շնորհակալ ու կարևոր գործ է ձեռնարկել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիքա Դոլուխանյանը՝ նվիրական հայագետների կյանքը և գիտական գործունեությունը ներկայացնելով հայ բնթրցողներին «Եվրոպայի հայագետներ» շարքով, որի առաջին գիրքը նվիրված է բելգիացի նշանավոր հայագետ Ֆելիքս Նևին։ Այն վերնագրված է՝ «Ֆելիքս Նևը և բրիտանական մաքենագրությունը», որում ներկայացված են Նևի՝ այս թեմային վերաբերվող ութ գործերը։

Բելգիացի հայագետի աշխատությունները, մասնավորապես «Ջրիստոնյա Հայաստանը և իր մաքենագրությունը» (1886), «Հայ գրականության մի բանի արժանահիշատակ հրապարակումները» (1888), թեև նվիրված են հայկական միջնադարյան հոգևոր գրականությանը, այնուամենայնիվ, ինչպես նրա, այնպես էլ մյուս օտարագիտի գիտնականների հետազոտությունները բազմաբնույթ հանրագիտական փնտրություններ են պարունակում հայագիտության փարքեր բնագավառների՝ թե՛ լեզվաբանության, թե՛ պատմագրության և թե՛ հայ եկեղեցական մաքենագրության մասին։

Ֆ. Նևը ի մի է բերում ու արժեկոծում Եվրոպայում գործող ժամանակի հայագիտական կենտրոնների գործունեությունը, կարևորում նրանց փնտրող հայագիտության զարգացման ասպարեզում։ Ա. Դոլուխանյանը ներկայացնում է Ֆ. Նևի՝ Եդիշի, Հոփհաննես Դրասխանակերպցու, Գրիգոր Նարեկացու, Մարթեոս Ուոհայեցու, Թովմա Մեծոփեցու, Ղևոնդ Ալիշանի ստեղծագործությունների վերլուծությունները։ Նարեկացուն համարելով հայ գրականության զագաթը՝ բելգիացի գիտնականը գտնում է, որ «Մարտյան ողբերգությանը» ոչ միայն հայերի, այլև ողջ բրիտանական աշխարհի կենսական կարիքների համար է¹, իսկ Ղևոնդ Ալիշանի «Միսուան» աշխատությունը կարևոր է համարում եվրոպացիների համար՝ մասնավորապես նրանում խաչակիրների արշավանքների և Ռուբինյան թագավորության մասին եղած հարուստ փնտրությունների համար։

Ա. Դոլուխանյանի երկրորդ հետազոտությունը՝ «Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ», նվիրված է հայագիտության մեծ նրախարավորի ծննդյան 200-ամյակին (2002)։ Աշխատության առաջին մասում ներկայացվում է Ֆրանսիացի հայագետի կենսագրությունը։ Նրա՝ հայագիտության, վրացագիտության, կովկասագիտության, չինագիտության հարցերին նվիրված հետազոտությունների թիվը հասնում է 270-ի։ Ընդ որում ուշագրավ է, որ գրքի վերջում հետազոտության հեղինակը առանձնացրել և կազմել է գիտնականի՝ հայագիտության փարքեր բնագավառներին վերաբերվող հետազոտությունների մաքենագիտությունը։ Բրոսսեն իրականացրել է հայ պատմիչների փաստերը նրկերի ֆրանսերեն թարգմանությունը։

¹ Ա. Դոլուխանյան, Ֆելիքս Նևը և հայ բրիտանական մաքենագրությունը, Երևան, 2001, 19 68-69։

Դոլոխանյանը Բրոսսին նվիրված գրքի առաջին գլխում անդրադարձել է հայագետի թարգմանական գործունեությանը, մասնավորապես Թովմա Արծրունու, Ստեփաննոս Օրբելյանի, Մխիթար Արքիվանցու, Ուստանեսի, Կիրակոս Գանձակեցու, Առաքել Դավրիժեցու երկերի թարգմանությանը: Մ. Բրոսսեն զբաղվել է նաև տոմարագիտությամբ և դրամագիտությամբ:

Բրոսսեն 1840 թ. ֆրանսերեն և ռուսերեն հրապարակել է Էջմիածնի ձեռագրացուցակը: Նա բարձր է գնահատում Էջմիածնի դերը հայ ժողովրդի հոգևոր և քաղաքական կյանքում, ինչպես նաև շեշտում, որ Հայաստանում ամեն ինչ իր վրա կրում է հավաքի գրեշմը²: Բրոսսեն իր տպավորություններն ամփոփել է «Էջմիածին-Անի» ճանապարհորդական ուղեգրությունում մանրամասն ներկայացնելով և նկարագրելով Էջմիածնի Մայր Տաճարը, մյուս եկեղեցիները³: Նա ուսումնասիրել է նաև հայկական վանքերի արձանագրությունները, մասնավորապես Հաղպատ-Սանահինի վանքերի:

Բրոսսեն հայ պատմիչների երկերի նկատմամբ ցուցաբերել է քննական մոտեցում՝ նրանց հաղորդած տեղեկությունները բաղդատելով բյուզանդական, ասորական, վրացական, արաբական և պարսկական տառնագրության համապատասխան վկայությունների հետ: Եվրոպացի ընթերցողը Մ. Բրոսսի աշխատությունների միջոցով որոշակի պատկերացում կկազմի Հայաստանի միջնադարյան մշակույթի մասին, կծանոթանա հայկական նշանավոր վանքերին, նրանց արձանագրություններին, ճարտարապետությանը, մանրանկարչությանը⁴:

Ա. Դոլոխանյանի «Եվրոպայի հայագետներ» մատենաշարի երրորդ գիրքը նվիրված է Վիկտոր Լանգլուային, որը մեծ վաստակ ունի հայագիտության ասպարեզում մասնավորապես հեղափոխելով հայ գրականության, պատմության, եկեղեցական վավերագրերի, վիմագրության, Հայ Եկեղեցու՝ 19-րդ դարի վիճակի հարցերը: Ա. Դոլոխանյանն իր ուսումնասիրության առաջին մասում անդրադառնում է հայ գրականության Լանգլուայի գնահատությանը՝ հենվելով Մխիթարյան միաբանության պատմության մասին ֆրանսիացի հայագետի գրած հեղափոխության վրա⁵:

Լանգլուայի՝ Կիլիկիայի մասին ուսումնասիրությունները ներկայացվում են գրքի երկրորդ մասում: Նապոլեոն Երրորդ կայսեր հանձնարարությամբ Վ. Լանգլուան այցելում է Կիլիկիա՝ իր շրջագայության արդյունքները հրապարակելով «Տեղեկագիր Կիլիկիայի և Փոքր Հայքի հնագիտական հեղափոխությունների» աշխատանքում: Ութ ամիս նա շրջել է Կիլիկիայում, նկարագրել հայկական հուշարձանները և նրանց վիմական արձանագրությունները՝ կից ֆրանսերեն թարգմանությամբ: Ի դեպ, այդ արձանագրությունների մի զգալի մասի ավելիելը բացառվում է ոչ միայն դարերի կործանարար ազդեցությամբ, այլև նրանով, որ օտար իշխողները երկիրը գրավելու պահից սկսած՝ կործանել են բրիտանական հուշարձանների մեծ մասը, որովհետև դրանք նրանց հիշեցնում էին նախկին տերերին⁶:

² Ա. Դոլոխանյան, Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ, 2002, էջ 64-66:

³ Դոլոխանյան, էջ 68:

⁴ Դոլոխանյան, էջ 89-90:

⁵ Ա. Դոլոխանյան, Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003, էջ 113:

⁶ Դոլոխանյան, էջ 49:

Գրքի երրորդ գլուխը նվիրված է ֆրանսիացի գիտնականի՝ հայ պատմագրության ասպարեզում ունեցած վաստակին:

Ա. Դոյուխանյանն անդրադառնում է Լանգլուայի՝ Մովսես Խորենացուն նվիրված ուսումնասիրությանը, Մմբաթ Գունդստարլի ժամանակագրությանը, Գրիգոր Մագիստրոսի 83 թղթերի, Միրայել Ասորու գործերի ֆրանսերեն թարգմանություններին և նրանց գիտական մեկնաբանություններին՝ շեշտելով, որ ֆրանսիացի գիտնականը հայագիտությունը քննում է արևելագիտության ընդհանուր համապատկերում շարունակ համեմատելով հայկական և օտար աղբյուրները⁷:

«Եվրոպացի հայագետներ» մատենաշարի չորրորդ գիրքը ֆրանսիացի ականավոր հայագետ Էդուարդ Դյույուրիենի մասին է: Իր «Հայերը» ուսումնասիրության մեջ նա համառոտ ներկայացնում է հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած քրիստոնեության ընդունումից: Գրնում է, որ հայերենին հասակակից և հայտնի էին լեզուները դարձել են մեռյալ, մինչդեռ հայերենը շարունակում է մնալ կենդանի և համապատասխանաբար զարգանում է պատմության ընթացքի ամեն մի աստիճանին զուգընթաց⁸:

Այս հեղափոխության ներկորդ մասը նվիրված է հայագետի «Հավաքումն խաչակիրների պատմիչների, հայկական վավերագրեր» գրքի քննությանը: Այն պարունակում է հայ պատմիչների թողած տեղեկությունները Խաչակրաց արշավանքների վերաբերյալ. «Էդ. Դյույուրիենի» Խաչակրաց արշավանքներին վերաբերող հայկական նյութերի ժողովածուն նվերական հայագիտության մեջ շրջանառության է դրել վիթխարի նյութ»⁹:

Ա. Դոյուխանյանի վերոհիշյալ հեղափոխության ներկորդ մասը վերաբերվում է Էդ. Դյույուրիենի՝ Հայ Եկեղեցուն նվիրված երկերին: Ինչպես գրում է հեղինակը, Հայոց Եկեղեցու պատմությանը անդրադարձել են 19-րդ դարի բոլոր հայագետները՝ Ս. Մարտիրոս, Մ. Բրուսսեն, Ֆ. Նևե, Ֆր. Կոնիբերը, Դյույուրիեն: Վերջինս կատարել է մի կարևոր գործ ևս: Նա ֆրանսերենով ներկայացրել է Հայոց Եկեղեցու վարդապետությունը, ծեսերը, Եկեղեցու յոթ խորհուրդները և կանոնները, նվիրապետությունը, եկեղեցական հանդերձները¹⁰:

Հայոց Եկեղեցու մասին վերոհիշյալ նյութերը ֆրանսիացի հայագետը ռուսերենից և հայերենից թարգմանել է ֆրանսերեն և մեկ գրքով հրապարակել Փարիզում: Այս գրքի առաջին մասը ներկայացնում է Հայ Եկեղեցու պատմությունը՝ Հայաստանում քրիստոնեության հաստատումից մինչև 19-րդ դարը. մեր Եկեղեցին իրավամբ Արևելքի ամենահին Եկեղեցին համարելով, մեկը նրանցից, որը պահպանել է վաղ շրջանի քրիստոնեական շունչը և ավանդները: Դյույուրիենի գրքի երրորդ բաժինը Գրիգոր Լուսավորչի վարդապետության թարգմանությունն է: Ֆրանսիացի հայագետը համոզված էր, որ այն մեծ կարևորություն ունի, քանի որ վերաբերվում է Արևելքի հնագույն Եկեղեցիներից մեկի պատմությանը և վարդապետությանը¹¹:

⁷ Նույն տեղում, լ. 9 114:

⁸ Ա. Դոյուխանյան, Էդուարդ Դյույուրիենի հայագետ, Երևան, 2004, լ. 9 15:

⁹ Նույն տեղում, լ. 9 42:

¹⁰ Նույն տեղում, լ. 9 43:

¹¹ Նույն տեղում, լ. 9 45:

«Էդուարդ Ղյուլերիին հույազեւտ» հեքիաթագրության չորրորդ մասում նա ներկայացված է որպէս հայ պարմիչների թարգմանիչ և երապարակիչ: Նրա թարգմանած պարմիչների՝ Միքայել Ասորու, Մարթնոս Ուռեայեցու, Սյրեփանոս Առաքիլ Տարոնեցու գործերը կապարված են բարեխղճությամբ և ներկայացնում են խաչակրաց արշավանքների ժամանակահատվածը: Ա. Ղուլերիանյանի բնորոշմամբ՝ «Այս նշանավոր հայազեւոր հիացնում է ոսկեդարյան գրաբարի լեզվական հարստությամբ ու կապարելությամբ: Էդ. Ղյուլերիին հայ մատենագրության մեջ արեւմտում է հայոց ցեղի հանճարը և համոզված է, որ այդ ենագոյն մատենագրական գանձերը ախրի պահպանեն հայերի ազգային ոգին»¹²:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անիտա Ղուլիսանյանի ֆրանսերենի քաջիմացությունը թույլ է տվել բնագրերից թարգմանել, մեկնաբանել ու արժեւորել վերոհիշյալ գիտնականների հայագիտությանը վերաբերվող գործերը, որոնք ծնվել են հայ ժողովրդի ու հայ մշակույթի և լեզվի նկատմամբ ունեցած սիրուց:

Պրոֆեսոր Անիտա Ղուլիսանյանի «Եվրոպացի հայազեւորներ» մատենաշարը կարևոր մի ձեռնարկում է և էականորեն ընդլայնում է հայ ընթերցողների եվրոպական հայագիտության մասին ըմբռնումները:

¹² Նույն տեղում, էջ 70:

ԳԻՏԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳԻՏԱԺՈՂՈՎ-ՆԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿԵԶԱՌԻՄԻ 1000-ԱՄՅԱԿԻՆ

Սեպտեմբերի 18-19-ը Գրողների միության Շաղկաձորի ստեղծագործական տանը, օրհնությամբ Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և հովանավորությամբ Կեչառիսի վանքի բարերար Վլադիմիր Հարությունյանի, տեղի ունեցավ գիտաժողով-հանդիսություն՝ նվիրված Կեչառիսի 1000-ամյակին:

Սեպտեմբերի 18-ի առավոտյան, մինչ գիտաժողովի բացումը, հնամենի վանքում կապարվեց Գիշերային ժամերգություն՝ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանի հանդիսավարությամբ:

Գիտաժողովի բացմանը Տ. Առաքել եպս. Քարամյանը, ողջունելով ներկաներին, անդրադարձավ Կեչառիսի վանական համալիրի պարմական նշանակությանը և հույս հայտնեց, որ գիտաժողովը պիտի նպաստի Կեչառիսի վանքի պարմության առավել ամրոջացման ու նոր փաստերի և նյութերի ներքո նրա պարմության շարադրմանը:

Այնուհետև ներկաներին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի խոսքն ընթերցեց Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը:

«Հայրապետական սիրով և օրհնությամբ ողջունում ենք ամենքիդ և բերում ենք Մեր զնահապաւնքը՝ հոգևոր մեր արժեքների ու ժառանգության հանդեպ ձեր նախանձախնդրության համար, որը այսօր հավաքել է ձեզ Կեչառիսի վանքում: Նմանյա մեր վանքերում մենք լռյուռս ավելի մոտ ենք զգում մեզ Աստծուն, մեզ ավելի զորացած ենք զգում մեր արմատներով, բաջալեր, վստահ ու յավարեն, երբ մեր կողքին զգում ենք հոգևոր ներկայությունը մեր նախնիների, որ ստեղծել ու շենացրել են մեր Հայրենիքը, կերպել ու կառուցել և թողել են մեզ այսպիսի հարուստ ժառանգություն: Գիտաժողովը, նվիրված Կեչառիսի վանքին, նոր յույսով վեր պիտի հանի նրա 1000-ամյա պարմությունն ու ժառանգությունը: Իրենց մանրամասներով կենրկայացվեն ինչպես յուսավոր ու խաղաղ ժամանակները, երբ վանքը, հաստատված Բագրատունյաց թագավորության բարձունքի ու փառքի շրջանում, գործել է իբրև կրթության ու մշակույթի հոգևոր նշանավոր կենտրոն, այնպես և՛ դժվարին ու դժնդակ ժամանակները, երբ ավերվել է ասպարակությունների ու օտար փրհապետությունների շրջանում, սակայն կրկին ու կրկին վերաշինվել է ջանքերով, սիրով ու նվիրումով հավաքավոր հայորդյաց: Գոհություն Աստծո, չի նվազել հայորդյաց հոգուց այդ սերն ու նվիրումը, և այսօր հայոց պետականության հովանու ներքո կրկին նորոգվում են մեր վանքերն ու եկեղեցիները, որպեսզի հայրենի մեր հողում զարթոյալ ու զորացալ մնա հավաքը և անպակաս՝ Աստծո օրհնությունը»,- ասված է Հայրապետական խոսքում:

Ներկաներին այնուհետև ողջույնի խոսք ասաց Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանը:

Գիտաժողովի երկու նիստերի ընթացքում կարդացվեցին հետևյալ գեկուցումները.

«Կեցառիսի վանքի ճարտարապետությունը» (Ճարտարապետության դոկտոր Մուրադ Նսարայան), «Կեցառիսի վանքի եիմնադիր Գրիգոր Ապիրատ Մագիստրոս» (Պատմ. գիտ. թեկն. Կարեն Մաթևոսյան), «Կեցառիսի վանքը և Պռոշյանները» (Պատմ. գիտ. դոկտ. Նայրապետ Մառգարյան), «Կեցառիսի վիմակալ արձանագրությունները» (Պատմ. գիտ. թեկն. Գուգիկ Սարգսյան), «Կեցառիսի մասին եղած ժողովրդական ավանդությունները» (Զուրաբյան. գիտ. թեկն. Վարդան Դերիկյան), «Կեցառիսի նվիրատուները» (Պատմ. գիտ. թեկն. Գնել Գրիգորյան), «Կեցառիսի գրքության կենտրոնը» (Պատմ. գիտ. թեկն. Արվեստիկ Ղազարոսյան), «Հոգևոր փառքերը և դրանց մեղեդիները» (Պրոֆեսոր Լուրեն Պալյան), «Խաչատուր Կեցառեցու փնդը հայ միջնադարյան գրականության մեջ» (Բանասիր. գիտ. դոկտ. Անիտա Դուրխանյան), «Կուրալքի թեմը և Կեցառիսի վանքն այսօր» (Հարություն Նարությունյան), «Կեցառիսի համալիրի փարսանքի ամբողջացման առաջարկ» (Մանուկ Մանուկյան):

Գլխավորումը ընթացքում փնդի ունեցավ նաև «Կեցառիս-1000» գրքի շնորհանդեսը: Գրքում ամփոփ կերպով ներկայացված է նշանավոր վանական համալիրի պատմությունը, ճարտարապետությունը, նրա մասին եղած ժողովրդական ավանդությունները և ժամանակագրությունը:

Սեպտեմբերի 19-ին, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Կեցառիսի վանական համալիրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մատուցվեց հանդիսավոր Ս. Պատարագ: Պատարագիցն էր Կուրալքի թեմի առաջնորդ Ս. Առաքել եպիսկոպոս Բարամյանը: Իր քարոզում Սրբազան Հայրը նս մեկ անգամ անդրադարձավ Կեցառիսի վանական համալիրի հարուստ պատմությանն ու այն նվիրյալ եկեղեցականներին, որոնք շնորհիվ վանքը ծաղկել ու գոյարևել է մինչև մեր օրերը:

Այնուհետև ներկաներին իր օրհնությունը բաշխեց Նորին Սրբությունը: Ողջունելով եկեղեցում հավաքված բազում ուխտավոր հավատացյալներին, եկեղեցու բարերար Վլադիմիր Նարությունյանին ու պաշտոնապար անձանց՝ Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ Հայոց աշխարհում սկսված հոգևոր վերագարթոնքը պիտի ավելի ծաղկի ու գորանա՝ պարգևելով բազում բարի գործեր:

«Մենք հավատում ենք, որ պիտի թոթափվի մեր ժողովրդի գավակաց հոգիներից անհավատության ծանր բեռը, և այսպիսի հոբելյաններն իրական փոխադրություն պիտի լինեն ոչ միայն փվյալ բնակավայրի, այլ նաև այս ողջ փարածաշրջանի համար: Տոն պիտի լինի, խնդություն և գոհաբանական աղոթքների հորդում հայոց հոգիներից: Գոհաբանական աղոթք, որ Տեղը միշտ անշարժ է պահել ու պահպանել իր եկեղեցին, պարգևել է հավատավոր ազնիվ բարերարներ, որոնք առ Աստված ունեցած իրենց սիրտ, նվիրումի գործությամբ վերափոխել կյանք են պարգևում խոնարհված մեր վանքերին ու եկեղեցիներին: Մենք հավատում ենք, որ մեր ժողովրդի գավակույն պիտի շարունակեն իրենց հավատարիմ ընթացքը՝ ապավինած Աստծուն, և պիտի անաղարտ պահեն իրենց հայրերի սուրբ հավատքը: Եվ այդ հավատքով էլ իրենց կյանքից ներս պիտի առաքացնեն բարի գործերը, որպեսզի շենանա հայրենին մեր, գորանա ու պայծառանա Եկեղեցին Հայոց», - նշեց Հայոց Հայրապետը:



ԿԵՇԻՍԻՄ 1000-ՄԱՅՈՒՆԱԿԻ ԱՌԻՍՏՈՐԱՆԻ ՄԱՍԻՆԱՐԿԻ ՄԱՍԻՆԱՐԿԻ ՄԱՍԻՆԱՐԿԻ ՄԱՍԻՆԱՐԿԻ
ԻՐ ՊԱՏԵՐԱՆԻ ԵՎ ԻՐ ՄԱՍԻՆԱՐԿԻ



Ս. ԴԱՐՄԱՐԱՊԵՏԻ ԸՆԺԱՅՁՈՒՄ



Պատկերում ցուցված է Սուրբ Եղիշի եկեղեցու շուրջը հավաքված մեծ ժողովուրդը։

Գարեգին Բ Նայրապետը, ի գնահատություն Վլադիմիր Նարությունյանի եկեղեցանվեր գործունեության, նրա կտրծը զարդարեց հորեկանական պատվո նշանով:

Ս. Պապարագից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ մատաղօրհներ և տոնախմբություն՝ մասնակցությամբ Կոտայքի մարզի մշակութային օջախներում գործող երգի ու պարի խմբերի, «Սաղմոս» երգչախմբի ու մենակատար Աննա Մայիլյանի: Ի շարս այլ ելույթների, ներկաներին իր խոսքն ուղղեց նաև բարերար Վլադիմիր Նարությունյանը: Նա նախ երախարագիությամբ հիշեց հոգևույթ Գարեգին Ը Նայրապետին, ապա իր շնորհակալությունը հայտնեց Գարեգին Բ Կաթողիկոսին, ռվբեր ներշնչեցին և աջակցեցին՝ իրականություն դարձնելու Կեչառիսի վանական համալիրի վերանորոգումը:

«Ես հաճախ եմ խորհում, թե ինչպես է Կեչառիսի բախար կրկնում հայ ժողովրդինը: Ձեռակներս ու հրաշալի այս եկեղեցին, որ բազմիցս ավերվել է ու բանդվել բարբարոսների կողմից, և ժամանակն ու բնությունն էլ այնքան բաբայացակամ չեն եղել նրա նկատմամբ, 1000 տարիներ հետո էլ հպարտորեն կանգնած է նույն տեղում՝ իբրև առհավարչա մեր ժողովրդի աննկուն ոգու և ամենազոր ապացույցը Աստծո գոյության», - նշեց բարերարը:

Նանդիսությանը մասնակցում էին մարզային և բաղաբային իշխանությունների ներկայացուցիչներ, բազմաթիվ հավաքացյալներ, ինչպես նաև ռխարավորներ Նարավային Ռուսաստանից:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԱ ԷԶՄԻԱՄԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

«ՀԱՅ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՎ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆՈՒՄ

Մեպրեմբերի 22-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, հայոց գրերի 1600-ամյակի պանծալի հոբելյանի շրջանակներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեկնարկեց «Հայ մեկնողական գրականության դպրոցները» թեմայով գիտաժողովը, որին մասնակցում էին ինչպես հայաստանից, այնպես էլ արտերկրից հրավիրյալ շուրջ 25 գիտության մշակներ:

Գիտաժողովը բացեց Մայր Աթոռի Գարեգին Ա աստվածաբանական-հայագիտական կենտրոնի փնտրեն Ազատ Բոգոյանը: Նա, անդրադառնալով հայ մեկնողական գրականության պատմությանը, հատկապես շեշտեց մեկնողական երկերի տպագրության կարևորությունն ու գիտական լայն շրջանակներին ներկայացնելու անհրաժեշտությունը: Այնուհետև ներկաներին իր օրհնությունը բաշխեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը: Վեհապառ հայրապետը, ողջունելով գիտաժողովի մասնակիցներին, հույս հայտնեց, որ այն պիտի գա լրացնելու այն բացը, որն առկա է մեկնաբանական գրականության ասպարեզում շարքերին հաղորդ դարձնելով մեր նախնյաց հայրուստ ժառանգությանը:

«Մեր պատմության բացառիկ և հերոսական երևույթներից է, որ հաճախ դժվարին պայմաններում, օտարների լծի տակ, նեղությունների ու հալածանքների մեջ հայ միություններ է բարձրանում ժամանակի սահմաններից ու թևածելով աստվածային ուժերներում ծնունդ է տալիս այնպիսի հիասքանչ ստեղծագործությունների, որոնք կենարար լույսով ոռոգում են ամ Աստված տնայացող հոգիները հավատարմության: Արդի ժամանակներում, երբ լայն տարածում գտած քրիստոնեական տարբեր ուղղություններ աստվածաշնչյան սեփական մեկնություններն են փորձում արմատավորել հասարակության մեջ, առավել քան կարևոր է Սուրբ Հոգու ներշնչմամբ գրված եկեղեցական հեղինակների սուրբգրային մեկնությունների վերհանումն ու վերաթմբկորումը մեր կյանքից ներս: ...Ներկա գիտաժողովը, լիափությա ենք, պիտի լինի մեկնողական գրականության հանգամանալից ուսումնասիրման այն գեղեցիկ սկիզբը, որով մեր անցնափայտի արժեքները պիտի մատուցվեն և ճանաչելի դառնան ամենքին՝ հոգևոր իմաստության, հավաքի ու նվիրումի լույսը սփռելով մարդկային հոգիներում»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Այնուհետև տեղի ունեցավ «Աստվածաշնչի գրքերի հայ մեկնությունների գրադարան» մատենաշարով հրատարակված երկու հատորների շնորհանդեսը: Մատենաշարի գլխավոր խմբագիր Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը խոսեց մատենաշարի որդեգրած սկզբունքների և նշանակության մասին՝ ընդգծելով հայ իրականության մեջ ստեղծված սուրբգրային մեկնությունների տպագրության անհրաժեշտությունը համաքրիստոնեական և համաշխարհային մշակույթի տեսանկյունից, որը կոչված է բավարարելու հայ քրիստոնյայի հոգևոր պետքերը՝ հաղորդ դարձնելով նրան մեր Եկեղեցու հայրերի եղբշահ գրվածքներին:

Այնուհետև գիտաժողովի առաջին «Հայ մեկնողական գրականության համաքրիստոնեական ակունքները» խորագրված նիստում, որը նախագահում էր Կենտրոնական Եվրո-



ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՍՅՈՒՄ



הקבוצה בפני כניסת בית הכנסת, יום חנוכה, תשס"ב



պայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը, կարդացվեցին հետևյալ զեկուցումները. «Աստվածաշնչի այլաբանական մեկնության նախահայերը, Փիլոն Ալեքսանդրացին և իր նախորդները» (Աբրահամ Տեղյան՝ Նյու Յորքի Ս. Ներսես Հոգևոր ճեմարան), «Մեկնությունները միջնադարյան վրացական թարգմանություններում» (Էդուարդ Խինթիբիձև՝ Թբիլիսիի Պետական Համալսարան), «Արիստոտելի «Ցաղագս աշխարհի» գործի հայերեն թարգմանությունը և մեկնությունները» (Գայանե Պողոսյան՝ Երևանի Պետական Համալսարան):

Երկրորդ՝ «Ծեսը և նվիրապետական համակարգը մեկնություններում» նիստում, որը նախագահում էր Պարույր Մուրադյանը, կարդացվեցին «Առաքյալների համապատվության Սուրբգրային վկայությունների Միխայիլ Ալեքսանդր Մեկնաբանությունները» (Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյան՝ Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ), «Կեղծ Դիոնիսիոս Արեոպագոսի հայերեն մեկնությունները» (Մերջիո Լա Պորտա՝ Էրոսադեմի համալսարան), «Կանոնական իրավունքը մեկնողական գրականության Կոնստանդնուպոլսի ինստիտուտ», «Տրդատը բնականաբար Կոստանդնուպոլսից առաջ Լ» (Մաքսիմ Եվադյան՝ Ֆրանսիայի Էքս Ան Պրովանսի համալսարան) զեկուցումները:

Երրորդ՝ «Աշխարհի ճանաչողությունը մեկնություններում» նիստում, որը ղեկավարում էր Արվեստագիտության դոկտոր Վիգեն Ղազարյանը, կարդացվեցին հետևյալ զեկուցումները. «Թարգմանական խնդիրներ» (Տ. Եզնիկ նախկոպոս Պետրոսյան՝ Մայր Աթոռի Միջնեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու), «Գրիգոր Նյուսացու բնափիլիսոփայական և բժշկագիտական հայացքները «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքում» (Սյունյա Վարդանյան՝ Մաշտոցի անվան Մատենադարան), ««Գիրք պատճառաց» ժողովածուի միջնադարյան մեկնությունների հանրագիտարան» (Էռնես Շիրիկյան՝ Մաշտոցի անվան Մատենադարան), «Գրիգոր Տաթևացու «Երգ երգոցի մեկնությունը» (Լիլիթ Հովսեփյան՝ Երևանի մանկավարժական համալսարան):

Հաջորդ օրվա՝ սեպտեմբերի 23-ի առաջին «Աստվածաշունչը և մեկնողական գրականությունը» նիստում, որ վարում էր Տ. Եզնիկ նախկոպոս Պետրոսյանը, կարդացվեցին հետևյալ զեկուցումները. «Լուծմունք կամ սուրբգրային պոեզիա. չափածո մեկնությունները Աստվածաշնչի հայկական թարգմանության գրքերում» (Զրիստիան Հաննիկ՝ Գերմանիա, Վյուրցբուրգի համալսարան), «Դիտարկումներ ավանդաբար Ս. Մեսրոպին վերագրվող Ավետարանի շուրջ» (Պարույր Մուրադյան՝ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Տերունական աղոթքի մեկնությունն ըստ Ս. Գրիգոր Տաթևացու և Օգոստինոս Երանելու» (Արթուր Մաթևոսյան՝ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ), «Հայ մեկնողական գրականության աղբյուրները» (Արմեն Տեր-Սրենիանյան՝ Մաշտոցի անվան Մատենադարան), «Գրացի համալսարանի գրադարանի հմր. 2058 մատյանը» (Էրիխ Ռենար՝ Ավստրիա, Գրացի համալսարան):

Օրվա երկրորդ՝ «Հայ մեկնողական գրականության առանձնահատկությունները» նիստը, որը նախագահում էր Աբրահամ Տեղյանը, կարդացվեցին հետևյալ զեկուցումները. «Բարոյախոս ժողովածու» (Գոհար Մուրադյան՝ Մաշտոցի անվան Մատենադարան), «Մարդեղությունը վերաբերվող հասկացությունները Եղիշեի երկում» (Ն. Ռիկարդո Պանն՝

Իգրալիա, Բոլոնիայի համալսարան), «Թուրք առ Ողիմպիական» որպես մեկնողական ծրագիր և նրա հայերեն թարգմանությունը» (Օլգա Վարդազարյան՝ Երևանի Պետական համալսարան), «Ոչ ծուկ, ոչ էլ թեզոն, նոր հայացք ավանդաբար Գրիգոր Արշարունու վերացրվող հյուրեղ երուսաղեմացու Մեծ Պառքի հարցումն-պատասխանի ճառերի հայկական մեկնաբանության» (Պիպեր Բաու՝ ԱՄՆ Կալիֆոռնիայի համալսարան):

Օրվա երրորդ «Մեկնությունը՝ դարաշրջանի պատմության հայելի» նիստը, որը վարում էր Ջոնստրիան Հաննիկը, կարդացվեցին հեղինակ գեկուցումները, «Ը-ԺԲ դարերի քրեանցույցի աուրացումը ծիսական ժողովածուներում և մեկնողական գրականությունում» (Ն. Շառլ Ուոլո՝ Ֆրանսիա, Ան Կակայի վանք), «Կաթոլիկների «Ընդդեմ հայոց գործերը ԺԴ դարի կեսերին»» (Կոլո Մուրաֆյան՝ Փարիզի ԺԳ համալսարան), «Դարաշրջանի իմաստասիրությունը Խոսրով Անձևացու և Գրիգոր Նարեկացու մեկնողական երկերում» (Վրեմ Վարդանյան՝ ԳԱԱ Պատմության ինստիտուտ), «Ներույանները, Մանսելները և «Անտիոքի Ասիկների» հարմարեցումը հայկական միջավայրին» (Ժիրայր Աեղեյան՝ Ֆրանսիա, Մոնպելիեի համալսարան):

Մեպրեմբերի 24-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատանը քեղի ունեցավ «Հայ մեկնողական գրականության դպրոցները» գիտաժողովի եզրափակիչ նիստը:

Ժողովականներին Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ընդունեց Արագածուրի թեմում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Թորգոմ արք. Տոնիկյանը: Հայր Սուրբը, բարի գալուստ մաղթելով գիտաժողովի մասնակիցներին, պատահական չհամարեց, որ եզրափակիչ նիստը քեղի է ունենում հենց Օշականում, ուր ամփոփված է առաջին հայ ուսուցչի՝ երանելի Ս. Մեսրոպ Մաշտոցի մարմինը: Նա, հայցելով Ս. Մեսրոպի բարեխոսությունն ամենքի համար, բարի աշխատանք մաղթեց գիտաժողովի մասնակիցներին:

Ժողովականներն իրենց խոնարհումը բերեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրմին՝ ուխտելով հավատարիմ մնալ Ս. Մեսրոպի և նրա աշակերտների աննկուն ոգուն:

Օշականում քեղի ունեցած «Մեկնությունը և հայ մշակույթը» նիստի ընթացքում, որը վարում էր պատմական գիտությունների դոկտոր Ազատ Բոգդյանը, կարդացվեցին հեղինակ գեկուցումները, «Կենդանիների պատկերացությունը «Խորանների մեկնություններում»» (Վիգեն Ղազարյան՝ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ), «Հայապատ թուրքերեն մեկնողական գրականությունը» (Հասմիկ Ստեփանյան՝ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ), «Ձեռագրագիտական ընդհանրությունները հայկական և սլավոնական ձեռագրերում» (Ալեքսանդր Կուրովա՝ Մոսկվայի Իվան Դուլչև կենտրոն), «Պաշտպանի կաթողիկոս-թարգմանիչների դպրոցը» (Իգաբել Օմե՝ Ֆրանսիա, Մոնպելիեի համալսարան):

Եզրափակիչ նիստի ընթացքում լսվեցին գեկուցումներ «Կենդանիների պատկերացությունը «Խորանների մեկնություններում»», «Հայապատ թուրքերեն մեկնողական գրականությունը», «Գրագիտական նույնությունները հայկական և սլավոնական ձեռագրերում» և «Պաշտպանի կաթողիկոս-թարգմանիչների դպրոցը» թեմաներով: Զեկուցումների ավարտից հետո ներկաներն ամփոփեցին գիտաժողովի արդյունքները՝ կարևորելով մեր նախնայաց թողած հսկայական ժառանգության ուսումնասիրության անհրաժեշտությունը և գրական եռաշարձանների տպագրությունը:

Նիստի ավարտին գիտաժողովի մասնակիցներն այցելեցին Սաղմոսավանք:

Երեկոյան գիտաժողովի մասնակիցներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ն.Ս.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Մայր Աթոռի Գարեգին Ա աստվածաբանական-հայագիտական կենտրոնի փնտրեն Ազատ Բոգոյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց գիտաժողովի ընթացքն ու արդյունքները:

Նորին Սրբությունը, ռդջունելով գիտաժողովի մասնակիցներին, իր ուրախությունը հայտնեց, որ այն փեղի ունեցավ հայոց գրերի 1600-ամյակի պանծալի հոբելյանի շրջանակներում և հարկապես Ս. Էջմիածնում, ուր անցած դարասկզբին Մայր Աթոռի մի շարք միաբանների շնորհիվ ծաղկում էր ապրում հայագիտությունը: Հայոց Հայրապետը ներկա գիտնականներին ներկայացրեց Հայ Առաքելական Եկեղեցու առաջ ծառացած խնդիրները: Նա հույս հայտնեց, որ եկեղեցականաց նոր սերունդն առավել նախանձախնդիր պիտի լինի մեր նախնյաց ժառանգության ուսումնասիրությանը, վեր հանմանն ու ընթերցողների լայն շրջանակներին ներկայացմանը:

Իրենց հերթին ներկաները շնորհակալություն հայտնեցին Վեհափառին գիտաժողովի կազմակերպման համար՝ հույս հայտնելով, որ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր Ս. Էջմիածինն իր շուրջը պիտի համախմբի գիտնականներին:

**ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ**

ԵՊԻՄԿՈՊՈՍԵԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆՈՒՄ

Մույն թվականի սեպտեմբերի 26-ին՝ Վարազա Սուրբ Խաչի տոնին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի, տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրության ակտը: Հրեթաց Ս. Պապարագի ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում ստացավ Մայր Աթոռի գլխավորապետ Հոգեշնորհ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը:

Ըստ Հայաստանյայց Եկեղեցու առաքելականության կանոնադրության՝ դնոն նախորդ օրը հանդիսավոր կերպով կատարվեց ընծայացու վարդապետի երդման արարողությունը: Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի, Տ. Նավասարդ եպիսկոպոս Կոնյանի և Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի վկայությամբ Հոգեշնորհ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը «ի ծունրս առաջի եկեալ» Իջման Ս. Սեդանի առջև ընթերցեց եռամեն վարդապետ Գրիգոր Տաթևացու սահմանած երդմագիրը, որի տակ ի վկայություն ընծայացուի հոգևոր պարտատարականության՝ սրբորգրեցին վերոհիշյալ եպիսկոպոսները:

Հաջորդ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Մայր Տաճարի զանգերի քաղցրալուր դողանքներն ազդարարեցին Ս. Պապարագի սկիզբը և շքեղազարդ թափորը Վեհափառ Հայրապետի հանդիսավորությամբ Վեհարանից շարժվեց դեպի Մայր Տաճար: Թափորը Վեհափառ Հայրապետի հանդիսավորությամբ, «Հրաշափառ Աստուած» շարականի երգեցողությամբ մոտեցավ Ս. Սրբիանոսի Խորանին, որտեղ կատարվում է եպիսկոպոսական ձեռնադրության առաջին մասը, ուր Նորին Սրբությունն ունկնդիր է լինում «համօրէն ուխտի» վկայություններին:

Խաղաղափյալ Գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի «հրամայեա Տէր» երաժանության հետ պարարագիչ Հայրապետին մոտեցան Հայ Եկեղեցու նվիրապետական կառույցի ներկայացուցիչները՝ դոնականներ, քահանայներ, սաղմոսասացներ, սարկավագներ, քահանաներ: Հնուց եկող ավանդույթով ձևավորված կանոնով՝ եպիսկոպոս ձեռնադրվողի համար վկայություն են տալիս խորհրդանշական կերպով ժողովրդի երկու դասերը՝ ներկայացնող ե իշխանք ու ուսմիկք անվանվող ներկայացուցիչները: Առաջին դասը ներկայացնում էին ամբիկլահայ ճանաչված բարերար Վահագն Հովնանյանը և կանադահայ ազգայիններից Գարեգին Օդաբաշյանը, իսկ երկրորդ դասը՝ «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Վարդան Դերիկյանը և ՀԷԿԼՕՖ բարեսիրական փոխարկական հիմնադրամի փնթոն Տիգրան Հովհաննիսյանը:

Այս ամենից հետո ընծայացու եպիսկոպոսն աղոթասացություններով և սաղմոսերգությամբ ծնրադիր առաջնորդվեց Ս. Սրբիանոսի Խորան, ուր Նորին Սրբությունն ընծայացուի հավատքի քննության կարգը կատարելով՝ երան նախ շնորհեց եպիսկոպոսական եմփիորներ: Այնուհետև Ս. Պապարագը շարունակվեց Մայր Տաճարի Ավագ Խորանին: Ընծայացուն ծնկաչոք դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը, վեր բարձրացրեց ձեռքերը՝ ի նշան բուրբանվոր ծառայության: Ձեռնադրող Հայրապետը «Տէր Աստուած մեր» աղոթքի ընթերցանությամբ մյուռնառած աջով ձեռնադրեց ընծայացուին:



ՎԵՐԱՄԱՂՈՒԹՅԱՆ ԸՆԾԱՐԱԿԱՆ



ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕԾՈՒՄ Է ԱՐԵԱԿ ՍՐԲԱԶԱՆԻ ՃԱԿԱՏԸ





ՎԵՐԱԺԱՆԻ ԴԱՅՐԱՊԵՏԸ ԵՊԻՍԿՈՊՈՍՍԱՆ ԳԱԿԱՓԵՆ Է ՇԵՈՐՀՈՒՄ
ՆՈՐ ՔԵՈՆԱՂԻՎԱՅԻ ՄԻՇՆԿ ՄԻՔԱՋԱՆԻՆ

Մոտենցավ ձեռնադրության արարողության ամենախորհրդավոր պահը: Նախ նորընծա եպիսկոպոսը «Աստուածային և երկնաւոր շնորհ» հոգնպարար շարականի հնչյունների ներքո «գծեռս ի վեր առեալ» դարձավ արևմուտք՝ ի հրաժարումն աշխարհական կյանքից, և ապա Ազգիս Շնորհազարդ Հայրապետը Սրբայույս Մշտոնով օծեց նվիրյալի ճակատը և այդ ձեռքի բութ մասը: Այդ ընթացքում դարաց դասի հիասթանչ կատարմամբ հնչում էր «Օծում, գոր հեղեր...» շարականը: Նորին Սրբությունը նորածն եպիսկոպոսին հանձնեց եպիսկոպոսական գավազան և մատանի:

Հավարտ ձեռնադրության նորածն Արշակ եպիսկոպոսին հայրապետական իր պատգամն ու օրհնությունը ուղղեց Նորին Սրբությունը:

ԳՄԲԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

«Առ զխաչ քո և ևկ զկնի իմ»:

(Մարկ. Ժ 21)

«Յանուն Հօր ևս Որդոյ ևս Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, այսօր նվիրական տոնն է Վարագա Սուրբ Խաչի: Մեր հոգիներում վերստին բարձրացնում ու փառարանում ենք մեր Տիրոջ Մուրբ Խաչը, որով ունենք փրկություն ու կյանք:

Քրիստոսի Խաչափայտի մասունքը, որը Սուրբ Հռիփսիմեն բերեց Հայաստան, դարեր անց հայտնվեց աղոթասեր ճգնակյացներին, և հասարակելեց Վարագա Սուրբ Խաչի հիշատակը մեր Եկեղեցում: Վարագա Խաչի ճանապարհը մեր ժողովուրդը դարձրեց ուխտավորի ճանապարհ, քանզի Խաչի խորհրդի մեջ գրել էր իր հոգու յույսը, իր կյանքի սերն ու գործությունը: «Առ զխաչ քո և ևկ զկնի իմ» Տերունական պարմիրանին միշտ հավատարիմ եղավ մեր ժողովուրդը, և Խաչը յուսավորեց պարմության մեջ երա դժվարին ուղին:

Խաչի տոնի խորհուրդը, սիրելի բարեպաշտ հավատացյալներ, հրավեր է հավաքելի ու նվիրումի գորացման, հրավեր՝ ծառայական մեր ուխտի նորոգության ամսավաճ և ամ Եկեղեցին Հայաստանյայց: Մեզ համար մեծ մխիթարություն է, որ Վարագա Սուրբ Խաչի տոնի ուրախությանն այսօր գումարվում է եպիսկոպոսական ձեռնադրության ուրախությունը: Սուրբ Խաչի տոնի յուսափայլ ու հաղթական խորհրդի հետ միաշաղախ Միաձնաէջ մեր Մայր Տաճարում ձեր աղոթքների ուղեկցությամբ կարարեցինք եպիսկոպոսական ձեռնադրություն՝ եկեղեցական բարձր իշխանության հետ ամալել ծառայության կոչելով մեր Եկեղեցու նորածն եպիսկոպոսին: Փառք Տիրոջը, որ հաղթական ու պայծառ է մեր բազմադարյա Սուրբ Եկեղեցին և այսօր վերածայնում է իր սպասավորին: «Առ զխաչ և ևկ զկնի իմ»: Հիրավի, յուրաքանչյուր ձեռնադրություն հոգեզալուստ է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու կյանքում և շնորհաց հեղում «ի շինութիւն ևս ի բարեկարգութիւն Սրբոյ Եկեղեցոյս մերոյ»:

Մեր հայրերը պանծալի և գերահեծակ հանդես են անվանել եպիսկոպոսական ձեռնադրության արարողությունը, քանզի եպիսկոպոսն առաքելական հաջորդությամբ կոչված է վերակացուն և փեսույն լինելու եկեղեցու և քաջամարտիկ ջախջախյալ ուղղափառ դավանության՝ համաձայն մարգարեի խոսքի. «Որդի մարդոյ, դէտ կացուցի քեզ ի վերայ ժողովրդեանս» (հմմտ. Եզեկ. Գ 17): Կոչված է եկեղեցական բարձր իշխանությամբ, մաքուր վարքով, անբիծ հավատքով, անկաշառությամբ հովհելու քանավոր իր հօրը:

Ամեն անգամ, երբ հոգևոր, առավել ևս եպիսկոպոսական աստիճանի շնորհմամբ եկեղեցական ենք ծառայության կոչում հոգևոր մեր անդաստանից ներս, մխիթարությամբ գգում ենք Տիրոջ գորակցությունը Մեզ, քանզի ականապես ենք մեր եկեղեցվո նոր զարթոնքին և հավատում ենք, որ Սուրբ Էջմիածնի Մյուռոնով դրոշմված նվիրյալ հոգիներ պիտի լծվեն Սուրբ Էջմիածնի շինությանն ու պայծառությանը, հավատում ենք, որ Սրբալույս Մյուռոնով օծումը նոր կորով, նոր եղանդ ու քաջամարտություն պիտի պարգևի ընծայալին:

Սիրելի քարեպաշտ հավատացյալներ, այսօր եպիսկոպոսական իշխանության ծանր, պատասխանապարհ, բայց և քաղցր լուծը կրելու կոչվեց Գևրաշնորհ Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Արշակ եպիսկոպոսը ծնվել է Հայաստանում՝ Ոսկեհար գյուղում, միջնակարգ կրթությունը գյուղի դպրոցում ստանալուց հետո՝ ուսանել է Էջմիածնի Հոգևոր ճեմարանում: Գերազանց առաջադիմությամբ ավարտելով ճեմարանը, 1997 թ. ձեռամբ հոգեւորյւյս Ս. Զավեն արքեպիսկոպոս Չինչիւնյանի սպաքել է կուսակրոն քահանայության աստիճան: Եղել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիրը, վարել է այլ պաշտոններ և 2001 թ. ի վեր Հայրապետական մեր փնտրիչությամբ իրականացնում է Մայր Աթոռի Դիվանապետի պարականությունները: Նույն տարում Արշակ եպիսկոպոսին շնորհվել են մասնավոր վարդապետության չորս աստիճանները: Գևրաշնորհ Ս. Արշակ եպիսկոպոսը ներկայացնում է Առաքելական մեր Սուրբ եկեղեցին ՀՀ Ազգային ժողովում որպես ներկայացուցիչը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Սրբազանին Մենք առավել ճանաչեցինք Մայր Աթոռի Դիվանապետի պաշտոնում վերջին չորս տարիներին նրա արդյունաշատ ծառայության ընթացքում: Մենք բարձր ենք գնահատում Առաքելական մեր Սուրբ եկեղեցու և Սուրբ Էջմիածնի հանդեպ Սրբազանի որդիական նվիրումն ու նախանձախնդրությունը, ռոնքը, վստահ ենք, առավել ևս պիտի գործնան շնորհաբաշխ այս ձեռնադրությամբ: Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված, որ Տերը օրինի և առաջնորդի Սրբազանին իր ծառայության ճանապարհին, պարգևի երկնային իմաստություն, որպեսզի կարողանա իր կյանքը ապրել և փառավորել քարի ու ագնիի, հայրենաշեն ու եկեղեցաշեն իրագործումներով:

Սիրելի հայրադիներ, այսօր մեր հիշողության մեջ արթնանում են այն խոսքերը, որ քսանմեկ տարիներ առաջ սրբազնասուրբ այս խորանի վրա Մեր եպիսկոպոսական ձեռնադրության առիթով արտասանեց երջանկահիշատակ Վազգեն Առաջին Հայրապետը. «Սրբազան բառին դեռևս վարժված չեք դուք երևի,– ասաց,– բայց հաճելի է ինձ առաջին անգամ դիմել ձեզ Սրբազան իմաստալից բառով»: Այո՛, սիրելի Արշակ Սրբազան, հեղաշուր Դուք Սրբազան վսեմ կոչման կրողն եք լինելու, հե-

փնտրար Ձեր կյանքի ու ծառայագործության ճանապարհին պետք է լինեք իսկապես սուրբ և մաքուր ձեր մտածումներով, ձեր ապրումներով, ձեր աշխատանքով, ձեր ծառայությամբ՝ համաձայն Պողոս առաքյալի խոսքի. «Զի պարտ է նախկնպոսին անարուր լինել, որպես նույն (Աստուծոյ փնտրեսի, մի՛ յանդուգն, մի՛ քարկացող, մի՛ թշնամանող, մի՛ հարկանող, մի՛ գոշաբաղ, այլ հիւրասէր, րարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկա, վերակացու լինել, հաւատարիմ բանին վարդապետութեան, զի կարող իցէ և մխիթարել տղամարդկանք վարդապետութեանն եւ գիականակորցն կշտամբել» (Տիմոտե Ա 9): Արդարեւ, Պողոս առաքյալի պարզամի համաձայն, ով նախկնպոսության է ձգտում, ձգտում է բարի գործերի, որի լրումն է Տերունի հրավերը՝ ով կամենում է Իմ նրեից գալ, թող իր խաչը վերցնի և գա Իմ երեսից: Այս պարզամով և հորդորով հայցում ենք Բարձրալի հանապազ օրհնությունն ու գորակցությունը Ձեզ, որպեսզի հավատարիմ մնաք նախկնպոսական ձեր ուխտին, նույն նվիրումով ու նույն սիրով շարունակեք Ձեր բարի ծառայությունը բերել՝ ի պայծառություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Ձեռնադրության այս գեղեցիկ և ուրախ առիթով մենք շնորհավորում ենք մեր Եկեղեցու տղջ հոգևոր դասին, մեր րարեպաշտ հավատարացելոց և մագթում, որ Աստուծոյ շնորհակցութեամբ ձեր հոգևոր սպասավորներ, ովքեր պիտի գան իրենց կյանքով և գործով փառավորելու անունը Հոր, Որդու և Սուրբ Հոգու:

«Ողջ լեռուք ի Տէր, գօրացեալ շնորհօր Սուրբ Հոգոյն և յաւեր օրհնեալ ի մէնք, ամէն»:

Սուրբ Պատարագից հետո Մայր Աթոռի սեղանադանը հյուրերի և միաբանների մասնակցությամբ տեղի ունեցավ տոնական հյուրասիրություն, որի ընթացքում էլ Վեհափառ Հայրապետ Արշակ Սրբազանին հանձնեց նախկնպոսական պանակներ:

Ձեռնադրությանը ներկա էին մեծ թվով հավատարացյալներ, որոնց շարքում նաև՝ ճանաչված մտավորականներ, ակադեմիական և համալսարանական գիտնականներ ու դասախոսներ, Ազգային Ժողովի պարզամավորներ, սփյուռքահայ ազգային-հասարակական գործիչներ և բարերարներ:

Գևորգյան Հոգևոր ճեմարանի տեսչությունը և ուսանողությունն ի խորոց սրտի շնորհավորում են Գերաշնորհ Տ. Արշակ նախկնպոս Նաչապրդանին՝ մաղթելով հոգևոր ծառայության ընթացքում նորանոր ձեռքբերումներ և նվաճումներ: Թող Աստուծոյ Հովանի Աջը պաշի և պահպանի Հայ Եկեղեցու նվիրյալ սպասավորին՝ պարգևելով քաջամտոջություն և երկար րարիների կյանք:

ՎԱՅԿ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԽՍԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ - «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը և շնորհավորում է ամսագրի նախկին խմբագիր Տ. Արշակ նախկնպոս Նաչապրդդանին նախկնպոսական ձեռնադրության առիթով՝ ուրախ լինելով, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն Արշակ Սրբազանն իրեն բնորոշ կորովով ու նվիրումով այսուհետև ծառայելու է նախկնպոսական բարձր աստիճանով և իշխանությամբ:



Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՄԿՈՂՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը (ավագանի անունով՝ Սամվել) ծնվել է 1973 թ. օգոստոսի 5-ին Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում:

1980-1990 թթ. ուսանել է փեղի միջնակարգ դպրոցում:

1990 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1996 թ. մայիսի 19-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպ. Արաբաջյանի:

1996 թ. ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը:

1997 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Նդիկահայ գաղութը և Մայր Աթոռի նվիրակությունը Հնդկաստանում» թեմայով՝ արժանանալով «գերագանց» գնահատականի:

1996-1997 թթ. աշխատել է Վեհարանում որպես քարտուղար:

1997 թ. դեկտեմբերի 14-ին, ձեռամբ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1998 թ. նշանակվել է Մայր Աթոռի պարեպ:

1999 թ. մարտին Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի կողմից ծառայության է կոչվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի խմբագրությունում որպես գլխավոր խմբագրի պաշտոնակատար:

2000 թ. հունվարին նորընտիր Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փնօրինությամբ նշանակվել է նորաստեղծ «Մայր Աթոռ - Թեմեր» գրասենյակի վարիչ-փնօրին:

2001 թ. հունվարին Հայրապետական փնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռ Ա. Էջմիածնի դիվանապետ:

2001 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Նվիրակությունը Հայոց Էկեղեցում» թեմայով: Նույն թվականի փետրվարի 22-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի, ստացել է մասնավոր վարդապետական չորս աստիճաններ:

2004 թ. ապրիլից Վեհափառ Հայրապետի փնտրիներով լսել է Մայր Աթոռի ներկայացուցիչն է ԱՇ Ազգային ժողովում:

2004 թ. օգոստոսին պաշտպանության է ներկայացրել «Եպիսկոպոսական իշխանությունը Հայոց Էկեղեցում» ծայրագույն վարդապետական թեզը:

2004 թ. սեպտեմբերի 26-ին, ձեռամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս:

ՔԱՆԱԿԱՅԱԿԱՆ ՉԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Քահանայից լսարանի առաջին հունձքը)

Հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում քեռի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Եկեղեցում չափազանց հանդիսավոր ու փոռական մթնոլորտ էր: Քահանայական ձեռնադրություն և օծում էին ստանում 19 սարկավազներ: Նրանցից 12-ը քահանայից պատրաստման լսարանի առաջին շրջանավարտներն էին: Նրանց հետ մեկտեղ քահանայական ծառայության կոչվեցին նաև Գևորգյան Հոգևոր ճեմարանն ավարտած յոթ սարկավազներ: Առաջին անգամ քահանայական ձեռնադրություն և օծում էր կատարում նաև Մայր Աթոռի դիվանապետ, նորած Տ. Արշակ եպս. խաչատրյանը:

Քահանայից պատրաստության առաջին լսարանը բազմեց ներկու փարի առաջ, Ամենայն հայոց հայրապետի տնօրինությամբ՝ հայ եկեղեցու սպասավորներ պատրաստելու նպատակով: Դիմորդները հայաստանի փարքեր շրջաններից ժամանած բարձրագույն կրթությամբ մասնագետներ էին, որոնք իրենց ծառայությունն էին կամեցել բերել հայաստանյայց Մայր եկեղեցուն: Եվ ահա, նրկամյա հոգևոր կրթություն ստանալուց հետո, նախկին շինարար-ճարտարագետը, ֆինանսիստը, նրկաբանը, հոգեբույժը, նրկափշտն ու մանկավարժը ստացան քահանայական կոչում:

Նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում կատարվեց նորընծաների ուղղափառ հավատքի հրապարակային քննություն: Նարկավիակները վկայեցին նորընծաների հոգևոր-իմացական պատրաստվածության և առժանիքների մասին, իսկ ընծայացուները միաբերան մերժեցին և նգովեցին հերերիկոսներին ու հերձվածողներին՝ ուխտելով հերերել սուրբ առաքյալների, նրանաշնորհ հայրապետների ու վարդապետների հավատքին՝ ի նշան իրենց ուղղափառ դավանության արտասանելով Ս. Գրիգոր Տաթևացու հեղինակած «Հավատամքը» և ուխտելով հավատարիմ մնալ հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Կիրակի, հրնթացս Ս. Պատարագի, 19 ուխտյալները սաղմոսների փոխստացության ներքո ծնկաչոք բարձրացան Ս. Խորան: Դառնալով դեպի հավատաքյալ ժողովուրդը՝ ընծայացուները բարձրացրին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման: Մեծ հանդիսավորությամբ Ս. Խորան բերվեց Սրբալույս Մյուռոնը, և ձեռնադրող Սրբազան հայրը մեկ առ մեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Արման սրկ. Սիմոնյանը վերակոչվեց Տ. Նորայր քահանա, Արթուր սրկ. Հովհաննիսյանը՝ Տ. Արիստակես քահանա, Հովհաննես սրկ. Բաղայանը՝ Տ. Վրթանես քահանա, Արարապ սրկ. Նուրիջանյանը՝ Տ. Հուսիկ քահանա, Արման սրկ. Շահնազարյանը՝ Տ. Ներսես քահանա, Մեեր սրկ. Ղաիրամանյանը՝ Տ. Գյուր քահանա, Հուսիկ սրկ. հայրապետյանը՝ Տ. Բաբկեն քահանա, Հովհաննես սրկ. Վահանյանը՝ Տ. Մուշե քահա-





הכנסייה הקתולית בירושלים, תמונה מאוסף התצלומים של מוזיאון תל אביב

ևա, Գազիկ սրկ. Բարայանը՝ Տ. Մաշտոց բահանա, Նայկ սրկ. Պեդրոսյանը՝ Տ. Ղազար բահանա, Արթուր սրկ. Սարգսյանը՝ Տ. Սմբատ բահանա, Արթուր սրկ. Դրավանցը՝ Տ. Մալթեոս բահանա, Արսայիկ սրկ. Մկրտչյանը՝ Տ. Մանուկ բահանա, Վահան սրկ. Անդրեասյանը՝ Տ. Թովմաս բահանա, Կառլեն սրկ. Ղազարյանը՝ Տ. Առաքել բահանա, Վլադիմիր սրկ. Գալստյանը՝ Տ. Եզնիկ բահանա, Գառնիկ սրկ. Առաքնյանը՝ Տ. Սիմոն բահանա, Նովիանենս սրկ. Սարգսյանը՝ Տ. Փափստոս բահանա, Վաչագան սրկ. Բարայանը՝ Տ. Անանիա բահանա: Պատարագիչ Սրբազան Նայրը նորածն բահանաներին փոխանցեց նաև Նաղորդության սկիզբ՝ երանց տալով պատարագելու և Տիրոջ մարմինն ու արյունը ժողովրդին բաշխելու իշխանությունը:

Ջահանայական օծումից հետո Սրբազան Նայրը հավոր պատրիարքի բարոց խոսեց՝ անդրադառնալով բահանայի առաքելությանը:

«Միշտիկ հավատացյալ քույրեր և եղբայրներ, այսօր բուցատիկ ուրախություն է Մուսրկյակյան մեր Սուրբ Եկեղեցուն, քանզի ամենքս՝ հոգևոր և աշխարհական դասով, Ամենայն Նայոց Նայրապետի հովանավոր աթի օրհնության են ելո, համախմբվել ենք Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունը կրող նվիրական և 1700-ամյակին ընծայված այս տաճարում, համախմբվել ենք կուրաբերելու, մասնակից լինելու մեր աղոթքներով ձեռնադրության արարողությանը՝ տասնհինգ եղբայրներ, Սասնիներ անձներ, ովքեր իրենց ուսումնասիրությունը Գևորգյան Հոգևոր Ճեմարանում և քահանայից պատրաստման յարարանում անցկեցրեցին՝ համաձայնություն դրսևորեցին, պատրաստակամություն ունեցան լծվելու այն առաքելությանը, իրենց անձների վրա կրելու այն կոչումը, որը սովանդվեց մեզ մեր Տեր Վստուքիստից և որը իրականացվեց, առաջ տարվեց մեր հայրերի կողմից:

Ահա այսօր՝ բուցատիկ ուրախության այս օրն անդրադառնում ենք Տիրոջ այն խոսքերին, որն արձանագրված է Ղուկասու Ավետարանի իններորդ գլխում՝ «Ոչ որ արևան է ձեռն զվաճով եւ հույիցի յերս»: («Ոչ որ չի կարող ձեռքը մաճին դնել և եր կայկ») (Ղուկ. Թ- 62): 17 դարեր առաջ, երբ քրիստոնեությունը պիտականորեն հաստատվեց մեր երկրում, նվիրական այս հողի վրա, և 20 դարեր առաջ, երբ տակավին նոր էր քրիստոնեությունը մուտք գործել մեր աշխարհ, մեր հայրերն, արձագանքելով Տիրոջ կոչին, դրեցին իրենց ձեռքը պատրաստակամորեն այն մաճին, որը կոչվում է ծառայության մաճ, որը կոչվում է սիրտ գերակայության, ծառայության գերակայության մաճ: Ահա այսօր նվիրական այդ շղթան շարունակվում է, և 20 դար անց, երբ մեր Եկեղեցին Նայրապետի եղբայրների համախմբության իրողությամբ նոր շունչ և նոր զարթոնք է սալրում, վերադին այդ առաքելությունը, այդ ծառայության մաճին ձեռքներն են դնում 19 երբ ընծայալ քահանա հայրեր:

Միշտիկ հոգևոր եղբայրներ, ընծայացունելու, այսօր գիրեն, թև որքան հուզումնալից է տրորիում ձեր սիրտը, և ինչ իդանքով ու նվիրական ապրումներով է հորդում ձեր աշյունը: Գիրեն, որքան սրադրաստակամ եք, գիրեն, հուզականության ջերմ զգացումով լցված եք ձեր ծառայությունը քերելու Նայրապետից Մուսրկյակյան Սուրբ Եկեղեցուն: Այս արարողության ընթացքում ընթերցեցինք աղոթք-

ներ, մատթանեցներ, որոնց հշմանակությունը և առանցքը մեկն է՝ ծառայություն և անմասնորոշ ծառայություն Տիրոջը և սրբազան մեր Եկեղեցուն:

Քրիստոնեությունը, քրիստոնեական ծառայությունը ծառայությունների մեջ թերևս այն միակն է, որ երկվություն չի հանդուրժում. միակն է, որ ասում է «Չեք կարող երկու տերերի ծառայել» (Մատթ. Զ 24): Քրիստոս երբ Իր աշակերտներին ուղարկեց, առաքեց ծառայագործության, ասաց. «Ձեզ հեպ մի վեցրդեք ոչ զաշխարհ և ոչ մահաւոր, ոչ հաց և ոչ սրծաք դրամ» (Ղուկ. Թ 3): Ուրեմն և մեր՝ հոգևորականներին առաջին առաքելությունը մեր ծառայության մեջ անմասնորոշ նվիրումն է մեր առաքելությանը, այն ծառայությանը, որը կոչված ենք իրականացնելու: Եվ վերադին մեր ծառայության համար անդրադարձնալով այն օրինակներին, որ Քրիստոս Իվեց մեզ, հիշենք, որ երբ Քրիստոս վերադին մեկնեց դեպի Սամարիա, որտեղից այնուհետև պետք է գնար Երուսաղեմ, ցանկացավ իջնանել սամարացիներից մեկի տանը, և սակայն երբ սամարացին իմացավ, որ Քրիստոս այնուհետև պետք է մեկնի Երուսաղեմ, դռները փակեց Նրա առջև և չթողեց, որ Քրիստոս իր աշակերտների հետ օթեանի իր տանը, իր բնակարանում:

Աշակերտները, ի պատասխան արձագանքելով անմիջապես, ասացին. «Տեր, եկ՝ երկնքից հրդեհ բերենք, կրակ բերենք և այս մարդկանց հրդեհենք, որովհետև իրենք չգիտեն, թե ում առջև են դուռը փակում»: Քրիստոս սակայն պատասխատում է «Ոչ, Մարդու Որդին չեկավ կորսարյան մարներու»՝ Մարդու Որդին չեկավ ավերելու, չեկավ ոչնչացնելու, այլ եկավ կառուցելու ու փրկելու: Եվ ահա երկրորդ մեր առաքելությունը, երկրորդ այն առաքելությունը, որին լծվելու եք դուք հետագայում մեր հոգևոր ծառայագործության ընթացքին, պետք է լինի ոչ թե քանդել, ոչ թե խռովություն սերմանել, այլ սեր քարոզել, կառուցել, քերմացնել՝ իրարից մերժված սրտերը, իրար մոտեցնել՝ չիանդորժող անձերին: Միս այս է լինելու մեր առաքելությունը, սիրելի եղբայրներ, մեր ծառայագործության, մեր քահանայագործության ընթացքին:

Եզրափակելով խոսքը՝ Սրբազան Հայրն ասաց. «Եվ մատթանքս է, որ մեր ժողովուրդը իրապես, որպես մեր կոչմանը արժանի հոգևորականների, ձեզ դիմի հենց այդպես»:

Ձեռնադրությունից հետո Ս. Խորան բարձրացան Վեհափառ Հայրապետը, Սրբազան Հայրերն ու միաբանները և, համբուրելով բախմանների Սրբալույս Մյուռոնով օծված ճակարներն ու ձեռքերը, շնորհավորեցին նրանց:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, կարարվեց նորած Ս. Նորայր բաժանայի վեղարի Գվջության և արեղայի օրհնության կարգը:



Տ. ՆՈՐԱՅՐ ԱՔԵՂԱ ԱՖՄՈՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Արման)

Ծնվել է 1980 թ. դեկտեմբերի 6-ին Էջմիածին քաղաքում:

1987-96 թթ. սովորել է Էջմիածնի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1996-97 թթ. սովորել է ավարել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1997-2003 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2003 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Աղամյանի, ստացել է սարկավագության աստիճան:

2003 թ. գործավար-քարտուղար և թարգմանիչ է աշխատել Մայր Աթոռի Ինտերնետային բաժնում: Նույն թվականին Վեհափառ Հայրապետի կոօրինությամբ սպասավորության է կոչվել Ղ Զինված Ուժերի Հոգևոր ծառայությունում:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



Տ. ԱՐԻՍՏԱԿԵՍ ՔԱՏԱՆԱՆՈՎԱՆՆԻՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Արթուր)

Ծնվել է 1977 թ. հուլիսի 27-ին Երևանում:

1984-1994 թթ. սովորել է Երևանի թիվ 198 միջնակարգ դպրոցում:

1995-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000-2001 թթ. ուսումնառությունը շարունակել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ծննդանի Զ լսարանում:

2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Սյրեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. հուլիսից Վեհափառ Հայրապետի բարձր փնտրիությամբ նշանակվել է աշխատանքի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես գործավար-քարտուղար:

2002 թ. հուլիսի 10-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Մկրտության խորհուրդը» (պատմությունը և աստվածաբանությունը) թեմայով:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:



Տ. ՆԵՐՍԵՍ ԲԱՆԱՆԱ ՇԱՐԱԶԱՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Արման)

Ծնվել է 1981 թ. մայիսի 24-ին Երևան քաղաքում:

1987-1995 թթ. սովորել է Երևանի թիվ 91 միջնակարգ դպրոցում:

1995-1997 թթ. սովորել և ավարտել է Կոնգի «Բվանդ» վարժարանը:

1990-1996 թթ. սովորել է Երևանի թիվ 15 նրաժշտական դպրոցում:

1997-2003 թթ. սովորել է Մ. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում:

2002 թ. դեկտեմբերի 24-ին՝ Մուրթ Ստեփաննոս Նախավկայի Կոնին, ձևաձև Տ. Ներսիսյան արքեպիսկոպոս Պողոսյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. հունիսից աշխատանքի է անցել Մայր Աթոռի փոխնախագահական քաժնում որպես օգնական-քարտուղար:

2004 թ. մարտի 2-ին պաշտպանել է «Հայ կանոնական իրավունքի սկզբնավորումը և հետագա զարգացումը Ե-Ը դարերում» թեմայով ավարտաճառը:

Նույն ամսից ծառայության է կոչվել ՀՀ ՊՆ Վազգեն Մարգարյանի անվան ռազմական ինստիտուտում որպես հոգևոր սպասավոր:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Մ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձևաձև Տ. Արշակ Նախկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի մեկ դուստր:



Տ. ՎՐԹԱՆԵՍ ՔԱՎԱՆԱ ԲԱՂԱՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1978 թ. մայիսի 7-ին Արմավիրի մարզի Պարունք գյուղում:

1984-1994 թթ. սովորել է տեղի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոցում:

1994-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000-2001 թթ. ուսումնառությունը շարունակել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ընմա
րանում:

2001 թ. հունիսին լուսարար է նշանակվել Ս. Էջմիածնի Մայր Տաճարում:

2001 թ. հունիսի 22-ին, ձեռամբ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջանի, ձեռնադրվել է սար

կավագ:

2002 թ. հոկտեմբերի 31-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Պողոս Տարոնացու «Ընդդեմ
Թեոփիստիայ» թղթի քրիստոսաբանական հիմնադրույթները» թեմայով:

2003 թ. փետրվարի 20-ից վերակացու է նշանակվել Սևանի Վազգենյան Հոգևոր Դըպ
րանոցում:

2003 թ. սեպտեմբերից ծառայում է ՀՀ Զինված Ուժերում որպես հոգևոր խորհրդատու:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Ար
շակ եպիսկոպոս Նաչապրյանի, ձեռնադրվել է ամուսնացրալ քահանա:

Ունի մեկ արու զավակ:



Տ. ԿՈՒՄԻԿ ԲԱՆԱՆԱ ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ,

(ավագանի անունը՝ Արարատ)

Ծնվել է 1980 թ. ապրիլի 28-ին Արտաշատի շրջանի Ախյան գյուղում:
 1987-1996 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:
 1997-2002 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:
 2002-2003 թթ. ուսումնառությունը շարունակել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2002 թ. դեկտեմբերի 24-ին, ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. հոկտեմբերի 30-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Մաղմոսերգությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում» թեմայով:

2003 թ. հունիսից մինչև 2004 թ. փետրվարը Մայր Աթոռի Դիվանատանը աշխատել է որպես գործավար-քարտուղար:

2004 թ. մարտից սարկավագական ծառայության է կոչվել Մարմարաշենի Սուրբ Գևորգ եկեղեցում:

2004 թ. հոկտեմբերի 10-ին, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:



Տ. ԲԱԲԿԵՆ ՔԱՆՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

(ավագանի անունը՝ Հուսիկ)

Ծնվել է 1957 թ. մարտի 20-ին Մարտունու շրջանի Լիճք գյուղում:

1964-1974 թթ. սովորել է Երևանի թիվ 48 միջնակարգ դպրոցում:

1974-1979 թթ. ուսանել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի Ճարտարապետա-շինարարական ֆակուլտետում:

1979-1981 թթ. ծառայել է խորհրդային բանակում որպես սպա:

1981-1984 թթ. աշխատել է «Հայլեկտրալույս» գործարանում:

1984-1994 թթ.՝ ՆԳՆ շինարարական աշխատանքների ղեկավար:

1994-1999 թթ.՝ «Զափիկ» մանկապան փոխտնօրեն:

1999-2001 թթ. աշխատել է Ըինարարության որակի փոխնախագահի պետական:

2000 թվականից՝ «Հուսաբեր» բարեգործական հիմնադրամի նախագահ:

2000-2002 թթ.՝ Հովհաննես Կոզեռնի անվան կրթամշակութային կենտրոնի տնօրեն:

2002-2003 թթ.՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ճարտարապետաշինարարական բաժնի տնօրեն:

2002 թ. մասնակցել է Մանկա Պետերբուրգի Հոսիսի ծրագրին:

1997 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2002-2004 թթ. ուսանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանում:

2003-2004 թթ.՝ Եկեղեցիների Համաշխարհային հոգրիդի «Կլոր Սեղանի» «Հաշմանդամ երեխաներ» ծրագրի ղեկավար:

2003 թ. մասնակցել է «Մշակույթի և հուշարձանների պաշտպանության» թրեյնինգին (ԱՄՆ, Բոստոն):

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս հաջադրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի երեք որդի:



Տ. ՄՈՒՇԵ ԶԱՎԱՆԱ ՎԱՎԱՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Նովիանենս)

Ծնվել է 1973 թ. հունիսի 16-ին Ապարան քաղաքում:

1980-1990 թթ. սովորել և ավարտել է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

1990-1992 թթ. աշխատել է Ապարանի «Նիզ» գործարանում որպես սարքավորումներ վերանորոգող:

1992-1997 թթ. սովորել և աշխատել է Երևանի Հայկական Բաց Համալսարանի Մենեջմենթի և ֆինանսարանկային գործի ֆակուլտետում:

1992-1994 թթ. ուսանելու հետ միաժամանակ ծառայել է ՀՀ ՆԳ Ապարանի Պահպանության Գումարակում:

1997 թ., ձեռամբ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1998-2002 թթ. աշխատել է Ապարանի արվեստի դպրոցում որպես հաշվապահ և տնօրենի տեղակալ՝ փոփոխական գծով:

1999-2002 թթ. եղել է Ապարան քաղաքի Ավագանու անդամ:

2002-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բաժանային պատրաստման յսարանում:

2004 թ. Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ Լպիսկոպոս Խաչարյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ բաժանա:

Ունի մեկ որդի:



Տ. ՄԱՇՏՈՑ ՔԱՆԱՆԱ ԲԱԲԱՅԱՆ

(ավագանի անունը՝ Գագիկ)

Ծնվել է 1957 թ. դեկտեմբերի 21-ին Երևանում:

1965-1975 թթ. սովորել է Երևանի թիվ 139 միջնակարգ դպրոցում:

1975-1980 թթ. ուսանել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Կիբեռնետիկայի ֆակուլտետի «Միկրոէլեկտրոնային և կիսահաղորդչային սարքեր» բաժնում սկսանալով «էլեկտրոնային տեխնիկայի ինժեների որակավորում»:

1980-1986 թթ. աշխատել է Երևանի Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում որպես ավագ ինժեներ:

1986-1988 թթ.՝ առաջատար ինժեներ «Բազալտ» գործարանում:

1988-1991 թթ.՝ սեկտորի վարիչ «Աստրա» գիտահետազոտական ինստիտուտում:

1995-1997 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ԶԴԱ-ի Կրթնի ուսուցիչների պատրաստման Երևանի լսարանում:

1997-1999 թթ. ծառայել է Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցում որպես դպիր:

1999 թ., ձեռամբ Տ. Առաքել եպիսկոպոս Բարամյանի, ձեռնադրվել է սարկավագ՝ շարունակելով ծառայությունը Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցում մինչև 2002 թ.:

2002-2004 թթ. ուսանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի չորս զավակ:



Տ. ՂԱԶԱՐ ԲԱՆԱՆԱՆ ԴԵՏՐՈՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Նայկ)

Ծնվել է 1977 թ. նոյեմբերի 9-ին Ապարան բաղաձորում:

1984-1994 թթ. սովորել է Կեղի նախ միջնակարգ, ապա ֆիզիկամաթեմատիկական թեքումով դպրոցում:

1994-1999 թթ. սովորել է ԵՊՀ Երկրաբանության ֆակուլտետում:

1997 թ. նոյեմբերի 30-ին, ձեռամբ Տ. Նավասարդ Խաչիսկոպոս Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1999-2001 թթ. ծառայել է ՀՀ Զինված Ուժերում որպես դասակի հրամանատար:

2001-2002 թթ. նշանակվել է Երևանի Մայաթիա թաղամասի Ս. Աստվածածին եկեղեցու սարկավագ:

2002-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բաժնապետի պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ Խաչիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ բաժնապետ:



Տ. ՍԱՐԳՍՅԱՆ ՔԱՆԱԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Արթուր)

Ծնվել է 1967 թ. դեկտեմբերի 14-ին Երևան քաղաքում:

1975-1985 թթ. սովորել է Երևանի թիվ 135 միջնակարգ դպրոցում:

1985-1986 թթ. ուսանել է Երևանի թիվ 94 ՄՊՏՈՒ-ում:

1986-1988 թթ. ծառայել է խորհրդային բանակում (Աֆղանստան):

1988-1995 թթ. ուսանել է Երևանի Մխիթար Ներսիսյան անվան Պետական Բժշկական Համալսարանում:

1999-2001 թթ. աշխատել է ՀՀ Առողջապահության նախարարության Երևանի քաղաքացիության «Շղատ Բուժ-Օգնություն» ԱՊՓԲԸ-ում:

1995-2001 թթ. ծառայել է Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցում:

2000-2002 թթ. ծառայել է Երևանի Նոր Նորք թաղամասի Ս. Սարգիս եկեղեցում:

2002-2004 թթ. ուսանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 3-ին, ձեռամբ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կոնյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի երեք զավակ:



Տ. ՄԱՏԹԵՈՍ ՔԱՇԱՆԱ ԴՐԱՎԱՆՑ

(ավագանի անունը՝ Արթուր)

Ծնվել է 1970 թ. դեկտեմբերի 31-ին ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում:

1978-1988 թթ. սովորել է Կրեդի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1988-1994 թթ. սովորել և ավարտել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը:

1989-1991 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1992-1993 թթ. կամավոր մասնակցել է արցախյան ազատամարտին:

1993-2002 թթ. ծառայել է Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմում որպես դպիր:

2001-2002 թթ. դասավանդել է Ասկերան շրջկենտրոնի դպրոցում որպես կրոնի ուսուցիչ:

2002-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 3-ին, ձեռամբ Տ. Նավասարդ նախկուպոս Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ նախկուպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի երկու զավակ:



Տ. ՄՍԵՆԻԲԵԿ ԲԱՏԱՆԿ ՄԿՐՏՅԱՆ

(ավագանի անունը՝ Արայիկ)

Ծնվել է 1977 թ. սեպտեմբերի 14-ին ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերպում:

1984-1993 թթ. սովորել է տեղի Բաֆֆու անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1994 թ. նոյեմբերի 4-ին Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ վանքում, ձեռամբ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի, ստացել է դպրության չորս աստիճաններ:

1995 թ. փետրվարից մինչև 1998 թ. մայիսը ծառայել է ԼՂՀ Պաշտպանական բանակում:

1998 թվականից ծառայության է անցել Արցախի թեմում սպասավորելով Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ առաջնորդանիստ եկեղեցում:

2002 թ. նոյեմբերից մինչև 2004 թ. սեպտեմբերը սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բաժնականից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 3-ին Երևանի Ս. Սարգիս եկեղեցում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճույանի:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի երկու զավակ:



Տ. ԹՈՎՄԱՆ ԲԱՆԱՆԱՄԱՆԱՅԱՆ

(ավագանի անունը՝ Վահան)

Ծնվել է 1956 թ. սեպտեմբերի 27-ին Երևանում:

1963-1973 թթ. սովորել է Ավ. Խսահակյանի անվան թիվ 16 միջնակարգ դպրոցում:

1973-1977 թթ. սովորել և ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի մշակույթի ֆակուլտետի ռեժիսորական բաժինը:

1980-1984 թթ. աշխատել է Ներիկ Մալյանի ղեկավարած կինոդերասանի թատրոն-ստուդիայում որպես դերասան և երաժիշտ:

1984 թ. աշխատել է Մոսկվայի «Ալեկին» թատրոն-ստուդիայում որպես կիթառահար:

1985-1987 թթ. աշխատել է «Փոս» թատրոնում որպես կոնցերտմեյստր և երգահան:

1987-1999 թթ. աշխատել է Պետական հեռուստատեսությունում որպես ռեժիսոր: Հաղորդումներում հանդես է եկել նաև որպես հաղորդավար, սցենարիստ, խմբագիր, երաժշտական ձևավորող:

1999-2000 թթ. աշխատել է «Պրոմթես» հեռուստատեսությունում որպես ռեժիսոր, հաղորդավար:

Նեղիեակ է բանաստեղծական հետևյալ չորս ժողովածուների.

1993 թ. - Բանաստեղծություններ: Առաջին գիրք:

1996 թ. - Օրինյալ լինես, փառապանք:

1999 թ. - Թիթեռների աշխարհում. Դարաստի:

2003 թ. - Ասպետական օրագիր կամ Պարերազմ, դարձյալ պարերազմ:

Մի շարք բանաստեղծություններ ֆրանսերեն է թարգմանել Վահե Գոդելը:

Ունի հեռուստատեսային ֆիլմեր, որոնցում արձարծվել են ժամանակի սոցիալական, բարոյական, մշակութային ու հոգևոր կարևոր խնդիրներ («Շեմին», «Դրախտ կորուսյալ»):

2002-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի չորս զավակ:



Տ. ԱՌԱՔԵԼ ՔԱՆԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Կառլեն)

Ծնվել է 1958 թ. փետրվարի 10-ին ԼՂՀ մայրաքաղաք Մարեփանակերտում:

1964-1974 թթ. սովորել է Կոնդի Րաֆֆու անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1969-1979 թթ. միաժամանակ սովորել է Կոնդի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցում:

1977-1979 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1981-1986 թթ. սովորել է ավարտել է Բաքվի կոնսերվատորիան:

1986-1992 թթ. դասավանդել է Մարեփանակերտի արվեստի դպրոցում:

1993-1994 թթ. ծառայել է արցախյան բանակում:

1993-2002 թթ. ծառայել է Մարեփանակերտի Ս. Ասրվաձաձին եկեղեցում:

1994-2002 թթ. կրոն և երգ-երաժշտություն է դասավանդել Ասկերանի շրջանի Լեոնավան գյուղի միջնակարգ դպրոցում:

1998-2002 թթ. միաժամանակ կրոն է դասավանդել Մարեփանակերտի թիվ 11 միջնակարգ դպրոցում:

2002-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քառանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 3-ին, ձեռամբ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կոչյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի երեք զավակ:



Տ. ԵԶՆԻԿ ԲԱՆԱՆԱԳԱՍՏՅԱՆ

(ավագանի անունը՝ Վլադիմիր)

Ծնվել է 1959 թ. ապրիլի 19-ին Գյումրի քաղաքում:

1966-1976 թթ. սովորել է Կոնստանդնուպոլսի Մկրտիչ Արմենի անվան թիվ 34 միջնակարգ դպրոցում:

1977-1981 թթ. սովորել և ավարտել է Գյումրի քաղաքի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը:

1982-1983 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1991-1999 թթ. Գյումրի քաղաքի թիվ 10 և թիվ 15 կիրակնօրյա դպրոցներում աշխատել է որպես կրթնի ուսուցիչ:

1999-2002 թթ. եղել է Շիրակի թեմի Զարգացական կենտրոնի պատրասխանատու:

2002-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 3-ին, ձեռամբ Տ. Նավասարդ Եպիսկոպոս Կոնյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ Եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի մեկ դուստր:



Տ. ՍԻՄԵՈՆ ՔԱՆԱՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(ավագանի անունը՝ Գառնիկ)

Ծնվել է 1973 թ. մայիսի 11-ին Երևան քաղաքում:

1980-1990 թթ. սովորել է Երևանի թիվ 77 ռուսական միջնակարգ դպրոցում:

1990-1993 թթ. սովորել և ավարտել է Երևանի սննդի արդյունաբերության տեխնիկումը:

1992-1996 թթ. սովորել և ավարտել է Մոսկվայի Անկախ Էկոլոգո-Քաղաքագիտական Համալսարանի՝ Հայկական Ազգային Բաժանմունքը:

Միաժամանակ 1993-1997 թթ. սովորել և ավարտել է Երևանի «Վարդանանց» Համալսարանի իրավաբանության բաժնի հեռակա բաժանմունքը՝ ստանալով իրավաբանի մասնագիտություն:

1998 թ. նոյեմբերից ծառայել է Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում:

2002-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 3-ին, ձեռամբ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի, ձեռնադրվել է սարկվազ:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:



Տ. ՓԵՎՍՏՈՍ ՔԱՎԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Նովիաննես)

Ծնվել է 1976 թ. Շիրակի մարզի Նոռոմ գյուղում:

1982-1993 թթ. սովորել և ավարտել է Կոնդի միջնակարգ դպրոցը:

1993-1998 թթ. սովորել և ավարտել է Արթիկի Ինդուստրիալ Տեխնոլոգիական տեխնիկումի Ավտոմատացարկային բաժինը:

1994-1996 թթ. ծառայել է Հայաստանում տեղակայված ՌԴ սահմանապահ զորքերում:

2000-2002 թթ. մասնակցել է ԶՆԶԿ-ի կողմից կազմակերպված կրոնի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման դասընթացներին և ստացել համապատասխան վկայական: Մինևույն ժամանակ դասավանդել է Նոռոմի միջնակարգ դպրոցում որպես կրոնի ուսուցիչ:

2002-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 3-ին, ձեռամբ Տ. Նավասարդ Եպիսկոպոս Կոնյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ Եպիսկոպոս Նաչապուրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի երեք զավակ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՎՈՎԱԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑՈՎ ՄԵԿՆԵՑ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄ

Մեպրեքներին 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով մեկնեց Գուգարաց թեմ: Եռօրյա այցի ընթացքում Նորին Սրբությունը եղավ Իջեանում, Բերդում, Տավուշի մարզի փարբեր բնակավայրերում և իր օրհնությունը բաշխեց հավաքացյալ ժողովրդին:

Վեհափառ Հայրապետը հանդիպեց նաև մարզի ղեկավարության և տեղական իշխանությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում կարևորվեց մարզում հոգևոր-եկեղեցական գործունեության ընդլայնումը:

Հայոց Հայրապետին ողջեցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Ս. Սիմոն եպիսկոպոս Աղամյանը և Ս. Տիրան արքեպիսկոպոս Պետրոսյանը՝ որպես զավազանակիր:

ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄՈՒՄ ՕԾՎԵՑ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ՀՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ԱՆՆԱ ՄԱՏՈՒՌԸ

Մեպրեքների 28-ին, հանդիսապետությամբ Գուգարաց թեմի բարեխնամ առաջնորդ Ս. Մնայան եպիսկոպոս Զուլյանի, կատարվեց Բագրատաշեն գյուղի Ս. Աննա մատուռի օծման արարողությունը: Ձեռամբ Սրբազան Հոր և մասնակցությամբ առաջնորդական փոխանորդ Ս. Սաաթև ծ. վրդ. Զմրուխայանի, Տավուշի հոգևոր հովիվ Ս. Վրթանես վրդ. Աբրահամյանի և բաժանայից դասի՝ օծվեցին եկեղեցու Սուրբ Սեղանը, հորանը և Մկրտության ավազանը: Արարողությանը ներկա էին Տավուշի մարզպետ Արմեն Ղուլյանը, գյուղական համայնքի ղեկավարությունը, բազմաթիվ ուխտավորներ:

Ողջ Բագրատաշենն էր եկել մատուռի օծմանը, որի ավարտին թեմակալ առաջնորդն իր օրհնության ու շնորհավորանքի խոսքն ուղղեց ներկաներին՝ մաղթելով, որ սրբավայրը բագրատաշենցիների համար դառնա Աստուծո հետ հաղորդակցվելու սրբազան վայրը:

Գյուղի հավաքացյալ ժողովրդի համար օրը նվիրական ու պատմական էր, քանզի նրանք ունեցան աղոթափառն, ուր կարող են իրենց աղոթքն առ Աստված վերադառնել, հաղորդակից ու մասնակից լինել հոգևոր արարողություններին, պսակ ու կնունք կատարել:

Մատուռը կառուցվել է Նորիկ Վարդանյանի նվիրատվությամբ: Նրա կողմից տրված սիրտ ճաշին՝ մատաղիկ, մասնակից դարձան հյուրերն ու գյուղացիները:

Թող այսուհետ այս սուրբ տաճարում հնչած աղոթքները խաղաղություն և օրհնություն բերեն մեր երկրին, անասանություն և պայծառություն՝ Հայոց Եկեղեցուն:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՄԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

Տ. ՓԱՌԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ՁԵՌԱՄԲ ՕԾՎԵՅ ԿԱՐՄՐԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅԻՆ

Սեպտեմբերի 12-ին, Խաչվերացի տոնի օրը, կրկնակի ուրախության ու բերկրանքի տոն էր Արագածոտնի թեմի հավատացյալների համար, բանգի ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավեփիքյանի օծվեց Է դարի հայ ճարտարապետության գեղարվեստներից մեկը՝ Կարմրավոր Ս. Աստվածածին եկեղեցին։ Եկեղեցու վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքները կատարվել են Հայ Եկեղեցու ամերիկաբնակ բարերար Հովհաննես Աղյանի անմիջական աջակցությամբ։

Օծման արարողությունից հետո Փառեն Սրբազանը բոլորին շնորհավորեց հիշարժան օրվա առիթով՝ մաղթելով, որ այսուհետ միշտ Կարմրավոր Ս. Աստվածածին եկեղեցու Ս. Սեղանից Տիրոջ մարմինն ու աղյուրը բաշխվի հայ հավատացելոց բազմությանը։

«Հիշարժան պահ է ամենքիս համար, բանգի ևս մեկ աղոթքի տոն է բացվում Հայոց աշխարհում։ Մեր աղոթքն է առ Բարձրլայն Աստված, որ այս հոյակերտ եկեղեցին լինի Աստծո և մարդու հանդիպման վայր, որ ամենքս կարող ենք մեր ցավերը, հոգսերը կիսել Տիրոջ հետ, մեր խնդրանքները ներկայացնել Ամենակալին և, ինչու չէ՞ նրա շնորհները ստանալ Ս. Հաղորդության միջոցով», - նշեց Սրբազան Հայրն իր խոսքում։

Տ. Փառեն եպս. Ավեփիքյանը նաև տեղեկացրեց, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբաբառ Կոնդակով, ի գնահատություն եկեղեցու բարերար Հովհաննես Աղյանի եկեղեցաշեն և ազգանվեր գործունեության, նա պարգևատրվում է Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով։ Հայրապետական կոնդակն ընթերցեց Արագածոտնի թեմում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Թորգոմ արք. Տոնիկյանը։

«Հավկապես նոր հազարամյակում սկսված եկեղեցաշինական իսկայածալալ աշխատանքներին մասնակից լինելու այն զգալի ներդրումն ու ոգին, որոնցով Դուք ազնիվ բարերարությամբ կյանքի կոչեցիք Արագածոտնի թեմի Կարմրավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու վերանորոգման աշխատանքները, վկայությունն են Ձեր ջերմ հայրենասիրության և Առաքելական Սուրբ Եկեղեցու հանդեպ որդիական անմնացորդ նվիրումի ու հավատարմության։ ...Ուրախությամբ ենք հաստատում, որ ապրելով Հայաստանից հեռու՝ Դուք Ձեր սրտում կրելով Մայր Հայրենիքը, նրա հոգսերի ու խնդիրների արդյունավոր լուծման ազնիվ փափագը, ձեռք եք մեկնում աջակցության և օգնության։ Կարեւորելով հոգևոր անանց արժեքների և նվիրական սրբությունների շուրջ համախմբվելու ամուր կամքն ու գիտակցությունը՝ Դուք մնայուն ավանդ եք բերում նաև համազգային մեր կյանքում նորանոր հաջողությունների ամրագրմանը՝ օգտակար լինելով հայ ժողովրդին ու մեր Սուրբ Եկեղեցուն», - ասվում է Հայրապետական Սրբաբառ Կոնդակում։

Արարողությանը մասնակցում էին Տ. Սասուն ծ. վրդ. Ջմրուխտյանը, Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալանը, մշակույթի և արվեստի գործիչներ։

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵՐԿՈՒ ՀՈԳԵՇԷՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նշանակալի օր մը եղաւ 15 Հոկտ. 2004 թուականը Իրաքահայութեան արդի պատմութեան մէջ: Այդ օրը երկու կարեւոր եւ ուրախալի միջոցառումներ միապիտակ կատարուեցան անասանական ներշնչում պատճառով բոլոր անոնց, որոնք ներկայ կգտնուէին:

2003ի Ապրիլի 9էն եւրք ստեղծուած կացութեան պատճառով, Առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ դադրեցաւ Ս. Պատարագի մատուցումը, փոխարէնը՝ Ծերանոցի Ս. Կարապետ վանքը գործածելով Պատարագի եւ ծեսերու կատարման կեդրոն: Եւ ահա Իրաքահայ թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Աւագ արքեպիսկոպոս Աստուծոյ խոհեմ կարգադրութեամբ մատուցուեցաւ առաջին Սուրբ եւ անմահ Պատարագը յետ 18 ամսուայ դադարին: Պատարագիչը եղաւ նոյն ինքը առաջնորդ Սրբազան Հայրը:

Անմիջապէս Ս. Պատարագին յաջորդեց նրկորդ միջոցառումը: Երկար փորիններու փակումէն ետք՝ քեղի ունեցաւ Ազգային վարժարանի վերաբացումը: 1974 թուին նախկին պետութեան հրահանգով, Իրաքի մէջ գործող բոլոր ազգային դպրոցները պետականացուեցան, իր մէջ ըլլալով Հայոց Ազգային Վարժարանը: Այս վիճակը շարունակուեցաւ մինչեւ 2004 թ., երբ Սրբազան Հօր եւ Ազգ. Կեդր. Վարչութեան ջանքերով դիմումներ կատարուեցան այժմեան պետական բարձրաստիճան պաշտօնեաներուն՝ արտօնութիւն ձեռք բերելու եւ ազգային դպրոցը վերստին բանալու համար, որը կատարուեցաւ:

Բացման որոշում օրը, ուսուցչական կազմը, նոր աշակերտութիւնը եւ անոնց ծնողները նախ մասնակցեցան Ս. Պատարագի հորհուրդին Ս. Հաղորդութեան արժանաւելով: Պատարագէն անմիջապէս ետք առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Կղերականաց դասը, Կեդրոնական Վարչութեան անդամները, Կրթական Յանձնախումբը, ուսուցչութիւնը, ծնողներն ու նոր աշակերտութիւնը ուղղուեցան առաջնորդարանին կից նոր դպրոցի բակը: Այս ուրախ առիթով, Սրբազան Հայրը հանդէս եկաւ օրինութեան պատգամով եւ ամփոփ քննադատութիւն փոխաւ դպրոցի վերաբացման կապակցութեամբ՝ յիշելով, որ 10950 օրեր Ազգային Դպրոցը փակ մնալէ ետք ահաւասիկ այսօր կրկին իր դռները կը բանայ հայ աշակերտութեան դիմաց: Օրինութեան խօսքէն ետք կղերականաց դասը եւ ներկաները միասնաբար «Հայր մեր» Տէրունական աղօթքը կատարեցին, որմէ ետք եւ հաստատապէս ճիշդ ժամը 12.20 եկեց առաջին զանգը՝ ի նշան դպրոցի վերաբացման:

Այս ներկաներու ծափահարութեանց ներքոյ ժապաւէնը կտրուեցաւ, եւ ներկաները դպրոցը այցելեցին եւ դիմեցին ամէն կարգադրութիւններով սարքաւորուած դասարանները:

Թող եկեղեցանուէր եւ ազգօգուտ առիթներ անպակաս ըլլան մեր գաղութին: Թող Աստուած բարգաւաճ պահէ մեր ազգը, ամէն:

ԱՐԱՄ ՍՐԿ. ԶԵԲԷՆԵԱՆ
Առաջնորդարան Իրաքի հայոց

ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ

31 Յուլիս - 8 Օգոստոսին գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդը դարձնալ կազմակերպած Լ. ր. Ամառնային արձակուրդներու մանկական ճամբար մը, որ տեղի ունեցաւ Steineberg կոչուած գեղատեսիլ վայրի մը մէջ, եւ որուն այս տարի մասնակցեցան 8-15 տարեկան աւելի քան 30 մանուկներ ու պատանիներ: ճամբարին հիմնական նպատակն է՝ տարին գոնէ անգամ մը կարեկիւթիւնը սրելով, որպէսզի Գերմանիոյ պէս ցրուած գաղութին մէջ ապրող հայ երեխաներ մէկտեղուին եւ իտաքաբար սորվին հայերէն լեզուն եւ հայ պատմութիւնը, հայկական երգն ու պարը, ստանան հայեցի դաստիարակութիւն: Կը կազմակերպուին նաեւ այլազան խաղեր եւ մարզական մրցոյթներ:

Կազմակերպիչներու գովելի ու զնաչափելի փափագին ընդառաջելով Գերմանիոյ հայոց Առաջնորդարանի կողմէ երեխաներու համար կազմակերպուեցան նաեւ կրօնքի եւ Հայ Եկեղեցւոյ պատմութեան ամէնօրեայ դասընթացքներ, ինչպէս նաեւ արարողութիւններ: Առաջնորդարանի նախաձեռնութեամբ եւ Սերովքէ վարդապետ Իսախանեանի ջանքերով պատրաստուեցան երկու նկարագարող գրքոյկներ՝ հայերէն եւ գերմաներէն լեզուներով, «Ճանչանք մեր Եկեղեցին» եւ «Քրիստոնէական Եկեղեցիներու տարբերութիւնները» բովանդակութեամբ, որ բաժնուեցան մասնակից բոլոր երեխաներուն:

Ամէնօրեայ դասընթացքներու կազմակերպումին Սերովքէ Հայր Սուրբի կողքին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Մայր Աթոռի միաբաններ՝ Արշէն եւ Յովնան, ինչպէս նաեւ Գարեգին Հայր Սուրբերը:

21 Մեպտեմբերին Գերմանիոյ Զաքարն-Անհալթ նահանգի Մակտէպուրկ քաղաքին մէջ, Երեւանի Սէրէնապ համոյթի համերգով բացումը կատարուեցաւ «Հայկական Մշակոյթի Օրերուն», որոնք պիտի տեւեն մինչեւ 5 Նոյեմբեր:

«Մշակոյթի Օրերուն» հովանաւորութիւնը ստանձնած է Մակտէպուրկի քաղաքապետը՝ Տոքթ. Լուի Թրիւմբէր: Իսկ բացումը կատարուեցաւ ՀՀ Մշակոյթի նախարար Յովիկ Յովէյանի, ՀՀ Գերմանիոյ դեսպան Տիկին Կարինէ Ղազինեանի, ինչպէս նաեւ Զաքարն-Անհալթ նահանգի Մշակոյթի նախարար Փրոֆ. Տոքթ. Եան-Հենրիք Օլպերցի կողմէ, որոնցմէ խրաքանցիւրը հանդէս եկաւ՝ ընդգծելով Հայկական Մշակոյթի Օրերուն կարեւորութիւնն ու Հայաստանի հետ այս նահանգին արդէն գոյութիւն ունեցող համագործակցութիւնը: Նկատի առնելով, որ 21 Մեպտեմբերը կը գոյգադիպէր ՀՀ Անկախութեան 13րդ տարեդարձին, յարգարժան բանախօսները անդրադարձան նաեւ Հայաստանի պատմութեան, շնորհաւորեցին անկախութեան տօնն ու կատարեցին բարենադրութիւններ երկրի բարօրութեան ու զարգացման համար:

Այս սկսաւ Սէրէնապ համոյթի համերգը՝ Հրտարար Թօփչեանի ղեկավարութեամբ, որ անգամ մը եւս հմայեց Եռհաննիս եկեղեցւոյ մէջ համախմբուած բազմաթիւր ներկաները՝ ներկայացնելով Զայթովսկիէ, Հրտարար Միլոզոյեանէ եւ Դաւիթ Հալաճեանէ ընտրեալ երաժշտական կտորներ:

Պեպրանյան ներկայացուցիչներու, գերմանացի ու հայ ունկնդիրներու շարքին ներկայ էր նաեւ թեմիս ասաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Պեքեան, որ յարկապէս հրաւիրուած ըլլալով «Մշակոյթի Օրերու» բացման այս հանդէսին, իր կարգին շնորհատրեց կազմակերպիչներն ու Մանկախոյնի անունով կատարելով սրտաբուխ մաղթանքներ:

Մանկախոյնի Տոնին առթիւ կազմակերպուած հանդիսութիւնները շարունակուեցան Մ. Գերմանիոյ Դիսպանութեան կողմէ, այս անգամ Պէտլինի մէջ տեղի ունեցած նկարչական ցուցահանդէսով, որուն ասաջնորդ Սրբազանը եւս մասնակցեցաւ՝ իր կողքին ունենալով շրջանի հոգեւոր հովիւ Նոգ. Տ. Սեբովբէ վրդ. Իսախանեանը: Պէտլինի International Club-ի շքեղ սրահներուն մէջ ցուցադրուեցան ՎԱՄՄԻ-ի (Վարդիա Մարտիրոսեան) հիւսիսային նկարները, որոնք ներկայ բազմութեան կողմէ մեծազոյն գնահատանքի արժանացան: Պէտլէ Եւսիւ, որ Մ. Գերմանիոյ դիսպանութեան Տիկին Կարինէ Ղազինեան ձեռնհասօրէն ուշադրութիւն դարձուցած էր ցուցահանդէսի կազմակերպման, որուն անուանումը բազմութիւն մը ներկայ եղած էր: Մասնակիցներու մեծամասնութիւնը պեպրական շրջանակի ներկայացուցիչներն ու փոքրեր երկիրներու վարժարանէն աւելի դիսպաններն էին՝ իրենց տիկիններով: Չէին բացակայած եկեղեցական բարձրաստիճան ներկայացուցիչները եւս, որոնց շարքին նաեւ Գերմանիոյ մէջ պապական նոր նուիրակը:

15 Նոյեմբերին յարուկ կազմակերպուած հանդիսութեան ընթացքին Սրբազանը Հայոց Եկեղեցւոյ «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանը յանձնեց Տոքթ. Բալֆ Զորպանոյին, որ Գերմանիոյ մէջ հանրաժանօք է իր նկարահանած ֆիլմերով:

Զորպանոյ 1986ին նաեւ Հայոց ցեղասպանութեան մասին ֆիլմ մը պատրաստած էր, որ Գերմանիոյ մէջ բաւական աղմուկ բարձրացուց:

Հանդիսութեան բացումը կատարեց Առաջնորդարանի Մշակութային յանձնախումբի արեւնապետ Զործի Պապայ, որմէ ետք Տոքթ. Միքեան Տապալո ներկայացուց Զորպանոյի կենսագրութիւնն ու իր հանրային աշխատանքները: Հանդիսութիւնը շարունակուեցաւ ջութակահար Սուգանա Կրէկորեանի եւ դաշնակահարուհի Ունանեանի դասական ու հայկական երաժշտութենէ կտորներով, որոնք ներկայ բազմութեան ջերմ գնահատանքին արժանացան:

Յայտագրի աւարտին Գերաշնորհ Սրբազանը յանձնեց շքանշանն ու Վեհափառ Հայրապետի սրբաբառ կոնդակը՝ յանուն գերմանահայութեան յայրենիք իր երախտագիտութիւնը յարգելի Զորպանոյին, ի գնահատութիւն Հայ ժողովուրդին ի նպաստ իր տարած աշխատանքներուն:

21-22 Նոյեմբերին Վիեննայի մէջ «Փրօ-Օրիենթ» կազմակերպութեան ջանքերով տեղի ունեցաւ աստուածաբանական գիտաժողով՝ «Եվրոպա, մի՛ մոռնար քո նահապալկները» խորագրով: Զեկուցողները Գերմանիոյ փոքրեր յարանաւորութիւններու ներկայացուցիչներ էին՝ Ուղղափառ, Կաթոլիկ, Անկախական Եկեղեցիներէն եւ հրէական համայնքէն: Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիները ներկայացնելու համար հրաւեր էր ուղղուած Հայոց Առաջնորդարանին, որը ստանձնեց Հոգեշնորհ Տ. Գարեգին արք. Յարութիւնեանը: Զեկուցողները անդրադարձան նահապալկութեան գաղափարի աստուածաբանական վերլու-

ծուծանը՝ ներկայացնելով նաև իրենց Եկեղեցույ պատմության մեջ այս մասին արձանագրուած մասնաւոր յիշատակութիւնները: Գիտաժողովին ներկայ էին Վիէննայի համալսարանի դասախօսներ, հոգեւորականներ, ուսանողներ եւ լրագրողներ, որոնք իրենց հետաքրքիր հարցումներով ստեղծեցին բովանդակայից քննարկումներ նիւթին շուրջ: Գիտաժողովի ատարփին բոլոր մասնակիցներն այցելեցին Վիէննայի կեդրոնական դատարան, ուր Բ. Աշխարհամարտի ժամանակ տեղի իշխանութեան կողմէ հարիւրատը մարդիկ մահապարժի էին ենթարկուած: Ի յիշատակ բոլոր նահապտակներու՝ կատարուեցաւ հոգեհանգրտան պաշտօն:

31 Նոկտեմբերին Գերմանիոյ Մայնց քաղաքի Ռայնկուլտ սրահին մէջ տեղի ունցաւ Շրջակայ Միջավայրի Պահպանութեան Գերմանական մրցանակի (Umweltpreis) տրււթեան հանդիսութիւնը: Այս տարի վերոյիշեալ մրցանակին եւ դրամական պարգեւին արժանացան երկու գիտնականներ, որոնցմէ մեկն էր Փրոֆ. Տոքթ. Կարապետ Անդրանիկեան, որ Նամպուրկ-Նարպուրկ Մասնագիտական Նամալսարանի Թէքնիք Մանրեագիտութեան բաժնի ղեկավարն է: Իր համալսարանական աշխատանքի կողքին Տիար Անդրանիկեանը ապենապետն է International Society for Extremophiles հաստատութեան եւ ունի զանազան ուրիշ գիտական աստիճաններ եւ մինչ հիմա հրատարակած է քաղմաթիւ մասնագիտական յօդուածներ:

Տիար Անդրանիկեան ծնած է 1951ին Յորդանանի Ամման քաղաքին մէջ, ուսանած՝ Պէլոութի Ամերիկեան Նամալսարանի եւ Գերմանիոյ Կէոթինկէն քաղաքի Կէորկ-Ակուսթ Նամալսարանի մէջ: Փրոֆ. Անդրանիկեանը Մրցանակը ստացաւ Գերմանիոյ Նախագահ Նորսթ Բէտիլէրի ձեռքէն:

Պետական եւ գիտական շրջանակներէն ներկաներու կողքին տրւթութեան արարտդութեան մասնակցեցան նաեւ թեմիս առաջեորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Պեքեան եւ ՂԳ Գերմանիոյ Դեսպանուիի Տիկին Կարինէ Ղազինեան:

ՃԻԻՄՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐՄՆԻ

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻՆ ԱՌ-ԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբեր 11ին թեմիս բարեջան առաջնորդ Յովնան արքեպս. Տերտերյանի կողմն աջաջոնական հիւրասիրութիւն մը փրութեցաւ Պրոպէնքի Առաջնորդարանին մէջ՝ Ղարաբաղէն նոր ժամանած վարչապետ Պր. Անուշաւան Դանիլեանի եւ ընկերակցող անձնաւորութիւններուն:

Հիւրասիրութեան ներկայ եղան թեմիս առաջնորդ Սրբազան՝ Յովնան արքեպս. Տերտերյան. Վաչէ արքեպս. Յովսէփեան, Լուս Անճելոսի Հայաստանի հիւպարոս Պր. Գագիկ Կիրակոսեան, Մարիա Միքերանեան (Հայկական Հիմնադրամի արեւնապետի), Արա Ակիշեան (Հայկ. Հիմնադրամի փոխարեւնապետ), Տ. Տաճար ծ. վրդ. Եպրտըմեան, Տ. Զաւեն առաջ քինյ. Արգումանեան, Տ. Սիլիան առաջ քինյ. Միսսեան, Տ. Շնորհք քինյ. Տեմիրճեան, Ռիչարդ Մուշեղեան, Արմէն Համբար, Լիլի Պալեան, Օննիկ Մեհրապեան, Յովսէփ Կանիմեան, Վարդան Բարսեղեան, Բարսեղ Գարթալեան, Արմէն Ճանեան, Օշին Զէշիշեան, Արամ Սարգսրեան եւ Դեան Արիտստամեան:

Պաշտօնական ճաշի ընթացքին խօսք առնելով առաջնորդ Սրբազան Հայրը ողջունեց Ղարաբաղի յարգարժան վարչապետը եւ աջաջոնական միւս հիւրերը, ընդգծելով Ղարաբաղի կարեւորութիւնը մեր ժողովուրդի պատմութեան մէջ. ինչպէս նաեւ այդ տարածաշրջանը պահպանելու եւ անոր բարգաւաճման գործնականապէս նպաստելու բոլորիս անվերապահ պարտականութիւնը: Պր. վարչապետը, իր կարգին, հակիրճ կերպով անդրադարձաւ Ղարաբաղը յուզող անմիջական պահանջներուն եւ խոր շնորհակալութիւն յայտնեց Հայ Եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդի նիւթական թէ բարոյական գորակցութեան, որոնց ճամբով Ղարաբաղը աստիճանաբար կը լուծէ իր փնտրեցական, ընկերային եւ մարդկային հիմնական հարցերը: «Համառոտակական Հիմնադրամ»ը այդ կարեւոր կառույցներէն մեկն է, որ կը հետապնդէ յիշեալ խնդիրները պետական մակարդակի վրայ:

Երկուստեք բարեմաղթութիւններ կատարուեցան Ղարաբաղի եւ Հայաստանի, հայ ժողովուրդի խաղաղութեան, նրկրի վարչական ու փնտրեցական կայունութեան եւ ժողովուրդի բարօրութեան համար:

Պատմական այս այցի յիշատակը պահելու համար խմբական լուսանկարներ առնուեցան Առաջնորդարանի մուրքին, որմէ ետք հիւրերը հրաժեշտ առին:

ԴԻԲԱՆ ԱՌ-ԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵԴՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՌՕՐԵԱՅ ՀԱՒԱՔԸ ԵՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔԸ

Արևմտյան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տերպերեանի մկրտագումով, Հայց. Եկեղեցույ Արևմտյան թեմի Արշակ եւ Էլիանոս Տիգրանեան համալիրի Արմեն եւ Կլորիա Համբար դահլիճին մէջ կազմակերպուեցաւ հոգևորականներու եռօրեայ հաւաք, որուն գործադիր պատասխանատուն էր Հոգշ. Տ. Տաճար ծ. վրդ. Եարպըմնան:

Դասախօսութիւնները փոփոխութեան հոգեւորականներին 20-ին, 21-ին եւ 22-ին, նախագահութեամբ առաջնորդ Սրբազան Հօր:

Առաջին օր առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ եւ մասնակցութեամբ Գերշ. Տ. Վաչէ արքեպս. Յովսէփեանի, Գերշ. Տ. Արսէն արքեպս. Պերպերեանի եւ թեմիս հոգևորականներուն, առաւօտեան ժամը 9.15-ին կատարուեցաւ ժամերգութիւն: Ապա Տ. Տաճար ծ. վարդապետ կատարեց իր բացման խօսքը՝ մէջբերումներ կատարելով Սուրբ Գիրքէն եւ շեշտելով «արդար» ըլլալու եւ «Աստուծոյ ճամբէն թափելու» կարեւորութիւնը, յիշեցնելով, որ հոգևորականներ շարունակ պէտք է ինքնաքննութեան եւ ինքնաճանաչումի ենթարկեն իրենց անձերը եւ վերանորոգուելով նուիրուին իրենց առօրեայ հոգևոր ծառայութեան՝ հաւաքացեալները ղեպի Աստուած եւ փրկութիւն առաջնորդելու:

Դասախօսութիւններու այս շարքը սկսուեցաւ առաջնորդ Սրբազան Հօր բանախօսութեամբ, որուն նիւթն էր «*Քահանայ-Հովիւին առաքելութիւնը հանրային կենսութեան եւ համաշխարհայնացումի (globalization) մթնոլորտէն ներս*»:

Բնական է, այս նիւթը չափազանց ընդարձակ է, սակայն Սրբազան Հայրը գայն ներկայացուց ամփոփ եւ իր գլխաւոր կէտերով: Հովիւ-Քահանան որպէս ձեռնադրուած եւ օծուած ծառան Աստուծոյ, միշտ իր բանաւոր հօտին հետ է, գայն ղեպի Աստուծոյ մօտեցնելու, խաղաղութիւն եւ համերաշխութիւն քարոզելու եւ իր հաւաքացեալներուն հոգևոր հայրը դառնալու: Ինչպէս որ զանազան ասպարէզներու մասնագէտներ իրենց գիտելիքները կառնել են եւ նոր նուաճումներու կը դիմեն, նոյնպէս այլ հոգևորականներ քարոզչական, կազմակերպչական ազդեցիկ նոր եղանակներով պէտք է ջանան գոհացնել իրենց հաւաքացեալներուն հոգևոր կարիքները: Անոնք պէտք է իրենց կենսութեան եւ գործով դառնան «լոյս ի մէջ մարդկանց»:

Անցնող 20րդ եւ ներկայ դարը մեծ մարտահրաւերներ եւ դժուարութիւններ կը ստեղծէ: Ներկայիս հոգևորականներուն ծառայութեան դաշտը ընդարձակուած է զանազան նոր պարագաներու ստեղծումով: Դժբախտաբար շատ մը հաւաքացեալներ կը հեռանան Աստուծոյմէ եւ աշխարհիկ կենսութեան փորձութեան: Քահանայ-Հովիւ միշտ պարտաւոր է վրայ կը գտնուի եւ յարապետ աղօթքով հաղորդակից պէտք է դառնայ Աստուծոյ հետ եւ կարենայ թափանցել իր ժողովուրդի կենսութեան մէջ:

Երկրորդ բանախօսն էր Հոգշ. Տ. Տաճար ծ. վրդ. Եարպըմնան, որուն նիւթն էր «*Երրորդ հազարամեակի Եկեղեցին սպառնալիքներ, կարեւորութիւններ, հեռանկարներ*»:

Երրորդ բանախօսն էր դոկտ. Տ. Ստեփանոս քինյ. Տիմոքիան, որուն նիւթն էր «*Քրիստոնէական եւ աշխարհիկ ցանկութիւններու տարբերութիւններ*»: Տէր Հայրը իւրա-

յապրույց ոճով և Սուրբ Գրային մեջբերումներով մանրամասն բացատրություններ փոխառելու և յուրովանջեց հոգեւոր կեանքով ապրող և աշխարհիկ կեանքով ապրողներուն միասնականացմանը, անկախությունները, խորհուրդները և աշխարհահայացքները:

Չորրորդ բանախօսն էր դոկտ. Արթ. Տ. Զաւեն աւագ թեյ. Արգումանեան, որուն նիւթն էր *«Երկինքի Արքայութեան նահապետական երկրի վրայ, ըստ Արքայութեան տոմարների»*: Տեր Հայրը Տերունական Աթոթի «Եկեցե՛ք Արքայութիւն ըս» խօսքը առնելով իր բացատրութիւնը փոխառելու:

Երկրորդ օրը բանախօսութիւններն սկսելէ առաջ, առաւօտեան ժամը 9.00-ին, կատարուեցաւ ժամերգութիւն:

Դասախօսութիւններու կազմակերպիչ Նոգ՝ Տ. Տաճար ծ. վրդ. Եարպըմեան հակիրճ ընթերցում մը կատարեց Գործք Առաքելոց գիրքէն և ապա Թադէոս Առաքելի Կանոնադիրքէն մեջբերում մը յիշեց՝ ուղղութեամբ հոգեւորականներուն:

Օրուան առաջին բանախօսն էր առաջնորդ Սրբազան Հայրը, որուն նիւթն էր *«Թեմական կեանքի կառոյցներուն կարեւորութիւնը միջհամայնքային գործունէութեան ծիրէն ներս»*:

Սրբազան Հայրը հակիրճ կերպով անդրադարձաւ իր հովուական ծառայութեան և ապա առաջնորդական կեանքին միշտ շեշտը դնելով, թէ հոգեւորականը կանչուած է Աստուծոյ կողմէ և թէ հոգեւորականութիւնը կոչումի և նուիրումի ասպարէզ մըն է, որ իր «խաչքը» առնելով Քրիստոսի պիտի հեծնուի, հայրը դառնայ իր հօրիկ և ժողովուրդին հաւաքքը գորացնէ: *«Հոգեւորականին ներգործական ներկայութիւնը Յօիսէն ներս անհրաժեշտութիւն մըն է»*, - ըսաւ Սրբազան Հայրը:

Խօսելով Թեմական և Ծխական կառոյցներու մասին, յայտնեց, թէ մէկը միւսէն անկախ և իրարմէ անջատ կառոյցներ չեն, այլ թեմը Ծովսեանութեան կեդրոնն է, որ բոլորին ուղղութիւն կուտայ և Ծովսեանութեան և համայնքներուն համախմբումով թեմական կառոյցը կը գործանայ և իր առաջնորդող դիրքին համաձայն կը ծառայէ հաւաքացեալներուն:

Սրբազան Հայրը գոհունակութեամբ յայտնեց, թէ անցնող տարւոյն ընթացքին թեմէն ներս մեծ թիւով նոր կառոյցներ հաստատուած են, որոնք կ'ընդարձակեն թեմին ծառայութեան հորիզոնը և աւելի մեծ թիւով հաւաքացեալներու կարիքներուն կը հասնին: Նորահաստատ կառոյցներէն յիշեց մի քանին, ինչպէս Եկեղեցականութեան Թեմական Գործակալութիւնը, որուն ջանքերուն շնորհիւ այսօր եօթ սարկաւազներ և կիսասարկաւազներ ունինք, որոնք յարույճ սարքերով կը հեծնուին և միեւնոյն արեւն կը յաճախեն Ամերիկեան Աստուածաբանական Դպրոց: Հայ Երիտասարդաց Առաքելութիւնը Դեպի Հայաստան, որ հոգեւոր հովիւներու աջակցութեամբ երիտասարդներ կը հաւաքէ և ուխտագնացութիւններ կը կազմակերպեն դէպի Հայաստան, որ անոնք քրիստոնէական շունչը կը ստանան և հայրենասիրական ոգիով կը գործանան: *«Պայծառ ապագայ Հայաստանի համար»*, այս կառոյցի միջոցաւ կոչ կ'ուղղուի երիտասարդութեան, որ ամէն օր մէկ Տոյար խնայելով, ամէն փարի 365 Տոյար փրամադրեն Հայաստանի մէջ ուսանողի մը կրթաթոշակը ապահովելու: Այսպիսով, երիտասարդութեան մօտ քարի մօտեցում մը կը ստեղծուի և իրենց կապակցութիւնը ժամանակի ընթացքին աւելի կը գործանայ:

Սրբազան Հայրը յիշեց նաեւ թեմիս Մնայուն Հիմնադրամի միջոցաւ իրագործուած օգտակար ծրագիրները: Ապա ուրախութեամբ յայտնեց, թէ ըստ կատարուած ծրագրի, երեք

փարի յեփոյ Արեմփեան, Արեւելեան եւ Գանադահայոց թեմի երիտասարդութիւնը «Համամերիկեան» հաւաք մը պիտի ունենայ, իսկ իննգ փարի նոյն թեմերուն երիտասարդութիւնը ընդարձակ մարգադաշտի մը մէջ մարգական խաղեր եւ համաժողով պիտի կազմակերպեն:

Առաջնորդ Սրբազան Հայրը անդրադարձաւ նաեւ Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմնին ընկալնուած նոր ծրագիրներուն եւ Տիկնանց Միութեան Կեդրոնական խորհուրդի նախաձեռնած ծրագիրներուն, որոնք Շուիտերու այցելութեամբ, Սուրբ Ծննդեան Ընդունելութիւններուն եւ այլ համաժողովներու միջոցաւ առաւել եւս կը զօրացնեն Արեմփեան թեմը, Շուիտերը եւ անոնց հաւատացեալները:

Սրբազան Հօր հոգեւոր պապականն ու փրկած փեղեկութիւնները գոհունակութեամբ ընդունուեցան բոլոր հոգեւորականներուն կողմէ:

Երկրորդ բանախօսն էր Վէն Նայսի Սուրբ Պետրոս հայոց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Շնորհք քեհյ. Տեմիրճեան, որ խօսեցաւ «*Հոգևոր զարգացումի տարիճանական փոքնաստութիւնը հաւատացեալներուն մօտ (սկսական, աշակերտ, դպիր, տաաքեալ)*»:

Երրորդ բանախօսն էր Արժ. Տ. Վարդան առաք քեհյ. Գասպարեան, որուն նիւթն էր «*Երիտասարդական յուշեր որպէս հիմ Հովուական Լիարտածաքսութեան*»:

Տէր Հայրը իր բարձրագոյն ուսումով եւ քահանայական ծառայութեամբ ամերիկահայ սերունդի յաւագոյն ներկայացուցիչներէն մին է Արեմփեան թեմէն ներս: Փոքր փարիքէն սկսեալ իր ծնողներուն հետ յաճախած է եկեղեցի, ծառայած է որպէս դպիր եւ նրգեհոնաւոր: Ան չափազանց գործունեայ եղած է երիտասարդաց կազմակերպութեան եւ թեմիս Ամառնային Ճամբարէն ներս: Որով շար լաւ թափանցած է երիտասարդներու հոգեբանութեան եւ անոնց դաստիարակութեան նուիրումը է երկար փարիներ: Մեր Եկեղեցւոյ գլխաւոր գիտելիքներու մասին գրած է զբոյլներ եւ չափազանց օգտակար դարձած է երիտասարդութեան հոգեւոր կնանքին:

Կէսօրէ ետք փեղի ունեցաւ միայն մէկ բանախօսութիւն: Արժ. դոկտ. Տ. Ստեփանոս քեհյ. Տիկնայեան բանախօսեց «*Քրիստոնէական հոգեկան զոհացումը աշխատանքային կեանքին մէջ*» նիւթին շուրջ:

Օրուան աշխատանքները ամփոփեց առաջնորդ Սրբազան Հայրը: Երեկոյեան ժամերգութեամբ փակուեցաւ օրուան բանախօսութիւններուն շարքը:

Երրորդ օրը նախորդ երկու օրերուն նման, առաւօտեան ժամը 9.00-ին ժամերգութիւն կատարուեցաւ, որու աւարտին առաջնորդ Սրբազան Հայրը երեք «վեմ-քարեր»ու օրհնութիւնն ու օծումը կատարեց, որոնց պիտի գործածուին նորակազմ փոքր Շուիտերէն ներս Սուրբ Պատարագի համար:

Դասախօսութիւններու շարքի կազմակերպիչ-պատասխանատու Հոգ. Տ. Տաճար ծ. վրդ. Եարպըմեան Սուրբ Պօղոս Առաքեալի նամակէ մը մի բանի մէջբերումներ ընկելով եւ ապա Սուրբ Ներսէս Շնորհալիի «Թուղթ Ընդհանրական»էն հափումը մը ընթերցեց, որ ուղղուած էր քահանաներուն:

Օրուան առաջին բանախօսն էր առաջնորդ Սրբազան Հայրը, որուն նիւթն էր «*Առանձնութեան, յոռութեան եւ սոցոթիկ դերը՝ քրիստոնէական հոգեկանութեան յաղաչողութեան մէջ*»:

Սրբազան Հայրը «Արթուն մնալու և աղօթք ընելու» մասին խօսեցավ, յիշելով որ Քրիստոս բոլորիս կը պատուիրէր այս կարեւոր պարզամը: Շեշտեց աղօթքին կարեւորութիւնը՝ յայտնելով, որ Անկարարանը ինքնին աղօթագիրք մըն է, որուն ընթերցումը մեր էութիւնը կը կեռապարանափոխէ եւ նոր արարած կը դարձնէ մեզ: Իսկ լռութեան եւ առանձնութեան մէջ իրական անբակտեղի միութիւն մը կը ստեղծէ հաւաքացեալի եւ Աստուծոյ միջեւ:

Երկրորդ բանախօսն էր Հոգ. Տ. Տաճար Ժ. վրդ. Եարպըմեան, որ խօսեցաւ «Աշխարհէն փախչելու քրիստոնէական մտածողութիւնը եւ հաւաքի սպորումը Քրիստոնէութեան առաջին դարերուն» թեմայով:

Հայր Սուրբը յայտնեց, թէ իր նիւթը ձեռով մը շարունակութիւնն է Սրբազան Հօր նիւթին: Ապա պարզաճ հարուած մը կարդաց Հին Կտակարանէն եւ իր խօսքը շարունակեց՝ ըսելով, թէ Աստուծոյ կողմ երաւել մըն է բոլորիս եւ Իր ներկայութիւնը Սուրբ Հոգիով մեզ կառաջնորդէ դէպի բարի գործեր կատարելու:

Երրորդ բանախօսն էր Արժ. դոկտ. Տ. Ստեփանոս քնն. Տիեզիկեան, որուն նիւթն էր «Պաշտպանե՛լ Հայ ընտանիքին սրբութիւնը»:

Տէր Հայրը ընդհանրապէս խօսեցաւ «ընտանիք, յոյս եւ Եկեղեցի» բնաբանով շեշտելով, որ մարդը հոգեկան վիճակէն կ'անցնի եւ յոյսը անհրաժեշտութիւն մըն է: Գիրք մը գրած է այս նիւթին շուրջ, ուր արձանագրած է Ամբիկայի եւ Հայաստանի մէջ երիտասարդութեան եեւր իր կատարած հետազոտութիւններուն արդիւնքները: Յոյսը ընտանիքն է, յոյսը փոխանցեց մեր զաւակներուն: Մենք «Հայր» կը կոչենք զԱստուած: Քրիստոս եւս յաճախ «Հայր» կոչած է զԱստուած: Ընտանիքը կը ներկայանայ որպէս մարդուն հիմնական վիճակը: Հոգեւոր դաստիարակութիւնը կը սկսի Կոնստանտինէ: Ուսումնասիրութիւնը ցոյց կուտայ, որ երախային մէջ սերը կը փայտորտի մօրը միջոցաւ, իսկ յոյսը՝ հօր: Սիրտը զարգացման խրաջանցիւր քայլը յոյսով ամրապնդելու կարիք ունի:

Օրուան վերջին բանախօսն էր Արժ. Տ. Սիմիան առաջ քնն. Միսեան, որ խօսեցաւ «Հայց. Եկեղեցին, Ազգայնացում, Ոսկեդար, դիմագրաւած դժուարութիւններ եւ ապագայի մտահոգութիւններ» նիւթին շուրջ:

Տէր Հայրը հանգամանօրէն խօսեցաւ Հայց. Եկեղեցոյ պարամական անունին մասին՝ շեշտելով անոր առաքելականութիւնը, մեջբերումներ կատարելով մեր մայրնագիրներէն, պատմիչներէն եւ բարձրաստիճան հոգեւորականներէն:

Մրբերու փոխանակութենէն ետք առաջնորդ Սրբազան Հայրը փակման խօսքին մէջ իր գնահատութիւնը յայտնեց բոլոր հոգևորականներուն եւ կոչ ուղղեց բոլորին, որ իրենց շնորհները բաժնեկից դարձնեն հաւաքացեալներուն: Ապա Տէրունական «Հայր Մեր» աղօթքի երգեցողութեամբ եւ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով փակուեցաւ Արեւմտեան թմի հոգեւորականներուն հօրեայ հաւաքը եւ դասախօսութիւններուն շարքը:

Աստուծոյ կամքով, յառաջիկայ փարի Հոկտեմբեր 12-15 պիտի ծրագրուի դասախօսութիւններու մի նոր շարք:

Հոգեւորականներ իրենց նրախարագիւթութիւնը յայտնելով առաջնորդ Սրբազան Հօր, հոգեպէս վերանորոգուած վերադարձան իրենց Ծուխերն ու պաշտօնադէպները:

ԴԻԻՄՆ ՄՈԱԶՆՈՐԴԱՐՄԵՆԻ

ՄԻՋԵԿԵՂԵՅԱԿԱՆ



ԲԵՆԵՂԻԿՏՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՏԱԺՈՂՈՎԸ ՀՈՌՄՈՒՄ

(20-29 սեպտեմբերի 2004 թ.)

Սույն թվականի սեպտեմբերի 20-29-ը հռոմում տեղի ունեցավ Բենեդիկտյան միաբանության արքահայրերի վեհաժողովը՝ մասնակցությամբ Եվրոպայի և աշխարհի զանազան շրջաններից ժամանած շուրջ 160 ժողովականների՝ Տիեզերական Պապոհարությունից, Հայ Առաքելական, Հույն Ուղղափառ, Ռումին Ուղղափառ, Անգլիկան և սյլ Եկեղեցիներից:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այդ վեհաժողովին Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացրեց Իսրայիլյի հայոց հոգեւոր հովիվ Հոգեշնորհ Տ. Առեն արք. Շահինյանը:

Բացման խոսքով հանդես եկավ Բենեդիկտյան միաբանության ընդհանուր արքահայր Նոյրկեր Վուլֆը՝ ողջունելով ներկաներին և հայտնելով ժողովի օրակարգի հիմնական նյութերը, որոնք վերաբերում էին գլոբալիզացիային և անցած չորս տարիների ընթացքում միաբանության կատարած աշխատանքներին: Ժողովին ներկա էին բարձրաստիճան պատգամավորներ, հոգևորականներ և աշխարհականներ, համալսարանների դասախոսներ:

Սեպտեմբերի 22-ի բանախոսն էր Ս. Էջիդիո համայնքի նախագահ պրոֆ. Անդրեա Ռիկարդին՝ նյութ ունենալով համամիութենական շարժումը Եկեղեցիների միջև, անդրադառնալով Վաթիկանի և բոլոր Եկեղեցիների միջև հարգանքի փոխադարձ հարաբերություններին:

Հաջորդ օրը, սեպտեմբերի 23-ին, առավոտյան, ժողովականները մեկնեցին "Castelgandolfo", ուր հանդիպում ունեցան հռոմի Սրբազան Բահանայապետի հետ: Բենեդիկտյան միաբանության ընդհանուր արքահայրը Պապին փոխանցեց ժողովականների բարենադրանքները՝ արեւշատության և քաջատոգջ բազում տարիների առաքելության համար: Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց ժողովականներին, Բենեդիկտյան միաբանության ղեկավարությանն ու վանականներին:

Սեպտեմբերի 24-ին ուխտագնացություններ կատարվեցին տարբեր վանքեր՝ ծանոթանալու միաբանության վանական կյանքին ու գործունեությանը:

Հաջորդ օրը գեկուցում կարդացվեց նախորդ չորս տարիների ընթացքում Բենեդիկտյան միաբանության իրականացրած գործունեության մասին՝ նպատակ ունենալով լուրջ քննարկումների ենթարկել այն և ճշտել միաբանության առաջիկա չորս տարիների գործունեությամբ:

յան գլխավոր ուղղությունները և հիմնական առաջնահերթությունները: Ապա քննարկվեց միաբանության փոփոխական վիճակը և փրվեցին համապատասխան բացատրություններ:

Մեկտեմբերի 27-ին իրենց խոսքով հանդես եկան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները: Հայր Աթոռն զննածուղովին փոխանցեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու ողջույնները և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության աղոթքներն ու լավագույն մաղթանքները: Ժողովը գնահատեց Ուղղափառ Եկեղեցու ներկայությունը՝ այսօրվա նկատելի ուրախ սկիզբը համամիութենական շարժման, ինչպես նաև սիրո ու հարգանքի արտահայտության գրոսնորում:

Ժողովը մասնավորապես մտախոգություն հայտնեց երրորդ աշխարհի երկրներում զուրալիզացիայի բացասական հետևանքների վերաբերյալ:

Վեհածուղովի ընթացքում նիստերն ուղեկցվում էին ամենօրյա Պատարագներով և ժամերգություններով:

ԳԱՅԱՆԵ ԱՆԵՋՄԱՆՅԱՆ

Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ 12-ՐԴ ՆԱՄԱԳԱՌՄԱՐԸ ԲՈԶԵԻ ՎԱՆՔՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 12-18-ը Բոզեի վանքում (Իսթաթլա) տեղի ունեցավ Ուղղափառ Եկեղեցիներին նվիրված Միջազգային Էկումենիկ 12-րդ համագումարը: Երկու գիտաժողով-նստաշրջաններին մասնակցեցին ավելի քան 200 ներկայացուցիչներ, այդ թվում՝ քրիստոնեական բազմաթիվ եկեղեցիներ ներկայացնող բարձրաստիճան հոգևորականներ, աստվածաբաններ, գիտնականներ և մտավորականներ: Նայ Առաքելական Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Նայրապետի բարձր կարգադրությամբ և օրհնությամբ ներկայացրեց Նոգեշնորհ Տ. Զարիկ վրդ. Ավետիքյանը:

Երկու գիտաժողովների բացումն իր ողջույնի և բարիգալստյան խոսքով կատարեց Բոզեի վանքի հիմնադիր և միաժամանակ ներկայիս վանահայր Էնցո Բիանկի վարդապետը:

Համագումարի օրերին, զեկուցումներից բացի, կարդացվեցին քույր Եկեղեցիների պետերի և բարձրաստիճան հոգևորականների օրհնության ուղերձներն ու ողջույնի խոսքերը: Երկու գիտաժողովների ընթացքին էլ կարդացվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Նայոց Կաթողիկոսի ողջույնի և օրհնության խոսքը: Առաջին ընթերցումը կատարվեց Ս. Խաչի տոնին մատուցված Ս. Պատարագին: Այդ առթիվ Նայոց Նայրապետի անունից ժողովի կազմակերպիչ և հյուրընկալ, Բոզեի վանքի վանահայր Էնցո Բիանկիին հանձնվեց Ս. Էջմիածնում պատրաստված փայտյա մի խաչքար, որպես Նայ Եկեղեցու նդաշտական աղոթքի ներկայություն այս վանքից ներս, և մի խաչքար, որպես խորհրդանիշ քրիստոնեական մեր ինքնության: Բոլոր ներկաներին միաժամանակ խնդրվեց աղոթելու նաև Նայ Եկեղեցու և նրա վանական շարժման վերածննդի համար:

Գիտաժողովներից յուրաքանչյուրը տեեց նրեք օր, և յուրաքանչյուր օրվա աշխատանքները նվիրված էին տարբեր թեմաների: Ընթերցվեցին զեկուցումներ և կատարվեց մարքերի փոխանակում:

Առաջին գիտաժողովը, որ տեղի ունեցավ սեպտեմբերի 12-14-ին, նվիրված էր Նույն Ուղղափառ Եկեղեցուն, և գլխավոր թեման էր՝ «Ս. Աթանաս Ալեքսանդրացին և Ս. Աթոս Լեռան Վանականությունը»: Առաջին օրվա թեման էր՝ «Ս. Աթանասը և Աթոս Լեռան վանքերի ծնունդը», երկրորդ օրը նվիրված էր «Վանքերի ընդլայնմանն ու տարածմանը», երրորդ օրվա թեման էր՝ «Վերածնունդ և հանդիպումներ»:

Երկրորդ գիտաժողովը տեղի ունեցավ սեպտեմբերի 16-18-ին և նվիրված էր Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգևոր գրականության մեջ Տիսուսի աղոթքին: Առաջին օրվա թեման էր՝ «Աղոթքի արվեստը», երկրորդ օրվանը՝ «Ուսուցում աղոթքի մասին», երրորդ օրը նվիրված էր «Աստվածաբանությունը և աղոթքը» թեմային:

ԳԱՅԱՆՆ ԿԱՆՔԱՆՆԱՆ

Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՆԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՆԱԶՆԱԽԱՐԻ ՆԻՍՏԸ ԲՐՅՈՒՄԵԼՈՒՄ

2004 թվականի սեպտեմբերի 20-22-ը Բրյուսելում կայացավ ԵԵԿ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի ընդլայնված նիստը: Հանդիպումը, որին մասնակցում էին ԵԵԿ անդամ Եկեղեցիների «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբերի ավելի քան երեք տասնյակ ներկայացուցիչներ, տեղի ունեցավ Բրյուսելի Ամազոն մշակութային կենտրոնի նիստերի դահլիճում:

Հայ Առաքելական Եկեղեցին սույն ժողովին ներկայացնում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության անդամ և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը:

Հանդիպումը մի ամիս էր, որ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբերի քարտուղարները միմյանց հետ փոխանակեն իրենց ունեցած ըմբռումները և փորձառությունը Եկեղեցուն և հասարակական կյանքին առնչվող այլ-լնայլ հարցերի վերաբերյալ, ստեղծեն համագործակցության շղթա, քննարկեն Բրյուսելում գտնվող Եվրոպական Էկումենիկ կառույցներում տեղի ունեցող իրադարձությունները, իրենց «տեղային առաջադրանքները» կապեն ընդհանուր «Եվրոպական առաջադրանքներին» և գտնեն գործընկերներ՝ համընդհանուր խնդիրները լուծելու և համապիտ ծրագրեր իրականացնելու համար:

Ժողովի աշխատանքները տևեց երեք օր: Հանդիպումների ընթացքում, բացի պաշտոնական ներկայացուցիչների զեկույցներից ու առանձին քննարկումներից, ընթերցվեցին դասախոսություններ և տեղի ունեցան հանդիպումներ Բրյուսելում գործող Էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչների և Եվրոմիության խորհրդարանի ներկայացուցիչների հետ: Քննարկումների ընթացքում շոշափվում էին եիմնական երեք հարցեր՝ «Եվրոմիության ընդլայնումը», ուր խնդիրը առարկան Թուրքիայի անդամակցությունն էր, ապա «Եվրոմիության սահմանադրությունը»՝ 52-րդ հոդվածի առնչությամբ, ինչպես նաև «Մոցիալական հե տաքրքրության ծառայությունների» վերաբերյալ Եվրոմիության օրենսդրությունը:

Ժողովի ընթացքում նաև խոսվեց գաղթականների մասին, հասարակության մեջ նրանց ինտեգրման, աշխատանքով ապահովման, կրթության, իրենց ազգային արժեքների, լեզվի, մշակույթի, կրոնի պահպանման հարցերի շուրջ, որը բոլորի կողմից ընդունվեց որակաևորեն: Անդրադարձ եղավ նաև գլոբալիզացիային, վերջինիս դրական և բացասական կողմերին:

ՆՈՎԱԿԻՄ ԱԲԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ ՊՐԱՎՅՈՒՄ

(27 սեպտեմբեր – 3 հոկտեմբեր 2004 թ.)

Սույն թվականի սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 3-ը տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) Կենտրոնական Կոմիտեի նիստը Չեխիայի Հանրապետության մայրաքաղաք Պրահայի Միջազգային Բապտիստական Աստվածաբանական Ճեմարանում:

ԵԵԿ-ի դեկավար մարմինը, բաղկացած 40 անդամից, նախագահում էր պատվելի Ժան Առնոլդ դը Բլերմոնը (Ֆրանսիա): Փոխնախագահներն էին Տիրանայի և համայն Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու Արքեպիսկոպոս Գերաշնորի Անաստասիոսը և Շվեդիայի Լյութերական Եկեղեցու առաջնորդ Վերապատվելի Մարգարեթ Այզբերգը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորի Տ. Եզնիկ եպիսկոպոս Պեքրոսյանը:

Հանդիպման օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը. 2007 թ. գումարվելիք երրորդ Եվրոպական Էկումենիկ Ասամբլեայի առաջարկի վերաբերյալ վերջնական որոշման ընդունում, «Էկումենիկ վերակազմավորման» հարուկ հանձնախմբերի հաշվետվությունների քննարկում, դաշինքի և «դիալոգիայի» բնագավառներում ԵԵԿ-ի աշխատանքի վերանայում, ԵԵԿ-ի և գաղթականների համար Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի ինտեգրացիան: Կենտրոնական Կոմիտեն քննարկեց նաև ԵԵԿ-ի աշխատանքներին երկրասարդության մասնակցության և Եվրոպայում առաքելության և Եվրոպայի աշխարհայնացման խնդիրները:

«Կենտրոնական Կոմիտեի այս հանդիպումը խիստ կարևոր է,- ասաց ԵԵԿ-ի գլխավոր քարտուղար վերապատվելի Ջեյթ Բլեմմոսը:- Մենք միաժամանակ անդադառնում ենք մի քանի կարևոր խնդիրների, որոնք յուրք ազդեցություն են ունենալու ԵԵԿ-ի հետագա ձևավորման և ուղղության վրա: Մենք ինքներս արդեն ընդգրկված ենք «Էկումենիկ վերակազմավորման» գործընթացում»:

Սեպտեմբերի 29-ին Կենտրոնական Կոմիտեի անդամներին նվիրված մի համերգ տեղի ունեցավ Սուրբ Նիկոլասի Հուսիտ եկեղեցում՝ Պրահայի կենտրոնական Հին Քաղաքային Հրապարակում, որին հաջորդեց Չեխիայի Հանրապետության Եկեղեցիների Էկումենիկ խորհրդի կազմակերպած հյուրասիրությունը: Հոկտեմբերի 1-ին ԵԵԿ-ի Չեխիայի անդամ Եկեղեցիները քննարկում կազմակերպեցին Չեխիայի հասարակության աճող աշխարհայնացման և Եվրոխորհրդի ընդլայնման վերաբերյալ:

ՎԱՄԱԳՆ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԱԶԻԶՅԱՆ

«ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՀՈՌԴՈՍՈՒՄ

(29 սեպտեմբեր - 2 հոկտեմբեր 2004 թ.)

Այս սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը Հունաստանի Հողոս կղզում կազմակերպված «Քաղաքակրթությունների երկխոսություն» համագումարին Հայ Առաքելական Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի փերինությունամբ և օրհնությամբ ներկայացրեց Հոգեշնորհ Տ. Մուշեղ արքեպիսկոպոս Բաբայանը: Համագումարին մասնակցում էին շուրջ 380 ներկայացուցիչներ աշխարհի 40 երկրներից: Որպես ներկայացուցիչներ հրավիրված էին հայրնի գիտնականներ, քաղաքական, կրոնական և հասարակական գործիչներ, մշակույթի ու արվեստի գործիչներ, ինչպես նաև լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Համագումարը միջազգային բաց երկխոսություն էր՝ նվիրված այն հիմնախնդիրներին, որոնք հուզում են ժամանակակից հանրությանը: Այս համագումարը կազմակերպվել էր 2002 թվականին, որի նպատակն ու առաքելությունն էր՝ միավորել միջազգային հանրության ուժերը՝ մարդկության հոգևոր մշակութային արժեքները պահպանելու համար:

Համագումարի առաջին նիստը փեղի էր ունեցել 2003 թվականի սեպտեմբերի 3-6-ը Հողոսում՝ հետևյալ կազմակերպությունների մասնակցությամբ. «Центр национальной славы России» (Ռուսաստան), «Titan Capital Corporation» (Հունաստան), «Karur Surya Foundation» (Հնդկաստան):

Ռուս Ուղղափառ Եկեղեցու հետ կապված ձեռնարկներում «Центр национальной славы России» կազմակերպությունը սերտ համագործակցում է «Фонд Святого Все-хвального апостола Андрея Первозванного» հիմնադրամի հետ, որն ստացել է Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսի Բ-ի օրհնությունը, և այս երկու ժողովրդական կազմակերպություններն ունեն մեկ նախագահ և հանդիսանում են համագումարի գլխավոր կազմակերպիչներից մեկը:

Բացի փարեկան այսպիսի համագումարներից, կազմակերպվում են նաև փեղական միջոցառումներ:

«Քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային ծրագրի մասնակիցներ են եղել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մոհամմադ խաթամին, Լիբանանի նախագահ Վալդաս Ադամյուսը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախագահ Կոֆիյի Մադուրան, Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ն, Չեխիայի և Հնդկաստանի նախկին վարչապետներ Միլոշ Ջեմանը և Ինդեր Կումար Գուդրալը, Ֆրանսիայի Ակադեմիայի մշտական քարտուղար Էդեն Կարրեր դ'Անկոսը և ճանաչված ուրիշ գործիչներ:

Այս փարվա համագումարի թեման էր՝ «Քաղաքակրթությունների երկխոսությունը և ժամանակակից մարդասերականները», որի մասին ընդհանուր դասախոսություններից հետո չորս բաժանմունքներում թեմատիկ փարքեր հարցեր քննարկվեցին:

Հայր Մուշեղն իր մասնակցությունն է բերել 4-րդ՝ «Կրոնը քաղաքակրթությունների երկխոսությունում» բաժանմունքին, որը հիմնականում նվիրված էր աշխարհը հուզող ահաբեկ-

չությունների խնդիրին, իսկամ և քրիստոնյա հարարերություններին և դրանց ծայրահեղ դրսևորումներին, աղանդներին և նրանց բայբայիչ գործունեությանը՝ որպես պեպական, կրոնական և մշակութային սահմաններ չճանաչող և չընդունող քարալուծիչ կազմակերպություններ:

Համագումարին ներկա էին նաև Մոսկվայում ԼՂՀ ներկայացուցիչ քիար Ռուրեն Զարգարյանը, Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը և ԱԺ սպարզամավոր Սերյոժա Աբրահամյանը:

Հրավիրված էին նաև Ադրբեջանից ներկայացուցիչներ, ովքեր, սակայն, հրաժարվել էին մասնակցել հայերի՝ ի մասնավորի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցչի պարճամով:

Համագումարի մասնակիցները նաև հանդես եկան հայարարությամբ:

**«ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԻՆՈՍՈՒԹՅՈՒՆ»
ՄԻԶՁԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ
ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
(Շոողոս, 2004 թ.)**

«Քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային հասարակական համաժողովի երկրորդ հանդիպումը, որ տեղի ունեցավ Հունաստանի Շոողոս կղզում 2004 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը, ի մի բերեց մի քանի հարյուր մարավորականների, գիտնականների և հասարակական ու աշխատակցական միությունների գործիչների, քարքեր կրոնների ներկայացուցիչների, զանգվածային յուրավամիչոցների և ավելի քան 40 երկրների գործարար դեկավարների:

Մեր օրերում, երբ բնորոշ է բնության քարաժողովը, երբ չափից ավելի շարք են աթաթծվում պարերազմների, քան խաղաղության և աղաղության թեմաները, համաժողովը վերադին հասարաթում է իր պարաթաթությունները քաղաքակրթությունների միջև տեղի ունեցող երկխոսության նկարմամբ, որը հակազողում է քաղաքակրթությունների բախման սպառնալիքին:

Երկխոսությունն ընդունում է քարքեր մշակույթների և մարդկային անհատների աթաթնաթարթությունը, անկախությունն ու ամբողջականությունը և դեմ է հեղեմնոն գերիշխանության և մշակութային համախաթաթանեցման բոլոր դրսևորումներին:

Երկխոսությունը ճանաչում է քարքեր կրոնների և մշակութային ավանդությունների աթաթնեթները՝ դարաթարթունյով աղա աթաթների շուհազողծումը իշխանության կամ քաղաքական նաթարակների հասնելու մարաղությունը:

Այս պարաթաթություններն ուժեղացնելու քանքերում համաժողովն իր ուղաղությունը կենթրոնացնում է հեղեթայ թեմաների վրա գողթալիզացիա և աշխաթիում կարգ ու կանոնի՝ մարդաթիական գողթալ կարգավորման անհրաժեթություն, մշակույթ և միանեմանություն համաշխաթիային քաղաքականության

մեջ, նոր սերունդն արժեքների որոնումներում և կրոնների դերը քաղաքակրթությունների երկխոսության մեջ:

Գլոբալիզացիայի մասին քննարկումներում համաժողովն իր ուշադրությունը կենտրոնացրեց գլոբալ կարգավորման ժողովրդավարական և բազմակի ձևերի անհրաժեշտության վրա՝ որպես հսկակշիռ միակողմանի գերիշխանությունը և շուկայական ուժերի տարերային կանոններին:

Մշակույթի և միանմանության մասին քննարկումներում մասնակիցները կարծեցին և՛ մշակութային ավանդույթների ամբողջականության ու բազմազանության պահպանությունը, և՛ ծայրահեղականության դրսևորումների ու զինված բռնությունների կանխումը:

Նոր սերունդների՝ արժեքների որոնումների մասին խոսելիս համաժողովի մասնակիցներն անհրաժեշտ համարեցին վերացնել ավանդույթների և արդիականության միջև եղած բացը և խրախուսել երկխոսությունը սերունդների միջև:

Քաղաքակրթությունների երկխոսության մեջ կրոնների դերի մասին քննարկումները կենտրոնացան միջկրոնական հանդիպումների կազմակերպման և միջկրոնական երկխոսությունների զարգացմանը նպաստելու անհրաժեշտության վրա:

Համաժողովի մասնակիցները կարծում են, որ, ձգտելով իրականացնել այդ նպատակները, մենք կարող ենք նպաստել այն դրական ներդրմանը, որ հասարակական կազմակերպությունները կարող են ունենալ աշխարհի խաղաղության և առաջընթացի հարցում:

Համաժողովի մասնակիցները նաև ընդունում են լայնամասշտաբ տեղեկատվություն ապահովելու անհրաժեշտությունը՝ քաղաքակրթությունների երկխոսության գաղափարների տարածման և գործող քաղաքական համակարգերի վրա ազդեցություն գործադրելու հարցում՝ արժեվորելու համար երկխոսությունը որպես հսկակշիռ հեգեմոն ճնշումներին և ահաբեկությանը:

ԳԱՅՄՆԵ ԱԼԵԶՄՆՅԱՆ

Միջնկեղեցական հարաբերությունների բաժին

ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՆԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՆԱԶՆԱԿԱՄԱԲԻ ՆԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի գործադիր կոմիտեն Թուրքիայի անդամակցության հարցի շուրջ հոկտեմբերի 5-ին հանդես է եկել հայտարարությամբ, ուր, անդրադառնալով այս խնդրին, ասվում է, որ «Եվրոմիության հարաբերությունները Թուրքիայի հետ հույժ կարևոր են Եվրոմիության համար: Թուրքիայի հնարավոր անդամակցությունը Եվրոմիությանը կազդի ոչ միայն Միության և ամբողջ Եվրոպայի քաղաքական կառուցվածքի վրա, այլև Եվրոմիության բազում քաղաքացիների և փարաժաշրջանում ապրող մարդկանց կենսապայմանների վրա»:

Հայտարարությունում նշվում է, որ սա միջկրոնական հարաբերություններին առնչվող հարց չէ և, շեշտագրելով այն պարագան, որ Եկեղեցիների Եվրոպական Կոնֆերանսը բանակցային գործընթացների մեջ ի խնդիր Խալամի հետ խաղաղության և հաշտեցման, շարունակում է. «Չնայած մենք տեղյակ ենք Թուրքիայում վերջին տարիներին տեղի ունեցող արմատական փոփոխությունների մասին, դժբախտաբար մենք տակավին տեսնում ենք բազում խնդիրներ այս բնագավառում:

Եվրոմիությունը պնդությունների և ազգերի մի համայնք է, ուր պարտադիր են փաստաթղթերով հռչակված արդարության և խաղաղության, համերաշխության և բազմազանության, հաշտության և հանդուրժողականության, խոսքի ազատության և փոխադարձ հարգանքի արժեքները, և Եվրոմիությունը ջանքեր է ի գործ դնում դրանք ամենօրյա կյանքի մասը դարձնելու համար: Ներկա փուլում Թուրքիայում այս արժեքների միևնույն արտահայտությունը մենք չենք տեսնում: Տակավին բանտերում բռնությունների, խոսքի ազատությունն ընդունելու խնդիրների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների հանդեպ ճնշումների մասին հաղորդումներ են լինում: Պաշտության ճշմարիտ հեղափոխությունը, մասնավորաբար դրա սյն մասը, որ առնչվում է Թուրքիայի հարաբերություններին հարևան երկրների հետ և որն ընդգրկում է պարճառած ցավերի և վիրավորանքների ճանաչումը, նախապայման է հասարակության մեջ հիշողությունը բժշկելու և ճշմարիտ հաշտեցման: Այն դեռ ձեռք բերված չէ: Այս առումով հայ փոքրամասնության հետ հարաբերությունը հատուկ ուշադրության է արժանի: ... Այս առումով Եվրոպայի Եկեղեցիներն արտահայտում են իրենց խորը անհանգստությունը քրիստոնեական փոքրամասնությունների վերաբերյալ: Չնայած Թուրքիայի պարտախանաբար իշխանությունների խոստումներին, երկրում քրիստոնեական համայնքները տակավին շար խնդիրների են բախվում օրենսկան ճանաչման, սեփականության իրավունքների և կրթական ծրագրի զարգացման հարցերում: Մեր գնահատմամբ խնդիրները միայն օրենսդրական բնույթի չեն: Դրա-

նից այն կողմ գոյություն ունի բացահայտ և անադիպար վերաբերմունք տվյալական կրոնների և էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ»:

Հարկ է ավելացնել, որ այս խնդրի առնչությամբ մի շարք այլ հարցերի հետ ԵԵԿ գրասենյակից հաղորդում են, որ Թուրքիայի Եվրամիությանն անդամակցության հարցի շուրջ ԵԵԿ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի նախագահ Ռուդիգեր Նոլը և Եվրոպայի Կաթոլիկ Էպիսկոպոսների Կոնֆերանսների Խորհրդից Նոել Տրինորը հոկտեմբերի 11-ին հանդիպում են ունեցել Նիդեռլանդների փոխվարչապետի հետ: Թուրքիայի անդամակցության հարցի հետ կապված նշել են, որ «Թուրքիայի կարգավիճակը, որպես գերազանցապես մահմեդական երկիր, խոչընդոտ չէ անդամակցությանը: Սակայն հարցեր են ծագում, արդյո՞ք Թուրքիան իրականացնում է Կոպենհագենյան չափանիշները՝ կապված մարդու իրավունքների բարելավմանը և մասնավորաբար կրոնական ազատության և ազգային փոքրամասնությունների խնդրին: Թուրքիայի հետ բանակցություններն սկսվելու են, բայց կարող է կասեցվել, եթե առաջընթաց չնկատվի վերոնշյալ չափանիշների հարցում:

Նշենք նաև, որ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսն իր տեսակետներն արտահայտում է Եվրոպական տարբեր արդյաններում:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՄԻՆ
ՄԻՋԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՎԱՐՈՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ԳԼՈՒԲԱԼԻԶԱՅԻՎ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՆԱՄԱԺՈՂՎԸ

Սույն թվականի հոկտեմբերի 1-ին Թբիլիսիում փնդի ունեցավ «Գլոբալիզացիա և Քաղաքակրթությունների Երկխոսություն» միջազգային համաժողովը, որին մասնակցում էին ներկայացուցիչներ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Նիդերլանդներից, Հարավային Կովկասի, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրներից:

Սիմպոզիումի աշխատանքներին, որպես Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ, իր գործուն մասնակցություն է բերել Վիրահայոց թեմի ստաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Համաժողովին Սրբազան Հայրը հանդես է եկել «Գլոբալիզացիա, քաղաքակրթություն և բարոյականություն» զեկուցմամբ:

Համաժողովի ընթացքում մասնակիցները կազմել և սպորազրեյ են մի ուղերձ, որը ներկայացնում ենք ստորև.

ՆԱՆՈՒՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ, ՆԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Մենք՝ «Գլոբալիզացիա և Քաղաքակրթությունների Երկխոսություն» միջազգային համաժողովի մասնակիցներս, հավաքված Թբիլիսիում Նորին Սրբություն Իլիա Բ Համայն Վրաց Պատրիարքի և ախաձեռնությամբ և Վրաստանի և ախագահ Միխայիլ Սախակաշվիլու հրավերով, դիմում ենք բոլոր երեսն, ովքեր անհանգստացած են աշխարհում բռնության և թշնամանքի աճից:

Մենք հայտնում ենք մեր անհանգստությունն այն փաստի նկատմամբ, որ բռնության և թշնամանքի արտահայտությունները վնասում են միլիոնավոր մարդկանց ու նորանոր տարածաշրջաններ են գրավում աշխարհում՝ խթանելով հարմակողմանի ֆանտիզմին, միջազգային և միջկրոնական հակամարտություններին և քաղաքացիական պատերազմներին: Ողջ աշխարհին ապառնացող չարքեր մեզանից պահանջում է միաբանություն և դիմադրողականություն: Մենք կիսում ենք բռնությանը գոհ դարձածների տառապանքը և երանք հայտնում մեր ցավակցությունը: Մենք կորցրել ենք հոգու խաղաղությունը Բեաթսից հեռու:

Մենք առաջինը չենք, որ խոսում ենք այս մասին: Դարեր շարունակ մարդկությունն արտել է արժևքների ընդհանուր համակարգ: Մեր խեղիքն է սկսել երկխոսություն, վերացնել թշնամանքը և հակասությունը բուհակցությունների և փոխընթերցման միջոցով: Եթե մենք հուցողենք սրանում, մեզանից հեռու եկող սերունդներին կթողնենք անգին և անտրանալի ժառանգություն:

Մենք դիմում ենք բարի կամքի բոլոր մարդկանց՝ ընդդեմ բռնության իրենց ջանքերը բազմապարկելու ու միավորելու և բուհակցությունների ու երկխոսու-

յամ միջոցով հակառակությունների և հակամարտությունների խաղաղ հաշտեցման կողմ: Նկատի առնելով ապագա սերունդների նկատմամբ մեր պատասխանատվությունը՝ կոչ ենք անում նրանց ձեռնպահ մնալ նոր պատերազմներից, ինչպես և արտահայտված է ՄԱԿ-ի կողմից մենք պետք է բացառենք պատերազմը և սահմանափակությունը մարդկային հասարակության կյանքից:

Մենք կոչ ենք հղում հասարակական, կրոնական և մշակութային գործիչներին՝ ի գործ դնելու իրենց ողջ գաղափարական և բարոյական հեղինակությունը՝ հաստատելու համար հանդուրժողականության և փոխըմբռնման ոգի տարբեր ուշադրության և կրոնական պատկանելություն ունեցող ժողովուրդների միջև, պաշտպանելու իրավունքները, արժանապատվությունը և յուրաքանչյուր մարդու կյանքը:

Մենք համոզված ենք, որ գերակից հասարակության՝ բարի կամքի բոլոր մարդկանց միաբանությունը կհաղթահարի սատկացած համաշխարհային բռնությունը և թշնամանքը:

Հանուն այս նպատակների Թբիլիսիի «Գլոբալիզացիա և Զաղաքակրթությունների Երկխոսություն» միջազգային սիմպոզիումը կոչ է անում բոլոր պետությունների և կառավարությունների ղեկավարներին, ՄԱԿ-ին և ՅՈՒՆԵՍԿՕ-ին, մյուս միջազգային կազմակերպություններին, բոլոր մակարդակների պաշտոնյաներին, բոլոր երկրների խորհրդարանների պատգամավորներին՝ աջակցելու նախաձեռնությանը և միջոցներ ձեռք առնելու քաղաքակրթությունների երկխոսությունը հնարավոր դարձնելու համար:

Համարում ենք այժմեական և կրապապ «Գլոբալիզացիա և Զաղաքակրթությունների Երկխոսություն» միջազգային սիմպոզիումը՝ գումարված Թբիլիսիում՝ Վրաստանում, որը հայրենի է փոխհանդուրժողականության իր երկարամյա հարուստ ավանդներով, ինչպես նաև վրացական և մոտ ու հեռավոր երկրների մշակույթների սերտ կապերով՝ նկատի առնելով Վրաստանի դերն ու նշանակությունը Կովկասում խաղաղության կերպման և զարգացման գործընթացում՝ իբրև քաղաքակրթությունների խաչմերուկ:

Մենք նպատակահարմար ենք համարում դիմել Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլուն, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Զոֆի Անանին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Զոյսիտո Մացուրային Թբիլիսիում «Զաղաքակրթությունների Երկխոսություն» Միջազգային Կովկասյան Կենտրոն հաստատելու առաջարկով, ինչը անկասկած լուրջ ներդրում կլինի Կովկասում ապահով, արդար և մարդկային խաղաղություն հաստատելու գործընթացում:

**«Գլոբալիզացիա և Զաղաքակրթությունների Երկխոսություն»
միջազգային համաժողովի մասնակիցներ**

ԳՄՅԱՆԵ ԱԼԵԶՍԱՆՅԱՆ
Միջինդեցական հարաբերությունների բաժին

ՇՎԵՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Նայաստանյան Էկումենիկ Եկեղեցական Փոխադրական Ֆոնդ» Փոխադրական Հիմնադրամը (ARM ECLOF) հոկտեմբերի վերջին հյուրընկալել էր Շվեդական Եկեղեցու պապփրակությանը, որոնց Նայաստանում գտնվելու առաքելությունն էր՝ ուսումնասիրել երկրում ԷԵՓՏ-ի աշխատանքը և հանդիպել նրանց հետ, ովքեր փոխառություն էին ստացել Հիմնադրամից:

Նանդիպումն սկսվեց ՆԷԲՖ ՓՏ-ի աշխատանքներին և ապագա ծրագրերին ծանոթանալով:

Նաջորդ չորս օրերի ընթացքում խմբի անդամները ծրագրերի իրականացմանը ծանոթացան տեղերում, հանդիպեցին հիմնադրամի փոխառությամբ աշխատող գյուղացիական խմբերին և կազմակերպություններին:

Այս շրջագայությունների ընթացքում հյուրերը տեսան, թե ինչպես է ԷԵՓՏ փոխառությունը օժանդակել մարդկանց ընդարձակելու իրենց տնտեսությունը և բարելավելու իրենց կենսապայմանները: Այս այցելություններից հետո Շվեդիայի մեր գործընկերներն ասացին, որ իրենք շատ տպավորված են կատարված աշխատանքներով և հայտնեցին իրենց զարմանքը, թե ինչպես է հնարավոր այսպիսի արդյունքների հասնել փոքր միկրովարկային փոխառություններ ստանալով:

Այցելության վերջում պապփրակությանն ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց Շվեդական Եկեղեցու, ՆԷԲՖ ՓՏ-ի և Միջազգային ԷԵՓՏ միջև առկա համագործակցության համար:

Նայաստանում գտնվելու վերջին օրը շվեդական պապփրակությունը հանդիպեց պաշտոնադար տարբեր անձանց Կաթավարությունում, ՄԱԿ-ի Նայաստանյան գրասենյակում և հասարակական կազմակերպություններում, որտեղ այցելության հիմնական նպատակն էր՝ ծանոթանալու Աղքատության նվազեցման տարբեր ժազմավարություններին, որն իր հերթին հնարավորություն տվեց Շվեդական Եկեղեցու ներկայացուցիչներին տեսնելու, թե որքան սերտորեն է ՆԷԲՖ Փոխադրական Հիմնադրամը համագործակցում երկրում գտնվող տարբեր կազմակերպությունների հետ:

Մենք շատ ուրախ էինք հյուրընկալելու մեր շվեդացի գործընկերներին, և ինչպես հյուրերը խոստովանեցին, իրենց ձեռք բերած փորձառությունը բավականին արժեքավոր էր:

ԱՐՄԻՆԵ ԲԱՂՐԱՄՅԱՆ
ԷԿԼՈՖ-ի գրասենյակ



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒԿՐԱԴԻՆԱՅԻ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒՆ

Սեպտեմբերի 13-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով հայաստանում գտնվող Ուկրաինայի ՆԳ նախարար Նիկոլայ Բիլոկոնին՝ ՀՀ ոստիկանապետ հայկ հարությունյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում հայկ հարությունյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Ուկրաինայի ներքին գործերի նախարարության հետ հաստատված փոխգործակցությունը և իր գոհունակությունը հայտնեց վերջինիս արդյունավետության առնչությամբ:

Նորին Սրբությունը ողջունեց և բարձր գնահատեց երկու երկրների իրավապահ մարմինների համագործակցության ոգին՝ միաժամանակ կարևորելով նրանց աշխատանքը երկրի կայունության, օրինականության պահպանման, ինչպես նաև ընդհանուր մարտահրավերներին դիմագրավելու գործում: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը հարկապես անդրադարձավ Եկեղեցիների կարևոր դերին և առաքելությանը մարդկության առջև ծառացած խնդիրների հաղթահարման գործում:

Ծնոթեակալություն հայտնելով հայոց հայրապետին ընդունելության համար՝ Ուկրաինայի ՆԳ նախարարն անդրադարձավ համարել ծրագրերին՝ հատկապես շեշտելով միասնական պայքարի անհրաժեշտությունն ահաբեկչության, թմրադեղերի շրջանառության և այլ խնդիրներում:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն նախկոպտա Ավետիքյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ վարդապետ Նալբանդյանը և ՀՀ-ում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Վ. Տյագլոն:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ
ԸՆԴՈՒՆԵՑ ՎԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹԻՆԼԱՆԴԻԱՅԻ
ՎԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ
ԴԵՍՊԱՆԻՆ**

Սեպտեմբերի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆինլանդիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան փոխին Թերի Հակալային՝ Ֆինլանդիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանի ուղեկցությամբ:

Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքներն ուղղեց Ֆինլանդիայի նորանշանակ դեսպանին և արդյունավետ ծառայություն ցանկացավ իր նոր պաշտոնում: Նորին Արքեպիսկոպոսը, ողջունելով հայ-Ֆիննական համագործակցությունը փարբեր ոլորտներում, հույս հայտնեց, որ այդ կապերն ու հարաբերություններն առավել պիտի ամրապնդվեն ու գործառնան ի բարօրություն երկու պետությունների ու ժողովուրդների:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ նաև Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու պետ Արքեպիսկոպոս Ջուկկա Պաարմայի հրավերով Ֆինլանդիա կատարած իր այցելությանը:

Տիկին Հակալան, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, գոհունակությամբ նշեց այն բոլոր ծրագրերը, որոնք առավել պիտի սերտացնեն ու արդյունավետ դարձնեն երկու պետությունների միջև հաստատված հարաբերությունները:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ
ԸՆԴՈՒՆԵՑ ԻՏԱԼԻԱՅԻ ՎԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ
ՓՈԽԽՈՍՆԱԿ ԼԱՄԲԵՐՏՈ ԴԻՆԻՆ**

